

ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ը

ՊԱՊԻԿ ԵՎ ԹՈՌՆԻԿ





ՀՐԱՍԱՆԱԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԳԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ը

ԽՐԻՄՅԱՆ ՆԱՅՐԻԿ

ՊԱՊԻԿ ԵՎ ԹՈՒՆԻԿ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2009

ՀՏԴ 891.981-3 Խրիմյան Նայրիկ
ԳՄԴ 84 Յ-4
Խ 912

Փոխադրությունը՝
Ա. Մադոյանի



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ
Խ – 912 Պապիկ և թռռիկ: Երկ / Խրիմյան Նայրիկ. –
Էջմիածին: Մայր Ա-թռռ Սուրբ Էջմիածին, 2009.
– 336 էջ:

ԳՄԴ 84 Յ – 4

Խրիմյան Նայրիկի սույն երկը հովվերգական գույներով երևակում է հայրենի Վասպուրականի գյուղական իրականությունը, կենցաղն ու ավանդույթները, բնությունը, պարունակում է ժողովրդական խոսք ու զրույց, իմաստուն խոհեր ժամանակի, կյանքի ու աշխարհի մասին: Թեպետ արտացոլում է ԺԹ. դարի 60-70-ական թվերի իրականությունը, սակայն համահունչ է նաև հերագու ժամանակների խնդիրներին: Դա Նայրիկի պարզամն է հերոսորդներին՝ վառ պահել հայրենի ակուրթը, երբեք չլքել այն:

Տպագրվում է մեկնատությամբ՝

«Մարգիս Գարրիելյան» հիմնադրամի

ISBN 978-9939-59-023-3 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

Ի ՀԻՇԱՏԱԿ ԳԵՐԱԶՆԻՎ Պ. ՊԱՏՐԻԿ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ

Արդյոք ինձ՝ և միայն Հայրիկի՛ն է վիճակված, որ Կյուլպենկյան տան հիշատակների դպիր լինեմ, ո՛չ թե ողջերի համար, այլ հավիտյան ննջածների, որ թողեցին աշխարհը և ի Տեր ննջեցին. նրանց առաքինի հիշատակը դրոշմել մի երկասիրության կազմին, թողնել Ձեր մեծանուն Ազգատոհմին իբրև անմոռանալի մի հիշատակ:

Առավոտ արևածագին էր. ո՛հ չգիտեի, թե Ձեր հարազատի և իմ սիրելիի արևը մայր է մտել: Եվ ես, ավա՛ղ, այդ պահին, երբ գույժն առա, թե՛ Մեռա՛վ առաջադեմ Հովհաննեսը, ասացի՝ Առե՛ք, ահա պատրաստ է Հայրիկի պսակը՝ «Պապիկ և Թոռնիկ»-ը, տարեք, դրեք նրա գերեզմանի վրա:

Անագորոլյն մահվան սուր տապարը դեռ դուրս չի ելել Կյուլպենկյան գերդաստանից, մի փոքր ժամանակի մեջ զարկեց, տապալեց իրար ետևից երեք հաստաբուն նոճիներ, չասաց թե՛

Բավ է այսքանը, թո՛ղ հայրերի փոխարեն որ-
գիները լինեն:

Կարծեցինք, թե գնաց, հեռացավ մահվան
գծնդակ ոստիկանը, բայց այնտեղից շուտ դար-
ձավ, զարկեց-կտրեց այն աննման շառավիղը,
որ նոր էր պատվաստվել ամուսնական ճղիկով, և
ճյուղից ծլել էր մի նորաբույս մանկիկ. ավա՛ղ,
անգութ մահվան ոստիկանը չխղճաց երբեք,
սիրասուն ծնողական գրկից մանկիկին ի բաց
գլորեց, մի հարվածով կտրեց երկու գուգակց-
ված նորատունկ սոսիները՝ Հովհաննեսին և
Արաքսին: Մի՞թե ուխտել էին նրանք նաև մա-
հանալիս անբաժան մնալ:

Երբ Հովհաննեսը փութաց և շուտ գնաց, թո-
ղեց իր կյանքը և անբախտ Արաքսը: «Ո՛հ, այ-
լևս ինձ համար պիտանի չեն ո՛չ աշխարհը և
ո՛չ կյանքը», - ասաց Արաքսը, վազեց, ետևից
գնաց: Չգիտեմ, թե սուրբ Փրկչի հանգստա-
րանի մի քնարանում ննջեցին երկու սիրակապ
ամուսինները, բայց գիտեմ, որ հոգիները երկ-
նից մեջ միացան:

Դառնամ այժմ քեզ, հոգուդ հետ խոսեմ,
անձկալի՛դ իմ Հովհաննես, դու անձնվեր էիր
ազգին և Հայրիկին ամեն առիթներով: Վերջին
անգամ քեզ վիճակվեց, որ իբրև պատգամավոր
Հայոց Մայր Սուրբ Էջմիածին գնաս և Հայրա-

պետական ընտրությանը տաս քո ազատ քվեն:
Ինձ այժմ պատմում են, որ քո այս պարտքը
կատարելիս դու ամենայն ազնվությամբ վար-
վելով՝ բարի համբավ և հիշատակ ես թողել
այստեղ:

Չգիտեմ՝ դու ի՞նչ էիր մտածել արդյոք, որ
քո անբաժան ամուսին Արաքսին էլ քեզ հետ
էիր վերցրել, որպեսզի տեսներ նա Հայոց աշ-
խարհը, Հայոց Մայր Աթոռը, մեր Լուսավորիչ
Հոր հոգևոր ծննդարանը, որ ծնեց մի ողջ ազգ,
տեսներ նաև Արաքս դրախտի գետը, որի անու-
նով նա կնքված էր: Այդ մի բախտավորություն
էր թե՛ քեզ և թե՛ նրա համար, գեթ մի անգամ
խմել Երասխի անմահական ջուրը և պահել ու
հիշել միշտ մեր Հայրենյաց այդ հավերժական
հիշատակը:

Կյուլպենկյան տունը ողբաց քեզ, ողբացին
սիրելիներն ու բարեկամները. Հայրիկն էլ քո բա-
րեկամն էր, որ ամենքից ավելի ողբաց. մանկու-
թյունից էի ճանաչում քեզ և հոգուդ գեղեցիկ
հատկանիշները: Միշտ պայծառ և զվարթագին
էր քո դեմքը, իբրև մի բացված գիրք, ես կար-
դում էի սրտիդ և հոգուդ նշանագիրը, որ դպրո-
ցի կրթության օրից մի բառ էր միայն խորագծ-
ված՝ առաջադիմությո՛ւն: Եթե սոսկ աշխարհիս
գիտությանց առաջադիմությունը լիներ այն՝ ես

այնչափ մեծ չէի համարի, եթե Կյուլպենկյան տան աստվածպաշտության հավատքը համընթաց չլինեք առաջադիմությանդ հետ:

Ձեր հին հայրենատուր վաճառականությամբ ասպարեզի մեջ անվախ և խիզախ առաջ էիր գնում. և ի՞նչն էր քո միտքն ու նպատակը՝ հարստանալ, բարգավաճել և սոսկ աշխարհի պերճությամբ կենցաղավարել և վայելե՞լ կյանքը. ո՛չ, հարստանալ միայն բարերարելու համար, ազգի, եկեղեցու և Հայոց լուսավորության համար և միշտ առատաձեռնել:

Այլ ավա՛ղ, դու տարածամ մեռար, ապագայի հույսերդ անպսակ մնացին: Եվ աշխարհիս մեջ ո՞վ պսակված հույսով գերեզման գնաց: Ո՛հ ողբացյալ, փոքրիկ Հոսիկին ժառանգ թողեցիր Կյուլպենկյան տանն ու գնացիր, ո՞վ գիտե, երկնքի խնամակալ Հայրը կպահպանի նրան: Մի օր կմեծանա, կզարգանա, կառաջադիմի, կհիշի իր հոր հիշատակն ու կպսակի քո հույսը և քո ազնիվ նպատակը:

Իսկ Հայրիկն Արարատ աշխարհից, ծեր Արագածի հովտից, Մասիսի Նոյի լեռնաշխարհից և Վասպուրականի Վարագա սարից «ՊԱՊԻԿ և ԹՈՒՆԻԿ»-ը իբրև մի ծաղկեփունջ կպելով կպսակի քո անունն ու հիշատակը, որ միշտ կենդանի և անմահ պիտի մնան:

Իսկ դու՛ ըստ ըստ ավագագույն ժառանգ Կյուլպենկյան գերդաստանի, սիրեցյալդ իմ Պատրիկ, ա՛ն իմ այս ծաղկեփունջ պսակը, տար, դիր հարագատիղ գերեզմանի վրա. այդ պսակն անթառամ է, դու տուն վերագարձիր, գրկիր և համբուրիր ողբացյալի մանկիկին, ասա՛. Ես եմ այսուհետև քո հայրն ու խնամակալը:



ՀԱՅ ՇԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

«**Պ**ԱՊԻԿ ԵՎ ԹՈՌՆԻԿ»ը քեզ համար գրեցի և քո անվանն եմ նվիրում, իմ սիրելի դաշտաբնակ մշակ ժողովուրդ, Հայոց Հայրիկը, որ այժմ ծերացած մի պապիկ է դարձել, սիրեց և փոքրությունն չհամարեց, որ ինքը մի պահ իբրև մի շինական պապիկ ձևանա, իբրև Վասպուրականի Արճակ գյուղի մեջ է ծնվել, Վարագա վանքում մաճկալ է եղել, շատ անգամ Պոլիս է գնացել-եկել և առանց դպրոցի, միայն լսելով և գրքեր կարդալով, մի քիչ բան է սովորել և իր սովորածն ավանդում է իր սիրելի թոռնիկին:

Պապիկի միակ նպատակն ի՞նչ էր, որ այս փոքրիկ գիրքը շարադրեց քեզ համար. որպեսզի դու կարդաս, իմանաս ու ճանաչես քո նշանակութունը, ճանաչես ու զգաս նաև քո խեղճ կյանքն ու վիճակը:

Երջանիկ ես՝ և թշվառ ես ապրում, բազմահարուստ գանձի տեր ես՝ և գրպանդ փող չկա, երկրիս մեծ կալվածատերն ես, բայց միշտ հա-

ցի կարոտ ու պարտապան, երկրի ընդհանուր քաղաքացի ժողովրդի բոլոր կենսական բարիքները դու ես մատակարարում, թագավորից սկսած մինչև հետին քաղաքացիների սեղանին հաց ես տալիս, յուղ ես տալիս, միս ես տալիս, հագուստների նյութ ես մշակում, բուրդ ես տալիս, բամբակ ես տալիս, քաթան ես տալիս, շերամ ես տալիս և շատ այլ բաներ, որոնք ես այստեղ չեմ ուզում թվել: Բայց գիտե՞ս արդյոք՝ ի՞նչն է պատճառը, որ դու թվարկված այնքան բարիքներից միշտ զրկված ես մնում: Դու կարդա՞ «Պապիկ և Թոռնիկ»ը, քաջ կիմանաս, որ դրա միակ պատճառը տգիտությունն է, գուեհյուսությունը, կարգալ, գրեյ, հաշվեյ, տնտեսել չգիտենալը: Իսկ քո տգիտություն և այդ վիճակի մեջ այդպես մնալու պատճառն ի՞նչ է. այդ էլ կխոսեմ ու կբացատրեմ քեզ, դու լսի՛ր, որ գիտենաս և խելամուտ լինես:

Ինձ այնպես է թվում, թե դու մի մոռացված երկիր ես եղել, ինչպես ասում է Սաղմոսը. դու լայնածավալ դաշտերի և լեռների վրա ես բնակվում, ի՞նչ զարմանալի բան է, որ քաղաքացիները ձեզ չեն տեսնում, քո դիրքը շատ խոնարհված գետնահավասար է եղել, անխոնջ մրջյունի նման աշխատում ես: Քաղաքացին բարձրավիզ է, չի տեսնում քեզ և շատ անգամ,

ո՛հ, կոխկռտելով անցնում է քո վրայով, և դու ճմլվում ես նորա ոտքի տակ:

Քաղաքացիները իմաստասեր մատենագիր դարձան, բայց չեն ջանում քեզ համար գրքեր գրել, թեև խմբագիրներն ու գյուղատնտեսները քեզ շատ հոգվածներ են նվիրում, դու մի գանգատվիր, նույնիսկ գյուղացու մի գավակ, որ մի բարերարի շնորհիվ Եվրոպա է գնում, ավարտում է իր ուսումը և համալսարանից վերադառնում, դուք ասացեք ճիշտը, դեպի ուր է գնում, դեպի քաղա՛ք՝ առանց իր հայրենի շինական տանը ու ծնողներին առաջին ողջույնը և այցելությունը տալու: Եթե ասես՝ «Պարո՛ն, ինչո՞ւ ես մոռանում քո գյուղը, որ քո ծննդավայրն ու խանձարուրն է»,- դու տե՛ս՝ ի՞նչ կպատասխանի. «Ես քաղաքակիրթ-աշխարհակիրթ աշխարհից եմ գալիս, կյանքս և ճաշակս ամբողջովին փոխվել են. ես լույս և գիտություն ունեմ, մի՞թե կարելի է, որ գյուղական խավար և անկիրթ ժողովրդի մեջ ապրեմ, որ երբեք չգիտեն գնահատել իմ արժեքը: Ո՛հ, ես հիշում եմ մեր տունն ու խրճիթը և այն չարաճճի անզգամ լվերը, որ ինձ խաշում և տանջում էին»: Ուրեմն մեր պ. համալսարանականը պիտի բնակվի քաղաքում և պիտի սպասի այնքան, մինչև իր գյուղը քաղաքակրթվի, խավար գյուղացի-

ները լուսավորվեն, խրճիթներն ապարանք դառնան, և ապա մեր պարոնը վերադառնա իր գյուղը: Եթե ասես. «Մի՛ սպասիր այդ անհայտ երկա՛ր ժամանակին, դու այժմ գնա՛, կրթի՛ր, լուսավորի՛ր գյուղացի մանուկներին և այդ բախտավոր ժամանակը դու բեր քո անբախտ գյուղի համար, մի՞ թե դու պարտականություն չունես: Հիշիր այն օրը, երբ պաղատում էիր քո բարերարին, թե՝ «Ինձ Եվրոպա ուղարկիր, ուխտում և խոստանում եմ, որ կվերադառնամ, ամենայն անձնվիրություն հայրենյացս կծառայեմ»: Բայց պարոնի հայրենիքը միայն քաղաքն է և ոչ թե գյուղը:

Թողնենք Եվրոպայի համալսարանի պարոնին, որ գուցե իր առարկությունները երբեմն իրավացի լինեն, հապա ի՞նչ ասենք այն պարոններին, որ առանց Եվրոպա, աշխարհ տեսնելու, նույնիսկ մեր աշխարհի մեջ, կիսակրթության փոքր-ինչ զարգացումն ստանալուց հետո՝ իրենց միտքը և իրենց սրտի թաքուն տենչանքը դեպի քաղաքներն է, որոնց մեծ մասը դարձյալ գյուղացի զավակներն են, կրթության եղանակի՞ պատճառով է, չգիտեմ, դաստիարակ-ուսուցիչների՞ պատճառով է, չգիտեմ, ժամանակի և կյանքի պահանջով է, դարձյալ չգիտեմ: Մի-միայն այս գիտեմ ես, որ դպրոցի կրթության

կապանքից արձակվելուց հետո, դեպի քաղաք են վազում:

Ես լսեցի գյուղացի հայրերից ոմանց տրտունջն ու գանգատը. «Հայրի՛կ, ես զավակիս մեծ փափագով կրթության տվեցի, որ ծերություն ցուպ լինեք, նա գնաց, այլևս չդարձավ, մոռացավ իր որդիական պարտքը, և ավելի ճիշտ է, որ ասեմ ուրացավ իր ծնողներին»,– և այլն:

Կրթության այս մեծ խնդիրը իր շատ անպատեհ հետևանքներն ունի, եթե չմտածենք դեղն ու դարմանը և թողնենք, որ այսպես շարունակվի այս կրթական հիվանդությունը, քիչ ժամանակից պիտի տեսնենք, որ մեր գյուղացի պատանիները դպրոցից դեպի քաղաք մի գաղթի ճանապարհ պիտի բանան, և ի՞նչ կլինի այն-ժամ, երբ հայ ժողովրդի ամենամեծ մասի կյանքը հողն ու երկիրն է:

Ահա քեզ համար հոգացի և պատրաստեցի «Պապիկ և Թոռնիկ»ը, իմ սիրելի գյուղացի ժողովուրդ, որ դու քո հայրենատուր հողն ու դաշտը սիրես և երբեք չբաժանվես, գիտենալով, որ քո կյանքը հողն է և հողագործության արդար վաստակը: Ուշադրությամբ կարդա՛ այն խորհուրդները գլուխը՝ «Պապիկը պսակադրում է դաշտում», թե ինչպես Պապիկն իր Թոռնիկին խաչով, Ավետարանով պսակելուց հետո,

տանում է նրան դաշտ և ասում. «Գյուղացի փեսայի համար բավական չէր, ես այժմ կրկին պիտի պսակեմ քեզ հողի ու մաճի, գութանի և հողագործության հետ, պետք է ուխտես երկնքի և երկրի առաջ, որ այս պսակն անքակտելի պահես, ահա դնում եմ քո գլխին ցորենաբույսի ցողուններից հյուսված այս գեղեցիկ պսակը, թող վկա լինեն մեր մշակները, հոտաղները և մեր լծկան գոմշուկներն ու եզները:

Գիտե՞ս, Թոռնիկ, Աստված մի արասցե, որ քո ամուսին Շուշանը մեռնի, մի ուրիշ Շուշան կարող ես առնել, բայց երբ հողը քեզ համար մեռնի, այսինքն՝ կամ ծախես, կամ ձեռքիցդ գնա, և զրկվես քո ժառանգած հողից, այն ժամանակ դու էլ կմեռնես, Շուշանն էլ քեզ հետ կմեռնի, և Պապիկի տունը և ակութը կքանդվի»:

Այսպես Պապիկը իր Թոռնիկի վրա մի կրկնապսակ կատարեց, Հայրիկն էլ համայն գյուղական ժողովրդի գլխին է դնում իր պսակը՝ «Պապիկ Թոռնիկ» և աղոթում, որ դու այս պսակն անթառամելի պահես, սիրես քո հողը և հողագործության աշխատանքը, սիրես ուսումը և կրթությունը, որ քո մշակության քրտնաթոր վաստակն արդյունաբեր լինի, որով միայն քո կյանքը կբարվոքվի, և դու տառապանաց կապանքից ազատվես, որ տգիտության արգասիքն է:

Վերջին խոսքը ձեզ եմ ուղղում, ո՛վ Վասպուրական երկիր, իմ անձկալի Հայրենիք. «Պապիկ և Թոռնիկ»ը հատկապես ձեզ համար գրեցի Երուսաղեմի Սիրոն լեռան վրա, խաչի հովանյաց տակ, դու կարդալով կտեսնես, որ «Պապիկ Թոռնիկ»ի նյութերը՝ Վասպուրական երկրի շինական ժողովրդի ծաղիկներից եմ քաղել, որ փնջիկ կապեցի և ահա ձերը՝ ձեզ եմ նվիրում:

Հոտոտելով այս փունջը, անշուշտ կզգաք և վա՛շ կասեք, արճակեցի Պապիկը մեր ծաղիկն է, աշուղ Մուշոն մեր ծաղիկն է, մեռելոց դաշտի մեջ ննջած այն մեծ-մեծ տանուտերների խաչքարերի հիշատակները մեր պարծանքն են:

Կարծում եմ, որ շատ մոտ եմ ձեզ, ընդամենը հնգօրյա մի ճանապարհ-անջրպետ կա: Վարագա խաչի սարը ծածկված է աչքիցս. Վասպուրականի Արծիվն էի ժամանակին, բայց այժմ թևաթափ-ծերացած եմ, և ո՞վ կտար ինձ, որ նորափետուր արծիվ լինեի, թռչեի-խոյանայի, գեթ վերջին անգամ տեսնեի բարձր քարի վրա դրված իմ ավերակ բնիկը:

Այլևս զուր է այս ցանկությունը, ինձ մնում է հոգով մոտ լինել ձեզ և հոգով աղոթել ձեզ համար:

Իսկ ձեզ մնում է կարդալ «Պապիկ և Թոռնիկ»ը և հիշել ՀԱՅՐԻԿին:

Երբ մեռնեմ, երթամ գերեզման և այլևս չկարողանամ խոսել ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա թողնում եմ ձեզ գիրս իբրև մշտախոս կտակ և հիշատակ, որի միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողից չբաժանվի, որովհետև իր սեփական ժառանգությունն է դրախտի երկիրը, որ Տեր Աստված մեր Ազամ պապին և ժառանգորդներին տվեց և ասաց մշակել երկիրն ու պահել (Հմմտ. Ծննդ. Բ 15):



ՊԱՊԻԿ ԹՈՒՆԻԿԻՆ

Սիրելի՛ թոռնիկ, ահա տեսնում ես, Պապիկդ ծերացել է, յոթանասուն տարին անցկացրի, դու միակ ժառանգն ես մնացել մեր հայրենի տան: Ես միայն մի անդրանիկ զավակ ունեցա, թորոս անունով, որ շատ աննման, կտրիճ, աշխատասեր մի զավակ էր: Մեր տան բոլոր գործերը նա էր կատարում: Ժամանակին ամուսնացրի նրան, ավա՛ղ, երկու տարի միայն մնաց իր սիրելի նորահարսի մոտ. թողեց-գնաց Ստամբուլ: Նրա գնալուց հետո դու ծնվեցիր, ես թուղթ գրեցի հորդ, թե՛ «Քեզ մի որդի ծնվեց, մկրտեցին, անունը Ռուբեն դրեցի, թորո՛ս»:
Քո հայրը չտեսավ քո ծնունդը, քո խանձարուրը և չհամբուրեց քո մանկական երեսը: Երբ երկու-երեք տարեկան եղար, լեզուդ բացվեց. միայն մայրիկ և պապիկ էիր կանչում. հայրիկդ չկար, որ տեսներ ու ճանաչեր, որքան դառն բան է սա, երբ մայրերն այստեղ ծնում են, հայրերն Ըստամպուլում իմանում:

Երբեմն կան այնպիսի հայրեր, որ կամ ճախորդության պատճառով և կամ անխղճմտանք լինելով, տասն և մինչև քսան տարով օտարության մեջ մնալով՝ իրենց զավակներին երեսը չեն տեսել: Երբեմն հայրերը Պոլիս՝ օգնության են կանչում իրենց զավակներն, երբ պանդխտության խոր տիղմի մեջ խրված՝ չեն կարող շարժվել՝ դուրս ելնել: Շատ անգամ է պատահում, որ անտերունչ, դժբախտ կիներ, ճարը հատած, իր հասունացած միակ զավակին՝ աչքի լույսին, Պոլիս է ուղարկում, ասում է. «Գնա-տես ի՞նչ եղավ քո հայրը, քանի տարի եղավ՝ ո՛չ նամակ է ուղարկում, ո՛չ դրամ»:

Բայց քո Հայր Թորոսն այդպես չէր, նա միշտ ժամանակին նամակ և դրամ էր ուղարկում, նա շատ էր պատվում պապիկիդ և շատ գորովական սիրտ ուներ դեպի իր կիներ: Հապա քեզ ինչքա՛ն էր սիրում առանց զգվանքի և տեսության, սիրուն ու գեղեցիկ լաթեր էր ուղարկում քեզ: Մայրիկդ հագցնում էր և ասում, որ Հայրիկդ է ուղարկել: Դու էլ հարցնում էիր՝ Մայրի՛կ, Հայրիկա ե՞րբ պիտի գա Պոլսից: Դու խեղճ միամիտ մանկիկ էիր, չգիտեիր, որ Թորոսը Պոլսից չի գալու: Մի ժամանակ հետո Թորոսից թողլթ եկավ, որ գրում էր, թե՝ «Հիվանդացա, գյուղացիներս ինձ տարան-դրին հիվանդանոց»:

Դու չե՞ս հիշում, Թոռնի՛կ, երբ Պապիկը Մայրիկիդ հետ լալիս ու ողբում էր Թորոսի մահը: Դու հարցնում էիր՝ Ինչո՞ւ եք լալիս, Պապի՛կ և Մայրի՛կ: Մենք չուզեցինք ասել քեզ, թե Թորոս Հայրիկիդ համար ենք լալիս, որ մահացել է Պոլսում:

Դու կարծում ես, Թոռնի՛կ, թե միայն ա՞յն օրը լացեցի. ո՛չ, ես երբեմն առանձնացած շարունակում եմ նույն ողբն ու լացը, երբ հիշում եմ Թորոսի մահն ու հիշատակը: Դու չգիտես, թե այդ քաղցր անունն ի՛նչ անցյալ բաներ է բերում մտքիս մեջ: Իմ մեծ պապը պատմում էր, թե ուրիշ Թորոսներ ծնվել են մեր տնից, բուրն էլ վաղամեռիկ են եղել, իսկ մեկն էլ Պարսից արչավանքի ժամանակ մեր գյուղից գերեվարվել է:

Խոստովանում եմ քեզ, Թոռնի՛կ, այդ պանդխտության ճամփան նախ ես բացեցի մեր խեղճ Թորոսի առաջ: Նա տեսնում էր, թե ինչպես քանիցս Պոլիս գնալով-գալով, Աստված հաջողութուն էր տալիս, բավական գումարներ վաստակած էի դառնում: Բայց դու գիտե՞ս, թե ի՞նչ մեծ նեղությամբ, դառն քրտինք թափելով են մեր պանդխտ եղբայրները դրամ վաստակում: Մի օր, չեմ մոռանա, երբ ութ կտրիճ բեռնակիրներով մի ահագին գերան ձողերի վրա

դրած տանում էինք, Պոլսո իջևանատան բլուրն ի վեր: Քրտինքը ծլծլալով մեր ճակատներից ներքև էր վազում, մեր երեսներից իջնում ու թրջում էր մեր բացված կրծքերը: Տեսանք, որ Հայրիկը մեր դիմաց է գալիս, գերանը ներքև դրեցինք, կանգնեցինք: Հայրիկը ողջուն տվեց մեզ, հարցրեց մեր որպիսութունը. մեջները ես համարձակ էի, ասացի. «Հայրի՛կ, ահա մեր որպիսութունը՝ բեռների տակ ընկճված հեծում ենք և թափում ենք մեր դառն քրտինքը այս քարահատակների վրա»: Ես տեսա, որ Հայրիկի աչքերը լցվեցին, ասացի մտքիս մեջ, թե մեր վիճակի ու մեր ճակատի քրտինքի դիմաց՝ Հայրիկն իր աչքի արտասուքով է պատասխանում: Այո՛, Հայրիկը մի կարճ պատասխան տվեց. «Խեղճ զավակներս, ասաց, այդ բեռը պիտի կրեք մինչև կարգալ-գրել սովորեք, մինչև ճանաչեք ձեր գյուղի ու հողի արժեքը, որտեղ եթե ձեր այդ աշխատանքը, քրտինքը թափեիք՝ երբեք պանդխտության երես չէիք տեսնի»: Այսքանը խոսեց Հայրիկը, աչքերը սրբեց ու անցավ: Ես որովհետև փոքրիշատե կարգալ գիտեի, իրիկունն իմ ընկերներին լավ հասկացրի Հայրիկի խոսածի միտքը:

Ճամարիտ է, Թոռնի՛կ, ես փորձով հասկացա, որ եթե մենք ամբողջ հոգով ու սրտով աշխա-

տենք մշակել մեր հողերը՝ կապրենք և երբեք չենք տեսնի պանդխտության երես: Ինչպես վերևում խոսեցի, քանիցս Պոլիս գնացի-վերադարձա. առատ-առատ ստակ բերի, բայց գիտես՝ այդ Ստամբուլից շահած դրամի մեջ հաջողութուն-առատութուն չկար, տեսնում էի, որ մեկ-երկու տարվա մեջ սպառվում էր, աշնան աղբյուրների պես շուտով ցամաքում: Ափսո՛ս, երիտասարդ ծաղիկ կյանքս պանդխտության խորշակով թոռումեց, ի վերջո խելքս գլուխս եկավ: Վերջին անգամ երբ վերադարձա Պոլսից, արդեն մտքիս դրել էի, որ առաջին անգամ Արճակի վանքի Սբ. Աստվածածնի տաճարին ուխտ գնամ, մոմ, խունկ, կանթեղի ձեթ պատրաստեցի ու գնացի, մտա Տաճար, գլուխս բացի, սեղանի առաջ ծունկի եկա, աղոթք արեցի, սիրտս հուզվեց ու շատ արտասովեցի, կանչեցի Տիրամայր Աստվածածնին, գործիս հաջողութուն խնդրեցի, Քրիստոսի խաչի սեղանի առաջ ուխտեցի, որ այլևս չեմ հեռանա գյուղից, չեմ թողնի տուն ու տեղս, արտերս ու դաշտերս:

Ուրախ սրտով ելա Տաճարից, մի քաջալեռութուն եկավ վրաս. ես այն վայրկյանից հավատացի, որ Տիրամայրն իմ ցանկութունը պիտի տա, և Քրիստոս իմ գործը պիտի հաջողի: Իսկունյն Պոլսից բերածս դրամով երկու գոմեշ

և վեց եզ գնեցի, գուլթան սարքեցի բոլոր գործիքներով հանդերձ, հանեցի չուխա լաթերը, հագա շալե տաբատ, վերցրի գլխիցս մեծ, ալ թասակը, շինականի թաղիքե գդակ դրի, հանեցի ոտքիս ճոճուան կոշիկները, տրեխ հագա և ձգեցի թելերը, ունեի նաև մի մատանի, այն էլ հանեցի մատիցս, լաթերի հետ դրեցի սնդուկը, ասացի՝ պահեմ Թոռնիկիս փեսայուլթյանը: Այս ամենն անելուց հետո երկու-երեք մշակ վարձեցի, առա խարազան, գնացի դաշտ, սկսեցի գուլթանի գործն ու վարուցանը: Այն օրից մինչև այսօր ես այլևս պանդխտուլթյան երես չտեսա:

Այսպես, Թոռնիկ, հոգով-մարմնով հողագործուլթյանը տվեցի ինձ, վարեցի, ցանեցի, և Աստված շատ հաց տվեց, երբեք հացի կարոտ չմնացի: Մեր տունը մի հին նահապետական տուն է, դռանը միշտ հյուրերն անպակաս, և ես այժմ մեր տան ծերունի նահապետն եմ, երբ մեռնեմ՝ դու պիտի հաջորդես ինձ:

Այժմ դու, սիրելի՛ Թոռնիկ, միակ ժառանգն ես մեր տան և ակուլթի, քանի դեռ կամ՝ քեզ շատ բարի և օգտակար դասեր և խրատներ պիտի տամ: Գիտե՞ս, ես բավական կարգալ-գրել եմ սովորել, պատանի ժամանակս՝ Վարազա վանքում, ուր երկար մաճկալուլթյուն եմ արել: Վերջում, երբ այնտեղ երկրագործուլթյան դա-

սեր էին խոսվում, ես մեծ ուշադրուլթյամբ լսում էի ճմռան պարապ ժամանակ և միշտ աշխատում էի սովորել:

Իսկ ամռան գործերի պահին ավելի սովորում էի գործնական փորձառուլթյան մեջ, որովհետև Հայրիկը ոչ միայն վանահայր էր Վարազա վանքում, այլև առանձին դպրոցի պարտեզն էր մշակում և ավելի դաշտի մշակ էր, քանի որ գիտեր՝ վանական բազմաթիվ համայնքը և դպրոցի աշակերտները հա՛ց են ուզում, հա՛ց: Սրա համար նա շատ էր սիրում հողագործական աշխատանքը. միշտ մտածումնքն այն էր, որ հին մշակուլթյան տաժանելի աշխատանքները դյուրացնի, թե՛ մարդկանց համար հանգիստ լինի, թե՛ խեղճ անասունների և թե՛ հողն ավելի խնամքով մշակելով արդյունաբեր լինի: Ուստի մտածելով՝ երբեմն հնարամիտ կերպեր և միջոցներ էր ի գործ դնում, իր միակ նպատակն էր երկրագործուլթյան արհեստը գոնե փոքրիշատե առաջ տանել ու բարվոքել, որպեսզի հողագործուլթյան շահաբերուլթյամբ կառավարվեն վանքն ու վարժարանը: Որովհետև Վարազա վանքը, բացի իր հողային կալվածքներից ուրիշ մշտական վարձք բերող կալվածքներ չունի:

Այստեղ պետք է խոստովանեմ, Թոռնիկ, որ ես, Վարազա վանքում մշակուլթյան մաճկալ լի-

նելով, Հայրիկի փորձառական կերպերից շատ բան սովորեցի և այժմ այդ սովորած բաներս, իբրև վարժապետ, պետք է գլուխ-գլուխ դաս տալով ավանդեմ քեզ: Ուշագործությամբ լսիր դասերս, քանի որ մեզ համար շատ կարևոր են, որովհետև մենք գյուղացի ենք, մեր ապրուստը և կյանքը միայն հողագործության վաստակն է: Եվ ի՞նչ ավելի արդար, ազատ և անխարդախ վաստակ կա աշխարհիս վրա, քան հողագործությունը:

Խելացի՛ և ուշիմ թոռնիկ, այժմ պիտի սկսի Պապիկն իր դասերը. ո՛չ վարժատուն է պետք, ո՛չ գրասեղան, ո՛չ թուղթ, ո՛չ գրիչ, ո՛չ մելան, դու տես, թե ո՞ւր պիտի խոսեմ դասերս: Տան մեջ, ախոռի մեջ, դաշտի մեջ, լեռների վրա, աղբյուրների ակունքին, գութանի ժամանակ թե՛ մաճ կբռնեմ, թե՛ դասերս կտամ, դու լծի վրայից ականջ անելով՝ խոսքերս լսիր և ձայնով լծկաններին խրախուսիր: Բացված ակոսների պես, ես էլ քո միտքը պիտի հերկեմ ու բանամ: Սերմնացանի ժամանակ, վա՛շ, ինչ սիրուն է. մի կողմից ցորենի հատիկներ և մյուս կողմից դասերս մտքիդ մեջ պիտի ցանեմ: Հունձքի ժամանակ, երբ սարակները հովի տակ նստած մանգաղներն են սրում, ես էլ կնստեմ քո դասը կխոսեմ և կսրեմ քո միտքը: Կալատեղն էլ ի՛նչ

հարմար դասարան է. երբ դու կամնասայլի վրա կլինես, ես քառեշտը ձեռքիս կշրջեմ կալի շուրջը, մի կողմից որան կդարձնեմ և որանիս հետ դասերս կխառնեմ և կալսելով ցորենը հարդից կանջատեմ, դու լցրու ու պահիր այն մտքիդ շտեմարանի մեջ:

Ես այժմ պիտի սկսեմ հողագործության բնական և դյուրին դասերը տալ քեզ, որքան լսել եմ և որքան փորձառությամբ սովորել: Խելացի՛ թոռնիկ, ամբողջ ուշքդ ինձ դարձրու. լավ ըմբռնիր դասերս և ամփոփիր մտքիդ մեջ: Ժամանակը հասել է, եթե Պապիկդ մեռնի, գոնե իմ դասերը և խրատները քեզ ժառանգություն կմնան. և գիտես դու, թե ամեն բանից ավելի թանկագին է այս ժառանգությունը: Ո՛վ գիտե, դու ևս մի օր կծերանաս, ինձ նման Պապիկ կդառնաս, ինչ որ այսօր ինձնից սովորում ես, այն քո թոռնիկին կավանդես: Բայց նայիր, որ Պապիկի սակավամասն այս դասերը բավական չհամարես, այլ պետք է ճարտար և հնարամիտ լինես, ինքնաշխատությամբ նորանոր բաներ սովորես, ժամանակը միշտ առաջ է տանում մարդկանց, դու էլ պետք է առաջ գնաս, պետք է գիտենաս, որ ես մնացողը հացի կարոտ կլինի: Երկիրն է, որ մեզ հաց և ուրիշ բարիքներ է տալիս, ո՛վ որ մշակի երկիրը՝ այսինքն վարուցան անելով աշխա-

տի, իր տունը հացով ու բարուկթյամբ կցվի, իսկ նա, որ գութանի մածը ձեռքից թողնի, ծուլության ու դատարկության մեջ կմնա, նրա տունը չքավորությամբ կդատարկանա, ամանից հացը կպակասի և կճուճից յուղը, աղքատությունը արագոտն սուրհանդակի պես նրա վրա կհասնի, ինչպես պատմում է առակը (Առակ. ԻԴ 34): Եվ այս ամենն ընդարձակ կերպով պիտի խոսեմ քեզ: Լսի՛ր ուրեմն, Թոռնի՛կ, Պապիկի դասերը և բարի խրատները, որ պիտի սովորես, թե ի՞նչ են երկիրն ու իր բնակիչները, քաղաքացին ու գյուղացին. քաղաքացին իր արհեստն ունի, գյուղացին՝ իր հողագործությունը: Թե ի՞նչպես են մարդկանց այս երկու դասը իրենց աշխատանքի արդյունքներն իրար հետ փոխանակում: Ի՞նչ է մեր արդի հողագործության վիճակը, որ դեռ հնության մեջ է մնացել: Ի՞նչպես կարելի է հետզհետե հին ձևերը փոխել և նորագույն կերպերով մշակել երկիրը, որով մեր աշխատանքը կդյուրանա, երկիրն ավելի կարդյունավորվի, մեր շահն ու վաստակը կրկնապատիկ կլինի: Երկրի շահավետ արդյունագործությունը ոչ միայն մեզ է օգուտ, այլև տերությանը և ամբողջ ժողովրդին, որովհետև աշխարհիս վրա հացի խնդիրը մեծ է, քանի որ մարդիկ հացով են ապրում:

Ա. ԵՐԿԻՐ

Սիրելի՛ Թոռնիկ, պետք է մեր Ադամ պապից սկսեմ: Տեր Աստված երբ մեր հանցավոր Նախահայր Ադամին դրախտից դուրս հանեց, մի պատվեր տվեց նրան, որ երկրագործությամբ զբաղվի, և իր երեսի քրտինքով իր հացը ճարի ու ապրի:

Լավ պահիր մտքումդ, Թոռնի՛կ, որ այս մեր բնական երկիրը կամ հողագունդը Տեր Աստված մարդուն ժառանգություն և կամ իբրև դրամագլուխ է տվել: Գիտե՞ս, թե որքան ընդարձակ, որքան անսպառ և անհատնում է այս ամենառատ, ամենաճոխ երկրի բնական հարստությունը: Մտիկ արա՛, որ թվեմ քեզ, անձայր, անսահման ծովերը, անչափ լայնատարած ցամաք երկրները, որոնց վրա բնակվում են միլիոնավոր մարդիկ և զանազան ազգեր: Դաշտերը, լեռները, հովիտները, ձորերը, աղբյուրները, գետերը, բյուրազգի բույսերը, ծառերը և ծաղիկները, ծովի ձկները, ցամաքի վայրի և ընտա-

նի անասունները և թռչունների երամները ու այլ շատ բաներ Տեր Աստված մարդու համար է ստեղծել և մարդկանց է տվել, որ մարդիկ ապրեն երկրի վրա, վայելեն այդ բարիքները և օրհնեն Ստեղծողի և Տվողի անունը: Ուստի մարդիկ պետք երկրագործությամբ զբաղվեն, որովհետև երկիրն է իրենց կյանքը պահողը:

Բայց դու տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե մարդիկ ինչպես են աշխատում երկրի վրա, գյուղացին իր հողագործության մեջ վարած արտիակոսները իր քրտինքով է թրջում, քաղաքացին իր արհեստով դարձյալ նույն քրտինքն է թափում: Դու տեսե՞լ ես դարբնի թափած քրտինքը, որ բորբոքված հնոցի դիմաց կիսամերկ կանգնած, ահագին եռանդով երկաթ է ծեծում, և մեր գուլթանի համար խոփ է պատրաստում: Վաճառականը՝ ծովի և ցամաքի վրա ճամփորդելով, աշխարհից աշխարհ է գնում, տառապում է և նույն քրտինքն է թափում: Նույնիսկ աշխարհիս կառավարիչները քրտինք թափելով են ղեկավարում աշխարհը: Թագավորից սկսած մինչև հետին պաշտոնյան նույն քրտինքն ունեն, որովհետև ղեկավարի և կառավարողի միտքը ևս իր քրտինքն ունի, ամենայն հոգեմաշությամբ նրա քունը վրդովված է, մինչ հնձող մշակը ցորենի խրճին գլուխը դրած անուշ

ննջում է բացօթյա դաշտում և իր անկողինը իր մշակած կակուղ հողն է: Թեպետ քրտնաջանության և աշխատելու մեջ մեծ զանազանություններ կան. հողագործ մշակը արևի տակ, դաշտի վրա է իր քրտինքը թափում, որքա՛ն դառն, որքա՛ն դժվար է աշխատելը այն գործավորների համար, որ հինգ հարյուր կանգուն երկրի խորության մեջ, անլույս, անարև տաժանելի աշխատանքով քարածուխ են հանում, որպեսզի շոգենավերը, շոգեկառքերը և բովանդակ մեքենական գործարանները բանեն անդադար:

Մեր դաշտերի ազատ մշակները հազար անգամ երջանիկ են նրանցից, որ մարգերի վրա են շրջում, հովիտների ծաղիկների վրա են ճեմում և պաղ աղբյուրի գլխին նստած՝ իրենց հացն են ուտում. փառք տուր Աստծուն, Թոռնի՛կ, որ նույն բախտն ունես, և քո աշխատանքը շատ քաղցր և անուշ է:

Այսպես, աշխարհիս վրա ամեն կարգի և աստիճանի մարդիկ առավել կամ նվազ քրտինք թափելու են դատապարտված, որով սահմանված աստվածային վճիռը անվրեպ տարածվում է ամբողջ մարդկության վրա, այն է՝ «Քո երեսի քրտինքով ուտես քո հացը» (Հմմտ. Ծննդ. Գ 19): Այսպես արևի տակ, երկրի խորության մեջ, ցամաքի վրա, ծովերի վրա տաժանելի աշ-

խատանքով յուրաքանչյուր մարդ իր և իր ընտանիքի օրապահիկ հացը պիտի հայթայթի: Սրա համար է ասում իմաստուն Սողոմոնը՝ «Մարդու ամբողջ աշխատանքն իր բերանի համար է» (Ժող. 2 7): Արդար է այն մարդը, որ միայն իր քրտինքի հացով է ապրում, անիրավ է այն մարդը, որ առանց աշխատելու՝ ուրիշի քրտինքի հացն է ուտում, և ո՞վ կարող է չափել այն բազմադիմի զրկանքները, որ լինում են արևի տակ՝ աշխարհիս վրա, և զրկյալների դասը ամենամեծ մասն է կազմում:

Եվ գիտես դու, Թոռնի՛կ, նա, որ գիր չգիտե, կարդալ չգիտե, ուսում չունի, անկիրթ է, ումիկ է, մեկ խոսքով՝ տգետ է, նրա կյանքը միշտ թշվառ է աշխարհիս վրա: Տգետ մարդու ճակատագիրն է միշտ զրկանք կրել, և նույնիսկ տգիտությունն է ամենամեծ զրկանքը տգետ մարդու համար, թեպետ երբեմն նաև ուսյալ և կրթյալ մարդը, հարուստ և զորավոր տգետի ձեռքից զրկանքներ է կրում: Դու մի զարմացիր, որովհետև մարդու ընկերային կյանքի մեջ շատ հակառակ և հակասական բաներ կան, որոնք տեսնելով տարակուսում ենք և երբեմն նաև նախախնամություն դեմ տրտունջ ենք բարձրացնում, թե՛ «Ինչո՞ւ են բարիները հալածվում, չարերը հաջողության հասնում»:

Դավիթը ևս տեսնում էր այս բանը և Աստուծու առաջ բարձրացնում: «Ահա մեղաւոր են և հաջողակ են, կան և ունեն հարստությունն աշխարհի» (Սաղմ. ՀԲ 12): Թողնենք, Թոռնի՛կ, այս խնդիրը, նյութի կարգից դուրս է, սկսենք մեր կարևոր դասերը:



Բ. ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԳՅՈՒՂ ՈՒ ՔԱՂԱՔ

Բովանդակ աշխարհիս բնակիչները երկու դասի են բաժանվում՝ քաղաքացի և գյուղացի: Քաղաքացիները մեծամեծ քաղաքներ շինելով հարմարագույն տեղերում՝ նրանց մեջ են բնակվում: Իսկ գյուղացիները դաշտավայրերն են ընտրել և իրարից հեռու փոքրիկ-փոքրիկ գյուղեր շինելով՝ միայն երկրագործությունը են զբաղվում: Քաղաքացիների զբաղմունքը արհեստն ու վաճառականությունն է, և փոքր մասը միայն երկրի վարչական կառավարման զանազան պաշտոններ է վարում: Հարցրու, թոռնի՛կ, թե՛ «ի՞նչ զանազանություն կա քաղաքացիների և գյուղացիների միջև», - կամ՝ «Նրանց վարած կյանքի առավելություն կամ նվազություն, բարեկեցություն և թշվառություն տարբերություններն ի՞նչ են»:

Քաղաքացիների և գյուղացիների կյանքի նկարագիրը շատ ընդարձակ է, ես միայն պիտի

պատմեմ քեզ գլխավոր զանազանությունները, որ երևում են մեզ իրենց արտաքին երևույթով, մնացյալ մասերը կթողնեմ քեզ, որ դու ինքնուրույն խելամուտ լինես: Սիրելի՛ թոռնիկ, դու գյուղի մեջ փակված չես, շարունակ գնում ես քաղաք, գալիս ես, ամեն բան աչքովդ կարող ես նկատել, որովհետև փոքրիշատե ուսում ունես, մտացի և չափահաս ես, կարող ես ինքնուրույն դատել և կշռել թե՛ մեր, թե՛ քաղաքացիների կյանքը, որ յուրաքանչյուրն իր քաղցրությունը և դառնությունն ունի, բարեկեցությունն ու թշվառությունն ունի, առաքինությունը և մոլությունն ունի: Շատ և բազմակերպ բարի ու չար կողմեր կան, որովհետև մեր կյանքը մի խառնուրդ է, չարն ու բարին միասին են ապրում, ինչպես ցորենը և որոմն են միասին բուսնում և աճում:

Մեզ այնպես է թվում, թե քաղաքացիները շատ երջանիկ և բարեկեցիկ կյանք են վարում: Զորօրինակ տեսնում ենք Վան քաղաքը, որ մեզ շատ մոտ է, վայելուչ, բարձրաչեն տները, լայնածիր փողոցները, ուռի ծառերը՝ տնկված շարան-շարան ջրերի եզերքով, որ կարկաչելով վազում են շատ փողոցներից: Մտնում ենք տները, տեսնում ենք գեղեցիկ, նախշուն-նախշուն օդաներ, վայելուչ կահ-կարասիով զարդարված:

Քաղաքացիների սեղանը շատ ճոխ է՝ անուշ և համադամ կերակուրներով, որ պատրաստում են նահապետական ընտանիքները:

Հապա, թոռնի՛կ, մեր աչքին որքա՞ն սիրուն և նազելի են երևում պես-պես վայելչաճև հագուստները, որ շատ թանկագին են՝ թե՛ այրերի, և թե՛ կանանց, չմոռանանք այն շարան-շարան ոսկի մանյակները, որ կանայք և աղջիկները կախում են իրենց պարանոցներից: Թողնելով այս մարմնական վայելքը և հաճույքը, քաղաքացիներն ունեն նաև հոգևոր և բարոյական վայելքներ, նրանց եկեղեցիները և եկեղեցու հանդերձանքները շատ չքեղ և փառավոր են, տոնական հանդեսները, քաղցրաճայն դպիրները, հանդիսավոր թափօրները և պատարագները, և բոլորից առավել բարեկարգ քարոզիչ վարդապետները, որ եկեղեցու փառքն են և ժողովրդի մխիթարությունը:

Քաղաքացիները կրոնական և հոգևոր մխիթարությունից բացի, ունեն նաև մի մեծ մխիթարություն՝ այն է՝ դպրոց և կրթարան, ուր կարգալ-գրել են սովորում իրենց տղաներն ու աղջիկները, սրա համար քաղաքացիները շատ մեծ առավելություն ունեն մեզնից, որովհետև կրթությունը է միայն մարդը մարդ լինում, վերջ տալիս ուսմանը ու բիրտությունը, պիտա-

նի անդամ դառնում մարդկային ընկերակցութ-
յան, տերության, երկրի, իր ժողովրդի և ըն-
տանիքի: Եվ ընդհակառակը՝ տգետ ու անկիրթ
մարդը անպիտան և վնասակար է իր տերու-
թյան, ժողովրդի և ընտանիքի համար:

Ափսո՛ս, ազնի՛վ թոռնիկ, որ պապիկդ չի
կարող երկար ճառերով նկարագրել քեզ և
ցույց տալ, թե ի՞նչ է գիտությունը և ի՞նչ՝
տգիտությունը: Մի՞թե չգիտես, վարժապետը
քեզ չսովորեցրե՞ց, որ գիտությունը լույս է,
խսկ տգիտությունը՝ խավար: Դու չկարդացի՞ր
մեր սուրբ Եղիշեի խոսքը, թե՛ «Կույր մարդը
զրկվում է արևի ճառագայթներից, այդպես
տգետ մարդը զրկվում է կատարյալ կյանքից»:
Ինչպես մենք՝ գյուղացիներս զրկված ենք կա-
տարյալ կյանքից թե՛ բարոյապես, թե՛ նյութա-
պես: Բայց պետք է ուշադիր լինես, թոռնի՛կ, և
այնպես չկարծես, թե քաղաքացիների վիճակը
հավասարապես բարեկեցիկ է, ո՛չ, այդպես մի՛
դատիր: Քաղաքացիների մեծ մասը շատ թշվառ
և չարաչար կյանք է վարում, մեծ չարչարան-
քով իրենց օրական պարենն են ճարում, խիստ
սակավապետություններ են ապրում: Կարոտ են
մի աման թանապուրի, մեծ բախտ է, եթե մի
կով կամ մի այծ ունենան: Տեսնում ես իրենց
տները, որ մեր խրճիթներից շատ տարբեր չեն,

տեսնում ես իրենց հագուստները մաշված ու
պատառոտած, և իրենց դեմքերը՝ չունեն զվար-
թություն և կայտառություն, հանապազօրյա
ընտանեկան հոգածությունից հոգնած, շրջում
են դատարկ և անգործ, որ մեծ մասամբ իրենց
ծուլությունից են այդ վիճակին հասել:

Կան նաև քաղաքացիների դասից այնպիսի
մարդիկ, որ արտաքին ցուցամուլություններ
ներքին հոռությունը և թշվառությունը ծած-
կելով՝ ուզում են վարկը բարձրացնել, նորա-
նոր հագուստներ են փոխում, մեծ-մեծ բաներ
են խոսում, այնպես, որ կարծում ես դրամա-
տեր, վաստակ ունեցող և տունը շեն պահող մի
մարդ է, բայց եթե մտնես նրա տունը՝ կտես-
նես դատարկ նույնիսկ կարևոր և կենսական
բարիքներից, ո՛չ ամանի մեջ հաց կա, և ո՛չ
կճուճում մի գդալ յուղ: «Հապա ինչպե՞ս են
ապրում»: Է՛, թոռնի՛կ, այդ մի հարցրու, միայն
երեք բառով հասկացնեմ քեզ՝ խաբեություն
և նման բաներով: Քաղաքացիները թեև փոք-
րիչատե կրթված են, ընկերային կյանքում շատ
թե քիչ քաղաքավարության շնորհ ունեն, բայց
օրըստօրե անբարոյական կյանքի զեղծումներն
ավելանում են իրենց մեջ: Սիրելի՛ թոռնիկ, ես
հիշում եմ, սրանից հիսուն տարի առաջ քա-
ղաքի ընտանիքները մեկիկ-մեկիկ նահապետա-

կան տներ էին, երկյուղած և աստվածավախ, ժամասեր և աղոթասեր, աքլորականչին տան միջի ամբողջ ընտանիքը զարթնում էր, տղամարդիկ մանուկների հետ եկեղեցի էին գնում, և այսպես այն ժամանակի բարեպաշտ հայրերը իրենց զավակներին փոքր հասակից բարեպաշտության մեջ էին կրթում՝ իրենց բարի օրինակով: Իսկ ծնողների կրթությունը ուրիշ բան չէր, խրատից և խոսքից ավելի, բարի օրինակն էր. և գիտե՞ս, Թոռնի՛կ, մի բարի օրինակը հազար խրատ արժե: Անցավ, գնաց այն բարի ժամանակը, իր հետ տարավ այն առաքինի նահապետական մարդկանց: Արդի ժամանակը նորանոր մարդկանց աշխարհ բերեց, որովհետև ամեն ժամանակ իր մարդն ունի, այժմ աշխարհը փոխված է. մարդիկ առաջադիմություն են սիրում, միայն թե ճշմարիտ առաջադիմության պայմանը, միջոցը և նպատակն ի՞նչ է, այդ դեռ չգիտեն: Մեր քաղաքացիները առաջադիմության միայն մի մասն են ըմբռնել, այսինքն՝ դրամ շահել և հարստանալ, ի՞նչ միջոցով կլինի, թող լինի: Ազահության և շահամոլության ոգին այնչափ սաստկացած է, որ շահավաճառության մեջ յուրաքանչյուր մարդ միայն իր շահն է փնտրում, նա հաշիվ չի անում և չգիտե, թե ընկերոջ և իր շահը համերաշխություն ու-

նի, և մարդիկ միշտ շահակից են իրար հետ: Բայց շահամոլության անհագ, անխիղճ ոգին առանձին է ապրում աշխարհիս վրա՝ և ասում է՝ «Ես շահեմ, ես հարստանամ, ես մեծանամ և վայելեմ աշխարհիս բոլոր վայելքները, ինձ ի՞նչ փուլթ, թե ընկերը կկործանվի կամ աղքատ Ղազարոսի նման ընկած իմ դռան առաջ, սեղանի փշրանաց կարոտ կքաշի»:

Բայց, Թոռնի՛կ, թողնենք շահամոլ քաղաքացիների նկարագիրը՝ դառնանք մեր գյուղին, որովհետև իմ նպատակն է միայն գյուղական կյանքի և աշխատանքի մասին խոսել և ցույց տալ քեզ, թե որքան քաղցր է գյուղական ժողովրդի կյանքը, և որքան մեծ է հողագործության արդյունքը, որ աշխարհիս բոլոր արվեստների մայրը երկրագործությունն է, և իրենով է միայն աշխարհս ապրում, որովհետև մարդու սնունդը և կյանքը հացն է: Թողնում եմ այն բազմապատիկ այլ և այլ բուսական արդյունքները, որ մարդն իր ճարտարությունը է պատրաստում մեր կյանքի կարիքների համար, և այնքան, որ թիվ և սահման չունեն, որոնց մասին համառոտ կպատմեմ քեզ հետագա դասերին:



Գ. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Լավ լսիր, Թոռնի՛կ, որ լավ հասկանաս, որ աշխարհիս բոլոր մարդկանց սնունդը և կյանքը հողագործության արդյունքներից է: Մեր բնական լայնածավալ երկիրն իբրև մայր սնում է մեզ իր բազմատեսակ բուսական բերքերով: Թեպետ երկիրն ինքնիրեն է պտղաբերում, ինչպես ասաց Հիսուս, բայց մարդը պետք է օգնական լինի երկրին: Տեր Աստված ամեն տեսակ սերմերը իր բարերար արարչագործությամբ նախապատրաստել է, բայց մարդը ևս իր աշխատանքի մեծ բաժինն ունի. պետք է վարի, ցանի, ջրի և խնամք տանի, որպեսզի կարողանա հնձել, կալսել ու ժողովել շտեմարանում և այնուհետև վայելել իր աշխատանքի արդյունքը: Այսպես, Թոռնի՛կ, Մայր երկրի ինքնապտղաբերության հետ մեկտեղ, անհրաժեշտ է, որ մարդու աշխատանքը ևս միանա: Բայց պետք է գիտենաս նաև, որ երկրի պտղաբե-

րությունը և մեր աշխատանքը դարձյալ ոչինչ
չեն կարող արդյունավորել, եթե երկնային Հոր
բարերար կամքը չծագեցնի արևն աշխարհիս
վրա իր համատարած լույսով, և հրաման չտա
ամպերին, որ անձրև տեղան լեռների, դաշտե-
րի ու մեր ցանած արտերի վրա: Դու տեսել
ես, որ մենք սովոր ենք ավելի մեր նեղության
մեջ հիշել Աստծուն: Ժողովուրդը ջերմեռանդ
սրտաբեկությամբ աղաղակ է բարձրացնում
դեպ երկինք՝ Աստված, անձրև տուր, անձրև:
Բարեգութ Աստված, լսելով ժողովրդի ձայնը,
թափում է երկնքի ամպերից իր բարի կամքի
անձրևը:

Հասկանում ես, Թոռնի՛կ, երկնի արևը և
անձրևը, երկրի պտղաբերությունը և մեր աշ-
խատանքը միանալով, ամբողջ աշխարհի մարդ-
կանց կյանքի սնունդ են պատրաստում, մար-
դիկ վայելում են և լիանում առավել կամ պա-
կաս: Մեր մշակած ցորենի հացը, մեր սնած
անասունների միսը, կարագը, յուղը և պանի-
րը, մեր աճեցրած բանջարեղենը, մեր փեթակ-
ների մեղրը, մեր տնկած այգիների խաղողն ու
գինին, մեր ձեռատունկերի հասած պատվական
մրգերը, գնում-հասնում են մինչև թագավորի
սեղանը և այն զարդարում թագավորավայել
ճոխությամբ: Աշխարհիս պետական գործիչ-

ները և բոլոր քաղաքաբնակ մարդիկ վայելում
են իրենց աստիճանի և կարողության չափով,
անշուշտ մենք էլ մեր չափով վայելում ենք մեր
քրտինքով աշխատածի արդյունքը:

Թողնենք հացը և մնացյալ բաները, որ գյու-
ղական ժողովուրդն է պատրաստում մարդկանց
կյանքի և սնունդի համար, այդ չէ միայն: Եվ
տես դու, որ նույն մշակ ժողովուրդը պատրաս-
տում է մարդկանց մերկության ծածկույթ, որ
Տեր Աստված միայն մի անգամ թղենու տերևով
ծածկեց: Այժմ թվեմ քեզ, Թոռնի՛կ, այն բոլոր
սկզբնական նյութերը, որ մշակելով առաջ է
բերում երկրագործը և հանձնում արհեստավո-
րին: Մենք մշակում ենք բամբակ՝ տալիս ենք
կտավագործին, նա ժողովրդի համար շապիկ
է պատրաստում, և արհեստավարժ տարագա-
գործը քանի՞ բազմազան ծաղկենկար չիթեր է
հնարում, որով լցված են աշխարհի վաճառա-
կանների տները և շուկաների խանութները:

Մենք տնկում ենք թթենին և հանում շերամի
այն զարմանալի խոզակը, որ վաճառականնե-
րի ձեռքով հասնում է մետաքսագործի ձեռքը,
և նա հիանալի կերպասներ է պատրաստում,
որով սիրամարգի նման պճնվում են աշխարհիս
թագուհիները և պալատականները: Հին ժամա-
նակ այդ պերճանքի հանդերձ միայն թագա-

վորական տներին և իշխանուհիների առանձնաշնորհյալ պատիվն էր: Բայց այժմ հասարակ ժողովրդի ընտանիքները ևս նույն ծիրանափայլ զգեստներով են զարդարվում:

Թողնենք շերամի մշակութունը, հապա ո՞վ է մշակում այն պատվական կտավատը, որի սերմերից ձեթ հանելով մեր ճրագներն ենք վառում, երբեմն էլ ձեթով փլավ եփում: Որքա՛ն օգտակար է ձիթենու յուղը: Իսկ կտավատի ցողունից վարպետ ձեռքը ընտրելագույն քաթան կտավներ է պատրաստում, որ ձյան պես սպիտակ են լինում, և մի շապիկացուն մինչև մեկ ոսկու արժեք է ունենում: Բայց քաթանից, բամբակից և մետաքսից զատ կան նաև ուրիշ բուսական նյութեր, որոնցից հնարամիտ արհեստավորը ոչ միայն հանդերձի համար, այլև բովանդակ աշխարհի գրողների համար, տպագրության համար անհուն քանակությամբ թուղթ է պատրաստում: Բուսական խոտից, անգամ փայտի տաշեղներից, որ մենք անպետք համարելով վառում ենք, թուղթ է պատրաստվում:

Թողնենք, Թոռնի՛կ, ուտեստի և հագուստի վերաբերյալ բաները, որ գյուղական ժողովրդի աշխատանքի շնորհիվ են պատրաստվում: Հապա ո՞վ է տնկում անտառի ծառերը և պատրաստում աշխարհիս մարդկանց բնակության

անթիվ, անհամար շինանյութի փայտերը, թողնենք երկրի ցամաքը, ծովի վրա գնացող նավերի փայտերը: Թեպետ սկզբում Տեր Աստված այս մեր աշխարհի լեռները, դաշտերը ինքնաբույս անտառներով էր զարդարել, բայց երկրի բնակիչ մարդիկ կտրելով սպառել են այժմ այդ հին դարերի հավիտենական անտառները: Այնուհետև սկսվեց անտառի մշակումը, որ երկրագործության մի կարևոր ճյուղն է: Գիտե՞ս, թե այժմ տնկելով, խնամելով որքան նորանոր անտառներ են հասունանում: Երանի՛ թե բախտ ունենայիր, Թոռնի՛կ, Եվրոպա գնալու և տեսնելու այն գեղեցիկ մայրի ծառերի և այլ պես-պես անտառները՝ թե՛ հնատունկ, թե՛ նորատունկ, որ խնամում և պահպանում է անտառապահ մշակը: Գիտե՞ ժամանակին հինը կտրել կարգով և նոր մատաղ տունկ տնկել, կամ անտառի սերմեր ցանել և այնպիսի ճարտարություն բնամել, որ մի քանի տարվա մեջ այդ փոքրիկ սերմիկները մեծ-մեծ ծառեր են լինում և ծածկում գետնի երեսը, որոնց հովանու տակ է հանգստանում աշխատավոր մշակը, անուշ-անվրդով քուն է մտնում, իսկ անտառի քաղցրախոսիկ սոխակները հոգնած մշակին օրոր են կարգում:

Այսքանը միայն խոսելով, մտավա՛րժ Թոռ-
նիկ, կարծեմ լավ հասկացար, թե արքան մեծ
է և պիտանի հողագործության արդյունքը, որ
մշակ ժողովուրդը մատակարարում է աշխար-
հիս քաղաքացի ժողովրդին: Իսկ քաղաքացի
ժողովուրդը, ընդունելով այդ բոլոր վայելքնե-
րը, ինքը ևս գյուղացի ժողովրդի խիստ կարևոր
պետքերն է հոգում, և համերաշխ մի փոխանա-
կություն է լինում երկուստեք, որով բարվոք
առաջնորդվում են աշխարհիս՝ իրարից անջատ-
յալ բնակիչները. գյուղացին՝ գյուղում, քաղա-
քացին՝ քաղաքում:



Դ. ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

Սիրելի՛ Թոռնիկ, տեսնում ես, միշտ և դյու-
րապես կարող ես ըմբռնել, թե ի՞նչ է
փոխանակումը մեր տուրևառական կյանքում:
Առանձին մարդը, սոսկ իր ինքնաշխատության
արդյունքով չի բավականանում, որովհետև
մարդկային ընկերակցությունը համաշխատու-
թյամբ է ապրում. այսինքն՝ ինչ որ մենք ու-
նենք, այն տալիս ենք և ինչ որ հունենք՝ այն
առնում: Մենք ունենք շատ բաներ, որ քաղա-
քացին հունի, նմանապես քաղաքացին ունի
շատ բաներ, որ մենք հունենք:

Օրինակ՝ մենք ցորեն ունենք և ուրիշ շատ
ընդեղեն և բանջարեղեն, ոչխար և տավարներ
ունենք, կաթ, պանիր և յուղ ունենք: Կան նաև
երկրագործության շատ այլ և այլ արդյունքներ,
որոնց ավելորդը ծախելով՝ զնում ենք մեզ պետք
եղած բաները, որ շատ քիչ են, որովհետև գյու-
ղացիների կյանքի պետքերն ավելի պարզ և ան-

պաճույճ են: Մեր հազուստի համար բավական են շալեղեն և կտավեղեն նյութերը: Ընտանիքի համար Վանա չիթը, կարմիր կտավը և տեղական մանրսան բավական էին ժամանակին, իսկ այժմ Եվրոպայի փտած բասմաները և չուխաները բավական չեն համարվում:

Է՛, Թոռնի՛կ, ժամանակը փոխվել է. գյուղական ընտանիքների ճաշակը ևս բացվել է քաղաքացիների պես: Քաղաքի ընտանիքների փայլուն զարդարանքներն, անշուշտ, հրապուրում են մեր պարզասեր ընտանիքներին: Բայց պետք է գյուղացի ժողովուրդն ամենայն կերպով աշխատի իր պարզութիւնը և իր սակավապետ կյանքի սովորութիւնները պահել, որովհետև գյուղացին իր աստիճանի չափով պետք է ապրի: Ես առանձին դասով պիտի խոսեմ քեզ դարձյալ այս նյութի վրա:

Հագուստից զատ, գյուղացիների աշխատանքին ամենապիտանին երկաթե գործիքներն են, որ պատրաստում է քաղաքի արհեստավորը, և մենք առնում ենք դրամով: Մեր գութանի խոփը, հնձելու գերանդին ու մանգաղը և այլ կարևոր երկաթե բաները, որ մեզ անհրաժեշտ են, դարբինն է պատրաստում մեզ համար:

Հարցրու, Թոռնի՛կ. միթե չի լինի, որ գյուղացին իր բոլոր պետքերն ինքը հոգա: Ապրե՛ս,

Թոռնի՛կ, դա շատ խելացի հարցում է: Ցանկանում ես, որ գյուղացին երբեք կարիքը չունենա քաղաքացու: Այո՛, դա շատ դյուրին բան է թվում, միայն թե գյուղացին ևս գրել-կարդալ սովորի քաղաքացիների պես, միտքը բացվի, մտածել կարողանա և իր չափով առաջադիմի, այն ժամանակ նա կմտածի և մի քանի խելոք մանուկների քաղաքի դարբնի մոտ աշակերտ կդարձնի: Կարճ ժամանակում աշակերտը լավ կսովորի, կվերադառնա գյուղ, մի դարբնի խանութ կբանա, ոչ միայն իր գյուղին, այլև շրջակա գյուղերի համար կսարքի-կպատրաստի պետք եղած գործիքները: Բացի այս. մենք մեր պարզ հագուստները ևս կարող ենք պատրաստել, քանի որ գյուղացին բուրդ և բամբակ ունի: Թեպետ մեր Վանա երկրում բամբակի մշակութունը չի հաջողվում, բայց Մուշում, Երզնկայում, Խարբերդում և այլ բազում գավառներում բամբակի մշակումը բավական հաջող է: Վանի գյուղացիների համար բամբակը չի պակասի: Պարսկաստանի մերձակա սահմաններից բազում քանակությամբ բամբակ կգա. վանեցին կարող է առնել, մանել և կտավ գործել: Բայց ավելի լավ է, որ գյուղացին ոչխարի բրդից, շալեղեն բաներ գործելով, իր հագուստները պատրաստի: Մանավանդ ձմեռ ժամանակ,

որ մշակութային գործերից ազատ է, կարող է շալ գործել և ուրիշ արհեստներով զբաղվել, որ գյուղական ժողովրդի համար կարևոր և պիտանի են:

Շատ եմ ցավում, Թոռնի՛կ, որ մեր Վանա և Մշո գյուղացիները շատ ծուլ և անաշխատ կյանք են վարում, մանավանդ քաղաքի շրջակա գյուղերի բնակիչները, որ խումբ-խումբ հաճախելով քաղաք, դեգերում են գինետներում օրերով հարբեցող և մոլի լինում: Ես չեմ ասում, որ աշխատավոր գյուղացին զրկվի այդ վայելքից, այն ինչ քաղաքացին ավելի չափազանց կերպով է վայելում: Եվ գիտե՞ս դու, ամբողջ Վանի և շրջակա գյուղերի այգիներում գրեթե երկու հարյուր հազար լիտր գինի է լինում, և այդ ամբողջը Վանի գվարձասեր և գինեսեր ժողովուրդը խմելով սպառում է: Եվ ի՞նչ անի՝ չսպառի. մյուս տարի այն քացախ կդառնա: Այգեպանները գինեգործության արհեստը չգիտեն, եթե գիտենային՝ դարձյալ անօգուտ կլինեիր. չեն կարող շահագործել, քանի որ փոխադրության միջոց չունեն, ծովից շատ հեռու, ճամփաները դժվարին և անհարթացած են: Խնամատար տերության շնորհիվ, Թուրքիո շատ գավառներում քաղաքից քաղաք ճամփաները շինվելով հարթվեցին, և այդ գավառների շահույթն օրըստօրե աճում է: Հույս ունեմ, որ

մեր գավառները ևս նույն բախտը կունենան, և այնժամ ոչ միայն գինին, այլև մշակութային արդյունքները պիտի հնարավոր լինի փոխադրել մինչև Տրապիզոնի նավահանգիստը:

Ահա, սիրելի՛ Թոռնիկ, քո հարցմանը պատասխանելով, կարգն այնպես բերեց, որ ուրիշ բաներ էլ խոսեցի: Բայց պետք է դառնամ քո հարցմանը և բացատրեմ քեզ աշխարհի տնտեսության մի կարևոր օրենքը, որ մարդկային ընկերակցության անդամներին իրար հետ է կապում շահագործման ու առևտրական միջոցներով:

Դու ուզում ես, որ գյուղացին իր աշխատանքով իր բոլոր պետքերը հոգա, երբեք կարիք չունենա քաղաքացիներից բան գնելու և իր պետքերը հոգալու: Է՛հ, Թոռնի՛կ, մոլորվում ես, այդ դատողությունը՝ սոսկ մանկական մի բաղձանք է, հակառակ ընդհանուր մարդկային ընկերակցությանը, բարոյական միության և համերաշխական շահին: Դու պետք է գիտենաս, որ մարդկային ընկերակցությունն իրարով է ապրում, մեկի կարիքը և պակասությունը՝ մյուսն է լրացնում, և աշխարհիս ամեն բան փոխանակությանը է կառավարվում: Դու ի՞նչպես ես ուզում. ցորենը տանես քաղաք, ծախես և շուկայից բան չառնելով՝ ետ դառնաս, այսինքն՝ միայն ծախես և երբեք չգնես: Այս կերպ առևտուրը

չատ անիրավ և անարդար է, հավասարապես թե՛ վաճառականներին, թե՛ արհեստավորներին մեծ զրկանք կլինի ու կփակվի նրանց ապրուստի դուռը: Որովհետև ինչպես դու ես ցորեն և այլ մշակութային բերքեր ծախելով ապրում, վաճառականն էլ իր ապրանքը ծախելով է ապրում: Մի գավառի ժողովրդի ամենամեծ մասը գյուղացիությունն է, եթե գյուղացին իր առևտուրը կտրի քաղաքից, եթե քաղաքի ժողովուրդն ապրի, նմանապես գյուղացի ժողովուրդը կապրի՞, եթե իր մշակութային բերքերը քաղաքացիներին չծախի, կամ իր նեղության մեջ չզիմի քաղաքացի բարեկամին և փոխառություն չանի: Ո՞վ չզիտե, որ գյուղացիների գանձարանը քաղաքն է: Խեղճ գյուղացին իր մշակութային բովանդակ բերքերով չի կարող տակավին իր պետքերը և պարտքերը հոգալ և ժամանակին վճարել տերության տուրքերը: Սրա համար նա միշտ հարկադրված է դրամատեր քաղաքացուն դիմել և փոխ դրամ խնդրել:

Այս մասին դարձյալ պիտի խոսեմ, Թոռնի՛կ, և դու պետք է համոզվես և ուսանես, որ քաղաքը՝ գյուղով, և գյուղը քաղաքով է ապրում, որովհետև աշխարհի տնտեսությունը մի կարգավորված օրենք է, որով կառավարվում են բովանդակ ազգերն ու ժողովուրդները:

Ե. ՄԵՐ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Տեսնո՞ւմ ես, ի՛մ սրատես Թոռնիկ, որ մեր գյուղական ժողովրդի հողագործությունն վիճակը նույն՝ հնություն խանձարուրի մեջ է, դեռ հին-հին դարերի մեջ ենք թափառում, մեր հողագործության բոլոր աշխատանքները դառնաբրտինք տանջանք են, մեր բանեցրած գործիքներն անտաշ, անարվեստ և կոպիտ շինվածքներ են, որ ոչ միայն մեզ են տանջում, այլ առավել մեր խեղճ անխոսուն անասուններին:

Տե՛ս, ահա գյուղացի մշակը ցորենի որանը բարձած սայլին՝ արտից գալիս է, մի զույգ ուժեղ գոմեշներ է լծել և մի զույգ եզներ, որ սայլը դժվարությամբ քաշելով կես ժամվա ճանապարհը մի ժամում հազիվ են բերում կալատեղ: Անխիղճ սայլորդը անխնա խարազանելով քշում է: Խեղճ գոմշուկները, լեզուները դուրս հանած, շնչասպառ փնչփնչալով քաշում են: Մոտ գնանք, տե՛ս, Թոռնի՛կ, այդ կոպիտ,

սոսկավիթխար սայլը: Չափիր սայլի երկարու-
թյունը և լայնությունը, սայլի սունակների հետ
միասին կդառնա սունակի վրա դրված մառանը՝
իր ակներով հանդերձ, եթե կշռենք՝ հարյուր
լիտրից ավելի է, որովհետև ամբողջությամբ
թեղի ամուր փայտից է շինված, որ շատ ծանր
է փայտերի տեսակների մեջ, ուստի սայլն ինք-
նին մի ահագին բեռ է, և այս բեռան վրա բառ-
նում են մինչև հարյուր հիսուն և ավելի ցորենի
խրձեր:

Շատ եմ մխիթարվում, Թոռնի՛կ, որովհետև
տեսնում եմ այժմ Վանա գյուղական ժողովուրդն
սկսել է Կարինի թեթև սայլերը գործածել, որ մեծ
դյուրություն են տալիս երկրագործին:

Գնանք մոտ, ահա այնտեղ արտ են վարում:
Ցույց տամ քեզ Ադամի գութանը. տե՛ս մի հաստ
կորամեջք հացի փայտ է, երեք կանգունից ավե-
լի երկարություն ունի: Սրան էլ են ասում Վանի
գյուղացիները, հիրավի դանդաղ մի էլ է քաշե-
լու համար: Այս էլը փայտի հակառակ կողմին
կցված առատամն է, և նրա գլխին են անցկաց-
րել երկաթե խոփը: Վանա գութանով մի գույգ
ամուլածիգ գոմեշներով և երեք գույգ եզներով են
հերկում գետինը, որի բացած ակոսները հազիվ
մի մեծ թզաչափ խորություն ունեն: Բայց ասեմ
քեզ, Թոռնի՛կ, եթե դու Մշո դաշտի, Ալաշկեր-

տի և Արարատյան երկրի գութանները տեսնես,
պիտի սոսկաս, ինն գույգ կովան գոմեշներով և
եզներով հազիվ են բանեցնում այդ կոպիտ գու-
թանը, և իր բացած ակոսը շատ մեծ տարբերու-
թյուն չունի մեր գութանի ակոսից, գյուղի մի
քանի տներ միանալով հազիվ են կարողանում
մի գութան լծել: Մեր Վանա գյուղերի գութան-
ները, եթե դրանց հետ բաղդատենք, շատ ավելի
կատարելագործված են, քանի որ մեր գութա-
նի հյուսնները շատ վարպետ են և լարաչափով
այնպիսի ուղղություն են տալիս գութանին, որ
երբեմն առանց շեղվելու գծի վրա քայլում է և
ակոս բացում: Բայց եթե Եվրոպայի գութանի
հետ բաղդատենք, մեր գութանը ետ է մնում:
Որովհետև մի գույգ գոմեշ կամ երկու գույգ
եզը, եթե լծես Եվրոպայի գութանին, ամենայն
դյուրությամբ գետինը կհերկի, թեկուզ կորդ
լինի, այնինչ մեր գութանը պետք է չորս եզով
բանեցնես: Եվ գիտե՞ս, Թոռնի՛կ, թե ինչ խնայո-
ղություն է երկրագործական աշխատանքի հա-
մար, երբ չորս լծի տեղ կարողանանք երկու լծով
հերկել: Մանավանդ որքան ձեռնտու և շահա-
վետ է գյուղացի այն տների համար, որոնք շատ
լծկան տավարներ չունեն:

Շատ ուրախ եմ, Թոռնի՛կ, ես լսեցի և գնա-
ցի-տեսա. Վանա մեջ մի ճարտար, հնարամիտ

Հյուսն կա՝ վարպետ Դավիթ են ասում, որ ամենայն ճշտությամբ Եվրոպայի գութանների նման է շինում: Նմանապես մի այլ արհեստավարժ դարբին կա՝ Ալեքսան անունով, նա էլ գութանի երկաթե մասեր է պատրաստում, բավական է, որ կաղապարը ցույց տաս: Այժմ Վանա շրջակա գյուղացիներն սկսել են այդ գութանը գործածել. գինը շատ էժան է, երեք ոսկիով մի գութան է հնարավոր շինել: Ի՛նչ դյուրութուն է, գիտե՞ս, Թոռնի՛կ, գյուղացիների համար պատրաստի գութան գնելը: Ես գիտեմ՝ խեղճ գյուղացին թե՛ գութանի համար, թե՛ սայլի համար, և թե՛ մշակության պետք եղած այլ և այլ փայտեր գնելու համար, թողնելով իր դաշտային աշխատանքը, օրերով գնում-դեղերում է Վանա ծառաստաններում, որ հարմար փայտեր գտնի և որքան թանկ ստիպված կլինի գնել այն:

Երանի՛ Վանում մի գործարան բացվեր, ճարտար Հյուսներով և երկաթագործներով մի չափավոր ընկերություն կազմելով՝ երկրագործության համար պետք եղած բոլոր գործիքները պատրաստեին այդ գործարանում, ոչ միայն գութան՝ այլև փոքր արորներ, թեթև սայլեր, որոնց սունակները անիվների մեջ պտտվեին, կալսելու համար բոլոր գործիքները՝ կամսասայլ, ջարջառ, մանկեռ, տափան, լուծ և այլն:

Այն ժամանակ կտեսնես դու, Թոռնի՛կ, թե ինչքան դյուրութուն կլինի երկրագործ ժողովրդի համար: Եվ որքան պիտի շահի այդ փոքրիկ ընկերությունը, ոչ միայն Վանա գյուղացիներին, այլև դրացի գավառների համար էլ կկարողանա պատրաստել, որովհետև Վանա ծովակը մեծ դյուրութուն է տալիս մշակության գործիքների փոխադրության համար: Եթե հաջողի այս ձեռնարկը, հին գործիքները փոխվեն նորի, շատ պիտի առաջադիմի երկրի արդյունաբերությունը, որ ոչ միայն հպատակ ժողովրդի, այլև Տերության հասույթի կրկնապատիկ հավելում կլինի, որովհետև երկրի մշակության բարգավաճումը՝ Տերության գանձարանի հարստության աղբյուրն է:

Այսպես, Թոռնի՛կ, հին գործիքները նաև հին նախապաշարմունքն ի բաց թողնելով, պետք է ընդունենք նորանոր գործիքները, թեպետ անգիտակ ժողովրդի համար բավական դժվարին է: Բայց երբ ժողովուրդն իր աչքով տեսնի գործնական օրինակը, աշխատելու դյուրութունը և շահն ու վաստակը, նա իսկույն կքաջալերվի և հետամուտ կլինի փորձելու և սովորելու: Մի՞թե դու այնքան ապուշ և տխմար ես կարծում մեր գյուղացի ժողովրդին, որ իր շահը աչքի առաջ տեսնի և չաչխատի ձեռք բերել:

Մտի՛կ արա, Թոռնի՛կ, քեզ մի փոքրիկ պատմություն անեմ, համոզվես, որ մարդիկ՝ ինչ բան որ շահաբեր է, այն իրար ձեռքից ջանում են հափշտակել:

Պատմում են, թե մի ֆրանսիացի բավական քանակություն փաթաթեա, իբրև սերմ Ամերիկայից փոխադրել է ի Ֆրանսիա և մի արտ փաթաթեա տնկելով՝ կարողացել է մեծ բերք ստանալ: Եվ որովհետև իր նպատակն այն է եղել, որ այդ օգտակար տունկի մշակությունը տարածի Ֆրանսիայում, ուստի իր մշակած փաթաթեա ցանկացել է ձրի բաշխել ժողովրդին, ոչ մի կարևորություն չտալով, թե ժողովուրդը գուցե կծաղրի: Դու տե՛ս՝ ի՞նչ է անում հնարամիտ ազարակատերը. կառավարությունից ոստիկաններ է խնդրում և պահապան դնում փաթաթեա արտին: Բայց գաղտնի հրահանգ է տալիս ոստիկաններին՝ եթե մտնեն փաթաթեա արտը և գողություն անեն, պահապանները այնպես ձևանան, իբրև թե չեն տեսնում, թողնեն: Մարդիկ տեսնում են, որ պահապաններ կան արտի վրա. «Ուրեմն, ասում են, արտի մեջ լավ բաներ կան ուտելու»: Սկսում են ճարպկություն արդանալ փաթաթեա, առաջ հում-հում են ուտում և հետո եփում են, տեսնում են, որ մի ընտիր բան է, հավիլիթի պես

համ ունի և բավականին սնունդ է տալիս մարդուն: Ահա այս կերպով ոչ միայն Ֆրանսիայում, այլև համայն Եվրոպայում տարածվում է փաթաթեա մշակությունը, որ սովի ժամանակ ժողովրդի համար մի ազատարար սնունդ է:

Տեսա՞ր, Թոռնի՛կ, ինչ վարպետ եղանակ բանեցրեց հանճարեղ ֆրանսիացին, իր գյուտը գողերի ձեռքով ամբողջ Ֆրանսիայում տարածեց: Թողնենք Ֆրանսիան, այսօր համայն Եվրոպայում փաթաթեա մշակությունը են զբաղվում. ցորենից հետո ամենակարևոր բանն է համարվել սննդի համար:

Որքան ցանկալի կլինեն, եթե մեր մշակ ժողովուրդը ևս այս օրինակին հետևելով՝ սովորեն մշակել այդ շահավետ բույսը, որ մեկի տեղ մինչև երեսուն-քառասունն է պտղաբերում, և երբ պատահեր, որ ցորենի մշակությունը չհաջողվեր, փաթաթեա մշակումը կլցներ նրա տեղը, և այլևս մարդիկ սովի դառն աղետից ազատ կմնային:

Մշակության գործիքների վրա խոսելուց հետո, գիտե՞ս, Թոռնի՛կ, ավելի կարևոր՝ կենդանի գործիքներ ևս կան, այն է՝ մեր լծկան աշխատավոր անասունները, որ մեզից առավել են խոնջում մշակության ամենածանր աշխատանքներում: Բայց պետք է գիտենալ, թե

մշակութայան համար ո՞րն է ավելի հարմար, ե՞զը, գոմե՞շը, թե՞ ձին: Մենք սովորաբար եզ և գոմեշ ենք գործածում, փորձը ցույց է տալիս մեզ, որ հեզաբարո եզն ավելի հարմար է, քան գոմեշը, գործածութայան համար մեծ դյուրու- թյուն է տալիս:

Որովհետև գոմեշը մեծ աշխատանք և դժվա- րություն է ավելացնում մշակին, մանավանդ գարնան սկզբին, երբ ձմռանը ախոռում գիրա- ցած, կազդուրված դուրս են հանվում, մի քա- նի շաբաթ պետք է, որ այդ ամեհի և կատա- ղի կենդանիներին ընտելացնես և ապա կարո- դանաս նրանց սեզ պարանոցը լծի տակ դնել: Դու տեսե՞լ ես, թե մշակները ի՞նչ միջոց են ի գործ դնում այդ կովարար գոմեշներն իրար հետ հաշտեցնելու համար: Այնպիսի հիմար և կոպիտ միջոց են մտածել-գտել, որ դրանց կովի տեսարանի առաջ մարդ չի կարող դիմանալ, եթե փափուկ սիրտ ունի: Երկու կովան գոմեշ դաշտ հանելով բաց են թողնում. տես դու այն- ժամ, թե ինչ ուժգնությամբ, ահագին ճայթու- մով գլուխ գլխի է գարնվում: Կովի վախճանն այն է լինում երբեմն, որ մեկը առաջին հար- վածը կրելով՝ տեսնում է իր տկարությունը և խուսա տալիս, երբեմն էլ հավասար ուժերը երկուստեք համառելով չեն բաժանվում, մինչև

մեկի կամ մյուսի ոտքը կոտրվում է կամ կոտո- շը արմատից թռչում: Մի գարմանալի օրենք կա այս կռիվների մեջ, երբ մեկը հաղթող է հանդի- սանում և մյուսը փախչում է, այլևս հաշտ են իրար հետ և հնազանդվելով գնում են միասին լծի տակ:

Չգարմանանք, Թոռնի՛կ, որ անգետ դյուղա- ցին գոմեշների հաշտութայան պայմանը այսպես է կնքում. միթե աշխարհի հաշտութայան օրենքը ևս այսպես չէ՞:

Թողնենք այս. գոմեշի գործածությունը ուրիշ չարչարանք և դժվարություն ևս ունի, որով- հետև գոմեշները որքան պինդ և հաստակաշի են, բայցև նույնքան փափուկ են և մեծ խնամք են պահանջում՝ ո՛չ ցրտի են դիմանում, և ո՛չ տաքի, ամռան օրերին մի քանի անգամ պետք է լվանաս, ձմռանը ևս գոնե մի քանի անգամ պետք է լվանաս և օժես ձեթով: Գիտե՞ս, թե որ- քան դժվար է զսպել այն գոմեշներին, որ չեն ընտելանում, միշտ կռիվ են սիրում և վրդո- վում են մյուսների խաղաղությունը: Մի մշակ պետք է դրա հետ զբաղվի առանձին և պահպա- նի դրան, գյուղացին միայն մի հնարք ունի, այդ անզուսպ կովողներին գործածելու, որ անմիջա- պես հնազանդվում են: Երբեմն գյուղացիները մեծ պարծանք են համարում իրենց համար, եթե

կովարար գոմեշ ունենան, որովհետև չինական ժողովուրդը ևս իր չափով փառասիրություն ունի: Որքա՛ն կհպարտանա մեր Թորոս աղբարը, երբ իր գոմեշը հաղթի Կիրակոսի գոմեշին. տե՛ս դու այն ժամանակ Թորոսի և Կիրակոսի կռիվը, մանավանդ երբ հաղթված գոմեշին վտանգ է պատահել՝ կամ ոտքն է կոտրել և կամ կոտոչն է թռել, և սրա հետևանքը թշնամանքը կամ վրեժխնդրությունն են լինում իրար դեմ:

Ինձ այնպես է թվում, Թոռնի՛կ, մշակութայն ծանր, անտանելի գործիքներն են պատճառ հանդիսացել գյուղացիների համար գոմեշ գործածելու: Բայց երբ գործիքները թեթևանան և դյուրանան, այլևս հարկ չի լինի գոմեշ գործածելու: Այո՛, անասնաբուծության մեջ գոմեշը ևս իր պիտանիությունն ունի իր կաշվի և մսի համար. հապա կոտոչը, որից եվրոպացին իր ճարտարությամբ բազմատեսակ բաներ է սարքում՝ դանակի, չախուրի կոթեր և կոճակներ: Իսկ մեզ մոտ ձեթ ծախողը կոտոչով է չափում իր ձեթը, և միայն այսքանն է պիտանիությունը:

Ուստի լավագույն է, Թոռնի՛կ, որ գյուղացիները համոզվեն և սովորեն մշակական աշխատանքներում ավելի եզ գործածել, որի խնամքը թե՛ ամռանը և թե՛ ձմռանը շատ հեշտ է. ո՛չ լվալու կարիք կա, և ո՛չ օձելու, բավական է

միայն քերուքով դրա կոնակը քերել և մաքուր պահել: Բայց պետք է եզների սերունդն ազնվացնել, ինչպես Ալաշկերտ գավառի եզները, որ շատ ընտիր և հսկա են. մեր վանա գավառի եզները շատ գաճաճ և անուժ են, դրա պատճառները կբացատրեմ քեզ իր տեղում:

Բայց ասեմ, Թոռնի՛կ, գոմեշից և եզից շատ մեծ առավելություն ունի ձին, եթե գիտենայինք և կարողանայինք գործածել այն մեր հողագործական աշխատանքներում: Գյուղացին կինդա թերևս, նա չի տեսել և չի կարող հավատալ, թե ամբողջ եվրոպական աշխարհը միայն ձի է գործածում երկրագործության մեջ, թեպետ անթիվ եզներ է խնամում, և դա միայն մսի և կաշու համար է: Ձիու հատկություններն ասեմ քեզ. նախ ձիու կուրծքը կրկնապատիկ ուժ ունի, քան եզան վիզը, երկրորդ՝ ձին արագություն ունի աշխատանքի մեջ, այնպես համարենք, թե եզը և գոմեշը գութանին լծված մի օրում հիսուն ակոս կբանան, անշուշտ, ձիու գութանը մինչև յոթանասուն և ավելի ակոսներ կբանա: Մանավանդ սայլ քաշելու և որան կալսելու համար ձիու գործածությունն անհամեմատելի է:

Բայց մի՞թե գյուղացին կհամոզվի իր հին ավանդական դրությունը և սովորությունը թողնել: Այո՛, Թոռնի՛կ, գյուղացին ևս իր

իրավունքն ունի, քանի որ կրթությունը և ժամանակը ձեռնտու չեն իրեն, և ամենից ավելի իր խոր արմատացած նախապաշարումը, այդ հնավանդ գաղափարը իր մտքից խլելու համար կրթություն և շատ ժամանակ է պետք:

Բայց միթե սպասե՞նք, որ նա կրթվի և մտքով հավանություն տա նոր առաջադիմությունը. ո՛չ, ինչպես խոսեցի նախապես, պետք է գործնական օրինակով ցույց տանք գյուղական ժողովրդին, որ տեսնի իր աչքով. քանի որ նա, որ գրել-կարդալ չգիտե, կժվարանա մտքով ըմբռնել, աչքի տեսությունը և հայտնի օրինակով շուտով կըմբռնի, և գործի շահավետ արդյունքը կմղի իրեն հետևելու օրինակին: Հին աշխարհի դարերում, երբ գիր չկար, ո՛չ դպրոց և ո՛չ կրթություն, ամեն բան, նաև արհեստը, աչքի վարժությունը էին սովորում իրարից, և նույնիսկ արդի մեր արևելյան աշխարհը նույն վարժությունը է ուսանում պարզ արհեստները, օրինակ՝ դարբնություն, դերձակություն, կոշկակարություն, հյուանություն և այլն: Մինչդեռ արևմտյան առաջագեմ աշխարհն այդ արհեստները նախ տեսական կերպով է դպրոցում դասավանդում, և երբ դպրոցից ելնում է աշակերտը, շատ դյուրությամբ ուսանում է գործնական վարժությունը արհեստանոցում:

2. ՎԱՐՈՒՑԱՆ ՈՒ ՄՇԱԿԱԿԱՆ ԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մշակական աշխատանքային գործիքների մասին բավական խոսելուց հետո, այժմ պիտի սկսեմ, Թոռնի՛կ, վարուցանի և այլ գանազան աշխատանքների մասին խոսել: Մեր Վանա գյուղական ժողովուրդը երկու կերպով է գետինը վարում, եթե գետինը կորդ է, գութանով է վարում, իսկ եթե գետինը անցյալ տարի վարած լինելով՝ հողը փխրված է, այն ժամանակ արորով է վարում, մի գույգ գոմեշ կամ եզ լծելով: Սովորաբար արորը գարնան կողմերն է գործածվում գարի կամ այլ ընդեղեններ ցանելու համար: Երբեմն ապրիլ ամսվա վերջերը, և երբ գարունը շուտ է գալիս, և երբեմն մայիս ամսվա կեսերից սկսում են գութան կիրառել: Առաջին մասը կաթնավար են կոչում, երբ հողը կակուղ և դյուրավար է, և հետո հետզհետե պնդանում է, մեծ-մեծ կոշկոտներ են լինում վարած ժամանակ: Սրա համար

մեր գյուղացիները աճապարում են, որ գութան շուտ լծեն, որ կաթնավարի ժամանակը չանցնի: Բայց Վանա ծովի եզերքին, Արծկեի և Արճեչի գավառներում գետին վարելու եղանակը տարբեր է և ավելի արդյունավոր, և այդ ձևի մշակութայնը դիր են ասում: Նրանք երկու անգամ են հերկում գետինը, առաջին անգամ գարնան սկզբին խորունկ կերպով արորավար են անում և տափանում: Մնում է այդպես մինչև աշնան սկիզբը, և ապա սկսում են կրկին վարել՝ դարձյալ մի տեսակ արորով, որի խոփի ետևում կցված կան երկու տախտակներ կանգունուկես երկարությունը և թղաչափ լայնությունը, իսկ վարի մասը մի մատի չափ բաց է տախտակների երկարությունը, այնպես որ սերմնահանը այս արորի ետևից գնալով՝ սերմը փոքրիկ բույս գցում է տախտակների մեջ, և այնտեղից սերմի հատիկները ակոսի մեջ են ընկնում կարգով, իսկ ակոսի երկու կողմի հողերը թափվելով ծածկում են սերմերը: Դու տեսնես բուսած ժամանակ որքա՛ն սիրուն ձև են ունենում, ուղիղ գծով ակոսից բարձրանում են, և հաջող տարին մինչև մեկին քսան և քսանհինգը տալիս: Այդ կողմի երկրագործները սերմից ևս վաստակ ունեն, որովհետև մեր ցանած մի չափի տեղը նրանք կես չափն են ցանում, և ցանված սեր-

մի հատիկները ամբողջապես բուսնում են, այնինչ մեր կերպով ցանվածի մի երրորդ մասը կորսվում է, որ պիտի պատմեմ իր տեղում: Այս երկու գավառների մշակութայն արդյունքը այնքան բեղմնավոր է լինում, որ ցորենով լցնում է Վասպուրական երկիրը, ինչ տարի որ անհաջող լինի այս գավառների հունձքը, այդ նշան է, որ այդ տարի հացի թանկություն կսկսվի: Արճեչի և Արծկեի գավառների մշակութայն մասին միայն այսքանը գրելով՝ դառնում եմ շարունակելու, Թոռնի՛կ, մեր մշակութայն կարգը:

Կաթնավարի հերկագործությունը շատ չի տևում: Մի քանի շաբաթ հետո վարելու արտերն սկսում են պնդանալ, և այն ժամանակ դու տես ինչ դժվարություն է գութանը ճեղքում ակոսները, և ինչքան մեծամեծ կոշտերը գունդգունդ շարվում են ակոսների վրա: Մեր գյուղացիները տակավին չգիտեն սրա դյուրին միջոցը, բայց խարբերեցին քաջ գիտե, որովհետև պնդացած և կարծրացած արտերը նախ ջրում է և ապա վարում, որ բնավ այլևս կոշտուկներ չեն լինում, քանի որ գութանի ժամանակ դեռ ջրերը առատ են լինում:

Որքա՛ն լավ կլինեի, Թոռնի՛կ, եթե մենք ևս, հետևելով այս օրինակին, կարգ դնելով հետգհետե ջրերինք պնդացած արտերը և այդպես վա-

րեինք: Գիտե՞ս, երկու կերպով շահավետ կլինի այս միջոցը: Ո՛չ միայն արտը հեշտ կվարվի և կոչտուկ չի տա, այլև ջուրը ևս գորուծյուն կտա հողին և կավելացնի նրա բուսական ուժը: Բացի այս՝ արտը ցանված ժամանակ, երբ հերկը մեծ-մեծ կոշկոռներ ունի, ցանած սերմի մի մասը այդ խոշոր կոշտուկների տակն ընկնելով՝ կորսվում է, մի մասն էլ հերկի ջրվելու ժամանակ ջրատար է լինում, եթե հաշվենք նաև, թե ջրկալի ոտքը որքան հատիկներ է դեպի ներքև տանում, ապա երբ սերմի ընտրուծյուն չի լինում, վտիտ և անշահ հատիկները ևս չեն բուսում: Այս հաշվելով մի չափ սերմի ցորենից՝ հազիվ կեսն է բուսնում և կեսը կորչում է:

Պետք է հաշվենք նաև ջրկալների օրավարձը, որ շատ ավելի է լինում այդպիսի արտերի համար, մանավանդ երբ ցանված հերկերը առանց կորի քաշելու են ջրում, ինչպես Վանի շրջակա քաղաքացիների և ուրիշ գյուղերի արտերը: Այս կապակցությամբ ես շատ ուրախ եմ, Թոռնի՛կ, որ մեր Արճեշի գյուղացիները կորի քաշելու շատ վարժ են, և մեր արտերն էլ հարթ լինելով՝ չորս ջրկալի փոխարեն մի ջրկալը բավական կլինի, և մինչև մի ջրաղացի ջուր բաց կթողնի մի արտի մեջ և կկարողանա կառավարել:

Հերկելու կռեթները մի ուրիշ սոսկալի դժվարուծյուն էլ են տալիս, երբ ցանվելուց հետո մանկեռում է մշակը: Դու տեսել ես մանկեռ, որ չորս կանգուն երկայնությամբ մի հաստ թեղի կարծր և ծանր փայտ է, որի վրա շարված են տասն կամ ավելի փայտե մատներ, որի վերևում կանգնում է մշակը, բռնում չվանի մի ծայրը, որի մյուս ծայրը կապված է լուծին: Ահա ցանված մի արտ են մանկեռում: Գնանք, աչքովդ տես, Թոռնի՛կ, որ հավատաս, որ մշակական աշխատանքի ամենասոսկալի դժվարուծյունը մանկեռն է: Տե՛ս ինչպես մեծ-մեծ բալերին սաստիկ զարնվելով և շփվելով՝ մանկեռը մերթ ընդ մերթ ոստնում է, առաջ նետվում, մերթ հուժկու կռեթներ դիմահարելով, մանկեռը կանգնեցնում են, բայց անխիղճ մշակի խաբազանը դարձյալ քշում է առաջ, վերջապես անխոս գոմշուկները անհնարին չարչարանքով ավարտում են մանկեռի գործողությունը:

Հարցրո՛ւ, Թոռնի՛կ, թե այս անտանելի աշխատանքը ինչ կերպով կդյուրանա: Վերը խոսեցի, որ մի միջոցն այն է, որ կաթնավարից հետո մնացած արտերը ջրեն և նոր միայն վարեն: Կան նաև ուրիշ հնարքներ, որ ճարտար եվրոպացին հնարել է հատուկ արտերի կոշտուկները փշրելու համար, բայց ինչ օգուտ, որ մեր

գյուղացի աղքատ ժողովուրդը միջոց չունի այդ գործիքները ձեռք բերելու: Լավ է, որ մեր բնատուր խելքով հնարներ մտածենք:

Ես կասեմ, Թոռնի՛կ, ինչ հարկ կա, որ մեր գութանը երկար ժամանակ տևի, որ վերջին վարելիք արտերը պնդանան, քանի որ նոր գութանի գործածությունը երկու գույգ լծով է լինում, շատ դյուրին է, ուրեմն, երկու գութան կլծենք և քսան օրվա փոխարեն քառասուն օրում գործ կանենք, և այսպես կաթնավարի ժամանակ մեր գարնան հերկերի գործը կավարտենք:

Բայց այն հերկերը, որ վարում ենք, այս տարի եթե թողնենք, որ ձմեռն անցնի վրայից, դու կտեսնես գարնանը, որ ձյունը և սառնամանիքը այդ կոշկոռները փշրելով այլուր են դարձրել, և աշնան սկիզբը, երբ մի անգամ ևս արորավար անելով ցանվեն, շատ ավելի արդյունաբեր կլինեն:

Ես լսել եմ, պատմեմ քեզ, Թոռնի՛կ, ասում են՝ իր մշակական բանաստեղծությունք խրատ էր տալիս հռովմայեցիներին ՎեՐԳԻԼԻՈՍը, որի տողերը միտքս եմ պահել:

Այլ ըզկասմըս մշակիս
Ագահութեան հերկ այն լցցէ,
Որ կրկիս համբեր տօթոյ
Եւ կրկնակի սառնամանեաց:

Բացատրեմ քեզ. այն հերկված արտը մշակի ցանկությունն է լցնում, որ կրկին ամռան ջերմություն և ձմռան սառնամանիքի դեմ կանգնի: Որովհետև ամառվա ջերմությունը հողն ավելի է եփում և ձմեռը հողակոշտերը լուծում է և փշրում:

Չասե՛ս, Թոռնի՛կ՝ Դպրոցից ես եմ գալիս, Վերգիլիոսից դու ես խոսում: Է՛, Թոռնի՛կ, մի քանի տարի դպրոց գնալով կարծում ես, թե Պապիկի չափ բան գիտես, ես հիսուն տարի է, որ լսելով, տեսնելով և փորձառությունք սովորում եմ: Ես քեզ պես դպրոց չեմ գնացել, բայց աշխարհի բաները, աշխարհի մարդիկ ինձ համար դպրոց են, և ես դեռ սովորում եմ այս ծերություն ժամանակ, մինչդեռ դու նոր ես դպրոցից ելել և կարծում ես, թե ամեն բան գիտես: Դեռ քեզ շատ հաց է պետք, որ ուտես և Պապիկի չափ բան գիտենաս: Պապիկը բավական հիշողություն ունի, ով գիտե, քանի տարի առաջ, երբ Հայրիկը Վերգիլիոսի այդ տողերը բացատրում էր աշակերտներին, ես մտիկ անելով միտքս եմ պահել:

Երանի՛ թե հին հռովմայեցիների պես կարողանայինք մեր արտերը մշակել, Վերգիլիոսի խրատից այս ենք ուսանում, թե պետք է հողն ավելի դարձնել, որովհետև որքան հողը տակն ի

վրա չըջվի, այնքան ավելի պտղաբեր կլինի, քանի որ այն ժամանակ հողը հավասարապես կեփվի արևի առաջ, տակի հողերը հուժ չեն մնա, մանավանդ ցուրտ կլիմաների տակ այս դրուժյունը շատ կարևոր է: Վանա գյուղացիները այս մասին շատ անդետ են և անփորձ, մինչդեռ Խարբերդի, Կարինի և Բասենի գյուղական ժողովուրդն ավելի գիտակ և փորձառու է, երբեք աշխատանք չի խնայում իր մի անգամ վարած արտը երկու անգամ, երեք անգամ և մինչև չորս անգամ արորավար անելով հողը շուռ տալու: Կարծես թե՝ ինչպես կերակուրն է կրակի վրա խառնվելով հավասար եփվում, այսպես խելացի գյուղացին փորձառությամբ հասկացել է, թե քանի անգամ որ հողը արևի առաջ դառնա և չըջվի, այնքան ավելի բուսական գորուծյունը կավելանա և այդ աճի գորուծյունը ցանած սերմին կտա, որով կրկնապատիկ, եռապատիկ արդյունաբեր կլինի արտը:

Բայց դու հարցրու, Թոռնի՛կ, թե ինչո՞ւ Վանա գյուղացիները մի անգամ են միայն վարում արտը և չեն հետևում մյուս գավառացիների փորձառու օրինակին: Դրա պատճառները շատ հայտնի են, Թոռնի՛կ, և ես ուզում եմ մանրամասն պատմել քեզ, որովհետև այս դասն իմ դասերի ամենակարևոր մասն է:

Տեսնում ես, Թոռնի՛կ, որ մեր Վասպուրական երկիրը հույժ ընդարձակ է, շատ արոտի դաշտեր, լեռներ, հովիտներ, ձորեր և մշակելի հողեր ունի: Զուրն էլ նմանապես շատ առատ է, սրա համար մեր գյուղական ժողովուրդը շատ հարուստ է հողով, և յուրաքանչյուր տուն մեծ հողաբաժիններ ունի, որ հին գյուղական օրենքով և արքունի գրուծյուններին համապատասխան բաժանվել է յուրաքանչյուր ընտանիքի վրա:

Բայց դու՛ եկ տես, Թոռնի՛կ, որ շինական ժողովուրդն այնքան ազահ է հողի նկատմամբ, որ չեմ կարող պատմել, ինչպես աշխարհիս հարուստ գանձատերերը, եթե լեռան չափ ոսկի դիզեն, դարձյալ չեն ասում՝ բավ է, այսպես հողագործ ժողովուրդը, որքան ընդարձակ հող ունենա իր ձեռքին, հերիք չի ասում, միշտ անկուշտ է և հետամուտ է հող ունենալ: Եթե մի տուն քսան կամ երեսուն արտ ունենա, դու տե՛ս գյուղացու հաշիվը, կասի՝ ամեն տարի տասն արտ կցանեմ, մնացյալները կորդ կթողնեմ, որ ավելի արդյունք տան: Ահա քեզ առաջին պատճառն իր ազահության, և ցավալի է, որ մեր գյուղացիները արտ գորացնելու համար միայն մի միջոց գիտեն, այն է՝ կորդ թողնել: Բուժ է միտքը, նա չի կարող մտածել, թե հողը

պարարտացնելու համար կան շատ ուրիշ գանազան միջոցներ, թողնենք արհեստի սովորեցրածը, նա իր դուռն առաջ և գյուղի մեջ դեզադեզ եղած աղբի պիտանությունն էլ չգիտե: Թող այս, մեր մշակ ժողովուրդը հողի ագահության հետ ունի նաև սաստիկ տենչ, այն է՝ շատ վարեմ, շատ ցանեմ և շատ արդյունք ստանամ: Խեղճը տնտեսագետ չէ, թվաբան չէ, որ գիտենա հաշվել, թե շատ վարուցանի հետևանքն այն է, որ աշխատանքը բազմապատկելուց հետո՝ բազում ծախսեր էլ կավելանան: Թվեմքեզ, Թոռնի՛կ, վարելու աշխատանք, ցանելու աշխատանք, մանկեռի դժնդակ աշխատանք, աշնան և ամռան ջրելու աշխատանք, հնձելու աշխատանք, արտից կալատեղ կրելու աշխատանք, ավելացրու այս բոլոր աշխատանքների վրա մշակների օրավարձը: Զարմանալին այն է, որ հողագործ տանուտերն իր տան ընտանիքի և գավակների աշխատանքը երբեք հաշվի չի առնում:

Եթե գյուղացին այսպես է մտածում և գործում, զարմանք չէ, Թոռնի՛կ, հապա մեր Հայոց վանքերի վանական եղբայրները, որ գրեկ-կարդալ գիտեն և ընդարձակ հողեր ունեն մշակելու, ոչ մի առավելություն չունեն գյուղացի ժողովրդից, նույն խելքով և նույն կերպով է իրենց

երկրագործությունների եղանակը: Նրանց պարտքն էր գոնե փոքրիշատե առաջ տանելին մշակության գործերը, որով կարող կլինեին թեմական գյուղերին օրինակ տալ: Թեպետ խոստովանել պետք է՝ մինչև այժմ չեղավ վանքերի համար մի հաստատուն վանական խորհուրդ, որ կարողանար կարգ դնել և ուղղություն տալ:

Թողնենք այս բաներն իրենց տեղը: Լավ հասկացա՞ր, Թոռնի՛կ, մեր գյուղացու սկզբունքը, որ միշտ իր վարուցանը տարածել է ուզում, շատ վնասակար է, և չգիտե և չի ուզում ամփոփել, որ ի վերջո ձեռնհաս լինի իր հողերը լավ մշակելու, փոխանակ տաժանելի աշխատանքով տասն արտ մշակելու՝ լավագույն և օգտակար չէ՞ հինգ արտ միայն մշակել և բարվոք մշակել, այնպես, որ հինգ արտի արդյունքը հավասարվի տասն արտին, որով թե՛ աշխատանքը, թե՛ ծախսը մեծապես կչափավորի:

Չասես դու, Թոռնի՛կ, թե Պապիկը հակասություն է անում, որովհետև երբ տասն արտի աշխատանքը պիտի բարգավաճի հինգ արտի վրա, թե՛ կրկնավար անելով արտերը, թե՛ աղբ տալով և ուրիշ այլ և այլ աշխատանքով, ուրեմն նույնը կլինի աշխատանքը: Ո՛չ, այդպես չէ, այլ մեծ գանազանություն կա, մշակելն ընդլայնելու և սահմանափակելու աշխատանքների կերպե-

րի, ժամանակի, տևողության մեջ և մանավանդ գյուրության եղանակի մեջ, հարկ չէ, որ մանրամասն բացատրեմ քեզ, գործնական փորձերի մեջ պիտի տեսնես ու սովորես:

Հարցրո՛ւ, Թոռնի՛կ, երբ հինգ արտը միայն բարվոք մշակելով բավական համարենք, մնացյալ հինգ արտն անմշակ և ապարդյո՞ւն մնա: Այդ մասին պիտի գրեմ իր տեղում, այլ այժմ միայն այսքանը հիշեմ. միթե գյուղացու համար ցանելու բանը կպակասի՝ թող խոտ մշակի, առվույտ ցանի, կորնկան ցանի, վարսակ ցանի, փաթաթես ցանի, շաղգամ ցանի, ճակնդեղ ցանի, բակլա ցանի, ոսպ ցանի, սոխ ցանի, սեխ, վարունգ, ձմերուկ և այլ շատ բաներ, որ բոլորն էլ մեր կյանքին պիտանի են: Ափսո՛ս, որ Վանա գյուղացիները միայն ցորեն, գարի, տարեկան (կորեկ) են սովորել ցանել, և ուրիշ խիստ պիտանի բաներին կարևորություն չեն տալիս:

Ավարտելով հերկագործության դասը, այժմ պիտի խոսեմ սերմերի ընտրության մասին, որ շատ կարևոր է լավ երկրագործի համար:



Է. ՍԵՐՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՅԱՆՔՍ

Ուշադիր եղիր, Թոռնի՛կ, ես համառոտ կերպով նախ նկարագրեմ քեզ, թե ի՞նչ են այդ փոքրահատիկ սերմերը, որոնց մեջ թաքուն մեծ գորություններ են պարունակվում, որ Տեր Աստված աշխարհիս ստեղծման ժամանակ հրաշապես մի անգամ պատրաստել և դրել է մայր երկրի արգանդում: Մարդ զարմանում է, թե ի՞նչպես են հղանում հատիկները, ծրում, հողից դուրս են գալիս, աճում են օրըստօրե և մեծանում ծառի չափ. ինչպես Հիսուս իր առակով խոսում է մանանեխի հատիկի մասին, որ այնքան է մեծանում, մինչև թռչունները հանգչում են նրա ոստերի վրա (Հմմտ. Մատթ. ԺԳ 35-35, Ղուկ. ԺԳ 18-19, Մարկ. Դ 30-34):

Տեսնո՞ւմ ես, մեր բնական բովանդակ երկրագունդը Աստծու արարչագործ ձեռքով ցանված սերմերով լի է: Բոլոր անտառները, բոլոր պտղատու ծառերը, ծաղիկները, խոտը և այլ զանազան բանջարեղեն բույսերը, և բոլոր բու-

սական բաները սերմի հատիկներից են առաջացել: Այստեղ դու փառք տուր Աստծուն, համբուրիր հոգով Նրա նախախնամ ձեռքը, որ այս երկիրն իբրև ժառանգություն և իբրև անսպառ դրամագլուխ տալով մարդուն, ամենացեղ ազգի-ազգի սերմերը ևս երկրի հետ պարգևեց: Եթե առանց սերմի չոր և անբույս երկիր տար միայն, ի՞նչ կլինեիր մարդու վիճակը, նա այլևս չէր կարող ապրել, որովհետև մեր սնունդն ու մեր կյանքը երկրի սերմնաբույսերն են:

Չգիտես, Թոռնի՛կ, թե հանճարեղ մարդը ո՞ր ժամանակից սկսած իր սնունդի համար բուրրից առավել ցորենի սերմն ընտրեց. այն ցանեց, քաղեց, իսկ հետո իր ջրի մեջ խաշելով՝ իբրև հատիկ կերավ, դրանից հետո իր հնարամտությամբ երկանքով աղաց: Ալյուր եղավ: Ալյուրից խմոր շաղախեց, գնդիկ-գնդիկ շինելով կրակի վրա եփեց, պատվական հաց եղավ: Այսօր բովանդակ աշխարհի մեծ մասը հացով է ապրում, եթե պակասի հացը, մարդը սովամահ կլինի, թեպետ կան այնպիսի երկրներ և ժողովուրդներ, որոնք հացով չեն ապրում և, զարմանալի է, եթե հաց ուտեն՝ կվնասվե՞ն, այլ հացի տեղ բրինձ են ուտում և ուրիշ բաներով ապրում: Թվում է, թե մարդ իրեն սովոր բաներով կարող է ապրել, ինչպես անտառաբնակ վայրե-

նիները պտուղներով և որսի մսով են ապրում: Այսքանը միայն ընդհանրապես խոսելով նախապատրաստված սերմերի մասին՝ բավական է: Դու տեսա՞ր, Թոռնի՛կ, որ մեր առօրյա կյանքը սերմերից կախում ունի, մանավանդ ցորենաբույս (հացահատիկ) սերմերից: Այժմ պետք է խոսեմ այդ պատվական սերմի ընտրության մասին, որովհետև հայտնի է, որ ցորենի սերմի հետ ուրիշ օտարոտի սերմեր են խառնվում, որ խորթ և ինքնաբույս զավակներ են մայր հողի և բուսնում են առանց ցանելու և մշակելու, օրինակ՝ որոմն, ճլլեկ և այլն: Սերմնացան մշակը ոչ միայն պետք է գատի այդ օտար սերմերը ցորենահատից, այլև նույնիսկ վտիտ և ցամաքած հատիկները ևս պետք է առանձնացնի, կրկին և կրկին մաղելով, զատելով, այնպես որ մաքուր հատիկները մնան, գեր և լեցուն:

Յանելու համար թեպետ արդի Եվրոպայի երկրագործները այլ և այլ արհեստական մեքենաներ են հնարել, որ շատ հավասար են ցանում և արտի մեջ ընկած հատիկները հավասար չափով իրարից հեռու են լինում, որով հավասար կերպով են բուսնում, հավասար չափով մայրենի հողից իրենց սնունդն առնում:

Չե՞ս զարմանում, Թոռնի՛կ, որ արհեստի փորձը ցույց է տրված. թե մի հատիկի աճման

Համար որքա՞ն հող է պետք, որ սնուցանի և պահի սերմի հատիկը մինչև հնձելու ժամանակ:

Բայց հայտնի է, այն արտերը, որ կորդ մնալով ուժեղացել են, կամ աղբով պարարտացած են, շատ ավելի սերմ կարող են ընդունել և պահպանել, ինչպես մի հարուստ մարդ կարող է շատ զավակներ ճոխությունը պահել: Ուստի փորձառու երկրագործը, քաջ գիտենալով իր արտի ուժը և տկարությունը, ըստ այնմ ցանում է իր սերմը՝ խիտ կամ նոսր, և իրավունք ունի. միթե կաթ չունեցող մայրը կարո՞ղ է մեկի տեղ երկու զավակ սնել: Թողնենք ցանելու մեքենան, Թոռնի՛կ, որովհետև մեզ համար գոնե այժմ շատ դժվար է այն գործածելը, մեր սերմնահան մշակների ձեռքը բավական քաջավարժ է, սերմ ցանելու համար ձեռքի բուռը իր համեմատական չափն է, երբ ուզում է թանձր ցանել՝ բուռը լի է անում, և երբ նոսր՝ բուռը կծկելով փակում է:

Է՛, Թոռնի՛կ, այստեղ միտքս եկավ, հիշեցի և պատմեմ քեզ:

Կար մի ժամանակ, որ գյուղական ժողովուրդը շատ երկյուղած էր, ցանքսի ժամանակ նախ տանում էր սերմը գյուղի քահանային օրհնել էր տալիս և ապա սկսում էր ցանել: Օրհնյալ լի-

նեն մեր եկեղեցու հին հայրերը, չեն մոռացել, սերմն օրհնելու համար ևս աղոթք են շարադրել «Մաշտոցի» կարգի մեջ (Կանոն զարտորայս, գսերմանիս, գարմտիս, գչեղջ, գկալ, գայգի և գհնձան օրհնելոյ): Ես էլ շատ անգամ օրհնելու եմ տվել մեր քահանային, որ աղոթք կարդալով ասում էր. «Օրհնեա՛, Տէր Աստուա՛ծ, գսերմն և գսերմանողն. որ առատատուր ես ի պարգևս և Դու տաս սերմն սերմանողաց. թէպէտ առանց սերման կարող ես յերկրէ հաց հանել. և առանց կերակրոյ գքաղցեալս լցուցանել»,- և այլն: Այսպես մեր նախնիները պարզամիտ էին ու հավատով սերմը, արտը, շտեմարանը, այգին, հնձանը և բոլոր արմատները և պտղաբերությունը օրհնել էին տալիս և տասնորդական բաժին էին հանում քահանային, ինչպես և վանքերին:

Թողնենք սերմի օրհնությունը: Եթե պատմեմ քեզ, Թոռնի՛կ, պիտի զարմանաս սերմնացան տանուտիրոջ երկյուղած ջերմեռանդություն վրա: Այն օրից, երբ ցանքն սկսվում էր, նա այլևս տուն չէր վերադառնում դաշտից, այլ բացօթյա էր մնում: Իր գիշերահանգիստն արտի ահոսն էր, մինչև լրանար սերմնացանի ժամանակը: Դու տեսներ, թե ինչպես էր սկսվում ցանքը. նախ և առաջ գոտին պինդ կապում էր, բուռը մի սերմից առնելով՝ շապկի սրտաբա-

ցից ցանուժ էր ծոցի երկու կողմը մինչև ան-
թատակերը: Հետո երեսը խաչակնքելով սկսում
էր ցանել արտը: Քսան-երեսուն օր էր տևում
ցանքի աշխատանքը, մինչև ծլում էին ցանվորի
ծոցի հատիկները, որովհետև արևը նրա բաց
կրծքին զարնելով, ջերմություն էր տալիս և
ներսից մշակի քրտինքը իբրև ցող հատիկները
թրջելով՝ ծիլեր էր հանում: Այդ բանը մի բարե-
գուշակ նշան էր համարվում ցանված արտերի
պտղաբերության: Գիտե՛ս, Թոռնի՛կ, ինչպես
արտավարության ժամանակ լծատար անասուն-
ները, այնպես էլ սերմնացանն իր խորհրդավոր
աղոթքի մրմունջներն ունի:

Ես կը ցանեմ, ո՛վ իմ Աստուած,
Դու անձրև տուր՝ առատ-առատ,
Չոր հատիկներ ծրլին հողէն,
Պճնին արտերս կանաչ-կանաչ.
Եվ ուռճանան, հասկեր կապեն
Ատոք ցորեն կարմրահատ
Խընդրեմ, ով Տէր. տուր մէկին տեղ
Երսուն, վաթսուն և հարիւր,
Որ տամ նախ ես իմ տէրութեան
Տասանորդի տուրքն արդար
Եվ ապա տամ պարտատիրոջ
Տոկոսիքներ ծանր ու ծանր.
Ապա գիւղի եկեղեցուն,

Աղքատներուն էլ բաժին տանք,
Եվ ինչ մընայ, այն է միայն
Իմ ընտանեաց հաց և ճարակ,
Եվ հիւրերուն, որ գան ու գնան
Ուտեն, տանեն ձրի հաց.
Այս է օրէնք մեր աշխարհին
Մեր նահապետ պապերէն,
Ծիակականին դուռն է բաց,
Հացն ու սեղան միշտ պատրաստ:

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե մեր աշխատանքի
արդյունքից որքան բաժիններ են լինում: Բայց
դու երբեք մի վհատիր, որքան բաժինները շատ
լինեն, այնքան առատ կտա Աստված, որովհետև
երկրագործի վաստակը լիությամբ օրհնված է,
չի սպառվում, միայն թե երկրագործ ժողովուր-
դը տերության պաշտպանությունը և խնամ-
քը վայելելով կարողանա հանգիստ և ապահով
երկիր մշակել և արդյունավորել իր անխոնջ
աշխատանքով: Եվ քաջ գիտե՛՛՛՛՛ Տերությունը, որ
իր գանձարանի մեծ աղբյուրը մշակ ժողովրդի
դաշտից է բխում, որքան Տերության տարած-
ված թևերի տակ բարվոք պաշտպանի, այնքան
ավելի կառատանա գանձարանի աղբյուրը:

Չմոռանամ, Թոռնի՛կ, մի քիչ խոսեմ նաև
ցանելու ժամանակի և եղանակի մասին: Ցան-
քը սովորաբար երկու եղանակի է լինում՝ գար-

նանը և աշնանը, այն է՝ ապրիլ և սեպտեմբեր ամիսներին: Մեր Վասպուրականի գավառը, ինչպես նաև Բարձր Հայքը, Ալաշկերտը և Մշո մի քանի բարձրագիր գավառներ ընդհանրապես գարունն ուշ է գալիս, և երբեմն մինչև մայիս է ձգվում, որով գարնանացանը չի հաջողվում, որովհետև անձրևային եղանակներն անցնում են: Երկրագործի համար մեծ բախտ է, եթե գարունը շուտ գա, և ինքը կարողանա մարտ ամսվա մեջ կամ ապրիլի սկզբին գարնանացանի գործն ավարտել, որ անձրևների ժամանակը չանցած՝ սերմը հողի մեջ գտնվելով՝ շուտ բուսնի և գորանա:

Մեր երկրագործները շատ մեծ հույս չունեն գարնանացանի հաջողության վերաբերյալ, դրա համար սակավ են ցանում: Միշտ ցանքի մեծագույն մասն աշնանացանքն է, որ սովորաբար սկսվում է օգոստոս ամսվա կեսից, և այս ցանքը ձգվում է մինչև հոկտեմբեր և երբեմն անցնում: Լավագույնն է սեպտեմբերից սկսելով հերկած արտերը ցանվեն: Փորձված է, որ առաջին ցանված արտերն ավելի հաջող են, որովհետև շուտ ծլում են և բուսնում, արմատ ձգելով գորանում, քանի որ արևի զորությունը դեռևս չի նվազել՝ բավական կանաչում են մինչև աշնան վերջը ձյունը գալիս ծածկում է,

և գարնան գալուն պես աճում-բարձրանում են ցորենի ցողունները, հասկեր կապում, և գրեթե երեք ամսից հետո՝ հուլիսի սկզբները, մանգաղը հունձի է մտնում, որովհետև աշնանացան սերմը ամենից շուտ է հասնում, և գարնանացանը ամենավերջին հունձքն է:

Գարնանացանից և աշնանացանից զատ մի ուրիշ ցանք ևս կա, որ աշնան վերջերն են թողնում: Այն ժամանակ են ցանում, երբ ձմեռնամուտը մոտենում է, գետինը սառչում և այլևս սերմի հատիկները ո՛չ ծլում են և ո՛չ բուսնում, այլ այդպես մնում են հողի մեջ առանց աճման և գարնան գալուն պես իսկույն բուսնում՝ գարնանացանից առաջ, որովհետև արդեն ցանված ու պատրաստ են, և սերմերը կակղացած ու ծլած, մինչդեռ գարնանացան անձրևների և օդի պատճառով ամեն տարի չի հաջողում շուտ բուսնել:

Կարծեմ բավական է, այսքան միայն գրելով սերմի ընտրության և սերմնացանի մասին: Այժմ պիտի խոսեմ ջրի և արտերի ոռոգման մասին, որ արմատների առատության մի կարևոր միջոցն է:



Ը. ՉՈՒՐ ԵՎ ԱՐՏԵՐԻ ՈՒ ԴԱՇՏԵՐԻ ՈՌՈԳՈՒՄ

Լավ խելամուտ եղիր, Թոռնի՛կ, որ միայն
հողը ոչինչ չի կարող բուսցնել կամ
աճումն տալ, եթե ջուրը և անձրևը չոռոգեն
այն: Ինքն իրենով ամուլ և անբեր կլինի հողը,
եթե ջրի և անձրևի զվարթարար գորութիւնը
չմիանա իր հետ: Բոլորն ամբողջ աշխարհում
անձրևով են ոռոգում: Բայց կան շատ տեղեր,
որ և՛ անձրևով, և՛ ջրով են ոռոգում: Պետք է
գիտենաս, որ անձրևը և ձյունը շատ առավելու-
թյուն ունեն. նախ որ երկնի ամպերից ընկնե-
լով՝ ամենաբարձր լեռները և դաշտերը կարող
են միասին հավասարապես ոռոգել, մինչդեռ
գետնից բխած աղբյուրները, վազող վտակները
և գետերը՝ միայն հարթ և ցածր դաշտավայրերն
են ոռոգում: Նաև պետք է գիտենաս, Թոռնի՛կ,
որ գետնի երեսին վազող բոլոր ջրերի ամենա-
մեծ ավազանը անձրևից և ձյունից է գոյանում,
իբրև շտեմարան ժողովվում է երկրի ծոցում և

ապա երկրի ծոցից դուրս է բխում, աղբյուրներ, վտակներ և մեծ գետեր կազմում: Երբեմն առանց երկրի ծոցն իջնելու, գետնի երեսից, սարերից են վազում, ահագին ջրհեղեղ հարուցում տեղատարափ անձրևներից հորդելով:

Այսքան եմ միայն տեղեկություն տալիս քեզ, ուշիմ Թոռնիկ, դու ինքնուրույն մտածելով սովորիր, որ այս երկու տարերքը՝ հողը ու ջուրը, միանալով ամբողջ բուսական բյուրատեսակ աննման գավակներին են ծնում ու սնում:

Եթե համարենք, որ հողն իբրև մայրական արգանդ սերմեր է ընդունում, հարմար է, որ ջուրը համարենք իբրև հայր, որ արբուցանում և բեղմնավորում է հողի արգանդը, որով ծնվում են այնքան անհուն-անհամար բույսերը: Այժմ սկսեմ ցանված ջրարբի արտերի մասին խոսել, թե ինչ խնամքով է պետք պատրաստել արտը, որ դյուրին ջրվի և լիապես ջուր խմի: Գարնան անձրևների շրջանի անցնելուց հետո, բնական է, ջրարբի արտերն սկսում են ծարավել, և սրա նշանն է, երբ մուգ կանաչ գույն են ստանում, այն ժամանակ պետք է գիտենաս, որ սաստիկ ծարավել են, ջուր են ուզում: Եթե ջուրդ առատ է, պետք է երկու ավելի ջրկալ բռնես և ջուրը բաշխես ծարաված արտերին: Պետք է լավ հսկես ջրկալ բանվորներին, որ խնամքով ջրեն

արտը: Զուրը հավասարապես պետք է արտի բոլոր մասերը շոշափի: Զրկալները հանկարծ չթողնեն, որ մի տեղ չոր ու ցամաք մնա, կամ մի տեղ շատ ժողովվելով ջուրը լճանա, որովհետև դա ևս վնաս է բույսերին: Վնաս է նաև, որ բաց թողնված ջրերը արտի ներքևի կողմերից ողողելով դուրս վազեն, այնպես որ արտի երեսի հողերը դուրս քշեն և բույսերի արմատները բանան: Ո՛հ, բույսերն այն ժամանակ արմատահան լինելով՝ կխլվեն մայրենի ծոցից և հետևաբար կթոշնեն և կչորանան:

Մեր Արճակ գյուղի արտերը բնականից՝ առանց աշխատանքի են պատրաստվել: Այնքան հավասար և հարթ են, որ մի ջրկալը մի ջրաղացի ջուր կապելով արտի վրա, կարող է կառավարել և մի օրվա մեջ մի քիլա տեղ կջրի, և այնքան հարմար է, որ գիշերը ևս կարող է աշխատել: Միայն արտի հավասարությունը բավական չէ, կարևոր է նաև արտի դիրքին հարմար կորիներ քաշելը, ջրադարձի թումբեր կապելը, որով ջրկալի աշխատանքը առավել ևս կհեշտանա:

Չգիտեմ, Թոռնի՛կ, տեսար և դիտեցի՞ր Վարագա վանքի արտերը, թե ջրելու ժամանակ որքան դժվարություն կա, և որքան օրավարձ են առնում ջրկալները: Դրա պատճառը գիտե՞ս.

նախ որ մեծ մասամբ արտերն անհավասար և խորհուրդորդ են, երկրորդ՝ առանց կորի քաշելու են ջրում, երրորդ՝ ասում են՝ Հողը տրորված է՝ ջուր չի բռնում, և այլն: Այս ամենը թե՛ պատճառ են և թե՛ նախապաշարմունք, ավելի մեծ պատճառը չմտածելն ու աշխատել չսիրելն է, որովհետև զառիվայր և ջրատար արտերը կամաց-կամաց պարզ աշխատանքով կարելի է այնպես կարգավորել, որ երբեք այդ դժվարությունները չլինեն: Սրանց մասին առանձին պիտի խոսեմ:

Երկրագործը, երբ առատ ջուր ունի, նա պետք է ոչ միայն ցանված արտերի ջուրը հոգա, այլ շատ օգտակար է նաև, եթե խոտավայրերը և խոզան արտերը ևս ջրի, ինչը բազմակի օգուտ ունի. թե՛ առատ, ինքնաբույս խոտերով անասուններին արոտ կմատակարարի և թե՛ արտի համար, որ իր խոտաբույսերով ինքը սնունդ կառնի, թե՛ խոտի թափված տերևներից, որ կփտի աղբ կդառնա, և թե՛ արտը խոտի արմատներից ուժ կստանա: Սրա համար է, որ գյուղացիները արտը երկու տարի, երեք տարի կորդ են թողնում, որ հողն ուժեղանա, սակայն չգիտեն, թե ինչո՞վ է, որ ուժեղանում է: Այո՛, խոտաբույսերն են, որ ուժ են տալիս արտին: Դու չես զարմանում, Թոռնի՛կ, մեր ցանած հա-

տիկաբույսերը, հայտնի է, որ հողի ուժը խլում են, իսկ հողի ինքնաբույս խոտերը փոխանակ առնելու՝ ուժ են տալիս:

Այսպես են և այս ինքնաբույս խոտերը: Ջուրն էլ իր առանձին հատկություններն ունի ուժ տալու, որովհետև իր մեջ, ով գիտե, ինչ պարարտացուցիչ հյուսթեր է պարունակում: Գիտե՛մ, Թոռնի՛կ, դու կհետաքրքրվես հողի և ջրի բնական հատկություններն իմանալու ցանկությունը, բայց մտածիր, որ Պապիկը շինական է, համալսարանից չի գալիս, որ իբրև բնագետ ամեն բան բացատրի քեզ: Պետք է բավական համարես պարզ դասերս:

Երկրագործություն մեջ ջրի կարիքը շատ մեծ է, և շատ բախտավոր է այն գյուղը, որ առատաբույս աղբյուրներ և գետակներ ունի: Հայտնի է, որ այդպիսի գյուղի բերքը կրկնապատիկ է լինում: Բայց այն գյուղերը, որոնց բնական աղբյուրները նվազ են, կամ ունեն գետեր և գետակներ, որ բարձրից են գալիս, դաշտերի միջով անցնելով գնում-թափվում են ծովակների մեջ, և կամ մեծ գետերին են խառնվում, ոչ մի օգուտ չեն տալիս խոտածածկ դաշտերին և մշակված արտերին:

Ահա քեզ մի օրինակ տամ, Թոռնի՛կ, որ աչքիդ առաջ է. մեր Արճակ և Խառակոնիս գյուղ-

դերի միջով մի գետ է անցնում, գրեթե գարնան սկզբից մի երկու ամիս, և ավելի, այդ գետի ջուրը ընդունայն գնում, թափվում է մոտակա ծովակը: Ո՛չ մենք, և ո՛չ հիշյալ գյուղի մարդիկ չենք մտածում այդ գետի ջրից օգուտ քաղել, վերի կողմերում արհեստական փոքրփոքր լճակներ կազմել: Դրանց համար որքա՛ն բնական-հարմար տեղեր ունենք, որոնց դիրքը փոս և ծոցավոր է, բավական է շուրջը հողե թմբեր քաշել և միայն ջրանցի բերանին քարից ու կրից մի ակն շինել և գարնան միջոցին գետի ջուրը մեջը լցնելով՝ պահել մինչև արտերի ջրելու ժամանակը: Մեր նախնիները մեզնից ավելի խելացի, աշխատասեր և հոգացող միտք են ունեցել, ժամանակին այդպիսի լճակներ են շինել, որոնց ավերակների տեղերը այժմ երևում են, և մենք երբեք հոգատարություն չունենք, գոնե նորոգելու ավերակ լճակները: Վանա արևելյան լեռների շրջափակի մեջ մի ընդարձակ հովիտ կա, որի շուրջը բյուրավոր աղբյուրներ կան, որ վազում են հովտի ծոցը և լճանում: Այն ժամանակներում Վանի կողմերում մի բարի և ճարտար քահանա է լինում, որ իր պաշտոնից դուրս ժողովրդի արտերի ջրի մասին էլ է մտածում: Ուստի հովտի ներքևի նեղ բերանին մի քարուկիր թումբ շինելով, այդ

լիճն է պատրաստել: Սրա համար տեղացիները Քահանայի լիճ են անվանում: Այս լճի ջուրն այնքան առատ է, որ ոռոգում է Վանա շրջապատի արտերը, որ շատ ընդարձակ են, նմանապես նաև նորատունկ այգեստանները, որոնց արդյունաշատ պտղաբերություն համար պարտական են այդ քահանայի մեծագործությունը, որ իր հոգևորական տնտեսության հետ՝ հացի տնտեսությունը ևս հոգացել է: Իր անունը մեզ անհայտ է, բայց իր արդյունական հիշատակով օրհնվում է այսօր ժողովրդի կողմից: Կան շատ ուրիշ գավառներ, որոնց դաշտամեջով անցնում են մեծ և փոքր գետեր, առանց մի ամի ջուր տալու՝ ինչպես Մշո դաշտի Եփրատը և Մեղրագետը: Այժմ նկատելի է Եփրատ գետի վերևում մի մեծ ջրանցքի հետք, որ ժամանակին բացել է, ասում են, մի հոգացող տիրապետ: Մշո դաշտի մի բավական մեծ մասը ոռոգվել է դրանով: Ափսոս, որ ժողովուրդը չունի հոգածություն՝ պեղելու և բանալու այդ մեծ առուն և ջրելու այն անջրդի մնացած արտերը: Դրախտի գետն անցնում-գնում է, միթե ջուրը կխնայի՞ իր շուրջը բնակվող բնիկ ժողովրդին. ո՛չ, ժողովուրդը ծուլ է, ամեն բան պատրաստի է ուզում, ինչպես երկնքից անձրև է տեղում, այնպես պետք է նաև գետերի ջուրը ինքնաբերաբար վազի և

Ջրի իր արտերը: Հոգացող Աստված շատ բան է նախապատրաստել մարդու համար, բայց փոքրիկ աշխատանքի մի բաժին մեզ համար ևս թողել է, որպեսզի կատարվի իր տիրական անբեկանելի վճիռը, և մարդն իր ճակատի քրտինքի վաստակով իր հացը ճարի:

Դու գիտե՞ս, Թոռնի՛կ, ջուրը մեծ կարևորություն ունի գյուղական ժողովրդի համար, և տեսնում ես արտերը ջրելու ժամանակ որքան վեճ ու կռիվ են անում, և մինչև անգամ արյունը ջրի հետ է խառնվում, սրա համար ես ուզեցի, որ ազատ լինեմ այդ սոսկալի կռիվներից: Ես առանձին, իմ աշխատանքով, իմ ձեռքով երկու փոքրիկ լիճ պատրաստեցի մեր արտերի համար, որ բավական կլինի: Այժմ պատվիրում եմ քեզ, Թոռնի՛կ, միշտ աշխատես այդ լճակների թմբերը հաստատ պահել, և ջրատար տեղերը ամեն աշնան վերջերը նորոգել, այդպիսով թե՛ արտերիդ առատ ջուր կտաս, առատ արդյունք կքաղես, թե՛ գյուղացիների կոպիտ կռիվներից ազատ կմնաս, և միաժամանակ դրացիներին մի օգտակար օրինակ ցույց կտաս, որ նրանք ևս, հետևելով ձեր օրինակին, յուրաքանչյուր տանուտեր իր արտերի համար աշխատի նույնպիսի լճակներ պատրաստել, որոնց շահեկան արդյունքը բազմապատիկ է, քանի որ արհեստա-

կան լճակները ոչ միայն ջուր կմատակարարեն արտերին, այլև մարգագետին դառնալով՝ լճատեղիները առատ խոտ կաճեցնեն, և միանգամայն կանաչաբույս արոտատեղի կլինեն անասունների համար: Շատ զանազան ձևեր կան ջրամբարներ պատրաստելու համար, այսքանս միայն բավ է, անցնում եմ այժմ արտերի բաժանման և կարգավորություն մասին խոսելուն, որ խիստ կարևոր է և կապված է այս դասիս հետ:



Թ. ԱՐՏԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Լավ ուշադիր եղիր, Թոռնի՛կ, որովհետև Այս դասը երկրագործի համար շատ կարևոր մի դաս է, որ նա գիտենա իր արտերը բարվոք դասավորել և բաժանել: Նախ և առաջ պետք է յուրաքանչյուր արտի սահմանը անջատել և արտամեջ տեղեր թողնել, որ գոնե երեք կանգունի չափ լայնություն ունենան: Այս արտամեջ տեղերը, որ առանց հերկելու միշտ պետք է կորդ մնան, ոչ միայն ճանապարհի համար են, որ սայլերը դյուրությամբ անցնեն պինդ գետնի վրայով, այլև առավելաբար խոտաբույսերի համար շատ կարևոր են: Եթե մեզ համար ցորենաբույսը մեծ պիտանիություն ունի, աշխատող անասունների համար անհրաժեշտ են խոտաբույսերը, որ արտերի եզրին գտնվելով, իբրև պատրաստի արոտատեղ լինեն տավարներին, որ գութանից արձակվելով՝ անմիջապես արածելու տեղ կգտնեն, հարկ չի մնա

հեռավոր տեղեր տանելու: Հին ժամանակներում, որ ես տեսել եմ, ընդարձակ արտամեջեր կային, որովհետև մեր նախնիները շատ կարեկից և խղճմտանքով մարդիկ էին, անասունների մասին հոգացող, գուլթ և խնամք ունեին: Բայց արդի ժամանակներում այդ առաքինությունը վերացել է գյուղական ժողովրդի սրտից, որ միայն իր հացի մասին մտածել գիտե, իսկ խեղճ անասունների համար սրտացավություն չունի:

Այժմ տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե ինչպես է արտը արտին կպել և անգամ մի քայլ արանք չի մնացել: Եթե հաջողի մի արտի տերը իր դրացուց առաջ լծել գուլթանը, նա կջանա արևի առաջ հայտնի կերպով մի քանի ակոս գողանալ դրացու արտից և խառնել իր արտին: Այսպես՝ առանց խղճի գողանալով ընկերոջ բաժնի հողից, մեծ անիրավություն է գործում, որի հետևանքը կլինի անվերջանալի վեճ ու կռիվը երկու դրացիների մեջ:

Սրա համար շատ և շատ կարևոր է, որ ամեն արտատեր իր արտի շուրջը թուժք քաշելով տարանջատի ճշտությամբ իր արտի սահմանը, որով ոչ միայն իր սեփականությունը կապահովի, այլև ուրիշ օգուտ էլ կտա արտի շրջափակ թուժքը, որ արտը ջրելու ժամանակ ջուրն արտից դուրս չի վազի, ողողելով և հեղեղատներ

բանալով հորդ անձրևների ժամանակ, մանավանդ երբ արտը հավասարություն չունի, դարուփոս է:

Արտերի բարեկարգության մասին մի պայման էլ արտի փոս տեղերը հավասարեցնելն է, այնպես, որ արտի տարածության մակերևույթը մի ծայրից մյուս ծայրը հավասար և հարթ լինի, և այդ շատ դյուրությամբ կլինի, ոչ միայն ձեռքի աշխատանքով, այլ նաև թե՛ անձրևը, թե՛ ջուրը բնականորեն փոսերի հողերը ողողելով, ցածր տեղերը կլցնեն և ինքնաբերաբար կհավասարեցնեն: Միայն թե բավական չէ արտի շրջափակ թուժքը. պետք է արտի մեծությունը և դիրքին համապատասխան թմբեր քաշվեն: Պարզ օրինակով բացատրեմ քեզ, Թոռնի՛կ, որ լավ ըմբռնես:

Եթե մի արտ ունենք, որ երկու հարյուր կանգուն երկարություն ունի և հարյուր կանգուն լայնություն, և այդ արտը երկարության վերի ծայրից սկսած մինչև վարի ծայրը աստիճանաբար ցածրանա, ի՞նչպես պետք է հավասարեցնել: Շատ հեշտ կհավասարվի, եթե արտի լայնության կողմից մինչև մյուս լայնության եզրը թմբեր քաշվեն երկու կամ երեք տեղերում՝ ի նկատի առնելով առապարի բարձրության և ցածրության դիրքերը: Եթե խիստ առապար է,

պետք է հիստունական կանգուն չափել և թուժք քաշել, իսկ եթե առապարն այնքան զառիվայր չէ, բավական է յոթանասուն և հինգ կանգունին մի թուժք քաշել, որով արտը չորս կամ երեք մասի կբաժանվի: Թմբերը պետք է քիչ-քիչ քաշվեն, ամեն տարի գարնանը և աշնանը աշխատելով, պիտի տեսնես, որ երկու և երեք տարվա մեջ արտը հավասարության աստիճանը գտել է:

Է՛, Թոռնի՛կ, գիտեմ, պիտի ասես, թե արտն իր ծավալից բավական կկորցնի այդ թմբերի համար: Ո՛չ, այդ հաշիվը սխալ է, Թոռնի՛կ, ոչ միայն չի կորցնի, այլև մեծապես կշահի, որովհետև արտի պտղաբերությունը կրկնապատիկ ավելանալով՝ կորսված տեղերի հաշիվը կլցնի: Եվ մի՞թե այդ թմբերը իրենց շահն ու օգուտը չունեն. ցանիր դրանց վրա առվույտի սերմ, տես ինչ լավ կլինի, թե՛ իր արմատներով թուժքը կամրացնի, թե՛ առատ և զորավոր խոտ կստանաս ձմռան համար:

Այժմ խոսեմ, Թոռնի՛կ, արտերի մաքրություն մասին, որ երկրագործի աշխատանքի մի մասը պետք է լինի: Ամենայն խնամքով միշտ արտերից դուրս հանել-մաքրել, եթե մեջը կան այնպիսի քարեր, որ հերկագործություն և հնձելու ժամանակ արգելք են լինում: Բացի արտի երե-

սին երևացող քարերից, լինում են նաև հողի տակի խոշոր քարեր, որ հերկված ժամանակ գուլթանի խոփին զարնվելով՝ կոտրում են այն: Գուլթանը դադարում է՝ մինչև խոփը քաղաք տարվելով շինվի, որով բավական ժամանակ պարապ անցնում է: Ուստի լավ է, որ այդ պատահած քարերը փորելով գետնի տակից հանեն և արտից դուրս տանեն: Փորձված է, գուլթանի խոփերն ուրիշ պատճառներով էլ են կոտրվում: Սրա համար կարող երկրագործը նախապես հոգալով պետք է մի ուրիշ պատրաստի խոփ ևս ունենա, որ առիթի դեպքում գործածի, և չթողնի, որ աշխատանքի օրն իզուր անցնի:

Քարերը մաքրելուց հետո, կարևոր է նաև բարձրաբույս-դաժան փշերն ու այլ մոլախոտերը արմատահան անելով մաքրելը: Դու հիշիր այստեղ, Թոռնի՛կ, Ավետարանի առակը, թե՛ «փշերը խեղդեցին սերմերը, և անպտուղ եղան» (Մատթ. ԺԳ 7, Մարկ. Դ 7, Ղուկ. Ը 7): Ավելի կարևոր է որոմնաբույսը արտից հանելը, երբ ցորենի հետ է աճում և բարձրանում, այն ժամանակ շատ դյուրին է որոմը ցորնաբույսից հավաքել: Ցավում եմ, որ Վանա երկրագործները խիստ անհոգ են այս մասին, թողնում են, որ որոմը ցորենի հետ հնձվելով խառնվի, և միասին կալսվելով հավաքում են շտեմարանը. և

գիտես ինչքա՛ն դժվար է հետո ցորենը մաղելով որոմն անջատելը: Կան շատ գավառներ, որ ցորենը լվանալու մեծ հանդես են անում. ամբողջ ընտանիքը գնում է ջրաղաց, և այնտեղ օրերով մնալով, մեծ խնամքով լվանում են ցորենը, ոչ միայն որոմն, այլև մանր քարերը և ուրիշ օտար սերմնահատերը ամբողջովին մաքրում են և նոր միայն աղում, որով հացն անխառն և շատ մաքուր է լինում:

Բայց որոմնաբույսերը ցորենից զատելու ավելի դյուրին միջոց է՝ կանխապես, դեռ արտը չհնձած, արտի միջից քաղելը, երբ որոմն փունջ-փունջ բարձրանում է ցորենաբույսին հավասար և սկսում հասկ կապել: Ինչպես տեղեկացել եմ, սրա օրինակը մեզ տալիս են Խարբերդի ժրաջան ընտանիքները, որ ժամանակին գնում են արտերը և որոմի փնջերը ամբողջով թյամբ դուրս քաշում, որով ցորենի աճն ավելի է զորանում, որովհետև բոլոր ինքնաբույս խոտերը որքան շատ են բուսնում մի արտի մեջ, այնքան ավելի մեր ցանած սերմի աճը ճնշում են և ջլատում: Զարմանալի է, Թոռնի՛կ, որ այդ ինքնաբույս-անմշակ խոտերն ավելի հեշտ են զորանում և ամրանում. սա մի առակ է, որ պատմում են իմաստուն մարդիկ, թե ինքնածին բույսերը հարազատ զավակ են համարվում

մայր հողին, որոնց ավելի շատ է սնում իր կաթով և հյուսված: Իսկ մեր ցանած սերմերը խորթ զավակներ են համարվում (Եզոպոսյան պատմություններից): Բայց մայր հողի բնական գործընթացը անխտրական և հավասար է բոլոր բույսերի համար, նա հնազանդ է աստվածադիր բնական օրենքին, աշխարհիս մարդկանց մայրերին չի նմանվում, որ հարազատ զավակներին են միայն սիրում և խորթերին ատելով ատում են:

Հետաքրքրվո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե ի՞նչ է բնական պատճառը, և թե ինչո՞ւ ենք ուզում օտարաբույս խոտերը քաղհան անել մեր մշակած երկրից:

Երանի՛ թե կարողանայի գիտականորեն բացատրել քեզ դրա պատճառը, բայց ժողովուրդը փորձով հասկացել է, որ ինքնաբույս խոտերը մեր ցանած սերմնաբույսերի ոխերիմ թշնամին են, որովհետև իրենք ավելի աճելով ու զորանալով՝ նվաճում և խեղդում են մեր բույսերը, չեն թողնում, որ աճեն և զորանան, ուստի քաղհան անելով՝ արմատով դուրս են հանվում: Այդ ժամանակ տեսնում ես, որ ընտանի բույսերը շուտով սկսում են աճել:

Սովորի՛ր, Թոռնի՛կ, թե ինչն է սրա ներքին և բնական պատճառը: Ինձ թվում է, որ բույ-

սերը որքան նոսր լինեն, այնքան ավելի ուժով և արագ են աճում, որովհետև ավելի հյուսիս և սնունդ են ընդունում մայր հողից, և քաղհան արված բույսերի բաժին հյուսիսը իրենք են ներքաշում և ուռճանում: Ժողովրդի մի ասույթը պարզորեն հասկացնում է այս միտքը, թե՛ «Սոխի նոսր գլուխը ձգում է»: Մի՞թե չունենք ավելի բնական օրինակ. մեր մայրը, երբ երկվորյակ է ծնում, նորա ստինքների կաթը բաժին է լինում երկու գավակների, այլ երբ մի գավակ է ծնում, երկու ստինքների կաթը ամբողջությամբ բաժին է մնում նորածին մանկանը, որով կաթնակեր մանուկն ավելի առատ ծծելով՝ ավելի է զորանում: Այսքանը հերիք է արտերի մաքրության մասին, կարգն է այժմ, որ խոսեմ հողի պարարտության մասին, որ ավելացնում է երկրագործի շահն ու վաստակը, եթե նա գիտենա ի գործ դնել բոլոր այն միջոցները, որ հողին ուժ և պարարտություն են տալիս:



Ժ. ՄԱՅՐ ՀՈՂԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Փորձը վարժապետի պես ուսուցանում է մեզ, Թոռնի՛կ. երբ հաճախ առանց հանգիստ տալու մի արտը վարում ենք և ցանում, տեսնում ենք, որ առաջին տարին մեծ արդյունք է տալիս, հետևյալ տարին սկսում է նվազել, երրորդ տարին բոլորովին տկարանալով՝ անարդյունք է թողնում: Գյուղացի ժողովուրդը վաղուց փորձելով գիտե այս բանը, ուստի երկու ձևի միջոցներ է ի գործ դնում, վերստին ուժ է տալիս տկարացած հողին. կամ թողնում է, մի քանի տարի, որ արտը ինքն իրեն հանգստանա և ուժ ստանալով՝ պարարտանա, կամ աղբ տալով, արտի պակասած ուժի տեղը լցնելով՝ մշակում է, և այսպես արտը պարապ չի թողնում, ամեն տարի վարում-ցանում է և արդյունք ստանում, միայն թե գիտենա սերմը փոխել: Այսինքն, եթե առաջին տարին ցորեն է ցանել, հաջորդ տարին պետք է խոտ ցանի և

կամ արտոն աղբերով՝ բանջարեղեն մշակի: Երբ աչնան ավարտին բանջարեղենները վերջանան, կարող է արտը վարել և ցորեն ցանել, որով կրկնապատիկ արդյունք կստանա հաջորդ տարին:

Վանա քաղաքի երկրագործները շատ լավ գիտեն մշակութային այս եղանակը: Իսկ մեր գյուղացի ժողովուրդն իր արտերին ուժ տալու համար մեծ միջոցներ ունի իր ձեռքում. չեմ ասում, թե այնքան տգետ է, որ չգիտե, որովհետև քաղաքի երկրագործների օրինակն իր աչքի առաջ է, այլ ավելի պետք է ասել, թե ծուլ է, և ավելի շատ աշխատել չի սիրում, և ինչպես նախորդ դասերիս մեջ խոսեցի, մի մեծ պատճառն էլ այն է, որ չափից ավելի հող ունի իր ձեռքին, թողնում է անվար, որ միայն կորդ մնալով ուժեղանան:

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, ահա մեր գյուղը՝ աչքիդ առաջն է, որքա՞ն մոխրակույտեր կան, որ ամեն մի տան առաջ մեծ-մեծ բլուրներ են կազմել: Թողնենք մոխրակույտերը, շատ ավելորդ կույտեր կան այստեղ-այնտեղ, փողոցների մեջ, ոտքի տակ հող են դառնում: Մեր անուշադիր երկրագործները չգիտեն գործածել այդ պիտանի և պարարտացուցիչ աղբերի կույտերը: Մի՞թե դժվար է գարնանը և աչնանը փոքրիկ

սայլակներով աղբակույտ փոխադրել արտերը, որով հողի սպառված ուժը վերստին իրեն տալով, հողն արդեն կթարմանա և կսկսի նույն նախնական արդյունքը տալ: Գիտե՞ս, Թոռնի՛կ, սա մի բնական օրենք է, հողը ևս մարդու պես իր կյանքն ունի, եթե այն շարունակ գործածելով վարես, ցանես առանց ուժ տալու, գիտես, որ կծերանա, ամուլ կդառնա, և կդադարի իր պտղաբերությունը: Ասում են, թե Եվրոպա աշխարհի հողերը վերին աստիճանի ծերացած են: Բայց ի՞նչ է անում այդ ժրածան, հնարամիտ ժողովուրդը: Այնքան միջոցներ է գտել հողին ուժ տալու, որոնցով այդ ծերացած հողը երիտասարդ է դառնում և բազմածին պտուղներ առաջ բերում:

Մարդ գարմանում է, երբ լսում է, թե Ամերիկայի հեռավոր աշխարհից նավերով աղբ է փոխադրվում Եվրոպա: Տեսնում ես, այդ՝ մեր աչքում արհամարհված աղբը ևս վաճառքի առարկա է դարձել, որովհետև երկրագործի համար շատ պիտանի և թանկագին է աղբը, քան թե աղամանդը, որ թեպետ այդ պատվական քարն ազնվականների համար մեծ վայելչություն է, սակայն երբ սովալլուկ է լինում մարդը, աղամանդը ծախում է և հաց ճարում:

Ավա՛ղ մեր ծուլութեանը և առավել մեր անուշադրութեանը, Թոռնի՛կ, մեր աղբը Ամերիկայից չի գալիս, այլ մեր տան դռների առաջ դիզված է լեռնաչափ, և մենք, անփուլթ լինելով, դժվարանում ենք մինչև արտ փոխադրել: Ոչ միայն պետք է մտածեինք մեր արտերի պտղաբերութեան, այլև պետք է խորհեինք գյուղի հրապարակի և փողոցների մաքրութեան մասին:

Է՛, Թոռնի՛կ, կարծեմ մի քիչ շատ խոսեցի և դատեցի, մի՞թե շինական ժողովուրդը առանց կրթութեան կարող է մաքրութեան գաղափար և ճաշակ ունենալ: Արդար չէ՝ առանց կրթելու մեղադրել գյուղական ժողովուրդին, որ, բացի տգիտութունից, կյանքի բազմադիմի ցավերով է պաշարված, մի կողմից էլ խոր նախապաշարմունքն է կաշկանդել-կապել նրա բնական միտքը: Եթե ասես՝ «Կիրակո՛ս եղբայր, ձեր դռն առաջ այնքան աղբ է դիզված, ինչո՞ւ չես կրում-թափում արտերիդ մեջ», - «Է՛, - կպատասխանի, - դա մի ավելորդ աշխատանք է, ինձ համար տարին մի քանի արտ է պետք, կվարեմ, կցանեմ, մնացյալները կթողնեմ կորդ, թող ինքնուրույն ուժեղանան: Մեր նախնիներն առանց աղբի էին մշակում, մի՞թե հաց չէին վաստակում, խոսքիս վկա եմ բերում բոլոր հավիտենական մոխրակույտերը, որ նախնիներից

սկսած դիզված են, հո մենք չդիզեցինք»: Ահա քեզ շինականի փաստաբանություն, այսպես մտածելով ու խոսելով՝ նա հաստատ է մնում իր մտքին, և մոխրակույտն էլ իր տեղում է մնում: Դեռ պետք է սպասել, ուրեմն, ժամանակին և կրթութեանը, որ գան և շարժեն շինական ժողովուրդի միտքը դեպի առաջընթաց: Այդ ժամանակ նրանք կհասկանան աղբի պիտանիությունը, և գյուղի ներկայիս աղբակույտերը՝ բոլորը պիտի կրեն-տանեն, թափեն իրենց արտերի մեջ, կուվելով և հափշտակելով իրար ձեռքից: Բավական է, որ դրա արդյունավետությունը մի անգամ փորձով տեսնեն և համոզվեն, թե ինչքան շահեկան է աղբն արտի համար: Այժմ պետք է խոսեմ աղբի նախապատրաստման մասին, թե ինչպես է պետք հավաքել և պատրաստել այն, որ առավել օգտակար լինի:

Եթե գյուղի մեջ յուրաքանչյուր տնից գոյացած աղբը պատահած տեղում թափվելով մնա այնպես, ինչպես այժմ, և մեկ-մեկ հողաբլուր դառնա, ոչ մի օգուտ չի լինի: Նախ, որ արևի ջերմությունը աղբի հյութական զորությունը քաշում է, երկրորդ՝ տեղատարափ անձրևները գալով ողողում են աղբանոցը և դրանցում եղած հյութն ու զորությունը առնում-տանում, այլ նաև աղբակույտը, ցամաքելով իր հյութա-

կան զորութիւննից, անպիտան և անշահեկան է դառնում: Ուստի գլուղի յուրաքանչյուր տուն պետք է առանձին-առանձին իր համար հատուկ աղբանոց պատրաստի, ուր հարմար է, նախապես գիտենալով, թե որքան աղբ կգոյանա տարվա ընթացքում:

Այդ քանակութեանը համապատասխան երկար քառակուսի փոսեր պետք է բանան, գոնե երկու կանգուն խորութեամբ, այնպես որ թե՛ անձրևի և թե՛ հալած ձների ջրերը երբեք աղբանոցի փոսերից ներս չվազեն: Կարևոր է գիտենալ նաև, թե աղբանոցի մեջ թափվելիք նյութերն ինչ են, և ինչ զանազան բաներից է բաղկանում աղբը: Թոնրի մոխիր, կոյանոցների գոյացութիւններ, փտած հարդ և խոտ, տան ավելցուկներ, կալից վերցված խոշոր խուզած հարդ, որ անասունը չի ուտում, մսուրների միջի կրճոն, ավելցուկ և այլն: Ահա այս բոլոր բաները աղբանոցի համար նյութ են լինում: Մոռացա հիշել ավերված պուտուկի ժածիկներն ու նման բաները, որ առհասարակ աղբանոցի նյութ են կազմում, որ մեկտեղ խառնվելով՝ փտում են, խմորվում և թթվում, մի զորավոր նյութ դառնալով երկրի պարարտութեան համար:

Հիմա խոսեմ, թե ո՛ր ժամանակն է հարմար արտերն աղբել: Թե՛ գարնան սկիզբը և թե՛ աշնան վերջը ճիշտ ժամանակն է. բանջարեղենների պարտեզները սովորաբար գարնան ցանելու ժամանակ են աղբում, նմանապես և գարնանացան սերմերի արտերը՝ ցորեն լինի, թե գարի և կամ ուրիշ ընդեղեն բաներ: Բայց ավելի լավ և օգտակար է աշնան ժամանակ աղբել այն արտերը, որ աշնանն են հերկված և գարնանը դարձյալ արորավար պիտի լինեն ցանելու համար: Գիտե՞ս, Թոռնի՛կ, ես ևս փորձել եմ, թե ինչքան շահեկան և արդյունավետ է լինում, երբ աշնանը աղբվում և հավասար տարածվում է արտի երեսը: Նախ անձրև և ապա ձյուն գալով աղբի զորութիւնն ամբողջապես թափանցում է հողի մեջ, և մինչև գարուն հողն աղբի ուժով պարարտանում է: Մինչդեռ գարնան աղբը նույն ազդեցութիւնը չունի հողի վրա, որովհետև եթե անձրևը պակաս լինի, արևի ջերմութիւնը աղբի գազային զորութիւնը կքաշի վերև, որով այնքան արդյունաբեր չի լինում աղբված արտը: Թո՛ղ այս. երկրագործը աշնանն ավելի շատ ժամանակ է ունենում աղբելու արտը, քան թե գարնանը, որ ցանքի և այլ աշխատանքների օրեր են: Նույնիսկ ձմռան օրերին, երբ տակավին ձյունը և ցուրտը այնքան արգելք չեն տա-

լիս, ժրագոտի երկրագործը կարող է աղբ կրել արտը և անմիջապես ցրել:

Աղբի պիտանիության մասին այսքան միայն խոսելով՝ քեզ եմ թողնում, Թոռնի՛կ, որ գործնական փորձով դու ինքնուրույն իմանաս դրա արդյունաբեր շահեկանությունը և չթողնես, որ ամեն մի աղբանյութ բան ընդունայն վատնվի:



ԺԱ. ՀՈՒՆՁ

Երկրագործի համար ի՛նչ ուրախություն է այն օրը, երբ նա գնում է տեսնելու իր արտերը, թե արդյո՞ք հասել են: Երբ տեսնում է, որ հասկավորյալ ցորնաբույսերը շիկակարմիր գույներով ծածանվում են մեղմաշունչ հովից, ասում է՝ Վա՛չ, հնձելու ժամանակը հասել է: Լի ցնծությունամբ տուն է դառնում, ավետիս տալիս ամբողջ ընտանիքին: Իսկույն պատրաստվում են տան աշխատավոր կտրիճ երիտասարդները, և եթե չեն բավականացնում, երբեմն օրավարձով մշակներ էլ են բռնում, և այսպես արտերի հունձքն սկսվում է:

Մի բարի սովորություն ունեք գյուղական ժողովուրդը նախնիների ժամանակ. ում արտը որ շուտ հասներ, դրացիները և բարեկամները օգնության էին գնում, նախ նրա արտն էին քաղում և ապա փոխադարձաբար ինքը ևս գնում էր, նրանց արտը քաղում: Այսպես համաշխարհ կերպով իրար օգնելով՝ բոլոր գյու-

դացիներն արտերը ամբողջութեամբ քաղվում էին, թեպետ այս գեղեցիկ սովորութիւնն այժմ շատ է քչացել, սրանից հայտնի է, որ ընկերական ոգու եռանդը ևս պակասել է:

Աշխատիր, Թոռնի՛կ, որ դու քո արտը քո ձեռքով քաղես, ուրիշի օգնութեամբ կարոտ չլինես: Սրա համար ես քեզ մի առակ պատմեմ, որ շատ տեղերում է գրված: Մի թռչուն կա՝ արտուտիկ, որ բնականից խելացի և տնտես է, իր բռնան արտերի մեջ է դնում, ուր կուտ ու հատիկ շատ է: Սա իր ձագերին, սպասվող վտանգը գիտենալով, սկզբից խրատ է տալիս, որ մտիկ անեն ձագերը և պատմեն իրեն, երբ արտի տերը, հնձելու ժամանակի մոտենալիս, գա տեսնելու, թե արտը հասած է, ինչ կասի: Առաջին անգամ գալով ասում է. «Տղա՛ս, արտը հասնելուն մոտ է: Գնա՛, մեր բարեկամներին ասա՛, թող մեզ օգնութեան գան, արտը քաղենք»: Ուշադիր ձագերն այս բանը պատմում են իրենց մորը: Մայրն ասում է. «Անհոգ եղեք, ձագե՛ր, քանի որ տանտերը բարեկամներին պիտի սպասի, արտը չի քաղվի»: Մյուս անգամ գալիս է հունձքի տերը, տեսնում է, որ արտը հասել է ամբողջովին, ասում է. «Տղա՛ս, բարեկամները չեկան, գոնե մեր դրացիներին լո՛ւր տուր, թող գան, օգնեն մեզ փոխադարձաբար, ի՞նչ կլինի, մենք էլ կգնանք

նրանց կօգնենք»: Ուշիմ ձագերն այս խոսքերը պատմում են իրենց մորը: Մայրը դարձյալ նույն բանն է ասում. «Ապահով եղեք, ձագե՛րս, արտը չի քաղվի, քանի որ բարեկամների օգնութեանն է մնացել բանը»: Երրորդ անգամ է գալիս արտի տերը, տեսնում, որ հնձելու ժամանակն անցել է, և ցորենաբույսերը չորացել են: «Ո՛հ, ասում է, տղա՛ս, խաբվեցինք, այլևս ոչ բարեկամներից հույս կա և ոչ դրացիներից: Գնա՛, շուտ առ-բեր մանգաղները, մենք մեր արտը քաղենք»: «Այժմ հավատում եմ, ձագե՛րս, որ արտը պիտի քաղվի, ելե՛ք, ձեզ փոխադրեմ ուրիշ տեղ»:

Այս առակը թող քեզ խրատ լինի, Թոռնի՛կ, երբեք մտքիցդ չհանես և հուսախաբ չլինես. ժիր երկրագործն իր վարած-ցանած արտը պետք է իր ձեռքով քաղի, որովհետև գուցե օգնող դրացու արտը քո արտի հետ հնձելու հասնի: Մի՞թե հնարավոր է, որ նա թողնի իր հունձքը և գա քո արտը հնձի: Աշխատիր, որ հնձի ժամանակը չանցնի, դրա պատճառով թե՛ դժվարութեամբ կքաղվեն և թե՛ հասկերի թափվելով մեծ վնաս կլինի:

Երբ հնձի ժամանակ օրավարձ սարակներ ես բռնում, լավ պահիր նրանց՝ թե՛ հացով, թե՛ կերակուրով: Կան ոմանք, որ չար են վարվում աշխատող մշակների հետ, որոնք ուժից ընկած

վաստակաբեկ են լինում: Երբ կեսօրին հաց են ուտում հնձող մշակները, որքա՛ն բարեսիրտ կլինես, Թոռնի՛կ, եթե թողնես այն միջօրեի շոգին, խոնջացած աշխատավորները դեզերի հովանուտակ ցորենի խրձերը բարձ անելով գոնե մի ժամի չափ անուշ քուն մտնեն, հետո ելնեն, մանգաղները սրեն և սկսեն քաղը: Շատ ուրիշ գավառներ այս սովորությունն ունեն, միայն Վանա գավառն է, որ անխիղճ է վարվում մշակների հետ:

Եվ գիտե՞ս դու, Թոռնի՛կ, որ մեր հնձողները լավ ախորժակով կուշտ հաց են ուտում, որքա՞ն վնասակար է մարդու առողջությանը, երբ այդպես՝ առանց դադար տալու, ելնեն և լիքը փորով տանջվեն և մանգաղ քաշեն: Թողնենք այս տնտեսապես էլ վնաս է տան տիրոջ համար, որովհետև հնձող մշակն արդեն խոնջացած է, և հաց ուտելով ավելի ևս ծանրանում է: Բնական է, որ նա անմիջապես գործն սկսելով, չի կարող ջանքով աշխատել: Բայց երբ նա փոքր-ինչ քնով կազդուրվելով թարմանում է, ստամոքսի ծանրությունը թեթևանում է: Տե՛ս, թե այն ժամանակ որքա՛ն աշխույժ մանգաղը կշարժի, այնպես որ նա մի ժամվա քնի տեղը կրկնակի աշխատությունը կլցնի:

Նախորդ դասերիս մեջ, հիշո՞ւմ ես, Թոռնի՛կ, հարևանցի կերպով ասացի, որ գերանդին՝ շատ մեծ առավելություն ունի մանգաղից, միայն թե

չուշացնես և ցորենի հարմար ժամանակ հնձես, որ այլևս հատիկները չթափվեն: Եվ ավելի այն արտերն է պետք գերանդիով հնձել, որ խիտ բուսնած, խոտախառն և բարձրահասակ են ցողունները: Իսկ այն արտերը, որոնց բույսերը նոսր և կարճ են, պետք է մանգաղով քաղել: Երանի՛ թե, Թոռնի՛կ, գնայիր, հնձելու պահին տեսնեիր Մշո, մանավանդ Հացյաց գավառի քաջաբազուկ մշակներին: Նրանք չգիտեն մանգաղ, գետնի երեսից բուսած ամեն ինչ գերանդիով են հնձում, փուլթ չունեն, թե հատիկները գետին են թափվում, որովհետև այնպիսի չնաշխարհիկ հողեր ունեն, որ ընկած հատիկները հողի մեջ թաղվելով, և աշնան անձրևը վրան գալով, տեսնում ես, որ հնձած արտը նորից կանաչել է, որով առանց աշխատանքի կրկնակի արդյունաբեր լինելով, հետևյալ տարին նորից են քաղում: Հնձելու և մեծ-մեծ խրձեր կապելու վարպետության մեջ արդարև մշեցի երկրագործը գերազանց է, թեև հողագործության ուրիշ մասերում շատ հաջողակ չէ:

Համառոտ կերպով ավարտելով արտերը հնձելու դասը, միտքս եկավ այն բանը, որ Տեր Աստված Մովսեսին է պատվիրել, ճռաքաղ չանել թե՛ այգին և թե՛ արտը, որովհետև փոքր ճիւղերը և թափված հասկերը որբերի և աղ-

քատների բաժինն են (Հմմտ. Բ Օրին. ԻԴ 20-21): Աստծու այս գլխավորական պատվերը ծերունի Պապիկը թողնելին է ավանդում, որ բարեսիրտ և գթասեր լինես: Մենք այդի չունենք, բայց արտեր ունենք: Հնձելու ժամանակ պետք է թողնենք, որ գյուղի աղքատները, այրիները, որբերը գան, ժողովեն թափված հասկերը ու հայթայթեն իրենց կյանքի պարենը: Նրանք մեր գյուղի չքավոր մասն են, վարուցան չունեն, հապա ինչո՞վ պետք է ապրեն՝ պետք է աշխատանքի բաժին տալ այնպիսիներին, որ կարող են աշխատել և օրավարձ ստանալ: Սակայն կան այնպիսիները, որ ծեր ու պառավ են, կամ փոքրիկ երեխաներ են. ոչ մի աշխատանք չենք կարող պահանջել նրանցից իբրև փոխհատուցում: Քրիստոս հատկապես այնպիսիների համար է ասել. «Տուք փոխ այնմ, ուստի ոչ ակն ունիցիք առնել» (Ղուկ. 2 35):



ԺԲ. ԿԱԼ ԵՎ ԿԱԼԱՏԵՂ

Արտերը հնձելու ժամանակ երկրագործը մեծ փութաջանություն պետք է ունենա, մի կողմից էլ քաղված ցորենի դեղերը սայլերով կրի կալատեղ: Այս աշխատանքը շատ կղյուրանա, եթե կանխապես սայլի ճամփաները հարթված ու պատրաստված լինեն: Հայտնի է՝ ամեն գարնան ժամանակ հորդ անձրևներից և ջրավազ տեղերից ճամփաների վրա հեղեղատներ են բացվում և մեծ արգելք լինում սայլերի ընթացքին: Նկատի՛ր ու տես, թոռնի՛կ, թե ո՞րքան անհոգ է գյուղական ժողովուրդը, որովհետև երբ այդ բնական ճամփաները խանգարվում են, նա մտածում է այն ժամանակ ուրիշ՝ նոր ճանապարհի մի գիծ բանալ, որով հին-բնական ճանապարհն ամայանում է: Իսկ նոր ճամփան թեկուզ երկար լինի և պտույտներ ունենա, փուլթ չէ իր համար, որովհետև գյուղացին չգիտե հաշվել ժամանակի կորուստը, չհաշված դժվարությունները: Երկրագործի

աշխատանքում մեծ օգուտ կլինի, եթե տարեց-տարի նորոգվեն գոնե խանգարված գլխավոր ճամփաները: Դեռ հունձքը կալատեղ չբերած՝ շատ կարևոր է կալատեղի և կալսելու համար պետք եղած գործիքների՝ կամնասայլ, ջարջառ և այլն, պատրաստությունը: Վանա արևելյան և հյուսիսային կողմում եղած գավառներում շատ գյուղեր կան, որ երբեք կալատեղի պատրաստության կարիքը չունեն, որովհետև գյուղերի մոտ խիտ և մանրաբույս մարգեր կան, որ գետնի երեսը ծածկել են իբրև մի կանաչազարդ փռոց, ինչպես մեր Արճակ գյուղի կալատեղերը, որ բնական են և նախապատրաստելու կարիք չունեն:

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, որանը կալսվելուց հետո մեր ցորնաչեղջերը որքա՛ն մաքուր և անխառն են, ո՛չ հող ունեն և ո՛չ քար իրենց մեջ: Իսկ այն կալատեղերը, որ անբույս-լերկ հող են, երկրագործն ստիպված է ամեն տարի կալի ժամանակ շինել ու պատրաստել:

Կալի տեղը երեսից փորելով ջուր են թողնում վրան և անհարթ տեղերը բահով հարթելով ուղղում գետնի մակերևույթը: Զուրը ցամաքելուց հետո հարդ են լցնում վրան և սկսում բահի տակով ծեծել և հարթել: Այսպես շինված կալատեղերը դարձյալ խորդուբորդ են լինում

և գերծ չեն պահում ցորենը ավագախառն հատիկներից: Լավագույն կալատեղն այն է, որ սալահատակ է և իր շրջապատում գոնե կես կանգուն բարձրությամբ թումբ ունի, որ որան կրող սայլը նրա եզրին կանգնի և չմտնի կալատեղ, որովհետև սայլի անիվները կալատեղի հարթությունը կխախտեն:

Մեր Վանա գյուղերի որան կալսելու եղանակը և գործիքները բավական հաջող են, թե՛ կամնասայլը, թե՛ ջարջառը միասին բանեցվելով՝ մեծ գործ են անում: Ավելի կալսող և մանրող է ջարջառ գործիքը, որ փայտե մի գլանակ է՝ երկու կանգուն երկար, որի վրա շարված են ոլոր ձևով երկաթե սուր ուրագներ, որ անվաճև պտտվելով՝ կոտրտում է կալի որանը: Մանավանդ, երբ ձիեր են լծված լինում ջարջառին, արագ պտտվելով՝ կամնասայլից շատ ավելի գործ են անում:

Հարցրո՛ւ, թե աղքատ գյուղացիներն ինչպես են կալ անում, երբ այդ գործիքները չունեն: Է՛, Թոռնի՛կ, ավելորդ է այդ հարցը, քանի որ աղքատն արդեն հողատեր չէ, մի՞թե կարող է վարուցան անել: Ահա տես կալը մեր գյուղի աղքատ Ղազարի, որ ժամանակին գյուղի առաջին հարուստն էր, այժմ հազիվ մի քանի սայլ ցորեն ունի կալսելու: Մի եզ և մի կով ունի, լծել է մի

մաշած, անատամ կամնասայլի, իր փոքրիկ կալը դրանով է կալսում: Ես վաղուց եմ ճանաչում աղքատ Ղազարին, որ երբեմնի տանուտեր էր, դուռը բաց, և այժմ այս վիճակին հասավ: Թե՛ արտերը, թե՛ նրա ծառաստանները պարտատերը գրավեց. իրավ, թե անիրավ, այդ չգիտեմ, լուկ այն գիտեմ, որ պարտատերը թե՛ աշխարհի օրենքի առաջ, թե՛ իր խղճի առաջ ինքը չքմեղ եղավ և կարգաց բանաստեղծի այս տողերը.

Հետևելով միշտ օրինաց աշխարհի.
Ես կեանքումս մարդոց վնաս չի արի:

Միջանկյալ բան պատմեցի քեզ, Թոռնի՛կ, որ պարտք անելուց զգուշանաս, ապա թե ոչ՝ դու ևս աղքատ Ղազար կդառնաս:

Դու չես տեսել, Թոռնի՛կ, բայց ես տեսել եմ Պոլսում, կպատմեմ քեզ: Եվրոպայի գիտակ մարդիկ այժմ կալ կալսելու համար մի մեքենա են հնարել, որ ահագին բան է, մեծ սայլի պես չորս անիվների վրա է հաստատված: Դրա մեջ զանազան մանր ու խոշոր երկաթաթել մաղեր և այլ կալսող և մանրող սրեր են զետեղված, որ մեզ պես շինականի խելքը չի հասնի: Այս մեքենան կրակով է աշխատում: Երկու մարդ մեքենայի տանիքին կանգնած շարունակ խրճեր

են նետում ընդունող անցքից ներս, ուր փշրելով, մեքենայի երկու ծակերից դուրս են հանում՝ թե՛ ցորենը, թե՛ հարդը: Այս մեքենան միշտ դեզերի մոտ է կանգնում, որովհետև սայլի պես հեշտուլթյամբ կարելի է քշել-տանել ուր որ լինի:

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե գիտուլթյունն ինչքան է դյուրացրել մարդկանց աշխատանքը, այնինչ մենք ամիսներով կալ ենք անում, և շատ անգամ ձյան տակ է մնում բերքը: Իսկ երբեմն էլ սպասում ենք մեղմաշունչ հովերին, որ առանձնացնելով՝ ցորենը հարդից հանենք: Երկու անգամ մաղերով անց ենք կացնում և այլն:

Առանց այս բոլոր աշխատանքների մեր մի ամսվա գործը մեքենան մի քանի օրվա մեջ է ավարտում: Եվ այնքան մաքուր է զտում ցորենը, որ մարդ զարմանում է, թե ինչպես իսպառ մի կողմ են անջատված քարերը, հողը, և օտար հատիկները, որով այլևս հարկ չի մնում ցորենը կրկին մաղելով մաքրելու և նոր միայն տանելու ջրաղաց՝ աղալու համար:

Գիտե՞ս, Թոռնի՛կ, թե աշնան կալի ժամանակ որքա՛ն են շտապում գյուղացիները, որ անձրևների շրջանը չսկսված՝ կալերը հավաքեն, որովհետև երկրագործը կալի ժամանակ անձրև չի

ուզում, այլ միայն արև և հաջող քամի: Բայց այս մեքենայի մեծ օգտակարությունն այն է, որ ցանկացած ժամանակ կարող է աշխատել:

Սրա համար Եվրոպայի մեծ ագարակատերերը, ցորենն առանց կալսելու շատ ժամանակ դեզերով են պահում, և երբ պետք լինի, մեքենան դեզի առաջ տանելով, կալսում են: Որովհետև փորձված է, որ ցորենը երկար ժամանակ ավելի լավ է պահվում դեզերի մեջ, իր հասկերով ու պատյաններով, քան թե շտեմարանում, որ շատ անգամ տաքանում, ոջլոտում է, եթե երբեմն խառնելով շուռ չտաս: Մեր աղքատ կալերը մեքենայի կարիք չունեն, մեր մեքենան ժրագործ աշխատանքի բազուկներն են: Կարո՞ղ ենք այդ թանկագին մեքենան բերել մեր աշխարհ, որ մի հատը հազար լիրայի արժեք ունի, ինչպես շատ անգամ կրկնել եմ. Եվրոպայի գյուղական ժողովրդի երկրագործական աշխատանքը շատ դյուրացրել են: Նա կարիք չունի մեքենա ստանալու, որովհետև կան այնպիսի ընկերություններ, որ հատկապես այդպիսի մեքենաներ են գործածում, գյուղացին, վարձ տալով, իր ունեցած ամբողջ ցորնադեզերը կալսելու է տալիս: Եվ գիտե՞ս, որքան հեշտություն է այդ դժվարաշարժ մեքենան գյուղից գյուղ տարվում, միայն երկու ձի լծելով, հարթված-պատրաստ-

ված ճամփաների շնորհիվ: Ով գիտե, անշուշտ կգա ժամանակը և մի օր այդ մեքենան քայլելով կգա մեր աշխարհ. ես կմեռնեմ, իսկ դու կտեսնես ու կհիշես Պապիկիդ գուշակությունը:

Կալի և կալատեղի դասն ավարտելով, այժմ պետք է խոսեմ շտեմարանի պատրաստության մասին:



ԺԳ. ՇՏԵՄԱՐԱՆ

Հանկարծ միտքս եկավ, Թոռնի՛կ, ինչ զուգադիպություն օր է այսօր. վաղը մեր Վարագա Խաչի տոնն է: Նախնիներից սկսած սովորություն է եղել, ամբողջ Վասպուրական աշխարհը վաղը հարիսա կղնի, գյուղական ժողովրդի համար մեծ ցնծություն օր է, մենք այս օրվան կալի կորկոտ ենք ասում, որովհետև կալերը վերջանում են, կալի երախայրիքից, հատկապես ճերմակահատ ցորեններից, գյուղական տանտիկիները կորկոտ են պատրաստում հարիսայի համար, գյուղի բոլոր տները ամեն մեկն իրենց չափով հարիսա են դնում: Մի ժամանակ կար, որ գյուղի մեծամեծ տոհմերը մեկական եղ էին մորթում հարիսայի համար, իրենց մեռելներին հիշելով հոգեհաց էին պատրաստում, ամբողջ գյուղի ժողովուրդը, աղքատները ուստում էին կուշտ-կուշտ և օրհնում էին տան տիրոջը: Գնա՛ց, Թոռնի՛կ, այն առատության ժամանակը, թողնենք եզը, բավ է, եթե կարողանան մի

ուլ մորթել: Հնուց հարիսայի մասին շատ երգեր կան, բայց ես նորից մի երգ ասեմ քեզ.

Է՛ս օր, գիտե՞ք, թե ի՞նչ օր է,
Մեր վարագայ խաչի սօնն է,
Եւ մենք կասենք կալի կորկոտ,
Հարիսայի մեծ սօնն է:
Բոլոր աշխարհ վասպուրական
Հարիսայի սօն կատարէ,
Է՛, տան տիկին, թոնիր վառէ
Դիր մեծ պղինձ և պուտուկներ,
Մեք մորթեցինք մեր պարարտ եզն,
Միսն ու կորկոտ պատրաստ է, տե՛ս:
«Բոլորեցէք շուրջ պրդընձին
Բոլոր գեղի կըտրիճ լաճեր,
Հարէք ըզսա, ուժգին հարէք»,
Կասէ մեր հայր Լուսաւորիչն:
Է՛նպէս հարէք, մինչև հալին
Ոսկորն ու միսն ի միասին,
Հալին խառնին հետ կորկոտին,
Այն է նշան լաւ հերիսին:
Չոքէք, մանկտիք, թախտին վերայ
Սըփոոց չուզեր, շինական եմք,
Լից, տան տիկին, ըզհարիսան,
Լիճ-լիճ արա եղն ի վերայ:
Տան հարսներ և աղջիկներ

Ծուտ-շուտ բերէք ըզթափթափան,
Թոնրէն ելած տաք-տաք հացեր,
Ի՞նչ անուշ է հարիսի հետ:
Վերցրէք այն կոպիտ անտաշ,
Խոշոր-խոշոր մեծ դըզալներ,
Կերէք-կերէք, անուշ էլնի
Վաստակաւոր մշակներ:
Օրհնեալ լինի մեր տանտիկին,
Լաւ է եփեր ըզհարիսան,
Օրհնեալ լինի Լուսաւորի՛չն,
Որ տուաւ մեզ լոյս հաւատ,
Հետ հաւատին մեզ աւանդեց
Հարիսային այս յիշատակ:
Օրհնեալ լինի իւր յիշատակ,
Պահենք, պահենք այս յիշատակ,
Միշտ յիշենք ու չը մոռնանք
Մեր փրկութեան մեծ օրն էր այն:

Պատմեմ քեզ, Թոռնի՛կ, հարիսայի ավանդությունը և հիշատակը, որ մեր Լուսավորչի օրից եկել, մեզ է հասել:

Ես էլ իմ Պապիկից եմ լսել, որ այսպես էր պատմում: Երբ սուրբ Գրիգոր Լուսավորիչը խոր վիրապից ելավ, եկավ Վաղարշապատ, ամբողջ վաթսուն օր քարոզ խոսեց հեթանոս Հայ ժողովրդին: Բյուրավոր մարդիկ էին լսում: Ան-

չուշտ նրանց մեջ շատ աղքատներ կային, Լուսավորիչն ուղեց աղքատների համար մի ճաշ պատրաստել: Բայց այս ճաշը Հիսուսի պես հրաշքով չպատրաստեց: Հրաման տվեց հազարավոր գյուղացիներին, որ շատ եզ ու ոչխար բերեն, մորթել տվեց: Մեծ-մեծ կաթսաներ կրակի վրա դրեցին, մսերը մեջը լցրին, կորկոտը վրան: Հրամայեց հաստաբազուկ կտրիճ երիտասարդներին և ասաց՝ Հարէք ըզսա, որով այս կերակրի անունը մնաց հարիսա: Այս կերակուրը հայկական մի պատվական կերակուր է, Հայրիկը շատ էր սիրում հարիսա, միշտ եփել էր տալիս Վարազա վանքում: Երբ նա իր պանդխտության մեջ հարիսային կարոտն էր քաշում, մի անգամ նամակ է գրել Վարազա միաբանությանը: Այդ նամակի խոսքերը միտքս եմ պահել:

«Երջանի՛կ միաբանություն Վարազա, որ բնակվում եք Ավագ Սուրբ Նշանի թևի տակ. արդյոք հիշո՞ւմ եք պանդուխտ Հայրիկին: Ա՛խ, ես ձեզ հիշում եմ, հիշում եմ Վարազա Խաչի տոնը, որ մոտ է. հիշում եմ վանքի այն պատվական հարիսան, և դուք առանց Հայրիկի ուտում եք հայրենավանդ կերակուրը: Կերե՛ք, թո՛ղ անուշ լինի, և կշտապինդ կերեք և խմեցեք Վարազա սարի ծոցից բխած պաղուկ-պաղուկ աղբյուրների ջուրը: Իսկ Հայրիկն իր պանդխ-

տություն մեջ ա՛խ է քաշում հարիսայի համար: Ինչ կլինի, որ հիշեք Հայրիկին և մի քիչ հարիսա հանձնեք Ամբակումի պատվիրակին, որ բերի Բաբելոն, ուտեմ և օրհնեմ ձեզ: Ողջ եղեք»:

է՛, Թոռնի՛կ, բավ է, թողնեք այս ավանդական հարիսայի բանը, դառնանք մեր դասի կարգին:

Գյուղական տնտեսության մեջ շտեմարանի պատրաստությունը շատ պարզ ու նախնական է: Սովորաբար գյուղացիները իրենց ցորենը, գարին և այլ հատեղեն բաները մի մարդաչափից ավելի հոր փորելով հորում են գետնի տակ: Թեև հորի կողերը խոտով կամ հարդով չըջապատում են, բայց շատ անգամ վնասվում են. խոնավություն առնելով՝ հացը գեջահամ է լինում: Եվ որովհետև այս ցորենի հորերը բացօթյա տեղերում են, շատ անգամ պատահում է՝ անձրևից և ձյունից ջուր առնելով փտում է ցորենը: Այնպես է թվում, Թոռնի՛կ, որ հին-հին ժամանակներից գյուղացիները իրենց ցորենը ապահով պահելու համար գետնի տակ են պահում, ինչպես նաև ուրիշ շատ բաներ: Զարմանք է, որ այս ապահով ժամանակի մեջ ևս նույն սովորությունը պահել են: Բայց այս բանը անհոգության և ծուլության մի արդյունք է: Երբ գյուղացին իր համար տուն է շինում, անասունների համար ախոռ, ոչխարների հա-

մար գոմ, մի՞թե դժվար է, որ յուրաքանչյուր տուն իր արմատների չափով շտեմարան չինի: Կան ոմանք, որ մեծ-մեծ «փեթակներ» են շինում, որ մեջը մեծ քանակությամբ արմտիք են պարունակում: «Փեթակները» շատ լավ են պահպանում հատեղեն բաները, միայն թե «փեթակների» տանիքը պետք է լավ պատրաստել, որ կաթիլներ չիջնեն փեթակի մեջ: Բայց միշտ լավ պետք է համարենք շտեմարանը, որ որքան ուղենք՝ կարող ենք ընդարձակ չինել, որ ամեն տեսակ ընդեղենների առանձին-առանձին բաժանումներ ունենա իր մեջ: Ցորենը պետք է ժամանակին խառնել-չուռ տալ, որ օդ առնելով՝ չտաքանա և ոջլոտի:

Ա՛հ, Թոռնի՛կ, հոգիս հառաչում է, մի՞թե պարտապան գյուղացի երկրագործին շտեմարան պետք է: Ահա մեր բարեկամ Կիրակոս եղբոր կալը, չափում են, տե՛ս, քսան կիլոյանոց մի ցորենի շեղջ է. վաշխառու քաղաքացիները եկել, պատրաստվել են: Չափեցին, շեղջը քսան քիլա եղավ: Նախ Տերության տասանորդի տուրքը տրվեց, վաշխառուները՝ ամեն մեկն իր տոկոսի հաշվով չափեցին-առան: Ի՞նչ մնաց, միայն կալատակը, նրա վրա էլ աղքատները թափվեցին կալեմասն առան, սրբեցին կալատեղը: Դու տես այժմ Կիրակոսի խեղճ վիճակը,

նա՛ տխուր, երեսը կախած, առավ կալի ցախավելը, թիակը, հեծանոցը և այլն, գնաց տուն: Տանտիկինը հարցրեց. «Տո՛ մարդ, այդ ահագին կալից մեզ բաժին չմնա՞ց, ի՞նչ պիտի ուտեն մեր ճժեր ու պժեր»: Տանուտերը պատասխանեց. «Տարեկա՛ն, տարեկա՛ն (հաճար), գարին արդեն գնացող-եկող հյուրերին հագիվ կբավականացնի»: Տանտիկինը ձեռքերը պարզեց ու լացեց. «Ա՛հ, Աստված, Դու տեսար, բարկ թոնրի դիմաց ամբողջ տարին հաց թխեցի, կերակուր եփեցի, մշակներին պահեցի: Ի՞նչ դատաստան է այս, Տե՛ր, ես ու իմ ճժերը կարոտ պիտի մնանք ցորեն հացին»: «Է՛, տանտիկին, դու չգիտե՞ս, ցորենը քաղաքացիների, գեր-գեր մսացուները դարձյալ քաղաքացիների, իսկ գյուղացու բաժինը տարեկանը, կորեկն ու թանապուրն են: Այս ևս բավական է, դու փառք տուր Աստծուն, կնի՛կ, մեզնից ավելի զրկվածներ կան, որովհետև Մշո գյուղացին կլկլով է միայն ապրում, որ տարեկանից և կորեկից շատ չնչին է»:

Դու հարցրու, Թոռնի՛կ, այս անխիղճ և անիրավ վաշխառուների ձեռքից մեր գյուղացի ժողովուրդը ե՞րբ պիտի ազատվի, որ, բացի կալի ցորենից, մեր արտերն էլ գրավ են վերցնում, որ մեր կյանքն ու ապավենն են, և մեր Արճակ

գյուղի գյուղացիների սեփական հողերի գրեթե մեծ մասը խլել են: Այս բանը երկրագործ ժողովրդի համար մի սպանման խնդիր է: Սրա միակ ճարն ու դարմանն են՝ Տերության արդար օրենքը, որ կարող է կարճացնել վաշխառուների ձեռքը, որ ծանրացել է երկրագործ պարտապան ժողովրդի վրա:

Արդեն քանի տարի առաջ պետության հոգածությունը դարձավ այս բանի կողմը, ուստի գավառագլուխ քաղաքներում փոխառության սնդուկներ հաստատել տվեց՝ խիստ չափավոր տոկոսներով, որ երկրագործ ժողովուրդը, թողնելով վաշխառուներին, փոխառության կենտրոնին դիմի: Միայն թե այդ սնդուկները պետք է բավարարեն այն անթիվ-անհաշիվ բարդված գումարներին, որ այսօր կքել է Տերության ամբողջ ժողովրդի մեջքին: Կալն ու շտեմարանն առիթ տվեցին ինձ, Թոռնի՛կ. այսքանը միայն հարևանցի խոսեցի, և բավական է: Թողնենք այս խնդիրը մեծ տնտեսագետներին, թող մեծ-մեծ հատորներով գրքեր շարադրեն երկրի տնտեսության մասին, որ երկրի բարգավաճման շունչն է, որովհետև հացով է ապրում Տերությունը և Տերության հպատակ համայն ժողովուրդը:

ԺԳ. ՉՍԵՌ ԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔ

Երբ վերջանում են կալերը, աշունն անցնում է, ձմեռն է գալիս: Ձյունը պատում է մեր դաշտերն ու լեռները: Դրանից հետո դադարում են մշակության դաշտային գործերը, բոլոր անասունները կապվում են ախոռներում՝ մսուրների առաջ, երբեմն երեք ամիս, և երբեմն մինչև չորս ամիս և ավելի այդպես կապված մնում են, և պետք է հոգանք նրանց սնունդը հարդով ու խոտով, որ իրենց աշխատանքի չնչին բաժինն է, իսկ պատվական մասը մեզ է մնում՝ ցորեն, կաթ, մածուն, պանիր, յուղ և այլն:

Բայց գիտես, Թոռնի՛կ, ձմեռը նախ լեռների գլուխներից է սկսվում: Մի առավոտ, երբ վեր ենք կենում, տեսնում ենք, որ լեռների գագաթները ձնով են ծածկվել: Դա ցույց է տալիս մեզ, որ ձմեռը մոտ է, լեռներից պիտի իջնի դաշտերը: Պետք է այն ժամանակ գյուղացի ժողովուրդն իր ձմռան պատրաստությունները տեսնի:

Դու գիտես, մեր գյուղացիների տները և ախոռները խարխուլ և անհաստատ շենքեր են. ամեն տարի աշնանը պետք է նորոգվեն: Կարծո՞ւմ ես, Թոռնի՛կ, որ գյուղական ժողովուրդը լավ է հասկացել աշխարհիս ունայն կյանքը, դրա համար երբեք չի ուզում հաստատուն բան շինել: Ո՛չ, այդպես մի դատիր. նախ, որ իր տնկած ու մշակած փայտը չունի, եթե միայն սա լիներ՝ դրամ չունի, եթե չինի՝ շինելու կերպ չգիտե, և այս ամենի մասին դարձյալ պիտի խոսեմ իր տեղում:

Մեր բնակած երկրի ձմռան սաստիկ կլիման է, որ պատճառ է դարձել անասունների համար ախոռներ շինելու: Սրանից ազատ են հարավային ջերմ գավառները, ուր ո՛չ ցուրտ կա, և ո՛չ ձյուն: Երկրագործ ժողովրդի աշխատանքը շատ քիչ է, անասունների ձմռան կերի համար ոչ մի հոգս ու մտածություն չունեն, տարին տասներկու ամիս նրանց անասուններն արածում են: Ուստի երբեք կարիք չունեն ո՛չ ախոռ շինելու և ո՛չ անասունների համար դարման պատրաստելու, ո՛չ խոտ և ո՛չ հարդ: Ուստի խոտ մշակելու, քաղելու և դիզելու կարիք երբեք չունեն, ինքնաբույս խոտն այնքան առատ է բուսնում, մանավանդ Կիլիկիո լայնածավալ խորադաշտում, որ աշնան ժամանակ կրակ տալով վա-

ռում են, որով ավելի է ուժեղանում հողը, և հետևյալ տարին խոտաբույսը կրկնապատիկ է զորանում:

Բայց մեր երկրի ձմռան ցուրտ եղանակն ստիպում է մեզ անասունների համար ախոռ և դարման պատրաստել: Դու տեսնում ես, Թոռնի՛կ, ի՞նչ են մեր ախոռները, և ի՞նչ պիտի լինի դրանց պատրաստությունը, եթե առիքի մի քանի գերաններ փտած են, պիտի փոխվեն, եթե մսուրները քանդված են, պետք է շինվեն, նույնպես եթե ախոռի հատակը դարուփոս է եղել, պետք է հարթել և այլն:

Շինական երկրագործը միայն այսքան կարող է պատրաստել իր անասունների ախոռը, նա որ իր խրճիթի համար հող չի տանում, մի՞թե անլեզու խեղճ անասունների համար պիտի մտածի. և իրավունք ունի, որովհետև մարդն իր կյանքի չափով է չափում ամեն բան:

Թողնենք ախոռը, Թոռնի՛կ, խոսենք անասունների դարմանի մասին: Եթե գիտես, մեր խեղճ անասունների դարմանը չոր հարդն է, խոտը միայն ոչխարներին են պահում, թերևս երբեմն գարնան մոտ գոմեշներին և եզներին՝ միայն օրը մի անգամ խոտ կարող է տան: Իսկ մատակ գոմեշները, կաթնատու և հղի կովերը, հորթերը արժանի չեն խոտ ուտելու, ահա քեզ

մի գրկանք. կովերը, որ կաթ և յուղ են տալիս մարդկանց սնունդի համար, հորթ են տալիս, որ եզ են դառնում երկրագործի համար, ոչ մի կարևորություն չունեն մեր Վանա գյուղացիների մոտ: Գուցե ուրիշ գավառի գյուղացիներն այսպես չեն վարվում: Դու տեսել ես, Թոռնի՛կ, գարնան ժամանակ մեր գրկված կովերն այն վիճակին են հասնում, որ չեն կարող նստած տեղերից վեր կենալ, այլ պոչերից բռնելով են վեր հանում, հղի կովերը շատ անգամ ծնելու ժամանակ դժվարածին են լինում: Դու տեսնես, այն ժամանակ տան տիկինը խղճմտանքի է գալիս և մի ամանով լակ պատրաստելով՝ բերում է ծննդաբեր կովին: Ստույգ է, որ կանայք ավելի շատ են ուզում շահել ու փայփայել կովերին, որ ավելի շատ կաթ ստանան, մածոն սարքեն, եփեն թանապուր, որ գյուղական կերակուրն է: Խեղճ կովեր, ի՞նչ են ուտում, որ կաթ տան. միայն չոր հարդ ուտելով կարո՞ղ են կաթ տալ: Մի սակառ հարդը մի քաշ կաթի հյուսթը հագրիվ ունենա, և սա փորձել են վերլուծելով բնագետ-երկրագործները:

Տեղը եկավ, կպատմեմ քեզ, Թոռնի՛կ. ես լսել եմ, որ Եվրոպայի երկրագործները հարդ չեն կերցնում տավարներին, այլ ավելի շատ խոտ և ուրիշ բուսական բաներ: Հնարամիտ փորձերով

այնպիսի գյուտեր են գտել անասուն գիրացնելու համար, մարդ երբ լսում է, զարմանում է և չի հավատում, թե մի կովը մինչև յոթանասուն-ութսուն լիտր կարող է տալ, այնինչ մեր գիրացած կովերը շատ-շատ հագրիվ քսան կամ քսանհինգ քաշ կաթ են տալիս: Դու մտածիր, թե ի՞նչ են ուտում և օրը ի՞նչ քանակությամբ են բան ուտում, որից քսան քաշ միայն կաթի հյուսթ է գոյանում: Զարմանալին այն է, որ այդ կովերը ամառ թե ձմեռ ախուռի մեջ կպած են պահվում. թվում է, թե այդ աշխարհն ամբողջությամբ մշակված երկիր է, արոտավայրեր չկան: Է՛, Թոռնի՛կ, ուրեմն մեր անասունները գոնե ամռանը շատ երջանիկ են, որ հովասուն լեռների վրա, ծաղկալից հովիտների մեջ, կանաչազարդ մարգերի վրա են ճեմում, հապա այն պաղուկ-պաղուկ ջրերը, որ խմում են, իրիկուն է լինում, գյուղի նախիրը դաշտից տուն է դառնում, կովերը ծիծերը լցրած՝ ծանր-ծանր, հպարտ-հպարտ, շորորալով են քայլում. ամեն մեկն իր տիրոջ տունն է գնում. տանտիկին հարսները կթոցն առնում վազում են, կովը հանդարտ կանգնում է, և սկսում են կթել: Խղճմտանքով տանտիկինը գիտե կթելու չափը, բավական բաժին է թողնում հորթուկի համար: Բայց կան անխիղճ կանայք, որ խիստ ճմլելով՝

քամում են կովի պտուկներն այնպես, որ խեղճ հորթուկին շատ քիչ բաժին են թողնում:

Երբեմն ծուռ՝ կարմիր կովեր կան, որ շատ արդար դատաստան են անում, երբ տանտիկինը խստուկյամբ ճմլում է պտուկները, կովը զայրանում է, զարնում-թափում է կաթը, կթոցն էլ հետը կոտրում և այսպես տեսնում իր գրկված հորթի դատաստանը: Երանի՛ թե մարդիկ, օրինակ առնելով, ծուռ կովի չափ դատաստան տեսնեին: Դու տեսնում ես և գիտես, Թոռնի՛կ, այն առատ-առատ արոտների մեջ արածելով, որքան կաթ են տալիս, օրական հազիվ մի քաշ, կամ շատ-չատ երկու քաշ: Իսկ ճմռանը, երբ սոսկ հարդով են ապրում, խիստ նվազում է իրենց կաթը, հազիվ են հորթերին կշտացնում:

Անշուշտ, կհետաքրքրվես, թե մեր կովերը, որ դրախտի երկրի մեջ ամենազան ծաղիկներով և խոտերով են սնվում, ինչո՞ւ Եվրոպայի կովերի պես կաթնաբեր չեն և կամ նրանց չափ միս չեն տալիս: Ասեմ քեզ, Թոռնի՛կ. նախ, որ մեր կովերը ազնիվ ցեղերից չեն, դու տեսնում ես, փոքրիկ և գաճաճ բաներ են, մինչդեռ Եվրոպայի անասնապահը ամեն ջանք և հնարամիտ փորձ ի գործ է դնում ոչ միայն կովերի, այլև ամեն տեսակի անասունների ցեղերն ազնվացնելու համար. մենք ո՛չ այդ խելքն ունենք

և ո՛չ այնքան հոգատարություն. մենք այնպես ենք կարծում, թե դա մի բնական բան է, որ մեր երկրի կովերը գաճաճ պիտի լինեն: Երկրորդ՝ գիտակ մարդուց եմ լսել, թե արոտական շրջող անասունների՝ ինչպիսիք կաթնատու կովերն են, անդադար շրջելով, ծիծերի ավելորդ կաթը ուրիշ որակի է փոխվում կամ ջուր է դառնում: Արդյոք, եթե սովորություն լիներ, ինչպես ոչխարները, կեսօրին բերատեղ են գալիս և կթվում, նույնպես կովերն էլ կթվեին, գուցե ծիծերի մեջ լցված կաթը պարպելով՝ մինչև երեկո կրկին անգամ լցվեր և նորից կթվեր: Սրա փորձելը շատ դյուրին է, բայց մեր անդադար աշխատող գյուղական ընտանիքների վրա այս նոր աշխատանքը ևս կարո՞ղ ենք բարդել:

Թողնենք այս: Իսկ եթե ասենք մեր գյուղացիներին, որ կթան կովերին ախոռի մեջ պահեն, գարնանը կանաչ խոտ քաղելով կերցնեն և ամռանը չոր խոտ... Լո՛ւռ կաց, Թոռնի՛կ, եթե այսպիսի մի բան խոսենք, բոլոր գյուղացիները կխնդան մեր վրա, քանի որ այսքան ընդարձակ, խոտավետ լեռներ, հովիտներ ունենք, որ անմշակ մնալով՝ միայն արոտական տեղեր են, հիմարություն չէ՞՞ այդ պատվական արոտները թողնել, ուր անասունն ինքնուրույն, իր բերանով արածում է, առանց մեր աշխատանքի,

եղնել գարնանից խոտ կերցնել կթան կովերին, մինչդեռ խոտը միայն ձմռան պաշար է: Գյուղացիների այս դատողությունը շատ իրավացի է. եթե եվրոպացի անասնապահն իր կովերը այդ եղանակով է պահում, նա պատճառներ ունի. նախ, որ արոտատեղ չունի, երկրորդ՝ կովերի առատ կաթից մեծ շահավաճառություն ունի՝ ամեն օր ահագին քանակությամբ կաթ է վաճառում: Իսկ մեր գյուղացիները, եթե ունենան առատ կաթ, ո՞ւմ պիտի վաճառեն, թեև կարող են յուղ շինելով քաղաքացիներին վաճառել, բայց այդ իրենց համար մի չնչին շահ է: Դու տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, շինականի խելքն ու հաշիվը, այն ինչ հին է և փտում է, գյուղից բառնալով տանում է քաղաք, ծախում և մեծ օգուտ է համարում:

Դառնանք մեր առաջին նյութին, Թոռնի՛կ, կաթնատու կովերի մասին բավական շատ խոսեցի, և միտքս այն է, որ ցույց տամ քեզ, թե մեր գյուղական ժողովուրդը անասնապահության մեջ շատ հետ է մնացել: Նա չգիտե, որ անասնաբուծությունը երկրագործության մի կարևոր ճյուղն է. ավելի շահավետ և արդյունավոր: Անասունների խնամքի համար այնքան տաժանելի աշխատանք պետք չէ, ինչպես հողագործության մեջ: Իր շահն էլ թերևս հողա-

գործությունից ավելի շատ է: Ահավասիկ քեզ մի կարճ հաշիվ տամ, Թոռնի՛կ, որ ավելի լավ համոզվես:

Եթե ունենանք հինգ կով, հինգ մատակ գոմեշ, հինգ ձի և հինգ մատակ էշ, ամբողջը կլինի քսան հատ՝ չորս տեսակից: Միշտ հնարավոր է, որ քսանից տասն և հինգ հատը ծնեն, և երեք տարուց հետո՝ գործածելու կամ ծախելու վիճակի կհասնեն: Տարին տարվա վրա որքան բազմանան, նույնքան շահն էլ կբազմապատկվի: Ստույգ է, որ առաջին տարիներին այնքան մեծ շահույթ չի տա այս փոքր ունեցվածքը, բայց այնպիսի ինքնաճուճ մի դրամագլուխ է, որ գնալով կաճի, և որքան աճի՝ իր շահույթը կբազմապատկվի: Աշխարհիս վրա բնավ չկա ուրիշ կերպ շահավաճառության, որ հավասարվի տավարաբուծության շահույթին: Օրինակ և ապացո՞ւյց ես ուզում, Թոռնի՛կ. տե՛ս մեր դրացի քրդերը, որ մեզնից ճկուն միտք ունեն այս հարցում, և ավելի շատ անասնապահությանն են ուժ տալիս, քան սոսկ հողագործությանը, որովհետև փորձով են հասկացել դրա արդյունքը: Տե՛ս՝ հազարներով ոչխար են պահում, հարյուրներով սևատավար, բազմաթիվ ելխի կոչված ձիեր և այլն: Մենք ո՛չ տեսնում ենք, ո՛չ զգում և ո՛չ հաշվում, թե մի շարք ցեղապետ

քրդերի հարստութիւնը անանապահութեան շնորհիվ է: Ասա՛, Թոռնի՛կ. «Նրանք հովասուն ընդարձակ արոտատեղեր ունեն, հնարավորութիւն ունեն և հարկ եղած դեպքում կարող են պաշտպանել իրենց անասունները թշնամի հրոսակներից»... Այո՛, Թոռնի՛կ, դա ևս մի կարևոր փաստարկ է, բայց ես խոսում եմ սկզբունքի մասին միայն, որ անասունների բուրդն ավելի շահավետ է: Այդ ձեր ներկա դատողութիւնը գուցե այսօր կա և վաղը կվերջանա, որովհետև ժամանակը գնում, ու ժամանակը գալիս է և իր հետ բերում խաղաղութիւն և ապահովութիւն՝ շնորհիվ մեր աշխարհաչեն Տերութեան:

Է՛, Թոռնի՛կ, այս դասը շատ երկար եղավ, և շատ տեղերում որոշ նյութեր իրար խառնվեցին, այժմ պիտի խոսեմ ոչխարի շահաբերութեան և խնամքի մասին:



ԺԵ. ՈՉԽԱՐԸ ԵՎ ԻՐ ԱՄԵՆԱՇԱՀ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխարհի բոլոր ընտանի կենդանիների մեջ ամենաշահավետ կենդանին ոչխարն է, որ մի տարվա ընթացքում գրեթե իր գնին հավասար արդյունք է տալիս: Մի մաքին մեր երկրի միջին գնով հիսուն դահեկան արժե: Մաքին տարին մի գառ է տալիս, որ քսանից մինչև քսանհինգ դահեկան արժե: Երկու քաշ պանիր, երկու քաշ յուղ է տալիս, այն ևս արժե տասնվեցից մինչև քսան դահեկան: Մի քաշ էլ բուրդ է տալիս: Դա էլ հինգ դահեկան հաշվելով ամբողջը միասին լինում է քառասուն և մեկ դահեկան: Եթե ժաժիկն էլ հաշվեմ՝ կհասնի մինչև քառասունհինգ դահեկանի:

Ոչխարը շատ օրհնած, հեզ, ձեռնասուն և անմեղ կենդանի է. անապատական ճգնաժամի շնորհանք է Մկրտիչը, երբ տեսավ Հիսուսին, Աստուծոյ Գառն կոչեց Նրան: Հայր Աբրահամը, երբ Իսահակին կապելով դրեց սեղանին, որ

պիտի մորթեր, հրեշտակը կանչեց իրեն, Աբրահամն ի վեր նայեց, տեսավ, որ մի ընտիր խոյ է կախված Սաբեկի ծառից: Աստված ուղարկել էր այդ խոյը, որ Իսահակի փոխարեն զոհ լինի, և Իսահակն ազատվի:

Ոչխարը շատ զարմանալի կենդանի է, որովհետև փոքր և հանդարտ բնավորություն ունի, հազարներով կարող ես պահել մեկտեղ: Ոչխարը թե՛ նուրբ և թե՛ դիմացկուն մի կենդանի է, ամուսնը շոգից շատ է նեղվում, մանավանդ երբ իր արոտատեղը դաշտավայր է, իսկ հովասուն լեռներն ու լեռնադաշտերը ոչխարի համար արքայություն են: Այն գյուղերը, որ դաշտավայրում են կառուցված և ընդարձակ մարգագետին ունեն, ինչպես մեր գյուղը, շատ հարմար չեն ոչխար պահելու համար, մանավանդ ջրոտ մարգագետինները մի տեսակ հիվանդություն են պատճառում արածող ոչխարներին, և այս տեսակ հիվանդությունը «քյափանակ» են ասում, որ կարծեմ քրդերեն պետք է լինի:

Իսկ լեռնային գյուղերը, որ ընդհանրապես քրդերի բնակավայրն են, ոչխար պահելու համար շատ շահեկան են, որովհետև քրդերը այս հարցում մեզնից ավելի խելացի են և շահագետ: Հազարներով ոչխար են պահում և վարպետ խնամող են: Նախ իրենց արոտավայր տե-

ղերը շատ լայնածավալ են՝ խոտավետ լեռներ, ծաղկաբույս հովիտներ, աղբյուրաշատ ձորեր՝ մեծ բաժին է եղել իրենց, ուր ամուսնն արածում են ոչխարները, և ձմռան համար, որքան ուզեն, կարող են խոտ քաղել, պատրաստել մեծամեծ դեզերով, և միայն այն ժամանակ են խոտ տալիս ոչխարին, երբ ձյունը սաստիկ է գալիս և ծածկում ամբողջ լեռներն ու արևահայաց տեղերը: Իսկ երբ ձյունն այնքան շատ չի լինում և քամին արևկող լեռների ձյունը քշում-տանում է, ոչխարը կարող է արածել և կշտանալ: Գիշերը ևս ոչխարները լեռների ծոցավոր տեղերում են մնում, ուր քամի չկա և արևկող է: Այս բացօթյա ջերմ տեղերին քրդերը հավշի են ասում: Ժամանակ է լինում, որ ոչխարի հոտերը մինչև երեք օր կարող են անոթի մնալ հավշիներում, մինչև որ ձյունաբուք քամին անցնի: Սրա համար ասացի քեզ, թե ոչխարը ամուսն շոգին չի դիմանում, բայց ձմռան ցրտերին դիմակայում է: Տեր Աստված, հոգալով այդ խեղճ կենդանու մասին, թանձր բրդով է նրա մարմինը պատել. մի՞թե այդ օրհնյալ կենդանու բրդով չի տաքանում մեր թիկունքը:

Իսկ մենք՝ գյուղացիներս, որ ամեն մի տանը սակավաթիվ ոչխարներ ունենք, ձմռանը գոմում ենք պահում և ցերեկները դուրս հա-

ներով ճյան վրա խոտ ենք տալիս և նորից գոմ տանում:

Ոչխարի գոմը հարկ եղած չափով պետք է ընդարձակ լինի, այնպես, որ առանց նեղվելու նստեն, կանգնեն. տանիքից և պատերից պետք է երդիկ ունենա, որովհետև ոչխարի համար շատ անհրաժեշտ է մաքուր օդը, նա սովոր է լեռների հովասուն օդ շնչել միշտ: Ոչխարը մաքրություն և չորություն է սիրում, պետք է միշտ գոմի հատակին չոր և մանր փայեն փռել, իսկ ամռանը հավաքել ու պահել: Նմանապես մեծ հոգատարություն է պետք գոմի տանիքի համար, որովհետև կաթիլները շատ վնասակար են ոչխարի համար:

Գարնանը, ապրիլ ամսվա կեսին ոչխարներն սկսում են իրար հետևից ծնել, երբ դուրս եկած արածում են նորաբուսիկ և հին խոտերով: Նոր ծնված գառները և ուլիկները հովիվն իր իշուկին բառնալով՝ երեկոյան գյուղ է բերում: Մայիս ամսվա մեջ, երբ արոտները զորանում են, սկսում են ոչխարները կթել: Կեսօրին հովիվը ոչխարները բերում է բերատեղ: Տեսնում ես, որ գյուղի հարսներն ու աղջիկները կաթի կփեր և կթոցներ առնելով գալիս են բերատեղ, ամեն մեկն իր ոչխարներն է կթում: Այդ երջանիկ կթվորները գարնան գույնզգույն ծաղիկներով են զարդա-

րում իրենց գլուխն ու կաթի կփերի բերանները, շալակում, ուրախ-ուրախ երգերով գյուղ են դառնում: Երբ կիթն ավարտվում է, գառնարածը, որ գառնուկները և ուլերը առանձին տեղ էր պահել, բաց է թողնում: Դու այն ժամանակ մի զվարճալի տեսարան տես. ոչխարները բառաչում են, գառները մայում, թվում է, թե մայր ոչխարն իր գառնուկի հետ խոսում է, և գառնուկը մոր հարյուրավոր ոչխարներ-գառներ խառնվում են իրար, մինչև գտնեն գառներն իրենց հարազատ մայրերին. հարազատ մայրը երբեք օտար գառ չի ընդունի իր տակ: Զարմանալի է հովիվի վարպետությունը. երբ գառը մոլորվում է, չի կարողանում գտնել իր մորը, հովիվն իսկույն բռնում է գառնուկին և հանձնում է մորը: Եվ ինչպես է ճանաչում, գիտե՞ս. բավական է, որ ծնվելու ժամանակ տեսած լինի մի անգամ, կարծես թե լուսանկարի պես նորածին գառան և մոր պատկերը տպավորվում է նրա անմշակ մտքի մեջ, և նա կարողանում է հարյուրավոր ոչխարների գառները՝ առաջ և հետո ծնված, գույնով իրար նման, սրատես աչքով տարբերել իրարից: Այսպիսի հովիվները շատ հազվագյուտ են, և պսպոր են կոչվում, որ սրատես և ճարպիկ է նշանակում:

Չմոռանանք այստեղ, Թոռնի՛կ, որ հովիվ համար շատ կարևոր են գամփո, հուժկու գայլ-

խեղդ շները: Շատ ճիշտ է, եթե ասենք, որ հովիթի թիկնապահ և առաջապահ գինվորներն են, որ հոտի առաջից երթալով՝ դիտում են չորս կողմը: Եթե մի գայլ տեսնեն հեռվից, տես թե ինչպես խմբովին կարճակվեն, մինչև հալածեն: Պատահում է երբեմն, որ հասնեն-բռնեն գայլին և խեղդեն. այդ օրը հովիվն իր քաջարի շներին մեծ ճաշ է տալիս, որ պատրաստում է հացով և յուղով, որ ճմուռ են կոչում: Իսկ շների սովորական կերակուրն է կաթը, որ մի մեծ փայտե կոտի մեջ է լցնում հովիվը առատորեն, գարե հացն էլ մեջն է բրդում: Այդ քաղաքավար շները շուրջն են բոլորում և ուտում են առանց կռվի: Մի՞թե քաղաքի փողոցի անոթի շներն են, որ ոսկորի համար կռվում են: Հովիվի շները մի վեհանձն բնավորութուն ունեն. անիմաստ տեղը չեն հաչում, բայց եթե հոտի մոտ անծանոթ մարդ տեսնեն, իսկույն հարձակվում են:

Վերջապես, Թոռնի՛կ, գամփո շները շատ պիտանի են ոչխարի հոտի համար, եթե չլինեն, գայլերից շատ վնաս կհասնի ոչխարներին, և հովիվը միայնակ չի կարող պաշտպանել հոտը: Մանավանդ մշուշի ժամանակ. չգիտեմ, գրքերը հովիվի անունը շատ են տալիս, շներին ինչո՞ւ չեն հիշում, որ հովիվի օգնականն ու գորավիզն են: Մեր ոչխարի շներին լավ նայիր, Թոռնի՛կ, եթե տկարանան,

ուժաթափ լինեն, այլևս չեն կարող գայլերին հալածել: Նմանապես հովիվն ևս լիովին վճարիր և ավելին հոգա ու երբեմն պարգևներ տուր պապոր հովիվին: Գիտե՞ս դու, ոչխարի հովիվը ժողովրդի հովիվն չի նմանվում, որ առանց վարձքի ժողովուրդ է հովվում ու համբերում, ինչպես մեր գյուղերի քահանաները:

Մոռացա ասել, Թոռնի՛կ, թե ոչխարներին պետք է ժամանակին աղ տալ: Ոչխարները չափազանց շատ աղ են սիրում, եթե աղ չուտեն, ո՛չ իրենց կաթի և ո՛չ մսի մեջ համ կլինի: Թեպետ այն գյուղերը, որ Վանի կամ Արճակի ծովին մոտիկ են, աղի տեղ ծովի ջուր են խմեցնում, որ վնասակար է, որովհետև այդ ծովերի ջրերը ավելի բորակ ունեն իրենց մեջ և ոչ թե զուտ աղ: Բացի սրանից, երբեմն նաև չափազանց շատ խմելով են վնասվում, ուստի ավելի լավ և օգտակար է համարվում աղը:

Հովվական կյանքը շատ անմեղ և երջանիկ կյանք է, Թոռնի՛կ, թեև մարդիկ կարծում են, թե հովիվները ապերջանիկ մարդիկ են, մարդկանց ընկերական կյանքից զրկված, անբան անասունների հետ են ապրում, միշտ ամայի լեռների վրա շրջում, շատ տխմար ու բթամիտ են լինում: Այս կարծիքը շատ սխալ է. հովիվներն իրենց արհեստին հմուտ են, ոչխարների ամեն տե-

սակ հիվանդությունները ճանաչում են, գիտեն դեղն ու դարմանը, լեռներում դեռ անծանոթ մնացած բոլոր ծաղիկների, բույսերի, արմատների գորությունը փորձով գիտեն:

Հովվական կյանքը հին նահապետների կյանքի մի պատկերն է, ուր տեսնում ենք ոչ միայն այր մարդու, այլև ոչխար արածեցնող աղջիկների՝ ինչպես Ռեբեկան, Ռաքելը և այլն:

Այդ լեռնաբնակ հովիվներն, այո՛, միշտ երջանիկ են, երբեք հիվանդ չեն լինում, որովհետև նրանք ամենամաքուր օդն են շնչում: Ու ի՞նչն է իրենց բնական ու սովորական կերակուրը, գիտե՞ս. մաքրիներին կթում են, այդ փրփրուն, անխարդախ կաթի մեջ հաց բրդում, պաղ աղբյուրի մեջ դնում, գդալով ուտում: Նրանք ուտելու ժամ ու ժամանակ չեն առանձնացրել. երբեմն գիշերապահին կաթը կթելով դնում են պաղոց մինչև առավոտ: Մեկ էլ տեսնես, որ այդ կաթի երեսին մի մատ սեր է կապել. դա էլ Հովվի առավոտվա նախաճաշն է: Հովվի խմած ջուրը այն սառնորակ աղբյուրների զուլյալ ջրերն են. հովվի շունչը այլազան ծաղիկների բուրմունքն է, և ռեգերը դրանց հոտով են զմայլվում: Հովվի գիշերվա քունը շատ անդորր և անուշ է, նա չունի կակուղ անկողին, նա պառկում է գետնին, մի քար գլխին բարձ է դնում և իր թաղիքե կա-

փանակը վրան է քաշում: Նա քնում է, և շնորը պահապան են լինում հոտին: Հովվի քունը շատ թեթև ու կարճ է. նա գրեթե կիսարթուն ննջում է, որովհետև միշտ իր սրտում կասկած և երկյուղ ունի, թե գայլերը գիշերով հանկարծ կհարձակվեն հոտի վրա: Զարմանալի է. երբեմն հովիվը երազում գայլերի ոհմակներ է տեսնում. գիշերով հանկարծ հարձակվում են հոտի վրա: Նա սկսում է քնի մեջ ինքնաբերաբար խոսել և շներին հրահրել և մերթ էլ իսկույն վեր է ցատկում շփոթված:

Հովիվը գեղարվեստի դպրոց չի ավարտել, Թոռնի՛կ, բայց ինքը բնականից երաժիշտ է. նա իր հովվական փողն առնելով նստում է բարձր քարի վրա, սկսում փչել, և գիտե՞ս, ինչքա՞ն քաղցր ու անուշ է այդ հովվական փողը: Երբեմն էլ հովիվն իր փողով իբրև զորավար մի հրաման է տալիս իր հոտին, ցրվածներին ժողովում և իր մոտ է կանչում՝ մանավանդ աղ տալու ժամանակ. ի՞նչպես է հոտը միահամուռ դիմում դեպի աղը, որի համար հոգի են տալիս ոչխարները:

Ահա հովվի կյանքն ու գործը շատ համառոտ նկարագրեցի քեզ, Թոռնի՛կ: Սակայն մի խնդիր կա. մենք, որ հովվի կյանքը երջանիկ ենք համարում, ամբողջովին ազատ աշխարհի

աղմուկներին, բայց տեսնենք, թե հովիվն ինքն իրեն երջանիկ համարո՞ւմ է և իր կյանքին գո՞հ է: Սրա համար խելացի մարդկանց մի առակ է միտքս գալիս, պատմեմ քեզ, ուշադրությամբ մտիկ արա:

Մի հարուստ հովիվ, որ շատ ոչխարների և տավարների տեր էր, մի օր ծովին մոտիկ մարգագետնի վրա երբ իր անասուններն էր արածեցնում, աչքը դեպի ծովն է դարձնում, տեսնում է՝ ծիծաղախիտ ծովը մեղմաշունչ գեփյուռից ծածանվելով ծփում է: Վաճառականների նավերը, առագաստները պարզած ու բեռնված, դեպի նավահանգիստ են գալիս:

Մեր անփորձ հովիվը, հրապուրվելով այս երջանիկ տեսարանով, մի ախ է քաշում և սկսում իր բախտից դժգոհել. «Երանի՛ ես էլ մի վաճառական լինեի, ծովով ու ցամաքով աշխարհե-աշխարհ ճամփորդեի, լսեի, աշխարհի բաները հասկանայի, պատվավոր վաճառական լինելով՝ անուն հանեի: Ի՞նչ է այս իմ կյանքը, գիշեր-ցերեկ անասունների հետ եմ կյանք վարում, աշխարհն ամբողջ քաղաքակրթության հետևից է վազում, ես դրա համն ու հոտը չգիտեմ: Ծիշտ է, տունս ամեն բարիքներով լի է, վայելում եմ Աստծու տված բարիքները, ոչնչի կարիք չունեմ:

Բայց մի՞թե մարդու համար միայն ուտել-խմելը բավարար է. հարուստ եմ, սակայն ինչ օգուտ, որ անծանոթ եմ մնացել իբրև մի սոսկական հովիվ: Եթե մեռնեմ, հիշատակս էլ կկորչի. ո՞վ է տեսել, որ հովիվի գերեզմանի վրա կոթող կանգնեցնեն: Ես ուզում եմ, որ անունս արձանագրվի աշխարհի մեծամեծ մարդկանց հետ, ապագա սերունդը կարդա և հիշի ինձ»:

Այս եթերային երևակայությունից խաբվեց մեր հովիվը, գնաց, վաճառեց իր բոլոր անասունները, մի մեծ գումար եղավ: Տվեց, գնեց բազում ապրանքներ, տարավ, որ զնա օտար աշխարհ վաճառի: Այս մեր անգրագետ, հաշվարկ չիմացող հովիվը ուրախ-զվարթ նստելով նավ՝ ինքն իրեն մտքում հաշվում էր. «Այսպես առա և այսպես բարձր գնով պիտի ծախեմ և այս առաջին անգամից՝ այսքան պիտի շահեմ»:

Մինչ հովիվն իր այս հաշվարկով զվարթանում էր, ծովն էլ իր բնական հաշիվն սկսեց, սոսկալի փոթորիկ հանեց, նավը տարավ-զարկեց ցամաքի ապառաժներին, խորտակվեց նավը, և բոլոր ապրանքները թափվեցին ծովը: Խեղճ հովիվը, մի փրկության տախտակ գրկելով, հագիվ ազատվեց, ելավ ցամաք և հետո մի ուրիշ նավով վերագարձավ, եկավ տուն՝ մերկ և սնանկ: Առաջ տեր էր, հետո վարձկան ծա-

ուս դարձավ և հետզհետե անասունների տեր եղավ, հասավ իր նախկին վիճակին: Մի օր դարձյալ գնաց այդ ծովեզրի արոտատեղին, տեսավ, որ ծովն առաջվա պես դարձյալ ծիծաղախիտ ծփում է իր դեմ, և նավերը բարձված գալիս են:

Մեր հովիվը, մտաբերելով, ասում է. «Է՛, անիրա՛վ ծով, այլևս քո ծիծաղին չեմ հավատա, տունս քանդեցիր: Բայց ես էլ բան հասկացա քո փորձանքից, թե հովիվը վաճառական չի կարող լինել, և պետք է այսուհետև վիճակովս գոհ լինեմ և փառք տամ Աստծուն»:

Տեսա՞ր, Թոռնի՛կ, այս առակը թող քեզ խրատ լինի, չլինի թե դու էլ մի օր ունայն երևակայությունք խաբվելով ասես. «Ոչխարներս ծախեմ, գութանը տավարներով ծախեմ, բոլոր արտերս ծախեմ, որ մեծ գումար լինի, գնամ Վան, վաճառական լինեմ, թողնեմ գյուղացիությունը, լինեմ քաղաքացի, գեղեցիկ տներ շինեմ, երբեմն էլ գնամ Ըստամպոլ՝ գամ, մեծ վաճառականի վարկ ու համբավ ստանամ», - և այլն: Դու դեռ անփորձ ես, Թոռնի՛կ, չգիտես, որ քաղաքային կյանքի փորձանքները ծովի փորձանքներից ավելի կործանիչ են, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես: Հեռո՛ւ, հեռո՛ւ քաղաքից և քաղաքացիների կենցաղավարու-

թյունից: Ապահով կյանքը գյուղն է, և արդար վաստակը մշակույթունն է, հողագործը վաճառական չի դառնա, մաճկալն էլ՝ ծովի նավապետ կամ ղեկավար: Խնամակալն Աստվածամեն մարդու իր տեղն է դրել, որ աշխատեն. քաղաքացուն՝ քաղաքում, գյուղացուն՝ գյուղում, նավապետին՝ ծովում, մաճկալին՝ դաշտում: Մարդիկ երջանիկ են լինում, եթե գոհ են լինում իրենց վիճակից և չեն ձգտում այն բանին, որ իրենց ուժից և չափից վեր է և չեն կարող հասնել: Այնպես չհասկանաս, Թոռնի՛կ, թե դու առաջադիմել ես ուզում, իսկ ես քար եմ դնում ոտքիդ առաջ, որ անչարժ մնաս՝ ուր որ ես: Ո՛չ, իմ միտքն այն է, որ գյուղական կյանքի մեջ առաջադիմես, տանուտեր լինես, ազարակի տեր լինես, հազար-հազար ոչխարներ ունենաս, բայց չթողնես գյուղն ու դաշտը և միշտ հիշելով մեր առակը՝ ծովեզրին չմոտենաս:

Ավարտելով այս երկար դասս, որ պատմեցի քեզ, ոչխարների խնամքի և դարմանման մասին, այժմ պիտի խոսեմ անասունների հետ գլխուկապ վարվելու վերաբերյալ:



ԺՁ. ԳԹԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

Գիտենք, Թոռնի՛կ, և Սուրբ Գիրքը պատմում է մեզ, որ Տեր Աստված, երբ ստեղծեց բոլոր անասուններին, մի հանդես կազմեց, բոլոր կենդանիներին բերեց Ադամ թագավորի առջևից կարգ-կարգ անցկացրեց, ցույց տալով, թե այս ամենը քո իշխանության ոտքի տակ եմ դրել: Ինչպես Դավիթն էլ է ասում. «Ձամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա զխաչն՝ և զարջառ և զամենայն ինչ» (Սաղմ. Ը 8):

Այս անասունների մի մասն ընտելացած է մեզ, և մեր բոլոր գործերում ծառայում, հնազանդվում են ինչպես որ ուղենք: Մի մաս էլ կա, որ ազատ և ապստամբ է մարդու դեմ, որովհետև մարդուց ավելի հզոր և պատառող գազան են, որ հեռավոր անապատներում և ավելի շատ անտառներում են բնակվում: Ստեղծող Աստված չի մոռանում նրանց, կերա-

կուր է տալիս: Առյուծի կորյունները մռնչում են և Աստուծոյ իրենց կերակուրը խնդրում: Իսկ ի՞նչն է իրենց կերակուրը. տկար կենդանիները, որ պետք է չարչարանքով որսան, ուտեն և ապրեն: Այս աշխարհի մի բնական օրենքն է, որ տկարները ուժեղներին կերակուր լինեն: Թողնենք ցամաքի աշխարհը, ծովային աշխարհում էլ այդ օրենքն է տիրում. տեսնո՞ւմ ես, որ փոքրիկ ձկները մեծ ձկներին միշտ կերակուր են լինում:

Բայց չկարծես, Թոռնի՛կ, թե այդ անընտել և անզուսպ գազաններն ամբողջութեամբ ազատ են մարդու տիրապետությունից: Ո՛չ, մարդն իր ճարտար հնարամտությամբ կարողանում է որսալ այդ կատաղի գազաններին և վանդակների մեջ փակել և այն աստիճան կրթել դրանց, որ իբրև մի մանուկ՝ հնազանդվում են իրենց վարժեցնող տիրոջը:

Իսկ մեր ընտանի անասուններն այնքան են ընտելացել մեզ, որ մեզ հետ են ապրում, գրեթե ընտանեկից են համարվում, և մեր բոլոր՝ թե՛ մշտական աշխատանքում և թե՛ ուրիշ բաներում գործակից են:

Թեպետ մենք մեր անասունների տերն ու իշխանն ենք, ծեծում ենք, չարչարում և անպատիժ մնում, չնայած երկրի օրենքը անասուններ-

րին չարչարելու համար սահմանված պատիժ ունի:

Թողնենք օրենքը, Եվրոպայում անասունների պաշտպան հատուկ ընկերություն կա, որ կարգված պաշտոնյաներ ունի, ոստիկանի պես հսկում են. եթե տեսան մեկին, որ անգթությամբ է վարվում որևէ անասունի հետ՝ իսկույն բռնվում է և իր պատիժը կրում: Եթե տեսնեն, թե մի կառապան իր ձիերի դարմանը խնայելով վատուժ և տկար է պահել, այդպիսին իսկույն պատիժ կկրի և կտուժի, իսկ նա, որ իր բեռնատար ձիուն այնքան լավ է խնամել, որ ահագին գերաններ բարձած մի սայլի՛ միայնակ քաշում է, պաշտպան ընկերությունն այդպիսի կառապաններին պարզե և մրցանակ է տալիս:

Մեզ համար այդ բանը չկա՝ ո՛չ պատիժ և ո՛չ մրցանակ, բայց մեր մրցանակը կամ պարզեը մեր շահն է, որովհետև մենք մեր աշխատավոր անասունները որքան լավ խնամենք, առույգ և ուժեղ պահենք, այնքան ավելի օգուտ կլինի մեզ նրանց կրկնապատիկ աշխատանքից: Իսկ եթե մեր անասունները տկար և անուժ լինեն, մեր վարուցանն ու ամեն ինչը տկար կլինի, դա շատ հայտնի բան է, երբ գործիչները տկար են լինում, գործն էլ տկար է լինում: Օրինակն աչքիդ առաջ է, Թոռնի՛կ. այն գութանը, որ ու-

ժեղ գոմեշներով ու եզներով է լծված, ինչքան ավելի տեղ է վարում, քան այն գուլթանը, որի անասունները նիհար և ուժաթափ լինելով, մի օրավար տեղը հազիվ երկու օրում են վարում:

Եթե միայն մեր օգուտը հասկանալով խնամենք անասուններին, այդ մի առաքինությունն է, այլ արդարությունը պահանջում է, որ բնականից գուլթ ունենանք անասունների նկատմամբ, որովհետև անասուններն էլ աշխարհիս վրա մեզ պես խնդիրներ ունեն, կարոտ են մեր օգնությունը: «Արդարը խղճում է իր անասունին, իսկ ամբարիշտներն անողորմ են» (Առակ. ԺԲ 10), ասում է Սուրբ Գիրքը: Տեր Աստված սուրբ անասուններ տվեց մարդկանց, որ մորթեն, եփեն, ուտեն, բայց օրենքով արգելում է, որ մոր կաթ խմող գառանը մորթեն: Երբ նրա մայրն իր նորածին գառնուկի նկատմամբ գորովանքով է լցված, ինչ անգթություն է կաթնկեր գառնուկի արյունը կաթի հետ խառնելը, որով խեղճ մայրը բնական գթով մորմոքելով բառաչում է և գառնուկին կանչում: Անասնոց բնական գուլթը ժամանակավոր է. այնքան է տևում, մինչև նորածին գառնուկները և հորթերը կաթից կտրվեն, իսկ մարդկային ծնողական գուլթը մինչև գերեզման է տևում: Եվրոպայի քաղաքակիրթ աշխարհն այդ հաշիվը չունի, կաթնկեր գառն էլ, հորթն էլ միասին ուտում է:

Ո՛չ Մովսեսին է նայում և ո՛չ բնատուր գուլթին: Բայց զարմանալի է, երբ օրենք է դնում որսորդների համար, որ ձագ հանած ժամանակ թռչունների որս չանեն: Դա, ինձ այնպես է թվում, այնքան գթության համար չէ, որքան այն հոգածության համար, թե վաղն ինչ պիտի ուտեն, միգուցե այդ թռչնի համադամ կերակուրը պակասի ազնվականների սեղանից:

Գթությունն այնքան մեծ առաքինություն է, թոռնի՛կ, որ ոչ միայն մեզ ստիպում է խնայել և գթալ մեր ընտանի անասուններին, այլ նույնիսկ պատառոզ գազանների վերաբերմամբ է շարժում մարդու սիրտը: Այդ մտքի կապակցությունը մի սիրուն առակ պատմեմ քեզ, որ գթասիրտության մի ճիշտ օրինակ է:

Մի մատաղ եղնիկ, իր բնական այրում ծնելու ժամանակ, չգիտեմ ինչպես է լինում, իր ձագերը մեռնում են: Խեղճ եղնիկը թողնում է իր մեռած ձագերին, ելնում, շրջում է լեռան անտառում, մի որջի պատահելով տեսնում է՝ գայլի երկու նորածին ձագ անոթի նվազած-ընկած են: Գուցե իրենց մայրը, ոչխար ուտելու գնալով, շներից խեղդվել էր, լակոտներն անմայր էին մնացել: Գթասիրտ եղնիկը մայրական գորովով խղճալով գայլի ձագերին՝ «Ի՛նչ կլինի,- ասաց,- որ ես այս անտեր լակոտներին

անեմ, քանի դեռ կուրծքս կաթով լցված է... մինչև որ մեծանան ձագերը»:

Այդ անտառում մի դրացի ճգնավոր կար: Գիտես, Թոռնի՛կ, ճգնավորներն աշխարհից հեռացած, աղոթասեր մարդիկ են, բայց ծնողական գուժի քաղցրությունից տեղյակ չեն: «Է՛, անխելք եղնիկ,- ասում է ճգնավորը,- զարմանում եմ, դու ի՞նչպես ես այդ գայլի լակոտներին կերակրում, չգիտե՞ս, որ դրանք մեծանան, գայլ կդառնան և գուցե առաջինը ձեր արյունը խմեն»: «Այդ բանը ես չեմ մտածում, այլ մտածում եմ միայն բարիք գործել,- պատասխանում է բարեսիրտ եղնիկը,- ի՞նչ անեմ. ես կաթ ունեմ, ձագ չունեմ: Այս խեղճերը մայր չունեն, կաթի կարոտ են, պետք է մայր լինեմ, հոգամ իրենց կարիքները: Է՛, ճգնավոր եղբայր, մի՞թե մարդու բոլոր ծնածները բարի են լինում և երբ մեծանում են, գայլից ավելի չար չեն լինում»: Սա մի առակ է, Թոռնի՛կ, ուրիշ՝ մի եղած բան պատմեմ քեզ, որ ես աչքովս տեսա, և դու տես, թե ինչպես է գլխասիրությունը երբեմն մարդուն ծայրահեղության տանում: Գիտես, թե մարդը մարդու մասին կամ ընտանի անասունների մասին հոգալ է սովորել, բայց չենք տեսել, թե մարդը գլխություն անի գայլին, որ միշտ ոչխարներ է հոշոտում:

Հայրիկը, երբ Մշո վիճակի հովիվ ընտրվեց, Վարագից Սբ. Կարապետ գնալու ժամանակ ես էլ հետն էի: Գնացինք, հասանք Զիարեթ գյուղը, որ քիչ հեռու է Գլակա վանքից: Այդ գյուղի մարդիկ շատ պատիվ արեցին Հայրիկին, մեղրով սեր, մեղրով կարագ, խորոված գառ կերանք ու կերանք... երես՛կ այն օրվան: Ծաշից հետո տեսանք՝ այդ գյուղի կտրիճ երիտասարդները մի գայլ են կենդանի բռնել: Բերանի ու ոտքերի մեջ փայտ դնելով, պիրկ կապած այդպես բերեցին, գցեցին Հայրիկի առաջ: «Է՛, Հայրի՛կ,- ասացին,- մեր բախշիչը տուր»: Այդ միջոցին խեղճ գայլն աչքերը դարձրեց դեպի Հայրիկը: Ես տեսա, որ Հայրիկը շատ վատ եղավ և շատ զգացվեց, հարցրեց, թե՝ «Ո՞րտեղ բռնեցիք այս գայլը»: Ասին թե՝ «Գյուղի մոտերքը. եկել էր, պահվել գոմի պատի մի անկյունում, որ գիշերը ելնի ոչխար գողանա և ուտի»: Հայրիկն ասաց. «Մի՞թե ոչխարը ձեզ համար հալալ է, գայլի համար հարամ. Աստված գայլն էլ ոչխարի հետ ստեղծել է և իր զբամաթը տվել: Դուք ազատ կերպով ոչխարը մորթում-ուտում եք, ի՞նչ կլինի, որ այդ լեռան խեղճ աղքատին էլ բաժին տաք: Դուք զրպարտություն եք անում այս գայլի վրա, նա չէր եկել ոչխար գողանալու, այլ լսել էր, թե գյուղում մատաղ

կա, եկեղ էր մատաղ ուտելու, ո՞վ գիտե՞ քանի օր անոթի մնալով ուժից ընկած, հագիվ իրեն գյուղ է գցել, դուք վրան հասնելով բռնել եք, և իբրև թե մեծ քաջություն եք արել, բախշիչ եք ուզում: Մեծ բախշիչ կտամ ձեզ, տարեք գյուղից դուրս, արձակեցեք խեղճ գայլին, թող գնա իր բանին»: Այս որ լսեցին գյուղացիները, սկսեցին մոմռալ իրար հետ. «Մո՛ մարգիկ, այդ Հայրիկը հովիվ է եկել մեր երկրին, մեր ոչխարները գայլերի՞ն պիտի տա, մենք մեծ դժվարութեամբ մի գայլ բռնեցինք, նա ասում է՝ արձակեցեք»: Հայրիկն, այս տրտունջը լսելով, սկսեց իր՝ գայլի առակաները: «Մտի՛կ արեք, գյուղացի՛ք, ձեզ մի առակ պատմեմ: Մի գայլ յոթն օր յոթ գիշեր սարեր-ձորեր շրջեց, մի բան չընկավ ձեռքը, տեսավ, որ անոթի պիտի մեռնի, ասաց. «Մածուկ-ծածուկ գնամ մոտի գյուղը, գուցե Աստված մի գըսմաթ տա ինձ»: Խեղճ գայլը խելամաղ երեկոյան մթին հասնում է մի գյուղ, մի գոմի պատի տակ կծկվում: Այդ գոմի պատի ճեղքից գայլը ներս է նայում, տեսնում, որ ճրագներ են վառվում, ոչխարներ մորթվում, շներն էլ մի կողմ շնթուկած և աչքերը տնկած՝ իրենց բաժնին են սպասում:

Այստեղ գայլի սիրտը դառնացավ, և սկսեց ինքն իրեն ասել. «Է՛, անիրավներ, այդ բանը

եթե գայլն աներ, ի՞նչ վայնասուն կհանեիք: Դուք, հովիվներ՛ը, շներով, բրեքով նրան պիտի հալածեիք, ես արդ զրկված ու նվաղած աչքով դիտում եմ ձեր այդ արածները, գայլի անունն է ելել, ոչխարը դուք եք ուտում: Դուք հիրավի կերպարանքով մարդ եք, իսկ բարքով մարդագայլ, դուք չեք տեսնում այն մեր դրացի մարդագայլերին, որ խմբով են հարձակվում և ձեր ոչխարի հոտերը բը՛ռռ անելով տանում: Ձեր և ձեր շների քաջությունը միայն խեղճ գայլերի վրա եք փորձում, որ շատ սակավապես են և ձեզնից ավելի խղճմտանք ունեն»:

Գայլի այս գանգատն ու դատողությունը շատ իրավացի են, սերելի՛ գյուղացիներ: Գայլերն էլ պիտի ապրեն աշխարհիս վրա, դուք ուզում եք դրանց սերունդը կտրել, պետք է գիտենաք, որ գայլերը ձեզ համար շատ օգտակար են, եթե գայլերի ահը չլինի, դուք երբեք ձեր ոչխարները չեք պաշտպանի:

Հայրիկի առակն ու այս խոսքերը դիպան գյուղացիների սրտին: Երիտասարդներն ասացին. «Հայրի՛կ, ինչպես երևում է, Դուք շատ եք գթում այս կապված գայլին, մենք Ձեր պատվի համար կարձակենք, ազատ կթողնենք, մեր բախշիչը տուր»: Առան բախշիչը, խաբեցին Հայրիկին, խեղճ, կապված գայլին տարան գյուղ-

դից գուրս, շներին բաց թողին վրան, խեղդեցին, գայլի փոստը հանեցին: Շատ լավ արեցին գյուղացիները. Հայրիկը ելել, ներողամտության ճառ է կարդում գյուղի ոչխարն ուտող գայլի համար:

Այս պատմությունն արի քեզ, Թոռնի՛կ, բայց դու զգուշ կաց. ճիշտ է պետք խրատը հասկանալ: Պատմեցի քեզ, որ լավ հասկանաս, թե գլխասիրությունն ինչքան է տիրում մարդու սրտին, որ պատառող գազանին անգամ ուզում է խնայել:

Հապա մեր ընտանի աշխատող անասուններն ինչքա՛ն արժանի են մեր գլխասիրությունը: Խստասիրտ և անողորմ են այն երկրագործները, որ անասունին չարչարելով-տանջելով են հաց վաստակում: Դրա համար է, որ այգալիսիները կուշտ հաց չեն ուտում, արդյոք անասունների աղաղակն ու հեծեծանքը չի՞ հասնում երկինք: Դու մի կարծիր, թե անասուններն իբրև ոչինչ և չքոտի են գումարված Աստծու առաջ: Դու չե՞ս կարգացել Հովնան մարգարեի գիրքը. Տեր Աստված ամբարիշտ նինվեացիներին խնայած ժամանակ անասուններին էլ խնայեց հավասար այն մանուկներին, որ չգիտեին աջն ու ձախը:

Խիստ գորովանքով եմ լցվում, Թոռնի՛կ, գութա շարժվում է, երբ տեսնում եմ, որ մեր գյուղական մշակ ժողովուրդը շատ անխիղճ և անխնա է վարվում իր ընտանի, լծկան անասունների հետ, միշտ խարազանակոծ տանջում է, այնպես որ անմոռունչ անասունների մեջքերին հարվածների գծերը շերտ-շերտ երևում են: Եթե Բաղամի խոսուհն էջի պես (Թիվք ԻԲ 22, 35) Աստված հրաշքով բանա անասունների լեզուները, ի՞նչ աղաղակ ու գանգատ պիտի բառնային մարդկանց անգլխության վերաբերյալ: Իսկ մի՞թե նրա անմոռունչ հեծությունն ու բառաչը աղաղակ չեն: Հնձող մշակի գրկանքների բողոքը հասնում է երկինք, մշակի գործակից գրկված, ծեծված անասունների բողոքը երկինք չի՞ հասնում:

Երբեմն տեսնում եմ, խեղճ անասունը, ուժաթափ լինելով, լուծը վզին այնպես է ակոսի մեջ թավալվում, այն ժամանակ դու տես՝ որքա՛ն խարազան է ուտում, հարվածին չտոկալով՝ ճարահատ կանգնում է, մի քիչ տեղ գնում և դարձյալ ընկնում: Անգութ հերկագործը չի մտածում՝ «Մի պահ թողնեմ այդ խեղճ անասունին, թող գնա, արածի, հանգստանա և նոր միայն բերեմ-լծեմ»: Անգութ մարդիկ էլ կան, որ խարազանի կամ դալար ճիպոտի տեղ չոր

փայտ են գործածում, այդ ժամանակ ոչ միայն կաշին ու միսը, այլև անլեզու անասունների ոսկորներն անգամ ջախջախվում են:

Ձիապան կամ իշապան մարդիկ ևս շատ չարաչար են վարվում այդ բեռնատար անասունների հետ, երբեմն ծանր բեռներ են բարձրում՝ դրանց ուժից վեր: Եթե պատահում է, որ խեղճ անասունը բեռան տակ ճարահատ լինելով նստում է, կամ դիպվածով ընկնում, ի՞նչ են անում, գիտե՞ս, անգթաբար ծեծում են, որ ծանրության տակ ճնշված անասունն ընկնում է, որի պատճառով թշվառ անասունը վնասվում է կամ մեջքից և կամ ոտքից:

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե մարդկանց անգթությունն ի՞նչպես է ծանրանում խեղճ անասունների վրա: Պաշտպան ու փաստաբան չունեն, միայն խիղճն ու գթասիրությունն է անասունների պաշտպանը. դա ևս շատ հազվագյուտ է մարդկանց սրտում:

Հայրս պատմում էր ինձ, Թոռնի՛կ, թե ժամանակին մի կառավարիչ է եղել Վանում: Այդ մարդն ի ծնե անասունների նկատմամբ մեծ գթասիրության տեր էր, եթե մի մարդու տեսներ, որ չար կերպով էր վարվում անասունների հետ, իսկույն պատժում էր նրան և հանցանքին համապատասխան զվարճալի պատիժներ տալիս:

Մի օր քաղաքից ելնելով դեպի Արտամետի ավանն է գնում, տեսնում է, որ երկու ձիապան մի աղբյուրի գլխին հանգիստ նստած հաց են ուտում, իսկ իրենց ձիերը բեռի տակ կքել են: Իսկույն հրաման է տալիս, որ ձիերի բեռները իջեցնեն: Իսկ բեռները գարի են լինում: Ձիերի ուտելու տոպրակները բավականին լցնելով, կախել է տալիս ձիերի գլխից, այդ բեռներն էլ մեկական թակ մարդկանց կոնակին է դնում և ասում. «Մինչև ձիերն իրենց գարին ուտեն, դուք պետք է ոտքի վրա կանգնեք այդպես»:

Մի օր էլ քաղաքի դռնից դուրս գալու ժամանակ տեսնում է, որ երկու մարդ մեկ ձիու վրա նստած դեպի Այգեստան են գնում: Այս բանը կառավարչի աչքին շատ արտառոց է երևում, հրաման է տալիս, որ երկուսից մեկը ձիուց վար իջնի, և իսկույն ուղարկում է բանտ, մյուսին ասում է. «Դու ծեր ես, քեզ խնայեցի, գնա՛, լուր տուր ընկերոջդ մասին, թե բանտ են տարել, և տասն օր իր պատիժը պիտի կրի»:

Մի օր՝ դարձյալ քաղաքից դուրս շրջելու ժամանակ տեսնում է մի մարդու, որ տոպրակը ուսին գցած՝ գնում էր: Բայց շատ է զարմանում կառավարիչը, երբ այդ տոպրակից կատունների ձայներ է լսում: Մոտենալով հարցնում է, թե ի՞նչ կա այդ տոպրակի մեջ: Մարդը չի կարո-

դանում ժխտել, որովհետև կատունների ճայնե-
րը լսվում էին. «Աղա՛, ասում է, գող կատու-
ներ են, պիտի տանեմ գցեմ քաղաքում»: «Ա՛յ
անպիտան մարդ, ասում է կառավարիչը, ես
գողերին քաղաքից դուրս եմ հալածում, դու
կատուններին քաղաք ես տանում»:

Հրամայում է խեղճ կատուններին տոպրա-
կից դուրս հանել և այդ տոպրակն անցկացնել
է տալիս մարդու գլխին: Մի ոստիկան, ձեռ-
քից բռնելով, դեպի բանտ է առաջնորդում:
Այս խայտառակությունը տեսնում են անցնող-
դարձող մարդիկ, միայն թե գլխի տոպրակի
չնորհիվ չէին կարող ճանաչել: Իսկ ազատված
կատուններն ուղիղ տուն են վերադառնում, լուր
տանում տնեցիներին, թե իրենց տիրոջը բանտ
տարան:

Բայց դու հարցրո՛ւ, Թոռնի՛կ, թե այդ գթա-
սեր մարդը միայն չարչարված անասունների
նկատմամբ գուժ ունեք և այդպես անաչառ
դատաստան էր տեսնում, թե՞ նույն գուժն ու
անխտիր դատաստանը զրկված մարդկանց հա-
մար էլ էր ի գործ դնում:

Այո՛, Թոռնի՛կ, եթե մարդ անասունների
նկատմամբ գուժ ունենա, շատ բնական է, որ
իր համացեղ ընկերոջ նկատմամբ ավելի ևս
կզգա և գթասիրությունը կշարժվի: Այլ ով գի-

տե, աշխարհ է, գուցե կան այնպիսի մարդիկ էլ,
որ արտաքուստ բարեսիրտ ձևանալով, կատվի
դատաստանն են տեսնում, որ ցույց տան, թե
արդարասեր են, իսկ բողոքող, զրկված մարդու
դատաստանը բաց թողնում: Ինչպես Քրիստո-
սի ժամանակ կեղծավոր փարիսեցիները ուղտը
կուլ էին տալիս և մոլորկները գինու երեսից
քամում (Հմմտ. Մատթ. ԻԳ 24), այսինքն Աստ-
ծու օրենքի արդարությունն էին զանց առնում
և փոքրիկ, աննշան բաները արդարություն հա-
մարում:

Մարդիկ կարծում են, Թոռնի՛կ, թե արդարա-
դատն Աստված միայն զրկված մարդկանց հա-
մար վրեժխնդիր կլինի: Ո՛չ, ես լսել եմ և գրքե-
րում էլ կարդացել, թե անխոս անասունների
բողոքը ևս հասնում է Աստծուն, և Աստված
դատաստան տեսնելով վրեժխնդիր է լինում:

Սուրբ Եփրեմ Խորին Ասորին խոստովանում
է իր մանկական հանցանքը, որ գրված է իր
վարքի պատմության մեջ:

Ասում է. «Ես պատանեկությունս ժամանակ
շատ ստահակ, անհանդարտ և չարաճճի մի
պատանյակ էի: Մի օր դաշտի մեջ մի հղի կով
տեսա, որ նստած էր, պիտի ծներ: Ես քարաձ-
գուլթյամբ հալածեցի խեղճ կովին, չթողեցի, որ
նա հանգիստ ծներ իր հորթուկը: Այնքան հե-

տապնդեցի, մինչև հասցրի անտառ: Կովն իր հորթին նետեց, շնչասպառ ընկավ գետին և մնաց այդպես: Գազանները գիշերը կովն էլ, հորթն էլ կերան: Այդ կովը մի աղքատի կով էր: Բանը ծածուկ չմնաց, իմացվեց, ինձ տարան բանտ դրեցին: Այդ բանտում ուրիշ հանցավորներ էլ կային, որ իրենց մեղքերն իրար էին պատմում: Մեկն ասում էր. «Ես մի անմեղ մարդ սպանեցի»,– մյուսն ասում էր. «Ես մի մեծ վաճառականի կողոպտեցի և սպանեցի»,– և այլն: Ինձ հարցրեցին. «Տղա՛, քո մեղքն ի՛նչ է»: Ես պատմեցի կովի դեպքը: «Օ՛,– ասացին,– դա էլ մե՞ղք է»: Վերջում ոճրագործ մարդկանց դատաստանը եղավ, տարան, կախեցին: Իսկ իմ տարիքը խնայելով՝ ինձ մահվան չդատապարտեցին, բայց մի լավ ծեծելով արձակեցին բանտից, հիրավի քանի ամիս բանտում չարչարվեցի: Երբեք քուն չունեի, միշտ հալածված կովի պատկերն աչքիս առաջ էր գալիս:

Մտածեցի, որ աղքատի կովի համար պետք է հավիտյան ապաշխարեմ. ուստի թողեցի տուն, հայր, մայր և ամեն ինչ, ասացի զնամ սար, ճզնավոր լինեմ, անգթուլթյան ու զրկանքի մեղքերս քավեմ: Ես այս փորձանքով զգաստացա և խելամուտ եղա Աստծու դատաստանին, որ անասունների համար էլ վրեժխնդիր է լինում,

երբ մենք անգթուլթյամբ վարվենք անխոսուն կենդանիների հետ»:

Այս պատմությունը թող խրատ լինի քեզ, Թոռնի՛կ, երբեք մտքիցդ մի հանիր, և միշտ հիշիր սուրբ Եփրեմի պատմությունը և հալածյալ կովի դատաստանը, գիտենալով և հավատալով, որ արդարն Աստված հավասարապես դատավոր է՝ ինչպես մարդու, նույնպես և զրկված անասունների:



ԺԷ. ՃԱՌԱՏՈՒՆԿԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Սիրելի՛ թոռնիկ, եթե սրանից հազարավոր տարիներ առաջ ծնված լինեիրք, պիտի տեսնեիրք այս մեր բնակած երկրագունդը բովանդակ անտառներով զարդարված: Եվ ո՛վ էր տնկել. Արարիչն Աստված, որ ասաց և եղավ, ոչ միայն ծառերը, այլև ամենազան բույսերն ինքնաբուխ երկրի ծոցից վեր բուսնեցին: Տես այն մթնազուլն լեռները և այս ընդարձակ դաշտերը, հովիտները, ձորերը, գուցե ժամանակին խիտ անտառներով էին ծածկված:

Թվում է, թե նախնադարի մարդիկ, որ միայն վագրերի որսորդությամբ էին զբաղվում, գուցե մոռացել էին մեր նախահոր մշակության արհեստը, որին Տեր Աստված ասաց մշակել երկիրն ու պահել: Այն ժամանակվա վայրենի մարդիկ, որ վաղվա համար հոգալ չգիտեին, սկսեցին անխնա կերպով ջարդել, վառել անտառները: Բայց նախապես հոգացող Աստված այս մեր երկրագնդի շատ տեղեր երկրաշարժով

վեր ի վար շրջեց, անթիվ-անհամար անտառներ գետնի խորուխյան տակ պահեց ինչպես մի անսպառ գանձ՝ մարդկանց ապագա սերնդի համար: Ներկա խելացի սերունդը, երկրագունդը քրքրելով և երկրի խոր ծոցերը բանալով, գանձը գտավ: Ի՞նչ է այդ գանձը, գիտե՞ս, Թոռնի՛կ, ո՛չ ոսկին է և ո՛չ արծաթը, այլ սևացած քարածուխը, որ ոսկուց ավելի պատվական և շահեկան է, որովհետև աշխարհիս առաջադիմության մեքենաները շոգիի զորութեամբ են աշխատում, իսկ շոգին ջրից է գոյանում՝ վառված քարածուխի բորբոքող կրակից:

Այսպես, երբ տեսան մարդիկ, որ Աստծու տնկած հնադարյան անտառները հետզհետե սպառվում են, այնուհետև սկսեցին մեծ ջանքով ձեռատունկ անտառներ աճեցնել, և այսօր Արևմտյան Եվրոպան մշակված անտառներով լցված է, որ բավարար քանակութեամբ փայտ է մատակարարում՝ թե՛ շինարարութեան, թե՛ անհամար փայտաշեն նավերի համար և թե՛ շոգեկառքերի հարթված ճամփաների պատրաստութեան համար:

Իսկ մեր արևելյան աշխարհն անտառների հարստութունից շատ աղքատ է. եթե կան այժմ սակավ բնական անտառներ, դրանք էլ անկանոն և անխնամ կտրվելով՝ սպառվելու

վրա են: Ուստի պետք է աշխատենք մեր հողագործութեան հետ նաև ծառատունկ անտառներ աճեցնել: Գիտե՛ս, թե ինչ ընդարձակ սահմաններ ունի գյուղական ժողովուրդը անտառ մշակելու համար՝ թե՛ դաշտագետին և թե՛ փխրահող բլուրներ: Երկրագործի համար փայտի կիրառութեանն այնքան կարևոր է, որքան հացը իր կյանքի համար: Եթե անշուք մի խրճիթ շինի, որ իր ընտանիքը ծվարի դրա մեջ, փայտ է պետք գալու: Հապա այն մեծ նահապետական ընտանիքները, որոնց անդամների թիվը հասնում է մինչև քառասուն և հիսունի, որքա՞ն ընդարձակ շենքերի կարիք կունենան: Թողնենք մեր տների կառուցումը, որոնց համար բարդու, կաղամախու և ուռենու փայտեր են պետք: Իսկ մեր մշակական աշխատանքների համար ուրիշ այլ և այլ տեսակի ամուր փայտեր են պետք: Հացի փայտ է պետք գութանի կոր էջի և առատամի համար, թեղի փայտ պետք է սայլերի մածան կազմելու և սունակի համար: Թողնենք այլ և այլ փոքր գործիքները, որ առհասարակ պինդ փայտերից են շինվում: Ինչպես գրեցի առաջ, երկրագործ գյուղացին այս տեսակ փայտեր ձեռք բերելու համար ի՛նչքան իզուր ժամանակ է անցկացնում, մինչև հեռավոր տեղեր գնալով գտնում է, բերում, շինում և գործն սկսում:

Թողնենք այս ամենը, Թոռնի՛կ, դու տեսնում ես, թե ծառեր ունեցող գյուղերը որքան գեղեցիկ և հաճելի են, և գյուղի ամբողջ տեսարանին մեծ շուք են տալիս: Դու գնացե՞լ ես Արտամետի այն ճոխագույն ծառաստանն ու մրգաստանը, ուր, բացի անտառային անպտուղ ծառերից, որքա՞ն զանազան պտղատու-մրգաբեր ծառեր կան՝ թե՛ խնձոր, թե՛ տանձ և թե՛ այլ բազմատեսակ անուշահամ պտուղներ, որոնց մեջ ամենից ազնվագույնն է համարվում համով, հոտով և գույնով չնաշխարհիկ կարմիր խնձորը, և այնքան առատ, որ բովանդակ Վասպուրական երկրին է բավականացնում:

Գյուղի համար ծառատունկն ուրիշ օգտակարություն և հաճոյական քաղցրություններ ևս ունի. ամռանը արևի տոթին հովանի տարածելով, իսկ ձմռանը հյուսիսի սաստկաշունչ քամուց պատսպարելով: Հապա որքա՞ն քաղցր կլինի գյուղական ընտանիքների համար, որ ազատ ժամերին, իրենց մանկիկներով ծառերի շուքի տակ նստելով, ձեռագործով զբաղվեն և հանգստանան: Սոխակն ու սարյակը ծառաստանից կերգեն, մանկիկները ներքևից խաղալով կաղմկեն, և երբ գառնուկները ևս աշխուժանան ու մայեն... վա՛շ, ինչ անուշիկ ձայնակիցների ներդաշնակություն կկազմեն գյուղական պարզ կյանքում:

Ծառաստանները ոչ միայն մարդկանց համար իբրև վայելք և օգուտ են կյանքի կարիքների մեջ, այլև շատ կարևոր են անասունների համար, որովհետև ծառերի տակ միշտ թարմ կանաչներ են բուսնում, ուր միայն պետք է արածեն կովերի նորածին հորթերը և մատակի ձագերը և ամռան տոթաժամին այդ մատաղածին անասնիկները հովասուն ծառերի տակ կհանգստանան կանաչների վրա:

Բայց, Թոռնի՛կ, բավական չէ, որ ծառաստանները միայն գյուղի շրջապատը զարդարեն, երանի թե մեր դաշտեր-անդաստանները ևս ծառատունկերով զարդարվեն, ուր որ ջրանցքներ կան և աղբյուրներ են բխում. օ՛չ, որքան հարմար և հանգստավետ կլինեն թե՛ աշխատավոր մշակների և թե՛ լծատար՝ խոնջացած անասունների համար, որ երբ կեսօրվա տոթի ժամանակ լծերից ազատվեն, իսկույն այդ հովանուտ ծառերի տակ կսկսեն արածել և հետո կնստեն և կորոճան: Իսկ ջրասեր գոմշուկները, որ տաքությանն այնքան էլ չեն դիմանում, լծից արձակվելուն պես դեպի ջուրը կվազեն, և եթե ջուրը շատ է, մեջը կնստեն, հոտաղը մի լավ կլվանա և ապա կբերի արոտատեղ: Այդ պահին խոնջացած մշակները կնստեն աղբյուրի գլխին՝ ծառի հովի տակ և կսկսեն հարցնել

իրար՝ «Արդյոք այսօր տանտիկինն ի՞նչ է եփել մեզ համար»: Դու գիտես՝ մեր մշակները շատ սիրահար են յուզալի ճաշի և փլավի և տոպրակով քամած մածուկի:

Տեսնում են, որ հացբեր երիտասարդ աղջիկը բեռն ուսին առած գալիս է: Ուսինը վար է դնում: Տեսնում են, որ ճիշտ իրենց ուզածի պես են կերակուրները: Մշակի սեղանը կանաչազարդ գետինն է, ուր փռում են մեզարը, վրան շարում նոր հացերը, բացում են մածնի տոպրակը, հողե կամ փայտե կոտի մեջ հարում են մածուկը աղբյուրի պաղով ջրով, հետո առնում գդալները, մի գդալ փլավ, մի գդալ մածնի թան. օ՛խ, Թոռնի՛կ, կերե՞լ ես, դու գիտե՞ս, թե ինչ ախորժակով են ուտում այդ անոթի մշակները, ուտում և օրհնում են տանտիկնոջը:

Կեսօրվա ճաշից հետո գլուխները դնում են հով ծառի տակ, անուշ քուն մտնում, այնպես որ իշխանն իր ապարանքում փետրալից անկողնու վրա չի կարող այն հանգիստ ու անդորր քնով ննջել: Դրա պատճառներն այժմ դու չգիտես, Թոռնի՛կ, բայց հետո կիմանաս, երբ զարգանալով աշխարհի բաներով հետաքրքրվես:

Այսպես, մտացի Թոռնի՛կ, լավ ուշադիր եղար, թե ծառատունկերն ինչքան պիտանի և շահաբեր են գյուղական ժողովրդի համար: Ու-

րեմն աշխատիր, որ տարեցտարի միշտ տնկելով և խնամելով, մեր տան սեփական ծառատունկերը շատացնես: Ես վաղուց արդեն, տնամերձ մի արտ ցանկապատելով, գեղեցիկ ծառաստան եմ աճեցրել, դու չպետք է իմ տնկած ծառերով պարծենաս, այլ ավելի քաղցր է, որ դու ևս նոր ձեռատունկեր տնկելով, մշակելով՝ դրանցով պարծենաս: Գիտե՞ս, ծառատունկերը ևս իրենց անհատական խնամքն ունեն՝ տնկելու, էտելու, կտրելու և այլն: Ծառերի խնամքի մասին շատ երկար դասեր պետք չեն քեզ: Դու տեսնում ես, թե ինչպես է Պապիկը, մի սղոց և մի դանակ առնելով, մտնում այգի, միշտ չորացած և ավելորդ ճյուղերը կտրում, որպեսզի մնացյալ ճյուղերն ավելի աճեն: Պետք է մրգատու ծառերի տակը երկու կամ երեք տարին մի անգամ փորվի-փխրեցվի: Այս աշխատանքը ևս իր օգուտն ունի. նախ որ գետնի փխրվելով ծառերի արմատներն ավելի կզորանան, երկրորդ՝ դարի կամ այլ ընդեղեն բաներ ցանելով՝ ծառից և ծառատակից միաժամանակ արդյունք կստանաս:

Հիշո՞ւմ ես, Թոռնի՛կ, մի քանի տարի առաջ վանեցիներն սկսեցին թթեհի մշակել: Սկզբում շատ հաջողակ էին: Այսպես վերահաս մի դիպված եղավ, որ վանեցիները մի քանի տարի միայն չերամի հուստ ծախելով մեծ շահույթ ունեցան,

այնքան բարձրացավ Վանա հունտի գիրնը, որ ոսկու հետ հավասար կշռելով էին առնում, որովհետև ուրիշ երկրների հունտերը բոլորը կործանվեցին շերամի որդերի ինչ-որ հիվանդությունից:

Ցավալի է, որ պատմեմ քեզ, Թոռնի՛կ, թե ինչպես վանեցիները այդ շահավետ գործը ամբողջությամբ բաց թողեցին, քանզի նրանք սկզբում այնպես կարծեցին ու նախապաշարվեցին, թե միայն շերամի հունտ ծախելով պիտի շահեն: Չկարողացան գուշակել, թե դա մի բախտի դիպված է և կանցնի, չկարողացան նաև ըմբռնել, որ շերամաբուծությունը սոսկ սերմի վրա է, այլ առավել խոզակների վրա է, որովհետև թթենու մշակութայն բուն արդյունքը խոզակն է, կամ պետք է ժամանակին խոզակը ծախել և կամ խոզակներից թել քաշելով մետաքս ծախել: Չնայած մետաքսը թեթև բան է, բայց գիրնը ծանր է: Այս բանը՝ թեթևությունը, շատ ձեռնտու էր վանեցիների օգուտի համար, ծովեզրյա նավահանգիստներից հեռու լինելու պատճառով:

Ինձ թվում է, Թոռնի՛կ, որ վանեցիները երկար-բարակ, ձանձրալի և աշխատատար գործ չեն սիրում, մի կանգուն խորություն բացահայտելու հողը չըջելով թթենի տնկել, շերամատուն չինել, որդերի աշխատանքի պատշաճ սեղաններ պատրաստել, ամեն օր թթենու տերևներ բերե-

լով որդերին կերակրել, իբրև բժիշկ սուր աչքով որդերի վիճակը քննելով՝ հիվանդներին առողջներից զատել, իսկ երբ սկսում են որդերը խոզակներ հյուսել, դրանց համար փոքրիկ-փոքրիկ ծառի ճղիկներ պատրաստել և այլն և այլն: Հապա խոզակները կապելուց հետո՝ պետք եղած սերմն առնել, մնացյալ խոզակները կամ այդպես վաճառականին ծախել և կամ թել քաշել և կաթկաթ անելով գուտ ապրչում հանել և կապել. «Օ՛խ, ի՞նչ ձանձրալի, երկարատև աշխատանք է»,- տրտնջալ է սկսում ծուլլ, անփուլթ վանեցին:

Տե՛ս, Թոռնի՛կ, շերամաբուծությունը ձանձրալի և երկար աշխատանք է համարում վանեցին, որ շատ-շատ հագիվ երեք ամիս տևի ամբողջ աշխատանքը և արդյունք կունենա, մինչդեռ այգի տնկելով ամբողջ յոթ տարի սպասում է և ապա տնկած այգու երախայրիքն ընդունում: Բայց մի՞թե Վանա ներկայիս բազում ու հնատունկ այգիները արդի սերունդն է տնկել. ո՛չ, Նոյ նահապետի հարազատ այգեսեր զավակները՝ մեր նախնի Պապիկներն են տնկել, և մենք այսօր վայելում ենք: Ինչպես ես մի այգի եմ տնկել. ես մեռնեմ, դու պիտի ժառանգես ու վայելես: Է՛, գուցե հետո պարծենաս ու ասես՝ Այս այգին ես տնկեցի:

Այժմվանից պատվիրում եմ քեզ, Թոռնի՛կ, որ ուրիշ ծառատունկերի մշակման հետ չմոռանաս նաև թթենի մշակել, որի համար շատ նպաստավոր են մեր գյուղի շրջակա հողերը, որովհետև թթենու տունկը ավազախառն հողի մեջ շատ լավ է աճում: Բայց պետք է գիտենաս, Թոռնի՛կ, որ մեր երկրագործության սովորական աշխատանքը շատ է: Ուստի դու, երբ ծառատունկերի մշակումը առաջ տանել ուզենաս, լավ կլինի, որ բուն հողագործական կամ սերմնացանական գործերդ, օրինակ՝ ցորենի, գարու մշակումը և այլն, չափավորես, որ կարողանաս ծառատունկերի մշակությունն ավելի արդյունավորել:

Բավական ընդարձակ խոսեցի, Թոռնի՛կ, ծառատանի մշակության մասին, դու գիտես, Պապիկդ ծառ ու աղբյուր շատ է սիրում: Երբեմն աշխատանքից հոգնած գնում-նստում եմ մի ծառի հովանու ներքո, կռնակս հենում ծառի բնին, հանգստանում: Ծերացել եմ, Թոռնի՛կ, արդեն ինձ ծերության ցուպ և հենարան է պետք: Հակովբ նահապետն իր սիրած որդուն ծերության ցուպ էր կոչում, ես էլ քեզ կասեմ, թե իմ ծերության ցուպն ես, մինչև հասնեմ վերջին հանգստարան:

ԺԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

Սիրելի՛ Թոռնիկ, դու կարգացել ես Աստվածաշունչը, և գիտես, որ հին-հին նահապետները հաստատուն տուն և բնակարան չունեին, այլ նրանց տունը շարժական մի վրան էր, այսօր այստեղ, վաղն ուրիշ տեղ: Եվ դեռ այսօր արաբական ցեղերը նույն կյանքով են ապրում: Մեզնից ոչ շատ հեռու, հարավային կողմում կան շատ վրանաբնակ ցեղեր, որ ազգով քուրդ են և կէօջար են կոչվում, որոնց ձմռան բնակության տեղերը Նինվեի և Բաբելոնի սահմանի ընդարձակ, ջերմ դաշտերն են, ուր ո՛չ ձյուն է շատ տեղում, և ո՛չ սաստիկ ձմեռ լինում: Իրենք վրանի տակ են բնակվում և իրենց անասունները միշտ բացօթյա արածում են:

Իսկ ամռանը, երբ ջերմությունը սաստկանում է, այդ բոլոր վրանաբնակ ցեղերը իրենց ոչխարների բազմաթիվ հոտերով գնում են դեպի հյուսիս, Կորդվաց և Տավրոսի հովասուն

լեռնաշղթաները, ուր շատ աղբյուրներ և անթիվ արոտավայրեր կան: Երեք-չորս ամիս այդ լեռնական և ազատ կյանքը վայելելով, աշնան վերջին դարձյալ գնում են դեպի հարավի ջերմագույն խորագաշտերը: Սրա համար այդ վրանաբնակ, աստանդական ցեղերը ոչ խարների բազմաթիվ հոտեր և այլ անասունների երամակներ ունեն, որոնց համար ոչ մի հոգածություն կարիք չկա. ո՛չ ախոռ, ո՛չ գոմ և ո՛չ ձմռան դարմանի պատրաստություն, զբաղվելով տավարաբուծության միայն այս մասով, գյուղական ժողովրդից ավելի շատ են հարստանում և լիովին վայելում են բնության կյանքի ամենաքաղցր անդորրը:

Հետաքրքրվո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե նախնադարի մարդիկ տուն-բնակարան չիենել և դրա մեջ բնակվել, ձմռանը ցրտից և ամռանը արևի տաքությունից պատսպարվել ո՛րտեղից սովորեցին կամ ումից օրինակ վերցրին:

Ասում են, թե մարդիկ թռչուններից և կենդանիներից սովորեցին տուն շինելու արվեստն ու ճարտարապետությունը: Տեսան, որ թռչունները ծառերի վրա բույն են դնում, ծիծեռնակն իր կավակերտ բույնը շինում է տան հեծանի կողի վրա: Արծիվը, որ բարձր սարեր է սիրում՝ իր որջն ունի, նաև՝ կույր խլրղը, որ գետ-

նի տակ իր բույնը շինելով, դուրս տված հողը բլուրի է նմանեցնում: Հապա մըջյունը, այն ժրաջան, չքոտի կենդանին, որ ոչ միայն տուն, այլև ամբար է շինում իր բնին կից, ուր ձմռան պաշար է հավաքում: Իսկ զարմանագործ մեղուն ինչպես է համաչափ բջիջներ կազմում մոմի հյուսվածքով. չգիտենք՝ իր համար բո՞ւյն, թե՞ մեղրատուն է շինում, այնքան խնամքով, որ զարմացնում է մարդկային միտքը:

Այո՛, Թոռնի՛կ, բանական մարդիկ չքոտի կենդանիներից շատ բան են սովորում. այդ բնատուր վարպետները մեր ուսուցիչն են լինում: Տեսնում ես այն չարածճի սարդը, որ կովան անելով պատի անկյունում՝ անդադար ճգնում է, բարակ մանված թելեր է հանում իր բերանից և ցանց հյուսում ճանճ բռնելու համար. սրանից մարդիկ սովորեցին ոստայնանկություն կամ կտավագործության արհեստը: Միթե սոխակի դայլայլից և այլ քաղցրախոս թռչունների ձայնից, ծովի մունչացող ալիքներից, ջրերի հոսանքների ձայնից, անտառների համաշունչ սոսափյունից, մի բան այստեղից, մի բան այնտեղից առնելով՝ երգահան մարդիկ չկարգավորեցին երաժշտության այնքան հիանալի եղանակներն ու խմբերը:

Է՛, Թոռնի՛կ, դարձյալ մոլորվեց Պապիկը, թողնելով մեր դասի բնական կարգը, ուզում է

քննել, թե մարդիկ ո՛րտեղից սովորեցին տուն շինել, երգել և այլն. դառնանք գյուղական տնակներին:

Գիտես, Թոռնի՛կ, մարդկանց ամեն մի խումբ իր զարգացմանը համապատասխան է ապրում աշխարհիս վրա: Քաղաքի ժողովուրդը, որ մեզնից ավելի զարգացած է, և զարգանալով ճաշակը բացվել է, գիտե, թե ինչպես է պետք բարեկեցիկ կյանքը վայելել, ուստի իր ճաշակին համեմատ է կառուցում:

Իսկ գյուղացի ժողովուրդը, որ զարգացում չունի, ճաշակը փակված է, նրա համար բավ և շատ են իր տնակները: Բայց մի՞թե այնքան է բթացել շինական ժողովրդի ճաշակը, որ նա չի կարող գոնե մի փոքր իր տնակները կանոնավորութամբ կառուցել: Բայց դու տես, թե նա ինչ է պատասխանում. «Այո՛, ես էլ մարդ եմ, փոքրիշատե ճաշակ ունեմ, տեսնում եմ քաղաքաբնակների գեղեցիկ տները: Հոգիս չի՞ ուզում, որ ես էլ գեղեցիկ տուն ունենամ... բայց երբ մտածում եմ, որ աղքատ եմ, պարտապան... աղքատի համար խրճիթն էլ շատ է...», - և այլն: Իսկ հարուստ տանուտերը խելացի տնտեսավարութամբ է մտածում. «Եթե ընդարձակեմ տունս, հյուրերը կշատանան, ծախսերս կրկնապատիկ կլինեն...», - և այլն: Շինական տանու-

տիրոջ այս առարկությունն արդար է, բայց դարձյալ՝ հիմնական պատճառ կա. ինչպես որ վերևում բացատրեցի, աղքատութամբ հանդերձ, գյուղական ժողովուրդը տգետ և անճաշակ է, որովհետև կան այնպիսի թեթև լուծվող բաներ, որ երբեք ծախս չեն պահանջում, այլ միայն մի փոքր աշխատանք: Որպեսզի զգալի և շոշափելի կերպով քեզ ցույց տամ, Թոռնի՛կ, որ աչքով տեսնես ու նկատես, թե մեր գյուղական ընտանիքներն ի՛նչ դառն ու չարաչար դժվարութամբ են տառապում առտնին աշխատանքում՝ մի օրինակ բերեմ: Դու միշտ տեսնում ես և չես զգում, աչքդ սովորել է. գուցե կարծում ես, որ գյուղական ընտանիքների վիճակը պետք է այդպես լինի կամ նրանց ճակատագիրն այդ է:

Ուրեմն, Թոռնի՛կ, միասին գնանք մեր բարեկամ Կիրակոս եղբոր տունը: Գյուղի թոնիրների վառվելու ճիշտ ժամանակն է. տես ահա թոնիր ունեցող տունը մխով, ծխով լցված է: Թոնիրը վառվում է, խաչերկաթի վրա դրված են թանապուրի և ճաշի պուտուկները: Տան մի կողմում երկու օրորոց է դրված, խեղճ երեխաները ծխից խեղդված լալիս են, մայրերը կարծում են, թե կաթ են ուզում: Տան մի անկյունում՝ դողերոցքով բռնված, պառկած է մի պառավ կին: Թոնրի

կրական իջավ, ծուխը քաշվեց, տան տիկինը դրեց դնթեկը, նստեց թոնրի մոտ, տան մի հարսն էլ թոնրի սալի վրա խմորի գնդեր բանալով՝ տան տիկնոջն է տալիս, նա էլ մաջրակայով թոնրի կողին է փակցնում: Այս միջոցին տան պահապան գամփո շունը դռան մեջ թաթիկները պարզելով շնթուկել է, աչքը տան տիկնոջն է սպասում, որ թոնրից ելած կուտն իրեն տա:

«Կեսօր է,- ասում է աղջիկը մորը,- ժամանակը եկավ, մայրի՛կ, մշակներին հաց պիտի տանեմ»: Հացն ու կերակուրը պատրաստվում են, ժիր աղջիկը ուսին դրած գնում է դաշտ: Ահա ներս է մտնում գյուղի գգիրը: Տանտիկնոջը հյուր եկավ, նա մի օֆ քաշելով հրաման է տալիս հարսին, որ մի քանի հավկիթ կոտրի, ձվածեղ եփի հյուրի համար:

Տեսնում ես, Թոռնի՛կ, գյուղացու տունը նահապետական մի վրան է, դուռը միշտ բաց է. իրար հետեից սկսվում է գյուղի աղքատների շարքը: Գալիս է ցուպը ձեռքին դողդոջուն մի պառավ: «Տանտիկին, հոգուդ մեռնեմ, նոր հացի հոտն առա, եկա, որբուկ թոռնիկներս անթի լալիս են, մի հաց, քիչ մի ապուր տուր, տանեմ ճփիկներին»: Պառավն առավ ինչ որ ուզեց, օրհնելով գնաց: Եկավ մի ուրիշը, նա էլ առավ գնաց, այսպես շատերը եկան, առան ու գնացին:

Վերջինը եկավ մի աներես աղքատ, որ մի հացով չբավարարվեց: Բարկացավ տանտիկինը, առավ թոնրի սև անթրոցը, խփեց սրա կռնակին, տնից դուրս հանեց: Տեսա՞ր, Թոռնի՛կ, հաց թխող կինը մինչև թխելը վերջացրեց՝ հացի կեսը գնաց:

Այժմ դառնամ, խոսեմ այս տան մասին, որ շատ դյուրին է բարեփոխել: Տեսնո՞ւմ ես, թոնրը տան մեջտեղն է շինված, և միայն մի երգիք կա ծխի ելնելու համար, չնայած, տան դուռը բաց լինելով, մուխն այնտեղից էլ է դուրս գալիս: Իսկ եթե այս թոնրի տեղը փոխենք, տան հարմար անկյունում դնենք և այդ անկյունում մի բուխարի կապենք. այս բուխարիկը շատ հարմար կլինի, եթե երկու սյուն տնկենք, կակուղ ուռենիով հյուսենք և ներսը հարդակավով ծեփենք: Նմանապես տանիքին՝ նույն ուղղությամբ մի ծխնելույզ շինելով, գոնե մեկուկես կանգուն բարձրությամբ, տես, թե այն ժամանակ մուխն ինչպես վեր կքաշվի, և տունն ամբողջապես գերծ կմնա ծխից:

Է՛, Թոռնի՛կ, դու ասա, արդարությամբ խոսիր, այս փոքր բարեփոխության համար ի՞նչ դժվարություն և ծախս կլինի: Բայց ինչո՞ւ չի մտածում գյուղացին... Մի՞թե չգիտես դու դրա պատճառը. ինչպես շատ անգամ ասել եմ, դարձյալ նույնը կկրկնեմ՝ գիր ու կարգալ չգիր

տեսնալն է... գիրն ու գիրքն են, որ բացում են մարդու միտքը և մտածել սովորեցնում:

Սակայն դու մի՛ գարմացիր, մի՛ մեղադրիր անուսում գյուղացուն: Գնանք քաղաք, տես ահա վանեցիների տները, որ բոլորին թոնիրը տան մեջտեղն է շինված: Միայն մի տարբերություն կա, որ քաղաքացիների տների առաստաղները բավական բարձր են, ոչ միայն առաստաղին, այլև պատերին շատ պատուհաններ կան, տան ծուխը դուրս է քաշվում: Բայց դարձյալ առաստաղը սև ու մրջոտ է: Եվ երբ անձրևից կաթել է սկսում, տեսնում ես, որ սև կաթիլներով տան հատակն ու փռոցներն ապականվում են: Երբեմն նաև շատ հին տներ, գարնան միջոցին, առանց անձրևի էլ խոնավանում են, որ ավելի տհաճ է, որովհետև գետնի փռոցները, թոնրի ծածկոցներն ու ընտանիքի հագուստներն ամբողջովյալ մրջոտվում են, և որքան դժվար է այդ մածուցիկությունը այս մրաներկ լաթի վրայից հանելն ու ջնջելը:

Ուրեմն չասես, Թոռնի՛կ, թե քաղաքացին, որ կարդալ-գրել գիտե, զարգացած է, Պոլիս մայրաքաղաքը տեսնելով, մաքրություն օրինակ է առել... Նա նույնպես չգիտե մի բան՝ մտածել ու բարեփոխել իր տունը: Եթե այսպես է, ինչ տարբերություն կա գրագետի ու անգրագետի միջև,

երբ կյանքի ընթացքն ու պայմանները նույնն են մնում: Պատասխանեմ քեզ, Թոռնի՛կ. նախ պետք է գիտենաս, որ ամեն գրել-կարդալ գիտեցող տնտես չի լինում, երկրորդ՝ քաղաքացիների նոր սերունդը, ճիշտ է, արդի դպրոցներում թեև անկատար, բայց ուսում է ստացել, սակայն դա բոլորովին բավարար չէ մեր կյանքի բարվոք տնտեսվարման համար, որովհետև այդ կիսակատար, հարևանցի ուսմամբ մենք չենք կարող մեր միտքն այնպես մշակել, որ հին, արմատացած նախապաշարումները վերանան: Տակավին ինչպես գյուղացին, նույնպես քաղաքացին պետք է բնակվեն մրջոտած տներում և պիտի ասեն. «Մեր հայրերը, մեր պապերն այս տներում են ապրել, մենք էլ կապրենք»: Նրանց համար փուլթ չէ, թե ընտանիքը տառապում է մխի և ծխի մեջ, և երբեմն էլ աչքերը մրմռում են:

Երբ ես ասում եմ, թե քաղաքացիները զարգացած են, դու այնպես մի հասկացիր, թե իրոք և կատարելապես զարգացած և լուսավորված են: Դրանց մտքի լույսը եթե ամփոփես՝ մի աղոտ ճրագի չափ լույս չի ունենա. լոկ գյուղի անգրագետ ժողովրդի հետ համեմատելով փոքր-ինչ առավելություն ունեն:

Թոռնի՛կ, թե՛ քաղաքացիների, թե՛ գյուղացիների միտքը դեռ մթագնած և խավարով է ծածկ-

ված, մենք աշխարհի իրերը ճիշտ և ուղիղ չենք տեսնում, Հիսուսի կույրի նման մենք էլ շրջող մարդկանց ծառի պես անշարժ ենք տեսնում (Մարկ. Ը 22-6): Ուստի ծառն ու մարդուն տարբերելու համար լույս և պայծառ տեսություն է պետք, որ միայն կրթությունը է տրվում: Եվ քանի որ մենք կրթության ու գիտության լուսատու շնորհից զուրկ ենք, մեր տնտեսական կյանքն այսպես է մնում: Գիտությունը մեզ արժանի է նկատել խավարչտին ու մրջոտած տները, մինչև ժամանակը դա, ժողովրդի մտքի աչքը բացվի, լույսը տեսնի, կարողանա ճանաչել ու տարբերել մարդուն ու ծառը: Այն ժամանակ, ահա, եթե ողջ մնացինք, այս մրջոտած տներից դուրս կելնենք դեպի լույս և առաջադիմություն, կազատվենք սոցիալական այն խեղդիչ մխից ու ծխից:

Այսքանը միայն խոսեցի, Թոռնի՛կ, գյուղական անշուք շինությունների մասին, բայց շինական ժողովրդի առտնին կյանքը շատ ընդարձակ է և ուրիշ բազմազան կողմեր ունի: Թոռնի՛կ, դու գյուղական միջավայրում ես ծնվել, արդեն քեզ եմ թողնում այդ կյանքի նկարագիրը, դու ինքդ փորձառությունը ուսումնասիրիր: Այժմ պիտի խոսեմ գյուղական եկեղեցու, քահանայի և ժողովրդի մասին, որ քեզ համար մի հոգևոր դաս է:

ԺԹ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՔԱՀԱՆԱ

Մեր գյուղական անշուք կյանքի նման, մեր եկեղեցին ու տաճարն էլ նույն անշուք, անզարդ ու խրթնացած պատկերն ունի: Եթե նախնիներից մնացել է մի գեղեցիկ տաճար՝ քարաշեն և հաստատուն, դա բախտավորություն է գյուղացիների համար: Կան այնպիսի գյուղեր, որոնց կից է վանքը, ինչպես Ռչտունյաց գավառում Նարեկա վանքը, Թիմարի գյուղերում Աստվածածնի հռչակավոր վանքը և այլ տեղերինը: Այսպիսի վանքերը եկեղեցի և աղոթատեղի են համարվում մերձակա գյուղերի համար, որ դա ևս իրենց համար մեծ մխիթարություն է:

Իսկ ընդհանրապես Վասպուրական երկրի գյուղական եկեղեցիները հողակերտ ու փայտաշեն են, պատերը հում աղյուսով շինված, առիք ու տանիք հողով ծածկված, մեծ բան է, եթե միայն խորանն ու սեղանը քար ու կրով

չինված լինեն: Դու մի զարմացիր, թե գյուղացիների եկեղեցիները փայտաշեն են. ավելի պետք է զարմանաս, որ Վանի պես հույակ ունեցող մի քաղաքի եկեղեցիները գրեթե ամբողջով թյամբ փայտաշեն են: Միայն մի քանի եկեղեցի կա, որոնց տաճարները բավական հնաշեն և հոյակապ են, ինչպես քաղաքամիջի սուրբ Պողոս եկեղեցին:

Այգեստանում Այր-հարույց եկեղեցին մի հնաշեն և պատվական տաճար ունեն: Այդ եկեղեցու փայտաշեն գավիթը մի քանի տարի առաջ նորոգելով, հնաշեն տաճարը գավթի հետ խառնեցին, ուզենալով, որ իրենց եկեղեցին Պոլսո եկեղեցիներին նմանեցնեն, կարծելով, թե Պոլսո եկեղեցիները բուն հայկական տաճարների հնության ձևն ու պատկերն ունեն: Ափսո՛ս, հազա՛ր ափսոս, որ այդ հնության տաճարների մնացորդները հետզհետե քանդվում, և օտար ձևերով են եկեղեցիներ կառուցվում, և սեղանները ծածկվում են անվայելուչ ու անճաշակ խաչկալներով:

Թողնենք այս, Թոռնի՛կ, դառնանք միայն մեր գյուղի եկեղեցու նկարագրությանը: Բավական է՝ դու այդ նկարագրությամբ մի պատկեր աչքիդ առաջ ունենաս:

Մեր գյուղի եկեղեցին ևս հողակերտ ու փայտաշեն է, որ մի քանի տարի առաջ հազիվ նորոգվեց. տե՛ս՝ սեղանը պարզ, անպաճույճ, փայտակերտ, կոպիտ շինված մի խաչկալ ունի, վեմի քարերն ու մոմակալը, աստիճանները անշուք, մըջոտած կտավով են ծածկված: Պատարագին հազիվ թե երկու մոմ վառվի, երբեմն բավական է մի փայտե եռոտանի ճրագակալ և վրան կավե ճրագ՝ ամբողջովին ձիթոտած ու մըջոտած: Սեղանի տերունական պատկերը տե՛ս՝ ինչ անձև և անարվեստ է: Եկեղեցու հատակին և սեղանի վրա միայն փսիաթներ են փռված: Գյուղական եկեղեցիները մեծ մասամբ վերնատուն չունեն, տղամարդիկ առջևում են կանգնում, կանայք՝ ետևի մասում:

Թողնենք այս նյութական անչքությունը, որ Աստծու տիեզերական փառքի առջև նշանակութուն չունի, Որի աթոռը երկինքն է, և ոտքի պատվանդանը՝ երկիրը: Գանք բարոյական կողմի նկարագրությանը: Մի ծերուկ քահանա ունենք, ցուպը ձեռքին դողդողալով հազիվ է եկեղեցի գալիս, աչքերն Իսահակ նահապետի պես վաղուց վատ են տեսնում: Բայց ինքը եկեղեցու ժամերգության շատ բաներ անգիր գիտե և երկյուղածությամբ է ասում, մի բարի և ժողովրդասեր քահանա է: Մի քահանա էլ ու-

ներինք, բավական կրթված էր, ժիր ու գործուն-
յա էր, բայց նա հարստացավ, թողեց գյուղն ու
քաղաք գնաց: Թվում է, թե գյուղական երե-
ցի հարստանալը այնքան էլ լավ բան չէ, որով-
հետև հարստությունը նրան գյուղակեցության
է մղում, չնայած ուխտագիր էր գյուղի եկե-
ղեցու քահանա ձեռնադրվելով, բայց այդպի-
սինքն կարողանում են իրենց ուխտը դրժել,
անիմաստ և անհիմն առիթներ առաջ բերելով:
Բայց, արդարը խոսելով և դատելով, շատ ան-
գամ էլ իսկապես իրավացի են գյուղական քա-
հանաները, երբ ժողովուրդը անտեսում է իր
եկեղեցու պաշտոնյայի հոգևոր մատակարար-
ության իրավունքները, որ սահմանել են եկե-
ղեցու սուրբ հայրերը:

Սրա ապացույցն ահա մեր ժամանակներում
տեսնում ենք, որ ժողովրդի պես՝ քահանաներն
էլ պանդխտության են դիմում, թողնելով գյուղն
ու եկեղեցին որք՝ տարիներով դեգերում են օտա-
րության մեջ: Ո՛ր, տեսնես դու, Թոռնի՛կ, Պոլսի
գերեզմանոցներում թափառելով սպասում են,
որ մի մեռելաթաղ լինի, կամ պանդուխտ ժողովր-
դից մեկը գա և իր ննջեցյալի գերեզմանն օրհնել
տա:

Այսպես, քահանան թողնում է հովվությու-
նը գյուղի ողջերի, որոնցից չկարողանալով իր

ապրուստը հայթայթել, գնում է մեռածների
գերեզմանից գտնելու իր ընտանիքի հացն ու
ճարը: Օրհնյա՛լ լինի այդ ննջեցյալների հիշա-
տակը, որ իրենց գերեզմանից հոգում են քա-
հանայի հացը: Մեռյալների գերեզմանը, ուր
հավատով ու Քրիստոսի անունով ննջել են ի
Տեր, ևս իր օգտաբերությունն ունի:

Այնպես է թվում ինձ, Թոռնի՛կ, որ գյուղա-
կան ժողովուրդը չժողովուրդ է համարվում
ազգի կառավարիչների կողմից. նա արժանի չէ,
որ բարեգարգ եկեղեցի ունենա, արժանի չէ, որ
ուսյալ, բարեգլխաց քահանա լինի իր հովիվը,
նրա համար ավելորդ են համարվել դպրոցը, ու-
սումն ու կրթությունը, նա չունի բախտ, որ տա-
րին գոնե մի քանի անգամ վարդապետի քարոզ
լսի. գյուղական եկեղեցու շեմը այցելու ոտքից
շատ հեռու է: Վերջապես գյուղացին ամեն հո-
գևոր մխիթարություններից զրկված է: Մարդ
անկարող է նրա անասելի վիճակը նկարագրել:
Ամեն բան կենտրոնացած է քաղաքներում, ուր
դրված է ընդհանուր վիճակի առաջնորդի աթո-
ռը: Առաջնորդը քաղաքացիների համար կար-
ծես թե մենավաճառ է կամ վարձյալ մի հովիվ,
որ միայն քաղաքացիներին է առնչվում, միայն
քաղաքի ոչխարները պետք է արածեցնի, դաշ-
տի գյուղական ոչխարները թող գայլերը տա-

նեն: Առաջնորդն այն ժամանակ է տեսնում գյուղացու երեսը, երբ նա մի խնդրով աղերսադեմ ներկայանում է իրեն: Անձնական կյանքն ու փառասիրությունը մեր հոգևոր հովիվների փութաջանությունն ու եռանդը հանգցրել են: Ես կարծում եմ՝ դրա պատճառը քաղաքացիներն են և քաղաքային կյանքը:

Գյուղական ժողովրդին դույզն-ինչ մխիթարություն են մնացել վանքերը: Մանավանդ Վասպուրական գավառի վանական վարդապետները մերթ ընդ մերթ այցելում են թեմական գյուղեր, թեև վանքի իրավունքի և պտուղ ժողովելու համար է այդ, բայց կան այնպիսի ժրագործ վանականներ, որ ոչ միայն իրենց այցելության պարտքը կատարելով հոգեպես մխիթարում են ժողովրդին, այլև գյուղական այլ և այլ պատահական գործեր են կարգավորում և երբեմն էլ կռիվների և վեճերի պարագային իբրև հաշտարար դատավոր են հանդես գալիս: Ափսո՛ս, որ այսպիսի պարտաճանաչ վանականների օրինակը շատ հազվագյուտ է:

Այս դասն ինձ շատ ընդարձակ նյութ էր տալիս, բայց Պապիկը, մի աշխարհական հողագործ մշակ լինելով, համարձակություն չունի իր հողագործական դասերի շրջանակից դուրս գալու, պետք է հոգևոր խոսքը հոգևորականին թողնել:

Նրանք ժողովրդի բժիշկներն են, մի՞թե չեն կարող իրենց հիվանդությունը բժշկել, հոգալ, խոսել, գրել և ցույց տալ դեղն ու դարմանը:

Այժմ սկսում եմ խոսել, Թոռնի՛կ, թե ո՛րոնք են այն միջոցները, որոնցով գյուղական ժողովուրդը գոնե փոքրիչատե կարողանա առաջադիմել, իր ներկա վիճակը բարվոքել ժամանակի ընթացքում:



Ի. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մարդ հոսսահատվում է, Թոռնի՛կ, երբ տեսնում է գյուղական ժողովրդի վիճակը և նրա վարած դառնաշխատ կյանքը, ինքն իրեն մտածելով ասում է. «Արդյոք հնարավո՞ր է, որ մեր դաշտաբնակ, երկրագործ ժողովրդի վիճակը փոխվի, կյանքը լավանա և ինքն էլ սկսի քայլ առ քայլ առաջադիմել»:

Պետք է գիտենաս, Թոռնի՛կ, որ աշխարհիս ազգերի և ժողովուրդների վիճակը հանկարծ չի փոխվում, այլ բնական կարգով ու աստիճանաբար է լինում: Առաջընթացն արևմուտքից սկսվեց, դեռ նոր է մտել արևելյան դուռը. շատ ժամանակ է պետք, որ այդ դռնից ներս մտնելով՝ գա-հասնի մեր աշխարհը: Առաջադիմությունը նախ քաղաքներից է սկսվում և ապա մտնում գյուղերին: Բայց քաղաքները դեռ նոր են սկսել այբն ու բենը. բոլոր նախակրթարանները բացված են մատաղ մանուկների համար, որ դեռ

կարգալ-գրել են սովորում. մի քիչ քրիստոնեական դասեր, մի քիչ հաշվել, մի քիչ էլ աշխարհագրութեան քարտեզի վրա են նայում: Մանուկը դեռ իր շրջապատի տեղերը չսովորած, դե՛, Ամերիկա և Չինաստանի մայրաքաղաք է հասնում:

Վասպուրականում եղած մեծ գյուղերում արդեն սկսել են նախակրթարաններ բացվել, գյուղացի մանուկներն սկսել են քիչ թե շատ կարգալ ու գրել սովորել: Գյուղական դպրոցները միայն ձմռանը կարող են աշխատել, իսկ ամռանը գյուղացու տասն տարեկան մանուկն իր համար շատ պիտանի է, հորթերն ու գառները ո՞վ պիտի արածեցնի. թողնենք այս, փոքրիկ տղաները հոտաղություն անում են: Սրանից բացի՝ հողագործական բոլոր աշխատանքներում՝ գարունից մինչև աշուն, նրա կատարած գործի վարձը չորս հարյուր դահեկանի է հավասար: Մեր աշխարհում առաջընթացը դեռ նոր ծնված մի երեխա է, դեռ շատ և շատ ժամանակ է պետք, որ նա դպրոցի լուսավորութեան ավագանում մկրտվի, օրըստօրե դարգանա և մարդ դառնա: Չկարծես, թոռնի՛կ, թե մանուկ կրթութեանն այնքան շուտ է մեծանում, ինչպես մայրերի ծնած զավակը. եթե բնական ծնունդի զարգացման համար լոկ քսան տարին բավական է, ապա առաջընթացը և կրթութեան

զարգացումը երկար դարերի են կարոտ: Դու գիտես, թե քանի՛ դար առաջ սկսեց Եվրոպան և այսօր հազիվ հասավ այս աստիճանին:

Սակայն մեր ժամանակի սերնդի համար մեծ բախտավորութիւն է, որովհետև Եվրոպան տաժանելի աշխատանքով, մեծ զոհողութեամբ այդ առաջընթացի ճամփան հարթեց ու բացեց, համընդհանուր ուսման և գիտութեան տարրերը նախապատրաստեց, ինչպես մի պատրաստի սեղան՝ դրեց մեր առաջ: Ավետարանի խոսքը շատ հարմար է մեր այս բախտին. «Ուրիշներն աշխատանք թափեցին, իսկ դուք նրանց վաստակի մեջ մտաք» (Հովհ. Դ 38): Չասե՛ս ուրեմն, թոռնի՛կ. «Այսուհետ մեր ինչի՞ն է պետք աշխատելը, չարչարվելը, նստենք այդ պատրաստի սեղանի մոտ և ճաշակենք»:

Դա շատ սխալ դատողութիւն է: Դու կարծեցիր, թե մեր տանտիկնոջ եփած թանապուրն ու ճա՞ն է այդ սեղանին, որ գդալն առնելով նստենք-ուտենք: Ո՛չ, բազում ջանք, բազում չարչարանք, բազում տքնութիւն և ճգնութիւն է պետք, որ մենք կարողանանք Եվրոպայի պատրաստած սեղանի հացն ուտել, որովհետև այդ հացը դպրոցի անդաստանում է մշակվում: Դու ի՞նչ ես ասում, թոռնի՛կ. «Չվարենք, չցանենք, չդարմանենք, չհնձենք, չկալսենք, ցո-

րենը չաղանք, ալյուրը չչաղախենք, թոնիրը չվառենք, հաց չթխենք, առանց այս քրտնաթափ աշխատանքի՝ նստենք դյուրուլթյամբ ու հանգիստ հաց ուտենք»։ Դու լսել ես Ավետարանից, թե ճնճղուկներն առանց վարելու, չարչարվելու են կերակրվում։ Է՛, անուշաղի՛ր Թոռնիկ, դու երբեք չե՞ս նկատել ճնճղուկի աշխատանքը, այդ նկուն թռչնիկը մի՞թե իր չափով չի ճգնում. չե՞ս տեսնում, որ նա իր սերունդը պահպանելու համար հազար անգամ գնում-գալիս է, ճյուղեր բերելով՝ իր բույնը շինում, ձուռ ածում, ձագեր հանում, անդադար թռչում-վերադառնում է, փոքրիկ որդեր գտնելով՝ ձագերին բերում, մինչև թևիկները բուսնեն։ Դու այն ժամանակ տես, թե որքա՛ն է ջանում կրթել իր ձագերին, որ թռչել սովորեն։

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, բնության մեջ մի էակ չկա, որ չաշխատի՝ թռչուն, անասուն, սողուն, ինչ որ կենդանի և շարժուն է, աշխատում է իր կյանքը պահպանել։ Թողնենք ցամաքային կենդանիներին, ծովի ձկները և բյուրատեսակ լողական կենդանիները նույնպես այդ ծովային աշխարհում աշխատում են ու տքնում իրենց կյանքը պահպանելու։

Տիեզերքի անխոսուն կենդանիները բնությունից մի անգամ սովորել են. Արարիչն Աստ-

ված Իր արարչագործության դպրոցից այնպես դուրս բերեց դրանց, որ այդ բանականությունից զուրկ կենդանիներն առանց ուսանելու և կրթվելու կարողանան իրենց կերակուրը ճարել ու ապրել։

Բայց մարդը, որ բանական էակ է և իշխում է բոլոր կենդանիների վրա, նա առանց դպրոցի, առանց կրթության չի կարող իր հացը հայթայթել։ Թեպետ մեր աշխարհի ժողովուրդը, որ ամենամեծ մասով տգետ և անուս է, դառն ու տաժանելի կերպով իր օրական պարենն է հայթայթում, տառապանքով և նեղությամբ ուտում իր հացը։ Բայց հնարավոր չէ՞, որ նա գոնե փոքրիչատե բարեկեցիկ կյանք ունենա, գիտենա իր կյանքի տնտեսությունը ուղղորդել, տունն ու ընտանիքը կարգով-կանոնով կառավարել, գիտենա աշխարհի բաները, մարդկանց կենցաղավարության պայմանները, գիտենա հաստատապես լավն ու վատը, բարին ու չարը, առաքինությունն ու մոլությունը։ Գիտենա ստուգապես տարրորոշել ճշմարտություն և սուտ, արդարություն և անիրավություն, պատիվ և անարգանք։ Եվ որ կարևորն է՝ գիտենա նաև իր պաշտած քրիստոնեական կրոնը, Սբ. Գրոց և Ավետարանի գերագույն պատվիրանները, թե ո՛րն է քրիստոնյայի պարտքը՝ թե՛ առ

Աստված, թե՛ առ ընկեր և թե՛ առ ընտանիք...
առ եկեղեցի, առ ազգ, առ Տերություն:

Ահա այս բոլոր ամենակարևոր հմտությունները դպրոցի կրթարանն է ուսուցանում մեզ: Ուստի գյուղական ժողովրդի արդի վիճակը փոխելու համար առաջին ու հիմնական պայմանը դպրոցն ու կրթությունն է: Ասա դու, Թոռնի՛կ. «Կրթարան հաստատելու համար մարդ է պետք, և մարդու հետ՝ դրամ»: Որտեղի՞ց մարդ, որտեղի՞ց դրամ և որտեղի՞ց կրթիչ մանկավարժ. կալի՞ց, թե՞ հնձանից: Գյուղական ժողովրդի վիճակն արդեն հայտնի է. նա զաղափար չունի, որ մտածի, և ոչ անգամ կրթություն բառը կարող է հասկանալ: Եթե ասես՝ «Թող քաղաքացին օգնի, որովհետև գյուղական ժողովրդի շնորհիվ է լինում իր ամբողջ առևտուրը և շահույթը»: Այո՛, քաղաքացին ոչ թե նյութապես չի կարող ձեռք մեկնել, օգնել մշակ ժողովրդի կրթությանը, այլ բարոյապես էլ նրա ոգին սառն ու անտարբեր է՝ նույն իսկ իր գավակների կրթության հանդեպ: Ահա, օրինակ, մեզ մոտիկ է անվանի Վան քաղաքը, հարցրու, թե՛ «Վանեցին տարեկան ո՞րքան գումար է ծախսում իր դպրոցների համար»: Ավելի չեմ խոսում, խնայում եմ, միայն այս կասեմ, որ վանեցին մեծ մասամբ իր տղաներին և աղջիկներին՝

երին՝ եկեղեցուն նվիրված չնչին մոմազնով և յուղազնով է կրթում, կրթության համար թոշակ տալու սովոր չէ, և եթե թոշակ ուզես՝ կխոթոռվի, եթե ստիպես՝ երեխային դպրոցից կհանի:

Բայց, Թոռնի՛կ, մեզ պետք չէ քաղաքաբնակների օգնությունը, չեն մնա գյուղական ժողովուրդը, նա Տերության հարկերն է տալիս, այնքան զնացող-եկող հյուրերի ընդունում, մի՞թե չի կարող մի պարզ մանկավարժ պահել, որ շատ քիչ թոշակով կբավականանա: Մենք հաց ունենք, յուղ ունենք, պանիր ունենք և այլ կաթնեղեն բաներ. մեր վարժապետները շատ սակավապետ են, ժաժիկով անգամ գոհ կմնան: Միայն թե նախաձեռնող, կարգավորող հեղինակ է պետք, որ հորդորի, առաջնորդի ուսմիկ ժողովրդին դեպի կրթության ճանապարհ: Ո՞ւմ պարտքն է այդ. նախ վիճակի առաջնորդինը և երկրորդ՝ վանական վարդապետներինը:

Բայց ավա՛ղ, Թոռնի՛կ, մեր հիմիկվա առաջնորդները կարծես թե մի քաղաքական պաշտոնյա լինեն. եկեղեցու բուն գործերը՝ դպրոց, կրթություն, ուսում և այլն բարձրթողի են եղած: Այս բանի համար ո՞վ է մեղավոր. ժողովուրդը, թե՞ առաջնորդը: Մենք այնպես ենք կարծում, որ առաջնորդն է մեղավոր, որով-

հետև նա մի հովիվ է, Ավետարանի պաշտոնյա է և սոսկ մի հոգևորական սպասավոր է Քրիստոսի եկեղեցու:

Բայց դու տես, որ մեր ժողովուրդը չի պահանջում առաջնորդից, որ իր փակված աչքերը հրաշքով բանա և տեսնի, թե ի՞նչ բաներ կան աշխարհի վրա, կամ իր հոգու հիվանդությունները բժշկի, այլ միայն հրաշք է պահանջում, որ առաջնորդը Հիսուսի պես հինգ նկանակն օրհնի և հինգ հազար մարդ կերակրի: Այսպես, քաղցած ժողովրդի հացի խնդիրը հաղթել է Աստծու կենդանի խոսքին, որի քարոզիչ-մատակարարն առաջնորդն է: Որքա՛ն ողբալի է, Թոռնի՛կ, ժողովրդի անգիտակից վիճակը, որով այնպես է թվում, թե ինքն ավելի մեղավոր է՝ քան առաջնորդը: Բայց ո՞վ կարող է դատապարտել իրեն, երբ ժողովուրդն իր կյանքի խնդիրներով խեղդված և անձկության մեջ պաշարված, ամեն ճար առաջնորդից է ակնկալում: Այո՛, պիտի ակնկալի, քանի որ ժողովուրդը տգետ է, ուսում չունի, խոսել չգիտե, երկրիս օրենքները չգիտե, անշուշտ նա իր դատին միջնորդ, փաստաբան՝ առաջնորդին է ճանաչում:

Ուրեմն, Թոռնի՛կ, գործը դարձյալ մնում է վանական վարդապետների վրա, որոնք ազատ վիճակում են: Մեծ պարտականություն ունեն

նրանք և պարտավոր են գյուղական ժողովրդի համար ամենայն անձնվիրությունը աշխատել, գնալ գյուղից-գյուղ, քարոզել, ուսուցանել պարզ ու ընտանեկան ոճով, խոսել այնպես, որ հասկանա ժողովուրդը և կարողանա ըմբռնել դպրոցի և մանուկների կրթությունն իր նշանակությունը:

Այս կերպով այցելու վարդապետը ոչ միայն կհաջողի գյուղական դպրոցները հաստատել, այլ նա կկարողանա նաև գյուղի երիտասարդներին, այրական հասակով մարդկանց և նույնիսկ ծերուկներին կրթել, որոնց կրթարանը եկեղեցին է: Եթե վարդապետը հաճախ այցելի, խոսի, կրկնի իր քարոզները, կարգացված Ավետարանի մտքերը բացատրի, ցույց տա Աստծու պատվերները, կենաց Բանի ու Հացի սեղանն այնպես պատրաստի ու դնի քաղցած ժողովրդի առաջ, որ վերջինս ուտի ու լիանա:

Գյուղական ժողովուրդը թեպետ քրիստոնեական կյանքի մեջ շատ ծեր է, բայց իր արդի կյանքը նկատի ունենալով, նա մի նորածին, կաթնկեր երեխա է դարձել, նրա կյանքի նկարագիրը տգիտությունն ու ռամկությունն են: Նրա ատամները դեռ դուրս չեն եկել, և նրան պետք չեն պինդ կերակուրներ, այսինքն նուրբ դասեր և քարոզներ, նրա համար միայն կաթ-

նային սնունդ է պետք, որ կարողանա քաղցրությամբ ճաշակել ու մարսել: Ճիշտ է, որ մանկության ուսումը շատ հիմնավոր և հաստատուն է: Երանի՛ թե ես էլ բախտ ունենայի, մանուկ հասակում դպրոց գնացած լինեի ու կանոնավոր կրթություն ստացած, ինչ որ գիտեմ և ինչ որ պատմում եմ քեզ այս դասերը, հափազաս տարիքից սկսած եմ սովորել, որ շատ չնչին բաներ են, որովհետև միայն լսելով և գրքեր կարդալով փոքրիշատե հմտացել եմ աշխարհի բաներում: Գիտե՞ս, Թոռնի՛կ, ամեն մի գիրք մի-մի վարժապետ են կարգացողի համար. գրողները մահացել-գնացել են, գիրը կենդանի է մնացել: Կան այնպիսի գրքեր, որ անմահ են, եթե հազարավոր տարիներ էլ անցնեն, դեռ պիտի խոսեն մեզ հետ:

Այս մի քանի տողը գրելով՝ ուզում եմ հասկացնել քեզ, Թոռնի՛կ, որ հասակ առած մարդիկ կարող են կարևոր դասերը քիչ թե շատ սովորել ու կրթվել, միայն թե այդ դասախոսը պետք է լինի մի անձնվեր մարդ, անձանձրույթ, մշտախոս, անհուսահատ, հարատևող ու երկայնամիտ: Սրա փորձն ու ապացույցը ես աչքովս տեսա, կպատմեմ քեզ, Թոռնի՛կ:

Սրանից գրեթե քսանհինգ տարի առաջ, Պոլսի Ղալաթիո Սբ. Լուսավորիչ եկեղեցում

կրթության մի նորօրինակ փորձ եղավ: Այդ բանի սկզբնավորող հեղինակը Ղազարոս-Քրիստոստուր անունով մի պատվական, անխոնջ, աշխատասեր մարդ էր: Ափսո՛ս, նա մեռավ երկու տարի առաջ, բայց իր ձեռնարկած գործն անընդհատ շարունակեց մինչև գերեզման: Եվ ի՞նչ էր իր ձեռնարկածը. կիրակնօրյա մի լսարան բանալ՝ պանդուխտ բեռնակիրների կրթության համար: Այո՛, բացեց ու հաջողություն ունեցավ: Տեսեիր դու կիրակի և տոն օրերին, թողնելով սրճարան և ուրիշ զվարճության տեղերը, մեր պանդուխտ եղբայրները լսարան էին լցվում, պարոն Քրիստոստուր անթոշակ վարժապետը այբից սկսելով իր պարզ դասերն էր ավանդում: Նա մանկավարժ չէր, բայց այնպիսի դյուրին ոճով ու եղանակով էր ուսուցանում դասերը, որ այդ թանձրամիտ կարծված բեռնակիրներն ամենայն դյուրությամբ ըմբռնում էին նրա ասածները: Եվ ահա կարճ միջոցում մեր բեռնակիրները՝ գուհիկ շինականները, բանագետ դարձան: Սովորեցին բավականաչափ հայերեն լեզուն, քերականություն, Սուրբ Գրոց պատմությունները, Քրիստոնեական վարդապետություն և Ավետարանի դասեր, թվաբանություն, տոմարական հաշիվներ և այլն:

Դու գիտես, Թոռնի՛կ, ի՞նչ եղավ այս արդյու-
նավետ գործի վերջը: Երբ բեռնակիր մարդն ուս-
ման ճաշակն առավ, փոքր-ինչ զարգացավ նրա
միտքը, նա զգաց ու ճանաչեց իր արժանիքնե-
րը, հասկացավ, որ մարդն անասուն չէ, որ բեռ
կրի: Աստված մարդուն որպես իշխան ստեղծեց,
որ կենդանիներին ղեկավարի: Ուստի բեռնակի-
րը գցեց համետը (սեմեր) իր բրտացած մեջքից,
զնաց իր արժանիքին համեմատ գործերի: Այդ
բեռնակիրները մինչև անգամ մասնավոր գրադ-
րուծյան պաշտոններ ընդունեցին, ոմանք էլ,
իրենց հայրենիք վերադառնալով, գյուղական
դպրոցներում մանկավարժ եղան:

Երախտապարտ եմ հիշել ու խոստովանել, որ
Պոլսում եղած ժամանակ՝ շարունակ գնում էի
այդ անձնավեր մարդուն լսելու, մանավանդ իր
խրատական և բարոյական դասերը շատ կրթիչ
ու օգտակար էին գավառացի պանդուխտների
համար: Հանգուցյալ հոգին մի անվեղար, ան-
դավաճան քարոզիչ վարդապետ էր: Նա չգի-
տեր մեթոդ կամ ճարտասան լեզու գործածել,
կամ համառոտ ու հարեանցի կերպով ասել,
անցնել, այլ այնքան էր խոսում, այնքան էր
վարում բեռնակիր աշակերտների կորզացած
հոգը, մինչև փխրեցներ նրանց միտքը, ցաներ
ու տեղավորեր իր դասերի հատիկները: Իր հի-

շատակն օրհնյալ լինի, և Տեր Աստված հատու-
ցի այդ անխոնջ մշակի վարձը:

Այս ճշմարիտ իրողությունն իբրև ապացույց
պատմեցի քեզ, Թոռնի՛կ, որպեսզի դու և գյու-
ղական ժողովուրդը համոզվեք, որ չափահաս
մարդիկ ևս կարող են կրթվել, կարող են սովո-
րել, միայն թե անձնավեր ուսուցանող լինի, մա-
նավանդ երբ ուսուցանի և միաժամանակ գործի
և իր անձն իբրև օրինակ ընծայի ժողովրդին:

Եվ ո՛ւր են այդ անձնավորությունները և
որքա՛ն հազվագյուտ են շինական ժողովրդի
համար, և որտեղի՞ց պիտի նրանք հանկարծ
հայտնվեն, անապատի՞ց պիտի գան Հովհաննես
Մկրտչի նման, թե՞ Տեր Աստված, հոգալով իր
ժողովրդի մասին, հովիվներից մարգարե պիտի
հանի իր շնորհների դպրոցից, ինչպես երբեմն
հանում էր Իսրայելի ժողովրդի համար: Քանի
որ հաստատուն, բարեկարգ կրթարաններ չու-
նենք, որ ուսյալ և կրթյալ ժառանգավորներ հա-
սունանան, այսպես է մնում ժողովրդի վիճակը:

«Հունձն առատ է, իսկ մշակները սակավ-
ասում է Հիսուս: Աղաչեցե՛ք հունձի Տիրոջը,
որ մշակներ հանի իր հունձի համար» (Մատթ. Թ
37-38): Մենք ո՛չ աղաչում ենք, և ո՛չ խնդրում:
Տեր Աստված, գթալով մեր խեղճության վրա,
երբեմն փոքրիկ մշակ՝ այցելու հովիվ է հա-

նում մեր հունձերի համար, ինչպես Տեր-Դանիել վարդապետը՝ Վարազա վանքի միաբանը, որ տասն տարիներ ի վեր ամենայն անձնվիրու-թյամբ հովվում էր ոչ միայն մեր Արձակ գյուղը, այլև բոլոր մոտակա և հեռավոր շրջակա գյուղերը: Նրա այցելու ոտքը հանգիստ չգիտեր, այլ անդադար չընդունում էր: Այդ անխոնջ մշակը ոչ միայն Ավետարանի սերմերն էր ցանում, բարոյական խրատներ խոսում, այլև գյուղական տնտեսության դասեր էր նաև ավանդում, այնքան պարզ, հստակ ու հասկա-նալի ոճով, որ մենք՝ թանձրամիտ շինական-ներս, կարողանում էինք ըմբռնել նրա ամբողջ խոսքը: Նա շինեց ու հաստատեց մեր Արձակի դպրոցը և միաժամանակ դրա հարատևության համար եկամուտներ հաստատեց: Նույն կերպ շատ ուրիշ գյուղերի մեջ եկեղեցիներ շինեց, դպրոցներ հաստատեց: Դանիել վարդապետի կյանքն ամբողջովին պարզ և անպաճույճ էր, նա կերակրվում էր շինականի սեղանից, որ սովորաբար թանապուր և մածուն էր, անտր-տունջ ուտում էր և ասում. «Կրոնավորի հա-մար՝ այսքանը բավական և շատ է»: Իր ոգին անընչասեր էր և ազատ ազահունթյան ախտից: Գութ ուներ, գորով խեղճերի վրա, սիրում էր տալ, քան առնել, նա մի հաստատուն կամք

ուներ. ինչ որ սկսեր՝ անվհատ ոգով կաշխա-տեր առաջ տանել, նախապաշարման կապանք-ներից արձակված էր: Նա թեև չուներ այնքան ուսում և ընդարձակ, զարգացած միտք, բայց շատ ընդունակ էր ժամանակի առաջընթացին: Վերջապես Դանիել վարդապետը միակ այցելու հովիվն էր գյուղական ժողովրդի, դրա համար ժողովուրդն իրեն սիրում էր, և ինքն է՛լ ավելի էր սիրում գյուղացի ժողովրդին:

Նրանի շատանային եկեղեցու այսպիսի անձնվեր մշակները մեր առատ հունձերի հա-մար, դու տեսներ, Թոռնի՛կ, թե ինչպես այն ժամանակ գյուղացի ժողովրդի վիճակը կփոխ-վեր ու կբարվոքվեր:

Վերջացնելով այս ընդհանուր դասերը՝ ժա-մանակն եկավ, պիտի խոսեմ և հայտնեմ քեզ այն բանը, որ անձամբ քո կյանքին և մեր գերդաստանին է վերաբերում:



ԻԱԹՈՒԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Է՛, Թոռնի՛կ, ես ծերացա, մայրիկդ էլ պա-
ռավել է, ո՞վ պիտի լինի տանտեր և տան-
տիկին, որ շահի ու պահի մեր տունը: Ավետիս
եմ տալիս քեզ, քո ամուսնուլթյան ժամանակը
հասել է. քսան տարին անցկացրիր: Դու գիտես
գյուղացիների հին նահապետական սովորու-
թյունը, որ իրենց զավակներին շուտ կարգում
են, որ տան աշխատավորները հասնեն:

Դու տեսնո՞ւմ ես, ես և դու մենակ ենք, մեր
ամբողջ հողագործությունը վարձկան մշակնե-
րով ենք կառավարում, լավ չէ՞, որ տնից էլ աշ-
խատողներ ունենանք:

Սրանից բացի, Թոռնի՛կ, թե՛ ես և թե՛ մայ-
րիկդ ցանկանում ենք չմեռած տեսնել քո թագն
ու պսակը: Պապերի, Հայրերի և Մայրերի միակ
ցանկությունն այս է, որ տեսնեն իրենց զավակ-
ներին և թոռներին, որ Աստծու օրհնություն
պտուղներն են, որովհետև Աստված, երբ օրհ-
նեց մեր նախածնողներ Ադամին ու Եվային,

ասաց. «Աճեցե՛ք ու բազմացեք և լցրեք երկիրը» (Ծննդ. Ա 28): Բայց մեր տունը դատարկ է, Թոռնի՛կ, մի երեխա չկա, որ գգվեմ ու սիրեմ. ընտանեկան ուրախությունն ու բերկրանքն այն սիրուն և քնքուշ, մատաղ երեխաների վրա է: Երեխաները տան բնական երաժիշտներն են, խաղում են, ճլվլում, լալիս, ծիծաղում: Այդ կենդանի փոքրիկ էակները անդադար շարժվում են, հանգիստ չունեն: Ի՞նչ հրճվանք է որդեսեր ծնողների համար, երբ նրանք սեղանի շուրջն են հավաքվում, ինչպես ասում է Դավիթը. «Որդիներդ նորատունկ ձիթենու պես քո սեղանի շուրջը» (Սաղմ. ձիէ 3):

Գիտե՞ս, Թոռնի՛կ, ամուսնությունն Աստծու հաստատած մի օրենքն է՝ մարդկային սեռը պահելու համար: Պապիկի տան անունը և մեր ընտանիքը կջնջվի, եթե դուք չամուսնանաք: Պետք է որ կազմեք, մեր ընտանեկան կյանքն ու գերդաստանը կենդանի պահեք:

Ճիշտ է, որ ամուսնություն մասին քաղաքացին շատ է մտածում, բայց շինական ժողովուրդը սովոր չէ մտածելու, թեկուզ վերջին աղքատը լինի: Մեր մեջ մի առած կա. պատմում են, թե մի աղքատ գյուղացի, որ միայն մի իշուկ ուներ, մի օր իր կնոջ հետ խորհելով ասում է. «Կնի՛կ, տեսնում ես, մեր տղան հասունացել է, ի՞նչպես

կարգենք»: Եվ որովհետև շատ բնական է, որ մայրերն ավելի հոգացող ու միտված են իրենց զավակին շուտ կարգելու, պատասխան է տալիս ամուսնուն ու ասում. «էջը ծախենք ու տղային ամուսնացնենք»: «Ա՛հ, դու ի՞նչ ես ասում, կնի՛կ, չգիտե՞ս մեր ապավենն այդ իշուկն է, մենք վար ու ցանք չունենք, պտրտուր ու ցախ բառնալով քաղաք եմ տանում, ծախում, և այդ իշով ենք միայն մեր օրական պարենը ճարում»: «Ա՛յ, մա՛րդ, դու էլ շատ ես մտածում, Աստված ողորմած է: Տղային ամուսնացնենք, նրա հացն Աստված կտա, և գուցե մեր տան բախտը բացվի, իշու տեղ ձիու տեր դառնանք»:

Օրհնյա՛լ է Աստված, Թոռնի՛կ, մեր տունը բարիքներով լի է, էջ կամ գոմեջ ծախելու կարիք չունենք, ամեն բան տնից է. մեր այն մեծ եզը կմորթենք, հարիսա կդնենք, թող գյուղով ուտեն: Հիշո՞ւմ ես, Թոռնի՛կ, թե ո՞ր եզն է. մի օր դու գուլթան արած ժամանակ ասացիր. «Պապի՛կ, ակոսը ծուռ է գնում»: Եվ ես ասացի քեզ. «Գիտեմ, Թոռնի՛կ, ակոսի ծուռությունը մեծ եզից է. դեռ դու չգիտես աշխարհի բաները, միայն անբան եզները չեն, որ ակոսը ծուռում են, ինչքա՛ն ակոս ծուռ մարդիկ կան, որոնց գործն ու կյանքը երբեք ուղղություն չեն ունենում: Այդ ակոս ծուռների երեսից է, որ աշխարհի բանը

ծուռ է գնում: Չեմ ասի քեզ, միամիտ Թոռնիկ, նույնիսկ մեր գյուղում որքա՛ն ակոս ծռողներ կան»: Հիմա մեր եզը մորթելով կազատվենք ծուռ ակոսի փորձանքից: Աստծուն աղաչենք, որ ազատի մեզ ծուռ մարդկանց փորձանքից:

Գիտեմ, Թոռնի՛կ, դու այժմ մտքիդ մեջ կխոսես, թե՛ «Պապիկը նստել, իմ հարսանիքի ճառն է ասում, թե հարսանյաց ճաշը պատրաստ է և այլն, բայց չի ասում, թե ո՞ւր է իմ հարսանյաց հանդերձը, և ո՞վ է Թոռնիկի նշանած աղջիկը»:

Անուշադի՛ր Թոռնիկ, չե՞ս հիշում դու առաջին գլխի դասիս մեջ ասացի քեզ, թե Ստամբուլից վերադառնալով մի ձեռք ընտիր չուխա լաթ ունեի, մինչև հիմա սնդուկի մեջ պահել եմ, ահա այն պիտի լինի քո փեսայուլթյան հանդերձը, միայն թե երբ հարսանիքն ավարտվի, պետք է հանես, դնես սնդուկում և միայն տոն օրերին հագնես: Դու հողագործ աշխատավոր ես, շալե շալվար է քեզ վայել:

Իսկ նշանածիդ մասին ասեմ քեզ, որ սիրտդ հանդարտ լինի. մեր գյուղի տանուտեր մեծատոհմ Մուրադին ճանաչո՞ւմ ես. ահա նա պիտի լինի մեզ խնամի, որի տունը նահապետական է, և ամբողջ ընտանիքը բարի և անվնաս մարդիկ են: Տանուտեր Մուրադը մի աղջիկ ունի

չափահաս՝ Շուշան անունով, որ շատ պարկեշտ, տնարար և ժրջան մի աղջիկ է, և դու, անշուշտ, շատ ես տեսել իրեն: Մեր գյուղացի ընտանիքները Փռանգստանից ավելի ալաֆրանգի են, որովհետև գյուղական ժողովրդի կյանքը հին նահապետական կյանքի մնացորդ մի պատկերն է:

Ահա ասացի քեզ ամեն բան. գուցե քո մտքից չէր անցնում, որովհետև դու պարզամիտ և ուղղախոհ մի գավակ ես: Պապիկի սուր աչքը քեզ միշտ հսկում էր, դու այժմ ժրացի՛ր, Թոռնի՛կ, ինչ որ ասեմ՝ շուտով կատարիր, ընդամենը վեց օր է մնացել, առաջիկա երկուշաբթի առավոտ մեր գյուղի եկեղեցու սուրբ սեղանի առաջ, պատարագի դիմաց՝ Ավետարանով ու Խաչով քո պսակի խորհուրդը պիտի կատարվի: Դու հիմիկվանից լուր տուր նաղարաչի Մխոյին և գուռնաճի Մրդոյին. գիտես, որ մեր գյուղական հարսանիքն առանց այդ բաների համ չունի: Ա՛ն դու այժմ, Թոռնի՛կ, մեր մեծ էջը և երկու տիկ, գնա՛ շուտ Շահբաղի գյուղ, մեր ծանոթ բարեկամից տասներկու լիտր գինի առ և բեր, բայց նայիր, որ ջուր չխառնեն գինուն. շահբաղեցիք մեզ պես միամիտ չեն, քաղաքացիների մոտ լինելով՝ խարդախել են սովորել: Ի՞նչ անեն խեղճերը, երբ քաղաքացին տոկոս շատ է

բարդուճ, նրանք էլ ջուր են խառնում, երբ տոկոսի տեղը գինի են տալիս:

Տեղն եկավ, մի բան պատմեմ քեզ, որ զարմանաս: Ես մի օր, աշնան վերջին Վանա Առաջնորդարան գնացի, տեսա, որ քաղաքացիների և գյուղացիների դատաստան կար: Ես էլ նստեցի լսեցի: Այդ քաղաքացին մի պուլիկ գինի էր բերել, մի գավաթ լցրեց, տվեց առաջնորդին. «Հա՛յր սուրբ,- ասաց,- խմի՛ր, տե՛ս, սա գինի՞ է, թե՞ ջուր»: Համտես արեց առաջնորդը. «Յե՛րբա՛յր,- ասաց,- երևում է, որ բավական ջուր է խառնված»: Պատմեց վաշխառու քաղաքացին, թե՛ «Ես այսինչ գյուղացուն այսքան հազար դահեկան դրամ եմ տվել: Այդ պարտապան գյուղացին տոկոսի տեղը՝ երբեմն ալյուր և երբեմն գինի է բերում, և ես ընդունում եմ տոկոսի դիմաց: Այս տարի աշնանը հիսուն լիտր գինի բերեց, ես էլ միամտուլթյամբ լցրեցի կարասներս: Գիտե՛ս, Հա՛յր սուրբ, ես գինի սիրող մարդ եմ, անհամբեր սպասում եմ, որ քաղցուն եռից իջնի, նոր գինի խմեմ: Հաճախ գնում նայում եմ կարասներին, տեսնում, որ չեն եռում: Ի՞նչ բան է, ասում եմ, նոր գինին անպատճառ պետք է եռա: Հետո իմացա, թե ինչքան միամիտ եմ եղել, շինականն ինձ խաբել է և ջուր խառնել քաղցուին: Ես գրոց մարդ չեմ, բայց

իմացա, որ ջրախառն քաղցուն չի եռում: Ահա այս է իմ բողոքը, աղաչում եմ, Հա՛յր առաջնորդ, իմ դատաստանն ուղիղ տես»:

Կանչվեց գյուղացին, և նա առաջին անգամ այսպես խոսեց, թե՛ «Ես ջուր չեմ խառնել, կարող է ջուրն ինքնիրեն է խառնվել, որովհետև մեր հնձանի պատի տակից ջուր է անցնում: Այդ առվից ջրծակ ունեմ՝ հնձանը լվանալու համար: Պատահամբ բացվել է և ջուրը վազել է քաղցուի փոսի մեջ»: «Լավ ես պատմում, տղա՛ս, բայց շիտակ չես խոսում,- ասաց առաջնորդը,- եթե ջուրն ինքնիրեն է լցվել, անպատճառ ամբողջ քաղցուն ջուր կդառնար, բայց այս դեպքում ջուրը չափով է խառնվել: Բացի այս. եթե դու գիտեիր, որ այդպիսի փորձանք է եղել, ինչո՞ւ ջրախառն գինին բերիր քո աղային»:

«Հա՛յր սուրբ, հոգուդ մեռնեմ, մտիկ արա, որ մեղքս ազնվորեն խոստովանեմ և աղաչում եմ, որ դու էլ արդար դատաստան տեսնես»:

Անցյալ տարի ես հիսուն լիտր ալյուր բերի աղային: Ես արդեն ալյուրը կշռել էի: Գիտեք, որ գյուղերի կշեռքի քարերը բավական ծանր են քաղաքի քարերից: Մենք դիտմամբ ենք այդպես արել, գիտենալով, որ մեր բաները քաղաք գնալիս, քաղաքացիները միշտ պակաս են հանում: Իսկ մեր աղան, բակից մի անորոշ և կոշտ

քար բերեց դրեց կշեռքին, ինձ ասաց, թե՝ «Սա մի լիտր է»: Դու գիտես, միամիտ շինականները քաղաքացիներին շուտ են հավատում: Աղան սկսեց կշռել ալյուրը և ծանր-ծանր կշռեց, և դու տես, անիրավը կշռը հինգ լիտր պակաս բերեց: «Աստծու սիրուն,- ասի,- աղա՛, իմ ալյուրն ուղիղ հիսուն լիտր է»: «Ո՛չ, մի՞ թե ես քեզ խաբում եմ»: Այսպես ասաց և քառասունհինգ լիտր հաշվեց: Այս անխիղճ կողոպուտն ինձ սրտի ցավ եղավ, չկարողացա մոռանալ: Մտքիս դրի, որ սրա փոխը աղայից հանեմ, ուստի ջուր խառնեցի քաղցուին և լավ արեցի, որովհետև մեր աղան գինին ջրախառն է խմում, որ գլուխը չբռնի:

Ահա, Հա՛յր դատավոր, մեղքս ուղիղ սրտով խոստովանեցի, դու էլ ուղիղ մտքով դատաստան արա. ո՞վ է մեղավոր, ե՞ս, թե՞ աղան: Լոկ այն բանի համար եմ մեղավոր, որ ալյուրի խնդիրը Ձեր ատյանը չբերեցի, որովհետև փորձով գիտեմ, քաղաքացին ու շինականը, երբ դատաստանի գան, ո՞վ չգիտե, որ քաղաքացին կշահի դատը: Եվ սրա պատճառները դու լավ գիտես, Հա՛յր սուրբ, էլ ի՞նչ ասեմ»:

Տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, որ գյուղացիների աչքն սկսել է կամաց-կամաց բացվել: Բայց ես խրատ եմ տալիս քեզ, Թոռնի՛կ, գուցե դու էլ

այս պատմությունից օրինակ առնելով, հետևես ճարպիկ գյուղացուն, խարդախության դեմ խարդախությունն ի գործ դնես, ինչը շատ հակառակ է Աստծու պատվիրանին: Բացի դրանից. եթե մի անգամ խարդախել սովորես, այդուհետ դա քեզ արհեստ և ունակություն կլինի, այն ժամանակ դու ոչ միայն խարդախի դեմ նենգել կջանաս, այլ գուցե նաև անխարդախ մարդու նկատմամբ ևս այդպես վարվես: Ճիշտ է, որ դու գրկանք կրես և վնասվես, քան թե գրկես և վնաս տաս ուրիշին: Բայց ավելի լավ է, որ արթուն և աչալուրջ լինես, ո՛չ խաբես և ո՛չ խաբվես:

Գիտեմ, Թոռնի՛կ, ես քեզ խրատ եմ կարդում, իսկ դու մտքումդ մտածում ես՝ «Պապիկը մեր հարսանիքի խնդիրը մոռացավ, գինու խնդրից ուրիշ խնդիր հանեց, երկար-երկար ճառ է խոսում գլխիս»: Չէ՛, Թոռնիկ, չէ՛. ամուսնացողին շատ է խրատ պետք, չկարծես, թե ծեր Պապիկը ցնդել է, գուցե մոռացավ հարսանիքի մեծ խնդիրը: Ո՛չ. այսօր շաբաթ է, դու էլ գինին բերեցիր-հասցրեցիր, ուրեմն ամեն ինչ պատրաստ է:

Այս իրիկուն ազպանստում է, գյուղի բոլոր նորահաս կտրիճները պիտի հավաքվեն, նոր փեսային հետներն առնելով՝ պիտի խաղան,

խնդան, ուրախանան մինչև լույս: Առավոտ կիրակի է, գյուղի ամբողջ ժողովուրդը՝ մեծ ու փոքր, տղամարդ, կին, հարսներ, աղջիկներ, պառավներ, իրենց ձեռքով մեր հարսանեկան տունը պիտի լցվեն: Գյուղացիների հարսանիքն այսպես է լինում, դուռը բաց է, քաղաքացու հարսանիք չէ, որ դուռը փակեն, հարսնիք անեն՝ առաստաղի մկները չիմանան:

Այսօր երեկոյան հարսի հետևից պիտի գնանք՝ ես և գյուղի բոլոր մեծատունները: Հարսին պիտի բերենք, իջեցնենք տուն, քողը գլխին՝ թախտին պիտի նստի, հարսնաքույրն էլ մոտը՝ այնպես, իբրև պահապան հրեշտակն է:

Ժամհարի կոչնակ զարնելուն պես, լուսուժմութին եկեղեցի պիտի գնանք բոլոր հարևաններով միասին, դու այնպես պիտի հավատաս, թե եկեղեցին քեզ համար մի Ադամի դրախտ է, ուր իջել է Աստված, ձեր պսակը պիտի դնի և օրհնի քահանայի ձեռքով: Դու այնպես համարիր, թե մինչև այժմ կյանքումդ քնած էիր, հանկարծ զարթնում ես, քնաթաթախ աչքդ բացում, որ մի նոր Եվա-Շուշան ծաղիկ է բուսնել կողքիդ, ձեռք ձեռքի է տալիս քահանան ու ասում. «Առեալ զձեռն Եւայի տուեալ ի յաջն Ադամայ», և այլն, դու ևս մտքիդ մեջ խոսիր մեր մեծ Պապիկի պես: «Այս այժմ ոսկր յոս-

կերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմմէ», և այլն (Մաշտոց, Կանոն կուսի պսակին): Քահանան սկսում է ուրիշ խորհրդավոր աղոթքներ կարդալ ձեզ վրա, քո ու հարսի բերանից խոստումներ է առնում, իսկ ամբողջ ժողովուրդը վկա է լինում: Դուք աստվածադիր օրենքով այնպես պինդ կկապվեք իրար հետ, որ միայն մահը կբաժանի, աշխարհի ձեռքն անկարող է բաժանել: Հիսուս իր Ավետարանով ավելի ամրապնդեց Հայր Աստծու կապն ու ասաց. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 6, Մարկ. Ժ 9):

Պսակն ավարտելուց հետո դուրս կգանք եկեղեցուց: Այդ ժամանակ ուրախության պահը կգա, կսկսեն զուռնա-նաղարան, մունետիկի պես ձայն կտան աշխարհին, թե Թոռնիկը և Շուշանն ամուսնացան, այսօր նրանց հարսանյաց տոնն է, մեր կտրիճները կսկսեն չոր փետ խաղալ: Է՛, Թոռնի՛կ, հին պողպատե վահանի փոխարեն՝ ամեն մեկն իր ապան կամ կոռտիկը կբռնի մի ձեռքում, երկու-երկու իրար հետ կխաղան մինչև տուն: Դուան առաջ ոչխար կմորթեն, այդ մի մատաղ է փեսայի ու հարսի արևշատության համար:

Այստեղ միտքս է գալիս, Թոռնի՛կ, կպատմեմ քեզ, քառասուն տարի առաջ, երբ Հայրիկն

էր ամուսնանում, ես էլ, ինչպես սովորությունն է գյուղացիների, յուզով բաղարջ, փոխինդ և մի գառնուկ առա, գնացի հարսնիք: Երբ փեսա Հայրիկը եկեղեցուց տուն էր գնում, իսկույն մտածեցի գառնուկս մատաղ անել իր առաջ: Գառնուկը գետնին դրեցի, որ մորթեմ, Հայրիկը ձիու վրայից գոչեց՝ Մի՛ մորթեք, մի՛ մորթեք: Այդ օրը Պապիկը խմել, գլուխը կորցրել, ծուռ շինական էր դարձել: Քաշեցի դանակը, արյունը ցայտեց, բայց զղջացի. տեսա, որ Հայրիկի աչքը լցվեց, նա սկսեց մանկան պես լալ: Զիուց իջեցրին, տարան սենյակ, ուր սաստիկ հուզմունքով ու լացով՝ հարսանյաց տունն իր համար սգո տուն դարձավ: Այն օրվանից ես հասկացա, թե Հայրիկն ինչքան գուլթ ունի անասունների նկատմամբ: Ո՞վ էր լցրել նրա սիրտն այդքան գորովով: Ինքը խոստովանում է այս բանն իր խաչի ճառի մի ուղերձի մեջ, թե իր դաստիարակը հանգուցյալ հորեղբայր Խրիմյան խաչիկ աղան է, իսկ նրա սիրտն ո՞վ է լցրել... Ավետարանը, որ միշտ կարդում էր և ուրիշ գիրք չգիտեր:

Այժմ ճաշի ժամ է. հարսանիքի հարիսայի ժամանակը հասավ, հարսանքավորներն անոթի են, փռենք թաղիքները՝ թող նստեն. երեսա, մեծ ու պստիկ, հարուստ ու աղքատ, վերի-վա-

րի կարգ չկա, Պապիկի տունն է սա: Մեծ տանտիկին, ասա՛ հարիսան լցնեն մեծ-մեծ մաթրաթներով, բերեք դրեք սեղանին: Իմ սիրելի՛ դրացի բարեկամ, գյուղի ամբողջ ժողովուրդ, ծեր Պապիկը ձեզ ճառ կասի, տվեք ինձ մի բաժակ գինի, Պապիկը պարտական է խմել նախ այս բաժակը մեր երկրի տեր թագավորի կենացը, որ հոգա, կառավարի ու պահպանի իր հավատարիմ հպատակ ժողովրդին: Խմենք ապա մեր Թոռնիկ թագավորի կենացը, որ այսօր թագավոր է դարձել և վաղը մաճկալ պիտի լինի: Չմոռանանք նաև մեր Շուշան հարսի կենացը, որ այժմ թագուհի է, վաղը պիտի լինի Պապիկի տան տնարար և ժրագլուխ հարսը:

Մնաց ձեր կենացի բաժակը, սիրելի հարսանքավոր գյուղացիներ, շնորհակալ եմ, որ պատվեցիք Պապիկի տունը ու փառավորեցիք Թոռնիկիս հարսանիքը: Աղոթում եմ, որ հերթը ձեր գավակներին ու թոռներին լինի:

Այժմ ճաշկերույթն ավարտվեց, հարսանիքն էլ է վերջանում. դուրս եկեք բակ, բռնեք ձեր ալաճակեռնտը. տղերք, այդ մեր քարե մեծ սանդղը լիքը գինի լցրեք, մեծ կուռիկը վրան դրեք, թող սանդղի շուրջը հավաքվեն, պարեն, երգեն մեր գյուղի երիտասարդները:

Պապի՛կ, Պապի՛կ, աչքըդ լոյս,
Թոռնիկ թագուոր է եղեր.
Մամի՛կ, Մամի՛կ, աչքըդ լոյս,
Ծուշան քեզ հարս է եղեր:
Ապրիմ Ծուշան և Թոռնիկ,
Եւ ծերանան ի միասին.
Ծըլիմ-ծաղկիմ ինչպէս շուշան,
Զաւակներով և թոռներով:
Պապի տուն բարգաւաճի,
Թոռնիկ լինի մեծ տանուտէր.
Եւ ումրշատ լինի Պապիկ.
Տեսնայ թոռան իր ճէտեր:
Նահապետաց չափ թող ապրի,
Ծաղկիմ պիք իր ձիւնի պէս.
Հասնի մինչև խոր ծերութիւն,
Մեռնի՝ երթայ արքայութիւն:
Ուտենք վերջիմ իր հոգեճաշմ,
Յիշենք, օրհնենք իր յիշատակ:

Շատ ապրեք և դուք՝ իմ գլուղացի քաղաքավար եղբայրներ, հարսանիքի ճաշը կերաք, ի վերջո ուզում եք իմ հոգեճաշն է՞լ ուտել: Շատ իրավունք ունեք, մեր քաղաքացի գիտնականները կարծում են, որ շինականներն իմաստասիրել չգիտեն, որքա՞ն բնական է ձեր հոգեճաշի տենչանքը, որովհետև միշտ բնական

հետևանքն է հարսանիքի ճաշի: Հարսանիքի ճաշով մարդիկ աշխարհ են գալիս, հոգեճաշով՝ գնում: Աստված թող այնպես կամենա, ինչպես ձեր բարի ցանկությունն է:

Բայց Պապիկը ձեզ խրատ է տալիս, բարեկամներ, աշխատեցեք ձեր քրտինքով, որ ամեն օր ձեր ընտանեկան սեղանից լիապես ճաշ ուտեք, հարսանիքի ճաշը, մահվան հոգեճաշը փոր չեն կշտացնի: Թողեք հոգեճաշը խեղճ աղքատներին և մանավանդ քահանաներին, որոնց իրավունքը մոռանալով և չտալով, միշտ ձեր հոգեճաշին են սպասում: Ծիչտն ասած՝ մեր քահանաները մեռելների շնորհիվ են ավելի շատ ապրում, քան թե ողջերի:

Է՛, սիրելի՛ հարսանքավորներ, հարսանիքն ավարտվեց, ուտելու-խմելու բաներն էլ վերջացան, գինու տիկերը դատարկվեցին, տանտիկինը լուր է տալիս, թե տաշտի մեջ հաց չմնաց, և ամանի մեջ՝ յուղ: Միայն հարիսայի պղնձի մեջ՝ տակն է մնացել, այն էլ աղքատների բաժինն է:

Այժմ բոլորդ քաղաքավարությամբ եկեք, ծերունի Պապիկի ձեռքը համբուրեցեք, Թոռնիկիս ու Շուշանին արևշատություն մաղթեցեք և «Մնաս բարով» ասելով՝ գնացեք ձեր տները: Գիտեմ, անքուն մնացիք և շատ էլ խմեցիք, տեսեք՝ ահագին սանդի գինին պարպեցիք: Հար-

ասնիքից գնացողին ասում են, թե խումհար է լինում: Այս գիշեր հանգիստ քնեցեք, առավոտ լուսանալուն պես դեպի դա՛շտ, դեպի դա՛շտ:

Մտածեցե՛ք, եթե չաշխատեք, վարուցան չանեք և դաշտի արդյունքը չբերեք տուն, ձեր հասուն զավակներին չեք կարողանա պսակել. մի՞թե դատարկ տանը հարսանիք կլինի: Աղոթում է Պապիկը, որ Աստված ձեր աշխատանքն արդյունավորի և ձեր տները բարիքով լցնի, որ դուք ևս հարսանիքներ անեք և ձեր որդիների և թոռների թագն ու պսակը տեսնեք, ուրախանաք:

Ահա, Թոռնի՛կ, հարսանքավորները ցրվեցին, մնացինք ես, դու, մամիկը և նորեկ հարս Շուշանը: Մեր ընտանեկան փոքրիկ թվին մի հատիկ ավելացավ: Աստված այդ մի հատիկն իբրև մի ցորենահատ ցանեց մեր ընտանեկան անդաստանում, դու պիտի տեսնես, Թոռնի՛կ, թե այդ մի հատիկ մայր սերմից որքան մանկահատիկներ պիտի բուսնեն: Մի օր կտեսնես, որ տունը լցված է լաճերով, աղջիկներով, որ թռչնի ձագերի պես ճովողուն ձայն հանելով, բերանները բացած պիտի աղաղակեն՝ Հայրի՛կ, հա՛ց ենք ուզում, հա՛ց: Ճիշտ է, որ մարդիկ հավատում են ու ասում, թե՝ Արարիչ Տերն իր ստեղծածի գրսմաթը տալիս է: Այո՛, այդպես ենք հավատում, բայց Տեր Աստված գրսմաթը

և հացը նախապես պատրաստեց և ապա մարդուն ստեղծեց: Այդ գրսմաթն այս մեր բնական երկիրն ու հողն է, որ պատվիրեց մշակել ու պահել: Ուստի առանց մշակելու, առանց աշխատանքի, առանց վարուցանի մարդու համար ո՛չ հաց կա, և ո՛չ գրսմաթ:

Պատրաստվիր ուրեմն, Թոռնի՛կ, աշնան գութանի ժամանակը չանցնի, վաղն առավոտ պիտի գնանք դաշտ, սկսենք մեր աշխատանքը: Այժմ դու հանիր այդ փեսայուլթյան չուխա լաթերը, հագիր մշակի շալե շալվարը: Շուշանն էլ թող իր հարսանեկան զարդերը հանի, մամիկի հրամանով ավելը ձեռքն առնի, տունը հարդարի, ավլի, մաքրի, ամեն բան իր տեղը դնելով՝ կարգավորի: Այսպես՝ Թոռնիկը դաշտում, Շուշանը տանը, եթե աշխատեն, Աստված հաց կտա:



ԻՔ. ՊԱՊԻԿԸ ՊԱՍԿԱԳՐՈՒՄ Է ԴԱՇՏՈՒՄ

Սիրելի՛ թոռնիկ, ես նորից և կրկին քեզ պիտի պսակեմ. դու մի՛ կարծիր, թե եկեղեցու կամ քահանայի պսակը քեզ բավական է: Այո՛, հոգեպես և Աստծու օրենքով բավական և շատ է: Բայց եթե Պապիկն այդ պսակի վրա իր պսակը չդնի, դու անոթի կմեռնես: Ահա առավոտը բացվեց. հրաման տուր մշակներին, թող գութան սարքեն, տանեն գյուղի մոտի խոզան արտը. պետք է այժմվանից վարենք, պարարտացնենք արտը և գարնանը բանջարեղենի պարտեզ դարձնենք:

Լծեցե՛ք գութանը: Դու հիմա տե՛ս, թոռնի՛կ, թե ի՛նչպես եմ պսակելու քեզ: Գնա՛, նախ գոմշուկների և եզների ճակատները համբուրիր, արի գութանի մաճի մոտ, խոնարհվիր գետինն, մայրենի հողը համբուրիր: Ձեռքս մաճին եմ դրել, համբուրիր Պապիկի ձեռքն ու մաճը, ահա քառասուն տարվա մաճկալ Պապիկը այսօր քեզ

է հանձնում մաճկալության վսեմագուշն պաշտոնը, որ Տեր Աստված Աղամին՝ մեր մեծ Պապիկին տվեց, որ մշակի երկիրը և պահի:

Ցորենաբույսից հյուսված մի սիրուն, գեղեցիկ, բոլորակ պսակ կշինեմ իմ ձեռքով քեզ համար, բե՛ր գլուխդ, Թոռնի՛կ, դնեմ այս իմ պսակը: Այս պսակը Պապիկիդ պսակն ու հիշատակն է, երբեք չհանես գլխիցդ մինչև մահվանդ օրը: Երբ դու էլ ծերանաս Պապիկի պես, այդ պսակը անդրանիկ որդուդ գլխին դիր: Եվ այսպես որդուց որդի թող շարունակվի: Այդ պսակի խորհուրդը բացատրեմ քեզ, որ լավ ըմբռնես և անեղձ պահես այս օրվա հիշատակը:

Ազնի՛վ Թոռնիկ, իմ խորհրդավոր պսակի նշանակությունն այս է. քահանան քեզ պսակում է հողի հետ, գութանի հետ, դաշտի մշակության հետ: Ինչպես Շուշանի հետ կապեց քեզ քահանան, և դու տեր ես մինչև մահ, չես կարող իրեն թողնել, այնպես էլ Պապիկը քեզ պսակելով կապում է մայրենի երկրի հետ, որ մեր հայրենի Պապենական սեփականությունն է, որ հավիտյան չպետք է թողնես: Աղամն ասել է, և մարդիկ էլ ասում են, թե կինը մարդու կյանքն է: Մի՞թե հողն էլ մարդու կյանքը չէ. մարդիկ աշխարհիս վրա հացով են ապրում: Շուշանը քեզ զավակներ կբերի, հողն էլ ձեզ

հաց պիտի տա, դաշտում արածող կովն ու ոչխարը ձեզ առատ-առատ կաթ պիտի տան, կաթից յուղ ու պանիր պիտի շինեք: Այս բոլոր բարիքների վայելումը հողից չէ՞:

Այժմ, Թոռնի՛կ, ասա՛ մշակներին՝ առնեն գութանը և տավարները, դառնանք գնանք տուն, մայրիկիդ և Շուշանին պետք է հայտնեմ դաշտի պսակի խորհուրդը:

Լսեցե՛ք, որ ասեմ ձեզ, բարի՛ տանտիկին և Շուշա՛ն: Ես այսօր նոր փեսա Թոռնիկին տարա դաշտ, գութանը լծել տվեցի, մաճը Թոռնիկի ձեռքը տվի, ձեռքս գլխին դնելով նահապետական օրհնություն կարդացի և իրեն կրկին անգամ հողագործության հետ պսակեցի, հողի և գութանի հետ կապեցի: Գիտե՞ք դուք, որ Պապիկի պսակն անքակտելի պետք է լինի: Թոռնիկն այժմ երկու կին ունի, իմացե՛ք, մի կինը Շուշանն է, որի հետ պսակվեց սուրբ ամուսնությունամբ, մի կինն էլ հայրենատուր ժառանգություն հողն է, որի հետ ես կապեցի Հայր Աբրահամի օրհնությամբ: Շուշանը զավակներ պիտի բերի Թոռնիկի համար, հողն էլ հաց պիտի տա ամբողջ ընտանիքի համար: Աղոթում եմ, որ Աստված պահի Շուշանին և շա՛տ ապրի, բայց Շուշանը մահկանացու է, եթե մեռնի, Թոռնիկը մի Շուշան էլ կգտնի: Իսկ եթե հողը մեռնի,

այն ժամանակ Պապիկի տան ամբողջ ընտանիքը միասին կմահանա: Իսկ ի՞նչպես է մեռնում հողը, որ Ադամից մինչև այսօր կա ու կմնա անմահ: Ասեմ ձեզ, թե հողն ինչպես է մեռնում. այն անբախտ օրը, երբ Թոռնիկը, ձեռք քաշելով մաճից, հողագործությունը չչարունակի, կամ հարստանալով մեծամտանա, այդուհետ ամոթ համարի գյուղում կամ գյուղական միջավայրում ապրելը, թողնի գյուղն ու հողը, գնա քաղաքացի լինի: Եվ կամ եթե դժբախտ օրեր հասնեն իր վրա, երբ հուսալով, թե շատ հողեր ունի, պարտք անելով իրար վրա բարդի, պարտատերը հողերը վերցնի. ո՛հ, Թոռնիկն անհող կմնա:

Ահա այդ օրը հողը Թոռնիկի համար կմեռնի, գրավողի համար կենդանի կմնա: Այդ օրը, այո՛, Պապիկի տան ճրագը կմարի, տանտեր Թոռնիկը վարձու մշակ կդառնա: Ավա՛ղ, Պապիկի հարսը, նազելի Շուշանը, պիտի գնա հացթուխ լինի գյուղում, երեկոյան մի քանի հաց գոգնոցի մեջ դնելով՝ բերի իր ճփկներին: Թոռնիկի՛ մայր, բարի տանտիկին, դու Պապիկից հետո մեռիր, որ չտեսնես այդ օրը:

Չասե՛ս, Թոռնի՛կ. «Ա՛հ, Պապի՛կ, ի՞նչ չար գուշակություն ես անում Թոռնիկիդ համար, բերանդ բարի բաց»: Ո՛հ, Թոռնի՛կ, Աստված

չանի, որ գուշակությունը կատարվի: Ես աղոթում եմ, որ դուք այդ սև օրը չտեսնեք, դրա համար այդ սև օրվա տխուր կյանքի պատկերը նկարագրեցի ձեր աչքի առաջ: Որպեսզի տեսնես ու հիշես Պապիկիդ հեռատես գուշակությունը, ամբողջ կարողությունդ աշխատես հողը ձեռքիցդ բաց չթողնել: Հողը ոչ միայն քեզ պետք է այն բանի համար, որ հաց է տալիս քեզ, աշխարհիս վրա ապրում ես, այլև նրա համար (Աստված շատ արև տա քեզ), որ երբ մեռնես՝ գերեզմանիդ համար էլ երկու կանգուն հող է պետք: Դու չգիտե՞ս, մարդիկ գերեզմանի հողի համար էլ են կովում. վա՛յ նրան, որ մեռնում է և թաղվելու տեղ չունի, որովհետև գերեզմանի հողը ևս մարդու համար մի սեփական իրավունք է: Ասել կուզի, Թոռնի՛կ, մարդ իր ծնված օրվանից հողով է ապրում, և երբ մեռնում է, դարձյալ հող է պետք, որ նրա տակ թաղվի:

Այսպես, Թոռնի՛կ. հողը պետք է թե՛ կյանքի օրերին և թե՛ մահվանից հետո, դրա համար Պապիկը քեզ հողի հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես հողը, չթողնես, որ ուրիշները ձեռքիցդ հափշտակեն, դու անհող մնաս, ստրուկ լինես, գնաս ուրիշի դռանը վարձկան մշակ դառնաս, և այն ժամանակ ձեր վրա կատարվի Պապիկի չար գուշակությունը, և դու ի միտ

բերելով հիշես. «Ավա՛ղ, ես տանտեր էի, նահապետ Պապիկիս խրատներին մտիկ չարեցի, այժմ անառակ որդու պես վարձկան մշակ դարձա, թողնելով իմ ոչխարների հոտը, ուրիշների նախիրն եմ արածեցնում և շաբաթը մի անգամ դռնեդուռ շրջելով նախրահաց ժողովում»:

Այո՛, Թոռնի՛կ, երբ գյուղի տանուտիրոջ բախտի անիվը շուռ գա, այնքան կնվաստանա, որ նույն գյուղում նախորդը կլինի: Դու մի կարծիր, թե այդ վիճակը շատ դառնագույն մի վիճակ է, որովհետև գյուղի նախորդը վարձավոր մի մշակ է, շալակներով հաց է տանում իր տուն, կթան կով ունի, գոնե մի քանի ոչխար, այժ ունի, և իր ընտանիքը լիությամբ է ապրում:

Բայց երբ այդ անկյալ տանուտիրոջ ձեռքը այդ նախորդությունն էլ չլինի, նա իր նախկին վիճակը հիշելով կասի. «Ես տանուտեր էի, ի՞նչպես կարող եմ վարձկան մշակ լինել գյուղում, լավ է՝ թողնեմ գյուղը, գնամ քաղաք և իբրև անձանոթ մի չքավոր մարդ, խառնվեմ փողոցի աղքատներին՝ մուրացկան լինեմ: Իսկ եթե իբրև հարստությունից զրկված՝ հաջողվի Վիճակի առաջնորդից մի վկայական առնել, այդ ինձ համար մի մեծ բախտավորություն կլինի. կգնամ աշխարհից աշխարհ, եկեղեցիներին, հարուստներին կղիմեմ և այսպես ժողովք

անելով՝ կվերագառնամ-կգամ պարտքս կտամ և կպահեմ իմ ընտանիքը»:

Ահա, Թոռնի՛կ, դժնդակ և դառնագույն վիճակն այս է, երբ տանտերը մուրացկանության է դիմում, կարծելով, թե այդ անարգ և անպատիվ մուրողությամբ կկարողանա բավական գումար հայթայթել ու վերստին շենացնել իր կործանված տունը: Դու հավատո՞ւմ ես, թե հողագործի կործանված տունը մուրացկանությամբ կվերականգնվի: Ամբողջ կյանքումս ես այդպիսի բան չտեսա, որովհետև գյուղացի տանտիրոջ տան հաստատուն հիմքը հողագործությունն է: Երբ տանտերը հողն ու հողի վաստակը թողնի, նա արդեն կործանված է և հավիտյան կանգնել չունի, նա չքավորությամբ պիտի ապրի մինչև մեռնի:

Է՛, սիրելի՛ Թոռնիկ, բավական է, ավարտենք դաշտի պսակը և դաշտի դասերս: Ես պետք է պատմեմ նաև գյուղի երեցին և գյուղացիներին, թող աշխարհն իմանա, որ Արճակի Պապիկն այսպիսի մի տարօրինակ բան է արել. իր նորափեսա Թոռնիկին տարել է դաշտ, հողի ու գուլթանի վրա պսակել. մարդ չգիտեր՝ ի՞նչ պսակ է այդ, որ առանց քահանայի, առանց Խաչի և Ավետարանի ու ժողովրդի վկայության՝ դաշտի մեջ կատարվել է:

Թող մեր գյուղացիներն այդպես մտածեն, Թոռնի՛կ, բավական է, որ դու լավ հասկացար այս պսակի խորհուրդը, ես կմեռնեմ, դու ողջ կմնաս, կտեսնես, հետո գյուղացին էլ կհասկանա և ողորմի կտա Պապիկի հոգուն:



ԻԳ. ՄԵՌԵԼՈՑ ԴԱՇՏ ԵՎ ԳԵՐԵՉՍԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Մի պահ թողնենք, Թոռնի՛կ, մեր կենդանի դաշտը, արի գնանք մեռյալների դաշտին այցելության: Գիտե՞ս, մահը կամաց-կամաց մոտենում է Պապիկին: Ուզում եմ վերջին անգամ, քանի կենդանի եմ, ոտքովս գնամ-չըլեմ մեռյալների ննջարանում, մինչև այն օրը, երբ ինձ նաչի վրա դրած «Բանդ Աստուած» ասելով բերեն-դնեն գերեզման, ես էլ հանգչեմ մեր պապերի ծոցում:

Գերեզմաններն էլ մեզ համար մի խոսուն դասարան են. խաչքարերն ու մեռյալների հիշատակները դեռ խոսում են մեզ հետ: Տեսնենք, թե հին և նոր ժամանակներում ի՞նչ մարդիկ են ծնվել, աշխարհ եկել, ապրել, գործել են՝ թե՛ բարի, թե՛ չար և դարձյալ թողել են այս աշխարհը, արևն ու կյանքը, տուն և ընտանիք, մտել-ծածկվել են մեռելոց այս մուկթ աշխարհում: Ամեն քրիստոնյայի գերեզմանին մի-մի

խաչքար է կանգնեցված, վրան գրել են մեռնողի անունն ու տարիները, որ տեսնողը կարգա և ողորմի տա:

Կարդանք ուրեմն, Թոռնի՛կ, այդ հին ու նոր հիշատակարանները, տեսնենք, թե ինչ հարուստ և այլ աշխատավոր և նշանավոր մարդիկ են ելել գյուղի ժողովրդի ծոցից, որոնց անցած կյանքը առաքինության դաս է մեզ համար: Գիտե՞ս, կան այնպիսի հանգուցյալներ, որ մինչև աշխարհի վերջը կխոսեն մեզ հետ: Գրքերով կխոսեն, անմահ հիշատակներով կխոսեն, գերեզմանի քարերով կխոսեն:

Տեսա՞ր, Թոռնի՛կ, կարդա՛ այս տապանագիրը:

«Սա է տապանը Արճակցի տանուտեր Օհանջանի, որ ութսուն տարի ապրեց, ո՛չ գյուղից, ո՛չ տնից հեռացավ, երբեք չթողեց ձեռքից գուլթանի մաճը մինչև մահվան օրը: Նա նորագեց մեր գյուղի փլված եկեղեցին և մի արտ հիշատակ տվեց եկեղեցուն:

Ասացե՛ք. Աստված ողորմի իր հոգուն»:

Կարդա՛ սրա կողքի խաչքարը:

«Ես՝ Միրզոյենց Մարխասը, որ առաջ աղքատ ու վարձկան մշակ էի, կարոտ մի թիզ հողի, աշխատեցի, և Աստված հաջողեց, իմ արդար վաստակով բավական հողեր գնեցի, հարստացա

և տանտեր դարձա, կտակեցի զավակներիս, որ տարվա մեռելոց հինգ տաղավար օրերին մատաղ անելով աղքատներին կերակուր բաժանեն:

Ասացե՛ք. Աստված ողորմի Մարխասի հոգուն»:

Գնանք, Թոռնի՛կ, այն մեծ խաչքարի գրերը կարդա՛:

«Այս է հանգստարանը մեծ տանուտեր Աղամի, որ շատ հողեր ուներ, երեք փոխով գուլթան էր լծում, քառասուն մշակ ուներ, մեր գյուղի մեծ նահապետական տունն էր, իր ընտանիքի թիվը մինչև յոթանասունի էր հասնում: Երբ հոգեճաշ էր տալիս կամ մատաղ անում, հազար-հազար մարդ էր կերակրում: Նա շատ առաքինի մարդ էր, մեռավ հարյուր տարեկան, բոլոր գյուղացիները լացեցին նրա մահվան ժամանակ, նա կտակ թողեց, որ Վարագի և Արճակի վանքերին իր կալվածքներից չորս արտ տան և իր ձիթահանից գյուղի եկեղեցուն շարունակ լուսավորության ձեթ տան:

Ով հանդիպի՝ ասացե՛ք. Աստված ողորմի մեծ տանուտեր Աղամի հոգուն»:

Մի՛ անցնիր, մոտի այդ փոքրիկ խաչքարի գրերը կարդա՛:

«Ես եմ նաղարաչի Մարդոն: Այս խաչքարի տակ հանգիստ պառկել եմ: Ամբողջ կյանքս ու-

ըխառնվածք անցկացրի. ձմեռը հարսանիքներով և ամառը պահեց դնելով: Ամեն գարնան գալիս էի Արճակ գյուղում պահեց դնում, առատ սեխ ու ձմերուկ էի հանում, ցորենի, գարու, յուղի, պանրի, ժաժիկի հետ էի փոխում, տունս առատով լցնում: Աշխատանքով շատ երջանիկ ապրեցի, երբ տեսա, որ պիտի մեռնեմ, կտակ արեցի, որ ինձ քաղաքում չթաղեն, այլ տանեն Արճակ գյուղում թաղեն: Աստված շեն պահի այս գյուղը, որ շեն պահեց իմ տունը:

Ասացե՛ք. Աստված ողորմի նազարաչի Մարգոյի հոգուն»:

Կարդա՛, Թոռնի՛կ, դրա կողքի մյուս տապա-նաքարը, որի վրա հավի պատկեր է տեսնվում:

«Ես Մարկոսն եմ հավաքույծ: Գյուղացի էի, բայց հող չունեի, մտածեցի թե ի՛նչ անեմ, որ ապրեմ: Մի գիշեր երազիս մեջ շատ հավեր ու հավկիթներ տեսա, ասացի՝ սա իմ բախտն է: Առավոտյան ելա երազիս մեկնությունը կատարեցի: Առաջ մի փոքրիկ հավանոց շինեցի, տասը հատ հավ թուխս դրեցի, մի քանի օրում հավերիս թիվը հասավ մինչև երեք հարյուրի: Միշտ հավ ու հավկիթ էի ծախում գյուղի հյուրերին և քաղաքաբնակներին: Ես և իմ ընտանիքը լավ ապրեցինք հավի մսով և ձվածեղով: Աղվեսների և կուզերի համար, որ շատ թշնամի են հավերին,

ես որոգայթ շինեցի, ամեն տարի ձմռանը շատ աղվես և կուզ բռնելով՝ նրանց մորթիներից բավական շահույթ էի ստանում: Հավաքուծության շնորհիվ որսորդություն էլ սովորեցի: Վերջում՝ մեռնելուս ժամանակ, կտակեցի զավակներս, որ հավանոցն ու հավերը երբեք ձեռքից չթողնեն, որ իրենց միակ հացն ու ապրուստն է:

Ասացե՛ք. Աստված ողորմի հավաքույծ Մարկոսի հոգուն»:

Մի քիչ հեռու երևում է մի գերեզմանաքար, որի գրերը մամռոտած են, Թոռնի՛կ, և վրան մեղվի փեթակի նշան կա. կարդա՛, տեսնենք ով է:

«Ես մեղվապահ մշակ Պետոն եմ: Փոքրիկ տնակից բացի ոչինչ չունեի: Մտածեցի՝մտածեցի, գնացի պարտք արեցի, հինգ փեթակ գնեցի, մի փոքրիկ մեղվանոց շինեցի: Աստված գործս հաջողեց, մեղուներս բազմացան, մինչև հարյուր փեթակ եղավ, որ շատ առատ մեղր ու մոմ էին տալիս: Քաղաք տանելով ե՛լ դրամով էի վաճառում ե՛լ թե գյուղի մեջ հացի ու յուղի հետ փոխանակում, ընտանիքս մեղրով ու կարագով էի պահում: Մեռնելուս օրը խրատ տվեցի անդրանիկ որդուս, որ չհեռանա մեղվանոցի դռնից և մեծ խնամքով պահպանի մեղուներին, որ մեր ժրաջան-անվարձ մշակներն են: Կտակ արեցի նաև, որ ամեն կիրակի և պատարագի

օրերին գյուղի եկեղեցու սեղանին մոմ վառեն, և քահանան հիշի ինձ իր աղոթքով:

Ասացե՛ք. Աստված ողորմի մեղվապան Պետոյի հոգուն»:

Սրա մոտ մի անտաշ խաչքար կա, կարգա՛, տեսնենք, թե ո՞ւմ գերեզմանն է:

«Ես նախորդ Նազարն եմ: Երեսուն տարի նախորդություն արեցի, շեն մնա Արճակ գյուղը, երկու հազար տավար էր իմ նախիրը, ամեն շաբաթագլուխ շալակ-շալակ նախրահաց էի ժողովում, տանս մառանը հացով էր լցվում, մեր տանտիկինը խմոր չէր շաղում, հաց չէր թխում: Մեր գյուղացիները կարծում են, թե նախորդությունը մի բան չէ: Ո՛չ, նախորդությունն էլ գյուղական մի աշխատանք է: Ես երբեք գանգատ չեմ ունեցել՝ մինչև մահվանս օրը հացի կարոտություն չքաշեցի:

Ասացե՛ք. Աստված ողորմի նախորդ Նազարի հոգուն»:

Թոռնի՛կ, դու լսե՞լ ես, գյուղացիները միշտ գանգատվում են ու ասում, թե՛ գյուղի գզիրները շատ անիծված և հայհոյիչ մարդիկ են: Բայց ես լսել եմ, որ ժամանակին մեր գյուղում մի բարի գզիր է եղել, շատ բարեսեր ու խոհեմ, երբեք զրկանքների չէր ենթարկում, հյուրընկալության կարգը ճշտությամբ պահում էր

և միշտ ջանում աղքատներին խնայել: Մինչև այսօր գյուղացին այդ բարի գզիրի անունը հիշում է: Ահավասիկ նրա գերեզմանը. զարմանք է, Թոռնի՛կ, Արճակի գզիրն էլ իր գերեզմանի խաչքարն ու հիշատակն ունի, կարգա՛:

«Ես Արճակ շեն գյուղի գզիր Կազոն եմ: Ո՛հ, որքան հանգիստ պառկած եմ հողի տակ, ականջներս դնջացել են գյուղացիների հայհոյանքից, գուր և անիրավ անեծքից, հապա այն խստաբարո, անհամբեր, պահանջող հյուրերի ձեռքից ինչ քաշեցի, ծեծ կերա, չարչարվեցի, գզվեցի բամբակի պես, սրա համար անունս գզիր են դրել, կարծելով, թե ես եմ ուրիշներին գզում: Աստված հոգիս առավ, մեռա, ազատվեցի: Աղքատ ապրեցի, աղքատ մեռա, ոչինչ չունեմ կտակելու, միայն խրատ եմ տալիս ձեզ, գյուղացի աղքատներ, գյուղի գզիր մի՛ եղեք, գնացեք հողագործության, մշակ եղեք, հազար անգամ լավ է հողի մշակը, քան գյուղի գզիրը, որովհետև գյուղի գզիրությունը չար զբաղմունք է:

Ասացե՛ք. Աստված ողորմի գզիր Կազոյի հոգուն»:

Թողնենք այս փոքրիկ մարդկանց փոքրիկ խաչքարերը, թեև փոքրիկ կարծվածներն էլ իրենց չափով նշանակություն ունեն: Շրջենք, Թոռնի՛կ, գտնենք այն մեծ խաչքարերը, որոնց

տակ հանգչում են այնպիսի հոգիներ, որ մեր գյուղի փառքն ու պատիվն են եղել, ժողովուրդը չի մոռանում, հիշում է նրանց բարերարությունն ու հիշատակը:

Գյուղից բավական հեռու մի բլրակ է երևում, տեսնո՞ւմ ես, Թոռնի՛կ, այդ բլրի գագաթին մի մեծ խաչքար կա. այդտեղ է մեծ-մեծ կտիր ոչ-խարների տեր հովիվ Հակոյի գերեզմանը: Այդ բլրակից մի աղբյուր է բխում, Հակոյի աղբյուր են ասում, ուր Հակոյի կթան ոչխարներն էին գալիս պեր տալու:

Թեպետ հողագործ տանտեր չէր մեր գյուղում Հակոն, բայց իբրև հովիվ, խաչնարած, մեծ տանտեր էր համարվում, որովհետև չորս կտիր ոչխար ուներ, ամեն մի կտիրը հազար հատ էր: Ասում էին՝ քառասուն հոգի վարձկան հովիվ և գառնարած ուներ, բոլորին էլ ամուսնացրել էր: Աղջիկների թիվը չգիտեմ, իր տունը թոռներով լցված էր: Ինքը շատ գթասեր, առատաձեռն մարդ էր. իր օրհնյալ տունն աղքատների ապավեն էր: Ոչխարների կտիրի ժամանակ բուրդ էր բաժանում աղքատներին. Հակոն հովիվ Հովբի պես կարող էր ասել՝ աղքատների մերկացած թիկունքներն իմ բրդով էին տաքանում: Նմանապես կաթից, պանրից, յուղից բաժին էր հանում գյուղացի կարոտյալ ընտանիքներին: Հո-

վիվ Հակոն առանց տարբերություն ղնելու էր բաժանում, նա չէր առանձնացնում իր շրջապատում եղածներին օտար ազգատոհմերի կարոտյալներից. ով որ դիմեր, ով որ խնդրեր՝ նա տալիս էր և խտրականություն չէր դնում: Սրա համար իր անունը և համբավը շատ մեծ էին նույնիսկ դրսի պայազատ քուրդ ցեղապետերի մոտ: Մի անգամ Պարսից կողմի թշնամի քրդերը զարկեցին Հակոյի ոչխարների կեսը տարան: Մեր Հակոն Աբրահամ նահապետի պես՝ առավ իր կտրիճ որդիներին և գյուղի քաջ տղամարդկանց, գնաց, կռվեց և իրենից թալանվածը ետ բերեց:

Հովվական պարզ կենցաղը շատ երկար կյանք տվեց մեր նահապետ Հակոյին, նա ապրեց մինչև հարյուր քսան տարի: Իր կյանքի վերջում միայն նա հիվանդացավ, ինքն զգաց և իմացավ, որ պիտի մեռնի, կանչեց-ժողովեց իր մահճի շուրջը բոլոր զավակներին, թոռներին և ընտանիքը, նահապետական բերանով օրհնեց ամենքին, համբուրեց իր հովվական ցուպն ու փողը, որ կողքին էին դրված, դողդոջուն ձեռքով առավ ու տվեց Ապրսամ անդրանիկ որդուն: «Քեզ եմ հանձնում, որդյա՛կ,- ասաց,- իմ հովվական և տանուտերական իրավունքը, կառավարիր ինչպես ես կառավա-

րեցի, պահպանիր մեր տունն ու ոչխարի հոտերը, մի՛ մոռացիր գթուլթյունը և կարեկցությունը, ոչխարների արդյունքից միշտ բաժին հանիր գյուղի աղքատ և չքավոր-կարոտյալներին, իբրև անջնջելի կտակ ավանդում եմ քեզ, որդյա՛կ, որ տարվա հինգ տաղավար մեռելոց օրերին քսան ոչխար պետք է մատաղ անեք, աղքատներին լիապես հաց և կերակուր տաք, գյուղի քահանան իր պատարագի մեջ բոլոր մեռյալների հոգիների հետ հիշի նաև հովիվ Հակոյի հոգին: Որդյա՛կ իմ Ապրսամ, օրհնելով կապարեմ քեզ՝ եղբայրներիդ սիրիք, ընտանիքը սիրիք, ոչխարների հոտեր սիրիք, որ մեր հարստության գանձերն են: Աշխատիր, որ հովվական այդ մեծ նահապետական անունը չվերանա հովիվ Հակոյի տնից: Այլևս չեմ կարողանում խոսել, հրեշտակն եկավ, հոգիս պետք է տամ»,- ասաց ու ավանդեց հոգին: Բոլոր գյուղացիները լացին ու սգացին նրա մահվան վրա, և ինչպես ինքն էր կտակել՝ հանգուցյալի մարմինը թաղեցին այս բլրի վրա:

Պատմում են, թե Հակոյի թաղման օրը գյուղի ամբողջ ժողովուրդը լցվել էր այս բլրի վրա. հովիվները Հակոյի երկու հագար կթան ոչխարները բերել էին պերատեղ: Ապրսամ անդրանիկ որդին հրամայում է, որ այդ օրը ոչխարի ամբողջ կա-

թը ժողովրդին և աղքատներին տան: Գերեզմանի մոտ վանեցիները տանում և գինի են բաժանում աղքատներին, իսկ Հակոյի գերեզմանի վրա գինու տեղ կաթն էր. ամբողջ ժողովուրդը փայտե կոտիկով նոր կթած փրփրուն կաթ խմեց, աղքատներն էլ իրենց ամանները լցրին և ողորմի տալով օրհնեցին հանգուցյալի գերեզմանը: Իսկ գիտե՞ս ինչ արին հովիվները, Թոռնի՛կ. խոսում են, թե հովիվներն էլ մեկ-մեկ մեծ ամանով կաթ բերեցին, թափեցին Հակոյի գերեզմանի վրա: Ի՞նչ քաղցր և խորհրդավոր է այս բանը. մեծ տանտեր Հակո հովիվը կաթ կերավ, և երբ մեռավ, իր գերեզմանն էլ կաթ ծծեց:

Ապրսամ որդին՝ մի մեծ խաչքար կանգնեցրեց իր հոր գերեզմանի վրա, որին գրված է իր բարի հիշատակը, կարդա՛, Թոռնի՛կ:

«Այս է տապան մեծ տանտեր հովիվ Հակոյի, որ ինչպես կտակել էր ինքը՝ այս բլրի վրա թաղեցին: Իր հիշատակն օրհնյալ լինի:

Ասացե՛ք. Աստված ողորմի մեծ տանտեր հովիվ Հակոյի հոգուն»:

Դառնանք, Թոռնի՛կ, այստեղից գնանք Աստվածածնի մեր վանքը, որի Տաճարն է միայն ողջ մնացել: Ասում են, թե Տաճարի դրսի պատի տակ, ուր մի աղբյուր է բխում Տաճարի հիմքից, իսկ աղբյուրի մոտ մի հաստաբուն ուռենի

ծառ է տնկված, մի անհիշատակ գերեզման կա, առանց խաչքարի, և այդ գերեզմանը աշուղ Մուշոյինն է: Աշուղներն աշխարհիս վրա աննշան համարված աղքատ մարդիկ են, ո՞վ պիտի նրանց մասին հոգա, կամ հիշատակը պատվի, մի խաչքար կանգնեցնի նրանց գերեզմանի վրա: Բայց երջանիկ է աշուղ Մուշոն, որովհետև իր գերեզմանաքարը Աստվածածնի փոքրիկ տաճարն է, որի հովանու ներքո հանգչում է արդար հոգի Մուշոն:

Ինչպես լսել եմ մեր գյուղի ծերունիների պատմությունից, կպատմեմ քեզ, Թոռնի՛կ, Մուշոյի կյանքն ու վախճանը, և դու լավ ուշադիր եղիր, տե՛ս որքան խորհրդավոր և հետաքրքրական է:

Աշուղ Մուշոն բնիկ մեր գյուղի գավակ է, աշուղ Չիչակի աշակերտն է եղել, որի գերեզմանը ցույց են տալիս այսօր Խառակոնիս գյուղի սուրբ Թորոս եկեղեցու բարձունքի վրա:

Գիտե՞ս, Թոռնի՛կ, աշուղներն ազատ կյանք սիրող մարդիկ են, տնակյաց չեն: Իրավ է, որ շատ սիրահարական երգեր ունեն, բայց իրենք ամուսնանալ շատ չեն սիրում: Կան աշուղներ էլ, որ ավելի բարոյական խրատներ ունեն և գեղեցիկ բանաստեղծական գովասանքներ են հորինում սրբերի վրա: Մեր աշուղ Մուշոն այս կարգից էր:

Հիսուսն առաքյալներին պատվիրեց, որ ցուպ և մախաղ չառնեն ճանապարհին: Աշուղները ճշտությամբ պահում են այս պատվիրանը, անտուն, անընչասեր, թափառաշրջիկ մարդիկ են: Միայն մի սազ ունեն, առնում են ձեռները և շրջում գյուղից գյուղ, որտեղ հարսնիք, հոգեճաշ լինի, անհրավեր, ազատ կերպով գնում են: Գիտեն պարագային հարմար ուրախական և ողբական երգեր ու խաղեր երգել: Ձմեռն իրենց համար շատ նպաստավոր է, երբ գյուղացիք դաշտային աշխատանքից ազատ են, տաք սենյակներ են քաշվում, մանավանդ երբ լսեն, թե աշուղ է եկել գյուղ, ամեն տեղից գալիս-հավաքվում են: Երգահան աշուղն սկսում է իր խաղն ու հեքիաթը: Տեսնես դու, Թոռնի՛կ, որքան զմայլված է մտիկ անում մեր անուս ու պարզամիտ ժողովուրդը. նրա համար աշուղը տիրացուից շատ գերազանց է, վարդապետի քարոզից ավելի՝ հեքիաթն անուշ է:

Մեր Մուշոյի մասին մի զվարճալի բան են պատմում: Լսելով, որ մոտակա գյուղում հարսանիք կա, գիշերով այնտեղ է գնում: Եղանակը ձմեռ է, սաստիկ էլ ձյուն է գալիս, ճանապարհին մի քանի անոթի գայլ պաշարում է իրեն: Մուշոն ճարպիկ էր, գայլերին խաբելու ձևը լավ գիտեր: Իսկույն մեջկապը քանդում է և ծայրը քաշ գետին գցում: Գայլերն սկսում են ծայր

րի հետ խաղալ: Մի կողմից էլ իր քեմանն է նվագում: Թվում է՝ Մուշոն փորձով գիտեր, թե գազաններն էլ ականջ և ճաշակ ունեն երաժշտության, գեղարվեստի: Այսպես, սիրտը դող՝ աշուղ Մուշոն գնում-հասնում է մի մեծ ծառի, որ գյուղից քիչ հեռու էր: Իսկույն արագությամբ Մուշոն ծառի վրա է բարձրանում և շարունակում գայլերի սիրած եղանակը նվագել: Ծառի շուրջը բոլորը շարվելով նստում են գայլերը, լսում: Գյուղի հարսանքավորները, քեմանու ձայն առնելով, հասկանում են, որ Մուշոն է գալիս: Դուրս են գալիս դիմավորելու, խեղճ գայլերի համերգը հարամ է լինում: Մուշոն ազատվելով մտնում է հարսնետուն և սկսում նույն քաղցր եղանակը զարնել: Աշուղ Մուշոն գայլերին ողոքելով կրթեց, որ մարդ չուտեն, իրենց բաժին կերակուրը միայն ոչխարն է: Ինձ թվում է՝ Մուշոյի միտքն այն էր, որ գայլերին կրթելուց հետո ուզում էր գյուղացիների բրտությունն էլ կրթել, որ իրար միս չուտեն, ոչ թե այն բանի համար, որ արյունակից եղբայր են, այլ առավել Հիսուսի պատվիրանի համար, որ սովորեցնում է՝ Դուք բոլորդ եղբայր էք (հմմտ. Գործք է 26):

Մուշոն միայն գյուղական ժողովրդի աշուղն էր: Նա չէր սիրում երբեք քաղաք գնալ, նա

ավելի շատ սիրում էր գյուղերը, դաշտերը, լեռները, ծաղիկները, կարկաչահաս աղբյուրների ջրերը: Վերջապես նա շատ սիրահար էր Արարչի ձեռքով նկարված բնության պատկերին: Սրա համար նա երբեմն գյուղից անհետանում էր: Իր սիրական ընկերը սազն էր, գցում էր թևին, գնում ման գալիս դաշտային ու լեռնային վայրերում: Նա ամեն տեղ իր փորը կշտացնելու համար հաց գտնում էր:

Մեր գյուղացի աշուղ Մուշոն շատ մեծ անուն ուներ, իր սազի ու քեմանու հետ՝ ձայնն էլ շատ քաղցր և ազդեցիկ էր, բնավորությամբ ուրախ, զվարթամիտ մի մարդ էր նա: Բացի այս, նա ուներ խիստ ջերմեռանդ հավատք սրբերի նկատմամբ, ամեն տարի Մշո սուրբ Կարապետ ուխտի էր գնում, իր սազը գերեզմանին դնելով աղոթում. «Ո՛վ ցանկությունների կատարիչ Սբ. Կարապետ, որ Քրիստոսին քավոր եղար, քո ծառա Մուշոյին երգելու շնորհք տուր»: Աշուղներն այնպես են հավատում, թե այդ անապատի լուսկյաց ճգնավորն իրենց փիրն է: Զարմանալի է, որ լարախաղացն էլ նույն հավատով իր ճարպիկ արհեստի համար դարձյալ նույն շնորհն է խնդրում:

Մուշոն, Սբ. Կարապետից դառնալով, սովորություն էր դարձրել. գալիս էր Աշտիշատ,

մտնում Մբ. Սահակի մատուռը, գլուխը գերեզմանի վրա դնելով՝ կուշտ լալիս: Չգիտեմ, այդ մարդը ո՛չ գիր գիտեր, ո՛չ պատմություն, որտեղից էր սովորել Սահակ Պարթևի մեծությունն ու նշանակությունը: Թվում է, թե այդ երգախոս աշուղները մեր եկեղեցու Շարականների երգիչներին ճանաչում են:

Աշտիշատից ելնում-գնում էր Առաքելոց վանք, իր ուխտը կատարելուց հետո՝ անցնում տաճարի արևելյան կողմը, ուր թաղված են Մբ. Թարգմանիչները: Համբուրում էր նրանց գերեզմանները և վաստակած լինելով՝ մի պահ նստում էր այնտեղ և սազը ձեռքն առնելով շարունակում Խորնի ծերունու [Խորենացու] ողբերը: Ինքը երգում, ինքը լալիս էր. իր ողբին արձագանքողը միայն իր զգայուն սիրտն էր:

Մուշոն լացով մխիթարվելուց հետո Ծովասարից իջնում էր, հասնում մի ձորաբերան տեղ, ուր հնուց ի վեր մի ջրաղաց էր շինված, և ջաղացպանը Մուշոյի ծանոթ-բարեկամն էր, որովհետև աշուղները շատաշրջիկ լինելով՝ ամեն տեղ ծանոթ ունեն: Մուշոն բարև տալուց հետո՝ հարցրեց. «Եղբա՛յր Մխո, ջաղացի կլոճ ունե՞ս, շատ անոթի եմ»: «Ո՛ւ, ի՞նչ ես հարցնում, բարեկա՛մ Մուշո, չե՞ս տեսնում, ջուրը եկավ ջաղացը տարավ, ալյուրը, թոնիրն էլ հետը տա-

րավ, ես ո՞րտեղից տամ քեզ ջաղացի կլոճ»: Մուշոն տեսնում է, որ ջաղացպանը ջաղացի ավերակում մի բան է փնտրում, հարցնում է թե՛ «Ի՞նչ ես փնտրում այս ջրի տարած ջաղացի մեջ»: «Ջաղացի ջախջախն եմ փնտրում, ջախջախը», - պատասխանում է ջաղացպանը:

Մուշոն իսկույն սազը ուսից վար է բերում, նստում մի թումբի վրա և սկսում իր ողբաձայն երգը.

Է՛, ջաղացպա՛ն, ջաղացպա՛ն,
Արի, Աստիր, քեզ սազ անեմ.
Մխիթարուի, ով բարեկամ,
Ջուրն եկեր, ջաղաց տարեր,
Դու ելեր ես մուրիկ-մուրիկ,
Կը փրճտոնես քո ջախջախիկ.
Ի՞նչ տի անես անպէտ ջախջախ,
Երբ ջաղցի ցիցն ու կամրջակ,
Կեցնայ քարեր, գունդն ու փառեր.
Յորնի ուղոմն և այլն ամէն,
Գլորեր տարեր է հեղեղն.
Երբոր գոռան երկնուց երես
Մրրկալից սև-սև ամպեր,
Եւ երբ բացուի՞ն գարնան դրոներ,
Ընկնն ջերոտ անուշ հովեր.
Վերէն թափին կուժ-կուժ անձրև,

Վարէն հային ձիւնակոյտեր.
Տես դու էն ժամ մեծ ջրհեղեղ,
Որ գայ, ֆշշայ վիշապի պէս.
Ուժգին թափով, ինչպէս հիւսի.
Գլորէ բալ-բալ գոմշաքարեր.
Զինչ կայ առաջ՝ քանդէ, գլորէ,
Գեղն ու քաղաք վերան կանէ.
Ո՞ր կը մնայ քո խեղճ ջաղաց,
Որ դիմանայ հեղեղին դէմ:
Փորձ ու խրատ ա՛ն, ջաղացպա՛ն,
Թող ջաղացի այդ աներակ.
Այսուհետև դու քո ջաղաց՝
Էլ մի շինիր ձորի բերան:

«Լավ ես երգում ու խոսում, Մուշո բարեկամ, ջաղացպան չես, որ ջաղացի բան գիտենաս: Մի՞թե կարծում ես, թե ջաղացպաններն անուս մարդիկ են, գրել ու կարդալ չգիտեն: Ես սուրբ Կարապետի վանքի դպրոցում եմ սովորել, բայց բախտն ինձ ջաղացպան է դարձրել. է՛, ինչ կլինի, ես մի տեղ կարդացել եմ, թե Աթենքից դարձող Մովսես Խորենացին՝ վերջ ի վերջո ջաղացպան է դարձել, երբ նա իր վաստակած իմաստասիրութիւնը մախաղի մեջ դրած՝ իբրև անծանոթ շրջում էր մեր աշխարհում, նրա ապրանքը գնող չկար, ո՛վ գիտէ, գուցե նա այս

ջրի տարած ջաղացում ջաղացպանութիւն է արել:

Հիմա մտիկ արա, որ ասեմ քեզ, Մուշո՛, մեծ նշանակութիւնը ջախջախի, որ փնտրում եմ ես: Օրհնյալ լինի այդ փայտի կտոր ջախջախը, որ ինձ ազատեց. եթե չլինէր, ես էլ ջաղացի հետ ջրից քշվելու էի: Գիտես դու՝ ջախջախը ջաղացի աքաղաղն է, բայց զարմանալի է, մեր աքաղաղը, երբ ձայն է հանում, խոսում է, ես անհոգ, անուշ ննջում եմ, իսկ երբ ձայնը կտրում է, իսկույն զարթնում եմ, տեսնում, որ ջաղացը կանգ է առել: Ո՛հ, այս անգամ հեղեղը զարկեց, ջաղացի ջրտունը քանդեց, ջախջախը ձայնը կտրեց, դուրս եկա ջաղացից, Աստված ինձ ազատեց»:

«Քո այդ ջաղացի աքաղաղ ջախջախը, հիրավի, հրաշալի բան է,- ասաց Մուշոն,- աշխարհը ձայն տալուց է զարթնում, իսկ ջաղացպանները միայն երբ ջախջախի ձայնը կտրվում է, այդ ժամանակ են զարթնում: Խոստովանում եմ, որ այդ ջախջախի նշանակութիւնը շատ մեծ է, շատ բան արժե այդ ջախջախը, փնտրի՛ր, որ գտնես»:

«Սիրելի՛ Մուշո, Աստվածաշունչ Գիրքը կարդացել ես. հին Իսրայելի ազգում ձայն տվող ջախջախ մարգարեներ կային, Հակոբի տան ջա-

դացն աշխատում էր, և երբ այդ աստվածախոս ջախջախները իրենց ձայնը կտրեցին, ջուրը տարավ Հակոբի տան ջաղացը, և մինչև այսօր էլ դեռ ավերակ է մնացել: Մենք էլ ունեինք երբեմն մեր վարդապետ ջախջախները, երբ լուեց նրանց ձայնը, իմացանք, թե ջուրը եկավ մեր ջաղացն էլ տարավ: Է՛, Մուշո՛ բարեկամ, հասկացա՞ր այժմ ջախջախի նշանակութունը, աղաչում ենք, որ մի խաղ շարադրես այս ջախջախի մասին, միշտ շրջես ու երգես այս խաղը, միթե աշուղի խաղն ու սագը մեր ջախջախները չե՞ն:

Թողնենք ջախջախը. դու մի ուրիշ խրատ էլ ես տալիս ինձ, Մուշո՛, որ թողնեմ ձորաբերանի ջաղացի ավերակը և ուրիշ տեղ շինեմ իմ ջաղացը, բայց ո՞րտեղ շինեմ, Մուշո՛ բարեկամ, դու չգիտե՞ս, որ ամեն տեղ իր տերն ունի, այդ ջաղացը հայրական ու պապենական մի ժառանգութուն է մնացել ինձ, ես չեմ թողնի, որ այդ ջաղացն անչեն, ավերակ մնալով՝ կորչի մեծ պապերիս հիշատակը, պետք է դարձյալ պարտք անեմ, ճար անեմ, շինեմ իմ ջաղացը, որ իմ ընտանիքի միակ հույսն ու ապավենն է. արտ չունեմ, լծկան չունեմ, միայն ջաղացով եմ ապրում»:

«Ուրեմն,- ասաց Մուշոն,- երբ Աստված հաջողի, ջաղացդ շինես, այժմվանից քեզ խրատ եմ տալիս, որ ձորաբերանի հեղեղատի կողմը

մի հաստ, ամուր քարուկիր պատ շարես, այն ժամանակ քո ջաղացը ապահով կլինի»:

«Ո՛, բարեկա՛մ Մուշո, ջաղացպանի վիճակը չգիտես, մեծ-մեծ ես բրդում: Ես այդքան ծախս ո՞րտեղից անեմ, հին պապիկներս այդ բանը չմտածեցին, ե՞ս պիտի մտածեմ, իմ ջաղացն ինչպես տեսա, այնպես պիտի շինեմ, այդ քո ասած բանը անոթի, աղքատ մարդու գործ չէ: Գիտե՞ս, Մուշո՛, այս ջաղացը չորս անգամ եղավ, որ ջրից քշվում է. ո՛վ գիտե, գուցե Աստված գթութուն անի խղճուկ աղքատիս, հեղեղների երեսից պահպանի իմ ջաղացը»:

Այս որ լսեց Մուշոն, լուռ մնաց, մի պահ մտածեց և հետո ասաց. «Շատ իրավունք ունես բարեկամ, մեր այս աշխարհի գործերը պետք է խոհեմությամբ առաջ տարվեն, լավ է, որ ամեն մարդ իր չափով գործի՝ ջաղացպանն իր չափով, Մուշոն էլ իր սագով:

Է՛, ջաղացպա՛ն, մնաս բարով, ես գնում եմ, դու շինիր քո ջաղացը, ջաղացի ջախջախը մեծ նշանակութուն ունի, այժմ հասկացա, որ Մուշոն էլ իր սագով ջաղացի ջախջախ է»:

Մուշոն վերադարձավ Մուշից Արճակ գյուղը, շատ տխուր էր. օրը կիրակի էր, Մուշոն գնաց եկեղեցի, մտավ Ավանդատուն, կանչեց քահանային, խոստովանեց և նույն օրը Սբ. Հաղոր-

դուլթյունն առավ, երեկոյան կողմ խունկ ու մոմ առավ, գնաց Աստվածածնի վանք, մտավ Սբ. Տաճար, իր խունկը ծխեց ու մոմ վառեց, չոքեց սեղանի առաջ, մի երկար աղոթք մրմնջաց, ապա համբուրեց խաչն ու Ավետարանը: Տաճարից դուրս ելավ, եկավ այս ծառի տակ, աղբյուրի մոտ: Մի քիչ բաղարջ և փոխինդ ունեւ հետը, գիտես, որ դա իր վերջին ընթրիքն էր, որ մեծ ախորժակով կերավ և գինու տեղ խմեց պաղ աղբյուրի ջուրը: Հետո սազը ձեռքն առավ, սկսեց երգել, իր այս երգը շատ սրտառուչ ու ողբական էր, ուրիշ ժամանակ Մուշոն ուրախ և զվարթ էր երգում, իսկ այս վերջին անգամ կարծես թե կարապ թռչունի նման իր մահվան ողբն էր նվագում, իր ամպոտ աչքերից կաթիլներ էին թափվում, չնկուռի թրթռուն թելերի վրա:

Ինձ թվում է, թե Մուշոն Խորենացու ողբն էր բերանացի երգում, որովհետև ջրից քշված ջաղացն ու ջախջախը շատ ազդեցին իր հոգու վրա: Մուշոն իր մահվան կարգն ու «Դատեա՛»ն ավարտեց, սազը դրեց գլխի տակ, պառկեց հով ծառի տակ, այնպես անուշ քնեց, որ այլևս վեր չելավ. հրեշտակն սպասում էր, Մուշոն հոգին ավանդեց:

Նույն երեկոյան ջերմեռանդ պառավ կինը,

որ սովորությունն էր դարձրել՝ ձեթ ու խունկ էր բերում Աստվածածնի տաճարին, եկավ, տեսավ որ Մուշոն ծառի տակ պառկած է, ասաց. «Գնամ, ձայն տամ, գիշերը չմնա այստեղ»: Կանչեց. «Մուշո՛, Մուշո»: Մուշոն ձայն չտվեց: Մոտ գնաց, ձեռքով շարժեց, տեսավ, որ Մուշոն փայտացել է. «Վա՛յ,- ասաց,- Մուշոն մահացել է»: Պառավը գնաց գյուղ, քահանային իմաց տվեց: Իսկույն Մուշոյի մահվան լուրը տարածվեց գյուղում: Տերտերը, ժամկոչը և ողջ ժողովուրդը թափվեցին Աստվածածնի վանք: Քահանան ծանուցումն արեց, հայտնեց Մուշոյի կտակը, ասաց. «Լուսահոգի Մուշոն ինքն զգացել է, որ պիտի մեռնի: Այս առավոտ եկավ եկեղեցի, խոստովանեց, Սրբությունն առավ: Այժմ հայտնեմ ձեզ Մուշոյի կտակը: Նա երգումով խնդրեց, ասաց. «Տե՛ր Հայր, ես անտուն, անբնակ շրջող մի մարդ եմ, աղաչում եմ, որտեղ որ մեռնեմ, այնտեղ թաղիր ինձ. չմոռանաս, իմ սիրելի սազն էլ հետս թաղիր»: Ես այն հույսն ունեմ ու հավատում եմ, որ երբ դատաստանի օրը Գաբրիելն իր փողը հնչեցնի, Մուշոն իր սազով պիտի գնա արքայություն և հրեշտակների հետ փառաբանի Աստծուն: Միթե այդ ազատ աշխարհում, ազատ հոգիների համար, երգիչ աշուղներ պետք չեն»:

Ժողովուրդը լսեց այս խոսքը, սիրով ընդունեց Մուշոյի կտակը, իսկույն Տաճարի պատի տակ գերեզման փորեցին, թաղեցին Մուշոյին: Ժողովուրդն «Աստված ողորմի Մուշոյի հոգուն» ասելով՝ գյուղ վերադարձավ:

Այսպես մեռավ, Թոռնի՛կ, ժողովրդի սիրելի աշուղ Մուշոն: Մենք էլ նույն ողորմին տալով դառնանք գյուղի եկեղեցու Տաճարի մոտ՝ մի ուրիշ գերեզման կա, ուր գրեթե երեսուն տարի առաջ թաղվեց Մահտեսի Ագրիպպասը, Հայրիկի մտերիմ և անձնվեր բարեկամը:

Տե՛ս, Թոռնի՛կ, մի անտաշ քար է դրված գերեզմանին, անգիր, անհիշատակ: Այժմ պատմեմ քեզ, Թոռնի՛կ, թե ո՛վ էր Տպագյան Ագրիպպասը, բնիկ վանեցին ու Հայրիկի տան դրացին:

Այս հանգուցյալ բարի անձնավորությանը ես այն ժամանակից եմ ճանաչում, երբ Հայրիկն առաջին անգամ մեկնեց Պոլիս, որ դեռ վարդապետ չէր, այլ Մկրտիչ Վարժապետ: Իբրև հայրենակից և մտերիմ բարեկամ, այդ բարեսիրտ և զվարթամիտ անձը միշտ ասպնջական էր Հայրիկին. նրա ամեն անձկության հասնում էր և օգնում: Նրա հետ չեմ մոռանա հիշել պարոն Գրիգոր Զրբաշխյանին, որ գիրք ու կարգալ սիրող մարդ էր. առանց դպրոցի ու քերա-

կանության անսխալ հասկանում էր լեզուն և շատ կարգալով՝ վարժվել էր բառերի ուղղագրության մեջ: Երբ առաջին անգամ տպագրվում էր Հրաւիրակ Արարատեանը, հաճախ էր վրիպակներ ցույց տալիս Հայրիկին: Դեռ կենդանի է ինքը և այժմ, իբրև անվեղար վարդապետ, ապրում է Վարագա վանքում, դարձյալ ընթերցանությամբ զբաղվելով: Նա ևս, իբրև մանկության ծանոթ, մտերիմ բարեկամ էր Հայրիկին, որ միշտ ընդունում էր իր պանդխտավայր օթևանում:

Իսկ երբ Հայրիկը տպարանով վերադարձավ Վան հաստատվեց Վարագա վանքում և սկսեց իր աշխատանքները, հիշյալ Մ. Ագրիպպասն անձնվեր հոգով օժանդակ և աջակից էր Հայրիկին: Նա սոսկ խոսքով չէր քաջալերում. երբ տեսներ Վարագա վանքի անձկությունը, պետք եղած դրամը փոխ էր տալիս առանց տոկոսի և երբեմն էլ պարտամուրհակներն էր ամենայն վստահությամբ երաշխավորում:

Հանգուցյալ հոգին մեր գյուղին էլ է բարերար եղել, Թոռնի՛կ, նա թեպետ արհեստով խաղախորդ՝ դապաղ էր, բայց սիրում էր գյուղական կյանքը և մշակի աշխատանքը, դրա համար մեր գյուղացիների հետ հարաբերություններ և միշտ զնում-գալիս էր: Առաջին ան-

գամ նա պատճառ եղավ մեր գյուղի մեջ դպրոցի ստեղծմանը: Արճակ լճի էրմանց գյուղի սահմանին գտնվող քանդված թումբը վերստին շինելը նա ձեռնարկեց, որի առատ ջուրը մեր դաշտի արտերի վրա ուղղելով, ցանքերի արդյունաբերությունը բազմապատիկ կլինի:

Սրանից մոտ երեսուն տարի առաջ, մի օր՝ երեկոյան գիշերապահին՝ չարաշուք ավազակները Արտազի դաշտի մի ձորակում քաշելով՝ չարաչար հարվածներով սպանեցին այդ անմեղ անձնավորությունը՝ Մահտեսի Ագրիպպասին: Այն ժամանակ Հայրիկը Մշո Սբ. Կարպետի վանք էր գնացել. Վարազա դպրոցի ուսուցիչ Մանուել վարժապետը մի ողբերգություն գրեց այդ անզուգական բարեկամի մահվան մասին, որ մինչև այսօր Վանա երգեցիկ մանուկները խիստ սրտառու է եղանակով երգում են: Հայրիկն էլ մի ողբերգություն է գրել իր հին մտերիմ բարեկամի մասին, և ես անգիր եմ արել այդ սրտառու ողբերգը, ասեմ քեզ:

Անցել էր ատուտ, կէս օր,
Մօտ էր վերջինք իրիկում.
Ես ի՞նչ գիտէի, թէ այն օր
Իմ վերջին օրն էր:

Պատաներուն կախարդ ազուս
Տանիքէն կանչեց կա՛ն, կա՛ն,
Հասկցայ ես իր լեզուն,
Կասէր՝ Կա՛ց, կա՛ց, մի՛ գնար:

Ասի՛ ես չեմ հաւատար
Խաբերայ այդ չար գուշակին,
Որ խաբեց մեր Նոյն անհապետ,
Գնաց, էլ չի դարձավ ետ:

Տանէն հեծայ ես իմ ձիւն,
Ձիւն էնպէ՛ս անչեց ինձ ողորմ,
Ասի՛ քալէ՛, քալէ՛, ի՛մ ճերմակ.
Ծակատագիր է մարդոյն:

Եկայ, մտա՛յ ես ի դաշտն Արտազու,
Դաշտէն առի ո՛ր, արեան հոտ.
Ջարգանդ եկաւ վերէս,
Ձիւն առեց ահ ու դող:

Մեր արև ծողունց իր լոյս,
Գնաց, մտաւ անուշ քուն.
Սար ու ձոր մթնեց վերէս,
Ձիւն պատեց գիշերն աղջամուղջ:

Դեռ անոր անրեր էր լուսնակ,
Կապեր էր ոսկեշար մանեակ.
Եղջերիկներէն կախուած էին
Ցոյն աստղունք հազար-հազար:

Ասի թէ կրճատ լուսնիկով
Ես կերթամ իմ ուղիդ ճանապարհ.

Ո՛հ, այն էլ ծածկեց աչքէս
Վիշապագլուխ մի սև ամպ:
Ուրուականք հասին ետևէս,
Չարաշուք ոտիս ոգիներ
Ջարկին թիկանց կուտ ուժգին,
Պայթեցաւ գլուխս և ուղեղս:
Տասպալեցայ ես ձիւն գետին,
Այնպէս անշշունջ, կիսամեռ.
Ոտքէս քաշէ-քաշ տարին,
Թալեցին մի ձորակի մէջ,
Եւ շատ վերքեր դրին վերէս,
Ջիւ արին անշարժ կոճղի պէս.
Ասին թէ՛ մեռա՛ւ, մեռա՛ւ.
Ջիւ թողին էնպէս ու գնացին,
Միայն իմ սրբոյիս խորին մէջ,
Կը թըփթըփար իմ հոգիս:
Երիքովի ճամբորդն էի ես,
Ինկած աւազակաց ձեռք.
Ո՛հ, չ'կար ինձ համար մարդասէր,
Այն գթած Սամարացուն պէս:
Անցի՛ր, սև ամպ, անցի՛ր,
Բաց լուսնակին աչք.
Թող տեսնէ, վկայ լինի,
Իմ անպարտ արեանս:
Գիտեմ, ո՛վ լուսնակ,
Երկնակամարէն

Չես ուզեր տեսնալ,
Մարդոց բիրտ եղեռն:
Այո՛, չես կամիր,
Կապուտ երկնքէն,
Որ գա, սրփոռի լոյսը.
Սև դաշտի վերէն:
Անցիր, գնա և դու, լուսնակ,
Խաւարաւ աչքերս,
Էլ չե՞ն պիտոյ ինձ ո՛հ,
Ո՛չ լուսին, ո՛չ արև:
Սակաւ մի ևս մեռանիմ, ա՛հ,
Մթնում է իմ կենաց լոյս արև.
Հով, դու որ շնչես
Վարագայ սարէն,
Լուր տար ի Տարօն.
Լուր բեր ինձ Արծուէն.
Հասիր սէր իմ Արծուի,
Դեռ ոգորի հոգիս.
Տամ քեզ յետին ողջ-մնաս,
Ապա տամ հոգիս:
Թո՞ւա հոգի Արծույն,
Իջաւ մահու դաշտ,
Տեսաւ իր սիրելին,
Ինկած մեռունակ:
Թաւալած ի գետին,
Արեան մէջ լողար.

Գարուն էր եղանակ,
Ծաղիկներ բացուած:
Ո՛հ, անմեղ զոհիմ
Արիւնով ներկուած,
Դեռ տաք էր արիւմ.
Հողըն ծծէր, փըրփըրէր:
Արեան պղպշակներ
Ջայն տալին Արծույն,
Հոգին հոգույն հետ
Խօսէր անլեզու:
Եկի՛ր, Հայրիկ, տես
Մահ քո սիրելւոյն.
Ձեռք անագորոյն,
Թափեց իմ արիւն:
Թափեց իմ արյուն:
Բա՛րձ աստի, մի՛ թողուր.
Դիակս իմ ապաժոյժ.
Մի՛ տանիր քաղաք,
Տար զիս Արճակ գիւղ:
Փորել տուր գերեզմանս
Եկեղեցույն մօտ.
Մի՛ հանէք անձնէս՝
Իմ արնոտ շապիկս:
Կարմիր պատանքով
Թաղէ զիս, Հայրիկ.
Երբ գայ Տէր դատաւոր,

Նստի դատաստան,
Ես բողոք տի հանեմ՝
Նորա մեծ ատեան.
Թող վկայ լինի ինձ,
Իմ արնոտ պատան:
Մի՛ լուանաք մարմինս.
Մի՛ սրբէք վերքերս արիւնհոս.
Դրէք զիս էնպէս անլուայ,
Գերեզմանին փոս:
Կնքէ, Հայրի՛կ, շիրիմս,
Քո ձեռաց խաչով.
Որ անշարժ մնամ ես՝
Մինչև վերջին օր:
Խաչ մի տնկէ վրաս,
Գրէ յիշատակս.
Թէ՛ Աստ կայ ի հանգիստ՝
Ագրիպպաս անհատակ:
Ողջամբ մընաս, Հայրի՛կ.
Թէ երթաս Վարագ,
Յիշէ զիս, մի՛ մոռնար.
Երբ առնես պատարագ:
Ասաց, թոաւ հոգին,
Գնաց առ ԱՍՏՈՒԱԾ:

**Մենք էլ հիշենք, Թոռնի՛կ, լուսահոգի Հան-
գուցյալին, ասենք Աստված ողորմի իր հոգուն,**

այլևս հերիք է, ավարտենք այստեղ մեռյալներին գերեզմանի հիշատակները. այժմ զգում եմ, Թոռնի՛կ, թե մահս մոտ է, իմ հիշատակն էլ պիտի խառնվի սրանց հետ:



ԻԳ. ՊԱՊԻԿԻ ԿՏԱԿԸ ԵՎ ՄԱՀԸ

Սիրելի՛ Թոռնիկ, ժամանակս հասել է, անցել է կյանքիս զվարթ առավոտը, անցել է կեսօրը, վերջն ու երեկոն են մոտեցել, պետք է ննջեմ, հանգչեմ այնպես, որ այլևս վեր չկենամ: Տեսնում ես, ուժից ընկել եմ, քայլերս դողդողում են, ցուպն էլ չի օգնում, ձեռքերս աշխատանքից անշարժացել են. ո՛հ, աչքերս էլ Իսահակ նահապետի պես վատացել են, ամբողջ մարմինս տկար է. այլևս չեմ կարող օգտակար լինել ո՛չ քեզ, ո՛չ աշխարհին: Այն մարդը, որ դադարում է աշխատել՝ նրա ողջությունն արդեն ավելորդ է. թե՛ մեր ընտանիքի և թե՛ գյուղացիների համար ես մի բեռ եմ: Իմ ձեռքով չվարած, չցանած և չհնձած հաց ուտելը անչափ դառն է և հակառակ Աստծու այն պատվիրանին, որ ասում է թե՛ «Երեսիդ քրտինքով պետք է ուտես քո հացը» (Հմմտ. Ծննդ. Գ 19): Մարմինս չոր ոսկոր է դարձել. այլևս իմ ճակատից քրտինք չի գալիս, որովհետև քրտինքն աշխատանքից է լինում:

Ճիշտ է. զավակներն ու թոռները մեծ պարտականություն ունեն՝ իրենց ծերացած հայրերին ու պապերին մեծ խնամքով, անտրտուն խնամել ու պահել մինչև մահվան օրը: Ծերերի ներկայությունը տան ու ընտանիքի համար մի օրհնություն է: Սրա համար ասում է Սուրբ Գիրքը. «Թող ծերերը քո տնից չպակասեն» (Հմմտ. Ա Թագ. Բ 31-32):

Բայց ես տեսել ու լսել եմ, Թոռնի՛կ. շատ անգամ ընտանիքներում, երբ ծերացած հայրերը, պապերն ու պառավները երկար ժամանակ տառապում են մահիճներին գամված, այն ժամանակ իրենց սիրելի ընտանիքներն սկսում են տրտունջ բարձրացնել. «Օ՛հ, չմեռավ, որ ազատվեինք, ի՞նչ է այս մեր քաշածը»: Նրանք մոռանում են, չեն հիշում սերն ու գորովանքը, հայրական ու մայրական երախտիքը իրենց ծնողների և պապերի, որոնց խնամքով իրենք մեծացել, մարդ են դարձել:

Թողնենք այս, Թոռնի՛կ, դու դեռ չգիտես մարդկանց ընտանեկան կյանքում ինչեր կան. երբեմն մի ընտանիքի հայրը, որ շատ հարուստ է և իր սնդուկները լի են ոսկով, բայց երբ ինքը բնավորություն սաստիկ ազա՛հ և կծծի է, ամենախիստ ժլատություն տնտեսում է իր տան ծախսը և ապրում չքավոր աղքատի պես, դու լսել ես, թե այդ ազա՛հ մարդու ընտանիքն ինչ

է աղոթում. «Աստվա՛ծ, առ սրա հոգին, մենք ազատվենք սրա խստասիրտ տնտեսելուց»:

Երբեմն Աստված լսում է այդ աղոթքները և առնում ազա՛հ տանտիրոջ հոգին, մի պահ լալիս է ընտանիքը, մինչև ավարտվում է թաղման մեծ հանդեսը, և փակում են ազա՛հի մարմինը գերեզմանի մեջ, այնուհետև բացում են ոսկելից սնդուկները: Շռայլությունը, մսխանքը, պերճությունը գալիս տիրում են ազա՛հի տան վրա: Շատ չի տևում, շռայլության ժամանակը կարճ է, շուտով դատարկվում են ոսկու սնդուկները, անցնում է շռայլությունը, գալիս-տիրում է մշտնջենավոր աղքատությունը:

Ուրախ եմ, Թոռնի՛կ, դու բարի զավակ ես, չես սպասում Պապիկիդ մահվանը: Պապիկդ ազա՛հ մարդ չէ. շինականն ազա՛հ չի լինում, քանի որ իր դուռը բաց է: Դու որք մի տղեկ էիր, վարդի պես պահեցի քեզ: Ոսկու սնդուկներ չունեմ, որ ասես՝ «Ի՛նչ լավ կլինեք, եթե մեռնեք Պապիկս, ոսկիներին տեր կլինեի և ուզածիս պես կյանքս կվարեի»:

Իմ ժառանգությունը, որ թողնում եմ քեզ, ոսկի չէ, այլ ոսկուց շատ ավելի թանկ ու օգտակար: Ի՞նչ է ոսկին, որ ոչ մի տեղ չի մնում, այլ սնդիկի պես փախչում-գնում է ու չքանում, շատ անգամ էլ ճարպիկ գողերը ական բանալով գողանում են ազա՛հի դիզած գանձերը:

Ես թողնում եմ քեզ մեր հայրենի ժառանգությունը, դաշտերն ու հողերը, որ միշտ իրենց տեղում անփոփոխ, հաստատուն են, թողնում եմ քեզ գութանը՝ երկու փոխնակ տավարներով, թողնում եմ կթան կովեր ու հարյուրավոր ոչխարներ: Սրանք են ահա պապիկի կարմիր ոսկիները. միայն թե աշխատես հաշիվ պահել ու մշակել, անասուններին խնամել այնպես, ինչպես որ սովորեցրի քեզ, երկար-երկար, պարզ և տնավարի բացատրեցի քեզ հողագործական վարպետության համար:

Ասեմ քեզ, Թոռնի՛կ, դարձյալ ես ինքս զգում եմ, որ մահս մոտեցել է, մահվան հրեշտակը եկել է, Պապիկի դուռն է ծեծում, եթե հազար նիգ ու սողնակ լցնեմ դուռն ետևը, ոչ մի օգուտ չունի, պատուհանից կանցնի, որովհետև հրեշտակները թափանցելու կարողություն ունեն, որ պողպատի պես կարծր մարմիններից են անցնում: Եթե ասես՝ «Գնամ օվկիանոսի խոր անդնդի մեջ պահվեմ»,՝ մահվան հրեշտակն այնտեղ էլ կհասնի մարդու ետևից:

Վաղը կիրակի է, Թոռնի՛կ, մտիր թևս, տար ինձ եկեղեցի. ես էլ Մուշոյի պես պետք է խոսեմ, խոստովանեմ, աղոթեմ, վերջին պատարագ տեսնեմ, Սուրբ Հաղորդություն առնեմ, այն է իմ վերջին թոշակը: Հավատում եմ, որ Քրիստոսի

տոսի ավանդած Կենաց հացի այս թոշակով կարժանանամ սուրբ արքայություն: Ժամից վերադառնալով, Թոռնի՛կ, թաղիքե մահիճս պատրաստել տուր, պառկեմ հանգստանամ: Գլուխս շատ ծանրացած է, սիրտս սկսել է արագ բաբախել, ոտքերս էլ սառած են: Գիտեմ՝ այդ սառնությունը կամաց-կամաց դեպի սիրտս պիտի գա, որ մարմնիս կենտրոնն է, այդ ժամին ամբողջ մարմնովս պիտի սառչեմ և հանկարծ պիտի տեսնեք, որ Պապիկը մեռա՛լ և իր կյանքի ճրագը մարեց: Ես աղաչում եմ Աստծուն, որ մի քանի օր ինձ կենդանություն տա, մինչև կտակս ավարտեմ:

Առաջին ընտանեկան կտակս այս է, Թոռնի՛կ: Քո ծնող՝ այրի մայրիկիդ, որ այսօր մեր տան տանտիկինն ու տնտեսն է, պետք է ամենայն ակնածությունք պատվես իբրև ծնող մայր, ինչպես սուրբ Գիրքն է պատվիրում. «Պատվիր հորդ ու մորդ, որ բարիք գտնես» (Ելք Ի 12): Հայրդ մահացել է, միայն մի մայրիկ ունես, որի մեկ հատիկ մխիթարության զավակն ես դու: Տեսնում ես, թե ինչպես է գուրգուրում ձեզ: Իր ծերություն ժամանակ ամեն խնամք պետք է տանես նրա վրա, զգուշացիր, որ երբեք չտրտմեցնես իրեն որևէ կերպով: Նա աշխատող տանտիկինն ու տնտեսն է, մեր տան ներքին ամբողջ

կառավարումը նրա ձեռքին է, նա միայն պիտի հրամայի:

Իսկ դու՝ Շուշա՛ն, հարսնությունդ մեծ պարտքը հնազանդությունն է, ամենայն սիրով, հլուհնազանդ, կամակատար հարս պետք է լինես սկեսրոջդ առաջ: Նա շատ բարի կլին է. իբրև մայր մեծ գորովանքով է սիրում ձեզ: Գուցե լսել եք, թե կան այնպիսի սկեսուրներ, որ անարգում և տանջում են իրենց հարսներին. ով գիտե, թե՞րևս նրանց հարսներն էլ շատ պակասություններ ունեն: Բայց դու, որ մի քանի տարվա հարս ես, մի օր լսեցիր ու տեսա՞ր, որ սկեսուրդ մի դառն խոսք ասի, կամ անարգ կերպով վարվի հետդ: Հիշի՛ր, Շուշա՛ն, որ դու էլ մի օր սկեսուր պիտի լինես, ինչ որ անես, այն կգտնես: Պապիկի այս խրատները մի մոռացիր:

Քեզ եմ ավանդում մեր նահապետական տան պատկառանքն ու պարկեշտությունը, պետք է անեղծ պահես այդ տոհմական առաքինությունը: Կարգա միշտ սուրբ Գրքի նահապետների պատմությունները, ուր նկարագրված են նրանց կյանքն ու անմեղդությունը:

Տեր Աստված սուրբ պսակով քեզ մի Շուշան ծաղիկ տվեց, Շուշանի համար էլ՝ մի Թոռնիկ. չկա քեզ համար մի ուրիշ Թոռնիկ մինչև մահվան օրը: Օրհնում եմ ձեզ, որ շատ ապրեք և

սիրով ապրեք, ձեր սուրբ ամուսնություն ծառը միշտ նորանոր զավակներով պտղաբեր լինի, Հակոբ նահապետի տան պես բազմանան որդիներդ:

Բայց գիտեցի՛ր, Թոռնի՛կ, որ բազում զավակներն այնքան մեծ պարծանք չեն իրենց ծնողների համար, եթե անկիրթ մնան, անառակ լինեն: Գիտե՛ս՝ այդպիսի զավակները ինչպիսի նախատինք են լինում իրենց ծնողներին: Աշխատիր մանուկ հասակի մեջ լավ կրթություն տալ զավակներիդ, երբ նրանք դեռ դալար ճյուղ են և մոմի պես կակուղ, եթե թողնես, որ հաստանան ու պնդանան, արդեն կդժարանա կրթելը, որովհետև ամեն բան իր ժամանակն ունի, նայի՛ր, որ չթողնես անցնի ժամանակի պատահությունը:

Կյանքդ ու վարքդ ուղիղ պահի՛ր, Թոռնի՛կ, շիտակ քայլիր, որ որդիներդ էլ քեզ հետևեն. չլինի որ խաչափառի պես միակողմանի քայլելով, խրատ տաս ձագերիդ, թե՛ ուղիղ քայլեցե՛ք: Գիտեցի՛ր, որ նրանք պատասխան կտան քեզ. «Հայրի՛կ, մենք տեսնում ենք, թե ինչպես ես քայլում»:

Ուխտով պատվիրում եմ քեզ, Թոռնի՛կ, կյանքիդ բոլոր գործերում ուղղությունը պահիր, պետք է գիտենաս, որ ուղղությունը կավե-

լացնի քո վարկն ու վստահութիւնը ժողովրդի աչքում, որով բարի համբավ և պատիվ կստանաս ժողովրդի առաջ:

Ամենամեծ բարոյական հարստութիւնն է քեզ համար, Թոռնի՛կ, եթե կարողանաս ժողովրդի սերն ու համակրութիւնը դեպի քեզ գրավել. աշխարհի բովանդակ ոսկին դրա հետ չի հավասարվի: Դու առանձին մի գյուղում ես ապրում, մի՛ ասա, թե՛ «Առաքինութեան շրջանակը շատ նեղ է»: Բավ և շատ է քեզ, Թոռնի՛կ, եթե նախ մի գյուղի ժողովրդին սիրելի ու հարգելի լինես. բարի համբավ եթե ունես՝ գյուղից գյուղ կթռչի, կհասնի մինչև Վան և կտարածվի ամբողջ Վասպուրական աշխարհում:

Հիշի՛ր հովիվ Հակոյի և մեր գյուղի մեծ տանուտերների համբավը, թե ինչպես էր հռչակվել բոլոր գյուղերում:

Հարցրո՛ւ այժմ, Թոռնի՛կ, թե ի՞նչ են բարոյական միջոցները և բարի գործերը, որոնցով մարդու արժանիքն ու անունը բարձրանում է ժողովրդի առաջ: Այդ միջոցներն են՝ սիրելը, բարերարելը, գթասիրտ լինելը, քաղցյալին ոչ միայն հաց տալը, այլև թանապուրի մեջ ձեռքով հաց բրդելը, աղքատ ու դժբախտ ընտանիքներին ձեռք մեկնելը, զրկյալ անձանց պաշտպանելը և այլն: Ավետարան կարդալով, Թոռնի՛կ, հիշում

եք, որ Հիսուս դատաստանի օրը թողնելով բարեգործ մարդկանց այլևայլ բազմադիմի առաքինութիւնները, ավելի շատ հիշելու է ողորմած մարդկանց գթասիրութիւնը, որ փողոցում մնացած՝ անտուն, անճարակ օտարներին են հավաքել, որ աղքատ, անօգնական հիվանդներին տեսութեան են գնացել, որ բանտարկյալներին են այցելել, որ քաղցյալին հաց և ծարավին ջուր են տվել: Ողորմած մարդկանց գթասիրութեան այս բարիքները ո՛վ է ընդունել ողորմածներին: Հայտնի է, որ ժողովրդի նեղված, չարչարված դասն է ընդունել, որ չի կարող փոխարենը վճարել իր բարերարներին: Սրա համար աղքատի պարտքը Քրիստոսն է վճարում. և ի՞նչ է վճարում, գիտե՞ս, երկնային արքայութիւն՝ մի կտոր հացի և մի բաժակ ջրի դիմաց:

Բայց պետք է գիտենաս, Թոռնի՛կ, որ ժողովուրդը ձրի մարդ չի սիրում և բան չառած շնորհակալութիւն չի հայտնում: Մի՞թե դու ան աղքատն, առանց հաց առնելու, օրհնութիւն կտա, կամ բարերարութիւն ստացող մեկը առանց բարիքն ընդունելու բերանը կբանա՞ շնորհակալութիւն ասելու: Աշխարհիս վրա ամեն բան փոխադարձ է:

Կան, այո՛, բերաններ, որ միշտ անշնորհակալ են, և շատ անգամ էլ բարերարութեան դեմ ապե-

րախտ են գտնվում, թերևս չար և անզգամ լինելով՝ չարիք էլ կգործեն և կկապեն բարերարի ձեռքը, որ ստրջանա և բարերարությունն չանի:

Սակայն դու այս հաշիվները թող, Թոռնի՛կ, Ավետարանին մտիկ արա՛, որ պատվիրում է ատելիներին բարիք գործել, թեկուզ անարժան լինեն. դու չե՞ս տեսել, որ մեր երկնային Հայրը, իր անձրևը հավասարապես է տալիս մեր դաշտերին, տարբերություն չի դնում չարի ու բարու համար, նմանապես իր լուսատու արևը հավասար է ծագում ամբողջ աշխարհի վրա: Բարերարության արդյունք-ազդեցությունը շատ գորավոր մի դեղ է՝ չարերի ոգին ամոքում է և սրտի դառնությունը փոխում. երբ տեսնում է, որ իր չարության դեմ բարիք է ընդունում, այդ բարիքը կրակի պես վառում է նրա ներքին խիղճը: Սրա համար Պողոսն ասում է, թե՝ «Այս անելով՝ կրակի կայծեր կթափես նրա գլխին» (Հռովմ. ԺԲ 20): Լավագույն միջոցն է այս. միշտ բարությամբ չարին հաղթելը. բարությունը ջուր է, որ հանգցնում է բորբոքված կրակը:

Բարերարությունը ընկերասիրության և քրիստոնեական մարդասիրության մի կամավոր պարտք է, որ մարդ իր նյութական կարողություններից բաժին է հանում ժողովրդի կարոտյալներին: Բայց սա չէ միայն, որով ժողովուրդն

իրեն սիրում է և ճանաչում իբրև բարերար, այլ բուն անձնական արժանիքները և առաքինի կյանքն են բարերար մարդու փառքն ավելացնում ժողովրդի աչքում: Ահավասիկ, Թոռնի՛կ, դնում եմ ձեր առաջ, թե որոնք են այդ հոգեկան առաքինությունները:

Հայրենի եկեղեցու հավատք, երկյուղած և անկեղծ աստվածաշտություն, հեզ և բարեհամբույր բնավորություն, սեր, որ իր ընկերոջն իր անձին հավասար սիրում է, արդարություն, որ իր և ընկերոջ բաժինը հավասար է բաշխում, բարի խղճմտանք, որ երբեք ընկերոջը վնաս կամ զրկանք չի պատճառում. ավելի շատ միտված է զրկանք կրելու, քան պատճառելու, ժողովրդասիրության ոգի, որ միշտ ժողովրդի բարին ու շահն է մտածում, զվարթամիտ առատաձեռնություն, որ շատ սիրելի է ժողովրդին, մեծագործ նախաձեռնություններ, որ հասարակության համար են լինում, այսինքն՝ եկեղեցի, դպրոց, հիվանդանոց, աղքատանոց, որբանոց, զանազան նվիրատվություններ, կտակ և այլն՝ ինչ որ ժողովրդի կյանքի և առաջընթացի համար պետք է:

Հապա այն անձնվեր մշակները՝ եկեղեցական լինեն, թե աշխարհիկ դասից, երբ անձնատուր են ժողովրդին. ոչինչ չխնայել, ամեն բան

զոհել և նույնիսկ անձը՝ անհրաժեշտութեան դեպքում: Այդ ժամանակ ժողովուրդը չի բավականանում միայն սիրելով, այլև ցանկանում է պաշտել իր անձնավեր գործչին: Եթե մեռնեն էլ, չեն մոռացվի, ժողովուրդը նրանց անունը տոնելով կփառավորի և հիշատակի համար հավերժական արձան կկանգնեցնի:

Ահա, Թոռնի՛կ, այս է ժողովրդասիրութեան արդյունքը, աշխատիր այդ փառքը ձեռք բերել, որ մեռնելուց հետո անմահ մնաս, ժողովուրդը քեզ հիշի և քո հիշատակն օրհնի:

Սիրելի՛ Թոռնիկ, դեռ քեզ հետ պիտի խոսես, բայց ցանկանում եմ, որ այսօր մեր գյուղի քահանաներին, տանուտերներին և մեծատոհմիկներին կանչես: Պապիկը պարտավոր է իր վերջին մնաս բարովը տալ գյուղի ժողովրդին, որի հետ այսքան ժամանակ ապրել եմ և վայելել նրանց հարգանքն ու պատիվը: Ինչպես քեզ, գյուղացիների համար էլ կտակի պատվիրաններ ունեմ:

Բարով եկաք, ի՛մ սիրելի և աչքի լույս գյուղացիներ: Տեսնում եք, Պապիկը պառկել է, այլևս վեր ելնելու հույս չկա: Ձեզ կանչեցի, որ իմ վերջին «Ողջ մնաք»ն ասեմ ձեզ և գնամ իմ ճանապարհը, որ ուղիղ դեպի երկինք է տանում: Այդպես է հավատում Պապիկ ծառան, որ իր Տիրոջ տեսութեանը արժանի պիտի լինի:

Հիշո՞ւմ եք Թոռնիկի հարսանիքի օրը, երբ կերաք հարսանյաց ճաշը, խմեցիք Շահբաղի գինին, սկսեցիք ուրախական խաղեր երգել, թե՛ «Կերանք Թոռնիկի ճաշը, բարով ուտենք Պապիկի ճաշը»: Եկավ, ահա, հասավ այն օրը, որ պիտի ուտեք իմ հոգեճաշը:

Սիրելի՛ գյուղացիներ, անուշ ուտեք, բայց պետք է Պապիկի վերջին խրատներն էլ ճաշի պես ուտեք: Անշուշտ դուք գիտեք, որ տարիներ ի վեր ես իմ Թոռնիկին շատ դասեր ու խրատներ տվի, թե՛ գյուղական երջանիկ կյանքի և թե՛ հողի ու հողագործութեան արհեստի հաջողության համար: Վերջին անգամ Թոռնիկիս իբրև կտակ պատվիրեցի, որ ինքն էլ նույն դասերը ձեր զավակներին ավանդի:

Իսկ այժմ իբրև կտակ եմ թողնում ձեզ. Պապիկն իր մահվան մահճի մեջ պառկած դեռ խոսել է ուզում ձեզ հետ: Լսեցե՛ք, ինչ որ խոսում եմ, բարեմի՛տ գյուղացիներ:

Տեր Աստված աշխարհի վայելչութեան լավագույն մասը գյուղական ժողովրդին է բաժին հանել: Տեսնո՞ւմ եք, ձեզ է տվել հողագործութեան ընդարձակ դաշտեր, լեռներ, հովիտներ, գետեր, աղբյուրներ՝ Աստծու ստեղծած այլազան բույսերով և ծաղիկներով զարդարված: Դուք իսկապես բնութեան զրախտում եք բնակ-

վում և վայելում նույն բնության տված առատ ու անսպառ բարիքները, մինչդեռ քաղաքացիներն այս դրախտից դուրս են ապրում. նրանց վայելչությունն իրենց ձեռակերտ մեծամեծ շենքերն են, նրանց բոլոր պերճանքները միշտ վաղանցուկ և փոփոխական են, այսօր կան և վաղը՝ ոչ, իսկ ձեր պերճանքը, որ նախախնամությունը վաղուց ի վեր պատրաստել է, կա ու կմնա միշտ անփոփոխ՝ դաշտերը, լեռները, բույսերը, գետերը, աղբյուրները միշտ նույնը կմնան, միայն թե բնության պատրաստած այդ ճոխագույն բարիքները մարդ պետք է գիտենա, թե ի՞նչպես է վայելելու:

Ինչ որ Տեր Աստված Ադամին ասաց, նույնը մինչև այսօր ասում է Ադամի զավակներին, այն է՝ Գործել զերկիր և պահել: Դուք փորձով գիտեք, որ առանց ցորեն ցանելու, արտում ցորեն չի բուսնի, առանց տնկելու և ջրելու՝ ծառ չի աճի, առանց հողագործական աշխատանքի՝ ոչ ոք չի կարող երկրից բերք ստանալ ու ժողովել իր ամբարում: Հողագործ մարդու կյանքը միայն աշխատանքով է արդյունավորվում, հողագործը հողով է ապրում և երջանիկ է ապրում, ինքն ապրելուց բացի, քաղաքի ժողովրդին էլ է հաց տալիս:

Ուրեմն դուք ձեր հողերով, ձեր դաշտերով, ձեր լեռներով, ձեր կաթնատու կովերով ու ոչ-

խարներով և այլ պիտանի անասուններով շատ ու շատ հարուստ եք քաղաքացիներից: Իբրև գյուղացի, փորձառու Պապիկ, խրատ եմ տալիս ձեզ, չլինի՛, չլինի՛, որ գյուղը թողնեք, հողը թողնեք և գնաք քաղաքում բնակվեք. գիտցեք, որ թշվառ կդառնաք, երբ հողը կորցնեք, ձեր կյանքն էլ հողի հետ կկորսվի: Կարիքն ու թշվառությունը վրա կհասնեն, և այն ժամանակ դուք հուսահատ վիճակի մեջ կընկնեք: Այլևս ուրիշ ոչ մի հույս չի մնա ձեզ՝ միայն պանդխտություն: Թողնելով ընտանիքը, զավակներին անտեր, գնալ դեպի օտարություն, չարքաշ աշխատանքով տառապել: Թողնելով հողագործության քաղցր ու ազատ աշխատանքը, ո՛հ, գնալ, բեռնակի՞ր լինել: Թողնելով գյուղի կանաչ դաշտավայրերը, մաճն ու լծկանները, ծառն ու ծաղիկը, հովասուն լեռները, անմահական աղբյուրների ջրերը, քաղցրաշունչ առողջարար օդը, կաթն ու մածոնը, սերն ու կարագը և շատ այլ բնական ու նահապետական բարի վայելքներ, որ մայրենի երկիրը պարգևում է իր զավակներին: Պապիկը պանդխտության դառն կյանքի մեծ փորձ ունի: Զեզնից շատերն էլ նույն փորձն ստացել են: Աշխատեցե՛ք, աշխատեցե՛ք, որ այդ օտարության կյանքի դառնությունները չճաշակեք, ես էլ կազոթեմ ձեզ համար, իմ հայրենակից

գյուղացիներ, որ պանդխտութեան երես չտեսնեք, ձեր հացը մայրենի երկրում գտնեք:

Բայց գիտեք, բարեպաշտ գյուղացիներ, որ մարդիկ միայն հացով չեն ապրում. գնում եք ժամ, Ավետարանի խոսքերը ունկնդրում: Լսեցեք Ի՞նչ է ասում Հիսուսը. «Մարդը միայն հացով չի ապրում, այլև Աստուծո խոսքով պետք է ապրի» (Մատթ. Դ 4, Ղուկ. Դ 4 ևն): Որովհետև եթե մեր մարմինը հացով է ապրում, հոգին էլ պետք է ապրի: Հոգու կյանքն ու հացը Աստուծո պատվիրաններն են: Իսկ պատվիրանների պսակը սերն է. ուստի մարդիկ սիրով են ապրում և իրարով են ապրում:

Ձեզ պարզ օրինակ տամ. մեկ լծով գութան չի լինում, մեկ մարդով ջաղացի քար կամ ձիթահանի գերան անհնար է տանել իր տեղը դնել: Աշխարհիս բոլոր դժվար բաները մարդիկ սովոր են ընկերական միացյալ ուժերով անել: Դուք փորձով գիտեք, երբ որ մեր գյուղի համար մի ծանր գործ է լինում, բոլորս միանում ենք և այդպես անում: Հիշո՞ւմ եք, մի քանի տարի առաջ՝ քրդերը մեր գյուղի ոչխարը զարկեցին-տարան: Այն ժամանակ գյուղի բոլոր կտրիճները հավաքվեցին, որը ձիով, որը ոտքով, գերանդիներ առան սրի տեղ, գնացին, թալանը ետ բերեցին: Դուք ասեք՝ մի մարդը գյուղի ամբողջ թալանը կարո՞ղ էր ետ բերել:

Հիմա հասկցաք, որ մարդիկ իրար օգնելով են ապրում: Հարցրեք, թե ինչո՞ւ են իրարով ապրում: Լսեցե՛ք, պարզ կերպով ասեմ ձեզ. որովհետև աշխարհիս վրա ամեն տեղ՝ գյուղ ու քաղաք մարդկանց կյանքն անհավասար է. մեկը հարուստ է, մեկն աղքատ է, մեկն իշխան է, մեկը հասարակ մարդ, մեկը տեր է, մեկը ծառա է, մեկը տանուտեր է, և մեկը միայնակ: Ահա այս անհավասարությունն է, որ մարդկանց իրար հետ կապում է և մի ընկերակցություն կազմում: Ժողովրդին իշխանի հետ է կապում, ծառային՝ տիրոջ հետ, աղքատին՝ հարուստի, ինչպես մեր գյուղի աղքատ մշակներն են հարուստ տանուտերերի հետ կապված:

Ի՞նչ կասեք դուք. եթե այդ մշակներն աղքատ չլինեին, հանձն կառնեի՞ն մտնել ծառայություն ծանր լծի տակ: «Աղքատությունը խեղճացնում է մարդուն»,- ասում է սուրբ Գիրքը (Առակ. Ժ 4): Եթե մարդն զգա իր անձի արժանապատվությունը, երբեք չի խոնարհվի ծառայություն անելու: Բայց միթե լավ կլինի, եթե ամեն մարդ հավասարապես ազատ լինի, հարուստ լինի, աղա լինի: Ո՛չ, այդ ժամանակ աշխարհիս կարգը կխանգարվի. հայերը մի առած ունեն. «Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա»: Այո՛, ծառան և ջաղացպանը

պետք է ալյուր պատրաստեն, որ աղան կարողանա առանց ջաղաց գնալու հաց ուտել:

Աշխարհիս ժողովրդի ամենամեծ մասը բանավոր, աշխատավոր, մշակ և ծառա են, որոնց թափած քրտինքն է, որ աշխարհը կերակրում է, նախախնամության հավիտենական օրենքը մարդկային ընկերակցության կյանքն այնպես է դասավորել, որ մարդիկ իրարով ապրեն: Դուք տեսնում եք ձեր աչքով և փորձով գիտեք, որ մեր գյուղական կյանքն էլ անհավասար է. որովհետև մի մասը հողատեր ու տանտեր է, մի մասն էլ վարձկան մշակ է, որ իր դառն, քրտնաջան աշխատանքը խիստ սակավ վարձի հետ է փոխանակում: Չլինի, որ ձեր մշակների վարձը կտրեք, կամ ձգձգեք՝ այսօր չէ, վաղը: Տեր Աստված պատվիրում է, որ վարձկան մշակի վարձը մինչև իրիկուն չմնա, այսինքն, օր չանցնի վրան, որովհետև հնձող մշակների բողոքը մինչև երկինք հասնելով, Աստված Եսայի մարգարեի բերանով հանդիմանում էր Իսրայելի հողատեր տանուտերներին: Չարաչար խստությամբ մի՛ վարվեք մշակների հետ: Ես տեսա, որ ոմանք չափից ավելի էին տանջում, հայհոյում էին և հարվածում նրանց, զրկանք հասցնելով, չգիտե՞ք, որ մշակների տերը դուք չեք, Աստված է, որ վրեժխնդիր կլինի և զրկյալ-

ների դատաստանը կտեսնի: Ինչքան քաղցրությամբ ու արդարությամբ վարվեք հողագործ մշակների հետ, այնքան լավ և օգտակար է ձեզ համար, այն ժամանակ նրանք ավելի տիրասեր ու հավատարիմ կլինեն և սրտանց կաշխատեն, որով հողագործության արդյունքը շատ շահաբեր կլինի տիրոջ համար:

Տանուտե՛ր եղբայրներ, հանկարծ չպատահի, որ դուք ազատ աշխատավոր մշակներին անարգ ստրուկ համարելով՝ արհամարհական կերպով վարվեք նրանց հետ: Դուք եկեղեցի գնում եք, Ավետարանի խոսքերը լսում, մի՞թե չգիտեք և չեք հասկացել, որ Հիսուս իր բոլոր հավատացյալներին՝ մեծին ու փոքրին, հարուստին ու աղքատին, իշխանին և շարքայինին, տիրոջն ու ծառային, բոլորին հավասարապես մի սիրո եղբայրություն կազմելով, ասաց այս բանը. «Դուք ամենքդ եղբայր եք» (Մատթ. ԻԳ 8):

Այս խոսքով Հիսուսը մարդկային ընկերակցության յուրաքանչյուր դասակարգի կամ աստիճանի պատիվն ու հարգանքը չի հերքում, ո՛չ: Պողոս առաքյալը Քրիստոսի այս խոսքը բացատրելով ուսուցանում է մեզ, որ մենք ամեն մարդու աստիճանին համապատասխան տանք պատվի ու հարգանքի տուրքը: Ավետարանի սիրո պարտքն անխտիր է, պետք է յու-

րաքանչյուր մարդ՝ ինչ զիրքի և աստիճանի էլ լինի, հատուցի իր ընկերոջ տուրքը: Բայց արտաքին պարտքերի համար էլ Հիսուս ասաց. «Տվե՛ք կայսրին՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. ԻԲ 21, Մարկ. ԺԲ 17):

Տեղը եկավ, ասեմ ձեզ, գյուղացի՛ եղբայրներ, պարտաճանաչ եղեք և միշտ բարեխղճորեն վճարեցեք ձեր պարտքերը՝ ում որ լինի: Սակայն առաջին անհրաժեշտ, մեծ և ամենակարևոր պարտքը հպատակ ժողովրդի համար Տերության պարտքերն են, որ պարտավոր է երկրի ժողովուրդը՝ քաղաքացին և գյուղացին, վճարել ճշտությամբ և հավատարիմ երկյուղածությամբ: Հանցավոր է այն մարդը, ոչ միայն երկրի օրենքի առաջ, այլ նաև Աստծու հայտնած պատվիրանների առաջ, որ կենցիկ ու կխարդախի այս պարտքերում:

Աշխատեցեք միշտ Տերության տուրքերն ու պարտքերը ճշտությամբ, նաև ժամանակին վճարել: Մի՛ թողեք, որ կուտակվի և ծանրանա ձեր վրա և հետո ստիպված լինեք ինչ որ ունեք ծախել ու վճարել տուրքը: Եվ ի՞նչ ունեք դուք, հող և լժկաններ. եթե վաճառեք՝ ձեր կյանքը կվաճառեք և ողջ-ողջ կմեռնեք թշվառության մեջ:

Մեր գյուղի աղքատներին ձեր հոգածությանն եմ հանձնում, բարեսիրտ տանուտերներ,

տերության տուրքերի բաշխումն ուղիղ և արդար արեք: Թեթև դրեք չքավոր տների բեռը, դուք, որ կարող եք, ձեր վրա վերցրեք աղքատների բեռը: Գիտեցած եղեք՝ ով որ ընկերոջ բեռը թեթևացնի, նա կկատարի սիրո պատվիրանի մեծ օրենքը:

Տերության տուրքերի պարտքից հետո, գիտեմ, քաղաքացիներին էլ շատ պարտք ունեն մեր գյուղացիները: Շատ անբախտ են նրանք, որ հողերը ծախելով իրենց պարտքերը վճարեցին, և ոմանք էլ արտերը գրավ դնելով՝ պարտքը պարտքի վրա են ավելացնում ծանրաձանր տոկոսներով, որոնց վախճանը շատ ձախորդ ու դառն է, որովհետև վերջիվերջո չպիտի կարողանան վճարել, և այն ժամանակ պարտապահանջը իրավունք պիտի ունենա վերցնելու ձեր արտերը:

Ուստի խրատ է տալիս ձեզ Պապիկը, աշխատեցե՛ք՝ նախ որ պարտք չանեք. իսկ երբ նեղությունն ու անձկությունը տիրեն վրաներդ, և դուք անճարակ լինեք և պարտք անեք, աշխատեցե՛ք շուտ վճարել քիչ պարտքը, քանի չի ավելացել: Պարտքերի գործում միշտ հավատարիմ եղեք, թե՛ առնելու և թե՛ տալու ժամանակ բնավ նենգություն մի գործեք, արդարությամբ վարվեցեք և արդար արեք ձեր հաշիվները,

գիտեցե՛ք, որ գյուղացի ժողովրդի վարկն ու պատիվը իր հավատարմության և ազնվության մեջ են: Ով որ նենգի և ուրացություն անի, այնուհետև նրա վարկն ու պատիվը կմեռնի քաղաքացիների աչքում, ում որ դիմի և աղաչի՝ չի կարողանա փոխ առնել: Կարող եք հարցնել. «Պապի՛կ, դու չե՞ս ճանաչում քո գյուղացիներին, որ գիր ու հաշիվ չգիտեն: Ինչպես պետք է իր հաշիվը գիտենա ու պահի. նա միայն անգիր, անթուղթ մտահաշիվ ունի, որի համար հաճախ մոռանում է և հրաժարվում»:

Շատ ճիշտ է այդ բանը, դուք ձեր բերանով եք խոստովանում, ես էլ վկայում եմ հետներդ, որ գյուղացիների տունը քանդողը և միակ մեծ թշնամին այն է, որ ինքը գիր ու հաշիվ չգիտե: Մեր կյանքի տնտեսությունը պետք է գրով ու հաշվով լինի, որովհետև մարդուս միտքը մոռացկոտ է, այսօրվա բանը վաղը մոռանում է: Գիրն ու հաշիվը հնարվել են, որ մեր մտքի բաներն անմոռաց պահեն: Ով որ գիր ու հաշիվ չունի, նրա տնտեսությունը խանգարված է, և ինքն իր առևտրի մեջ միշտ կվնասվի: Շատ անգամ եմ ասել ձեզ և այսօր վերջին անգամ, իբրև կտակ, ավանդում եմ ձեզ իմ խրատները:

Մեր գյուղի դպրոցի համար հոգ տարեք, որ ձեր երեխաները կրթվեն, գիր ու հաշիվ սովո-

րեն: Ձեր ժամանակն արդեն անցել է, անհաշիվ ապրեցիք, անհաշիվ պիտի մեռնեք, գոնե ձեր երեխաները կրթվելով՝ ուսյալ լինեն, գիտենան իրենց կյանքի տնտեսության գործերը: Եթե քաղաքացին ամեն բան գրով ու հաշվով է անում, ինչո՞ւ գյուղացին էլ քաղաքացու պես հաշիվ չիմանա: Որքա՛ն ամոթ է գյուղացու համար. երբ խաբվում է, սկսում է տրտնջալ ու ասել թե՛ «Քաղաքացին ինձ խաբեց...», և այլն: Մի՞թե գյուղացին մարդ չէ, բանականություն չունի: Այո՛, մենք էլ մարդ ենք, սակայն մեր բանակա-նությունը աչքը տգիտությունը փակված է: Մենք աչք ունենք և իբրև կույր ենք շրջում աշխարհիս վրա, սրա համար քաղաքացին մեզ անգետ, անխելք է համարում, ո՛հ, երբեմն ավելի նախատելով՝ հիմար էլ է անվանում: Այս անտանելի նախատինքը հավիտյան չի անցնի մեր վրայից, քանի դեռ մենք կրթություն և ուսում չունենք, և քանի դեռ մեր մտքի աչքը բացված չէ, մենք մոլորված պիտի լինենք աշխարհիս մեջ: Գիտե՞ք, որ մոլորված մարդու կյանքի ճանապարհը թշվառության փշերով լի է և դեպի կորուստ է տանում:

Ուրեմն, սիրելի՛ գյուղացիներ, այս կորստյան ճանապարհից ազատվելու համար մեզ պետք է անխոտոր, ուղիղ ճանապարհ: Իսկ

ի՞նչն է, որ շիտակ ուղին բացում է մեր աչքի առաջ: ցերեկվա արևը չէ, գիշերվա լապտերն ու ճրագը չեն: Ո՛չ, այդ՝ աշխարհի լույսերը բավական չեն մեր կյանքի համար, եթե մենք մտքի լույս չունենանք, այն է՝ ուսում և կրթություն, որ մարդ ստանում է իր մանկական հասակից: Ուստի կրթեցեք ձեր մատաղ տղաներին, որ մեծանան՝ մարդ դառնան, թող բացվեն նրանց մտքի աչքերը, չչրջեն աշխարհիս վրա իբրև կույր: Կրթեցեք նաև ձեր աղջիկներին, որ խելացի տնտեսուհի և բարի մայրեր լինեն: Պետք է գիտենաք, որ տան շենությունը, կարգավորված տնտեսությունը միայն կանանց ձեռքով է լինում: Մի՞թե կանայք մարդ չեն, հոգի ու միտք չունեն: Տեր Աստված կնոջը ոչ միայն զավակ ծնելու համար, այլ իբրև ընկեր և օգնական տվեց, որ աշխատանքում գործակից լինի՝ մարդը դաշտում աշխատի, կինն էլ՝ տան մեջ: Դուք տեսե՞լ էք, որ մեկ եզով արորն աշխատի. այր և կին զույգ լծակիցներ են: Եթե ուշադիր նայենք, աշխատանքի մեծ բաժինը կանանց վրա է ծանրացած: Խեղճ կանայք իրենց ծնած զավակներին սնելուց բացի, որքան ծանր ու դժվարին, առտնին գործեր են անում տնտեսության մեջ: Լսեցե՛ք, որ մեկառմեկ ասեմ ձեր գյուղացի կանանց գործերը: Ամեն օր խմոր շա-

ղախել, բարկ թոնրի դիմաց հաց թխել, կերակուր պատրաստել, դաշտի մշակներին հաց տանել, երեկոյան-առավոտյան մատակները, կովերը կթել, գնալ պերատեղ ոչխարները կթել, կաթի հետ կապված գործեր անել, ծրծում կամ տիկ զարնել, յուղ ու պանիր սարքել, հյուրերը ընդունել, շատ անգամ նույնիսկ ախոռ մաքրել, փթիթ թխել, ամրոց շինել, ձմռան համար վառելիք պատրաստել, բուրդ գզել, մանել, գուլպա, թափպան հյուսել և ուրիշ շալե բաներ գործել, լվացք, կար ու կարկատան անել, գնալ դաշտեր, լեռներ՝ ներկի ծաղիկներ ու արմատներ հավաքել, նախշուն կարպետներ գործել... ո՞ր մեկն ասեմ: Դեռ ուրիշ շատ գործեր էլ կան, որ գյուղացի կանանց է բաժին ընկել: Խեղճ կանայք անմոռունջ հնազանդությունը այս բոլոր աշխատանքներն անում են: Դուք գիտեք ու տեսնում եք. այս աշխատավոր կանանցից ոմանք իրենց՝ խստաբարո և անխիղճ ամուսիններից չարաչար ծեծ են ուտում և հայհոյանքներ լսում:

Գիտեմ, պատասխան կտաք. «է՛, Պապի՛կ, ի՞նչ բաներ ես խոսում: Մենք մեր անզգամ, լեզվանի կանանց եթե չծեծենք և չփետտենք, կարո՞ղ ենք գսպել: Դու խրատ ես տալիս մեզ, որ աղջիկներն էլ տղաների պես կարդալ սովորեն: Դու գիտե՞ս, ի՞նչ կլինի այն ժամանակ. մտքե-

ըր կբացվեն, լեզվանի և անդգամ կդառնան, ամեն բանին համարձակ պատասխան կտան, իրենց բնական ամոթխածության քողը կպատուեն, հնազանդության լուծը կկոտրեն, դու տես այն ժամանակ ամուսնու և կնոջ կռիվը: Տան խաղաղությունը կվերանա, մեր հին նահապետական կարգն ու կանոնը կխանգարվի: Մենք մեր պապերից այնպես ենք սովորել, որ կանայք լուռ ու մունջ մնան: Սրա համար մեր հարսները սովորել են յոթ տարի անխոս մնալ տան մեջ, ոչ ոքի հետ չխոսել, միայն ամուսնու հետ խոսել, այն էլ ոչ թե մարդկանց առաջ, այլ՝ առանձին: Երբ մեր աղջիկները կարդալ սովորեն, հետո ամուսնանան, հարս դառնան, էլ նրանց լեզուն կբռնվի՞. մանավանդ եթե ուսյալ լինեն, գիրք կարդալով աշխարհի բաներն իմանան: Բացի սրանից, շինականի աղջիկները մի՞թե ժամանակ ունեն, որ դպրոց գնան, կարդալ-գրել սովորեն, մեր տուն ու դաշտի գործերն ո՞վ պիտի անի:

Մենք Պոլիս գնալով-գալով տեսել ենք ու գիտենք. այդ պոլսեցի կանայք, երբ կարդալ-գրել սովորեցին, բոլորը ճարտար փաստաբան դարձան, խեղճ ամուսինները գերի են իրենց ձեռքը: Մինչև անգամ համարձակվում են բողոք տալ Հայոց Պատրիարքարանին և ամուս-

սիններին դատաստան քաշ տալ: Մենք, այս բաները տեսնելով, վախենում ենք. լավ կլինի, որ կանայք տգետ մնան ու հնազանդվեն մեզ»:

Լավ եմ հասկանում ձեր խոսքերը, սիրելի՛ գյուղացիներ: Լսեցե՛ք, որ պատասխանեմ: Երեսուն-քառասուն տարի առաջ, ազնվորեն խոստովանում եմ, Պապիկն էլ ձեր պես էր մտածում ու խոսում, բայց երբ կարդալ սովորեցի, գրքերի համն առա, պանդխտության մեջ շրջելով՝ աշխարհի բաներն ու փոփոխություններն աչքովս տեսա: Այնուհետև սկսեցի միտքս փոխել: Պետք է գիտենաք, որ ժամանակն ամեն բան իր հետ փոխում է: Դուք ի՞նչ եք մտածում. ուղում եք, որ հնության մեջ անփոփոխ մնաք: Դուք եթե այժմյան ձեր վիճակի մեջ մնաք, այսպես անշարժ՝ ինչպես լճացած ջուրը, գետերի վտակների պես առաջ չգնաք, կցամաքեք ու կչորանաք տգիտության ու թշվառության մեջ: Մարդ պետք է ժամանակի հետ քայլի, ով որ ետ մնա, հացի կարոտ կլինի, պետք է գիտենաք, որ աշխարհիս վրա ավելի շատ են տգետները, որ խեղճ ու թշվառ կյանք են վարում:

Կար ժամանակ, որ քաղաքացին ու գյուղացին առհասարակ տգետ էին և տգիտության մեջ հավասար կերպով էին ապրում: Այժմ քաղաքացին առաջ է գնում իր դպրոցներով:

Տղան ու աղջիկը հավասարապես կրթվում են: Մենք՝ գյուղացիներս, եթե ոչ քաղաքացիների չափ, գոնե փոքրիչատե ուսանելով չկրթվենք, այդ ժամանակ մենք քաղաքացիների առաջ ստրուկ կլինենք, որովհետև տգիտությունն է, որ մարդուն ստրուկ, գերի է դարձնում: Ահա սրա համար է, որ քաղաքացին առաջ է գնում, հարստանում է, իսկ գյուղացին ետ է մնում ու չքավոր դառնում:

Դուք այնպես եք կարծում ու մտածում, թե երբ աղջիկները գրել ու կարդալ են սովորում, լեզվանի ու անզգամ են դառնում և այդուհետ իրենց բնական պատկառանքն ու համեստությունը կորցնում են: Ձեր այս դատողությունը շատ սխալ է. օրինակը մեր աչքի առաջ է: Մեր գյուղը երկու հարյուր տնից ավելի է: Մեր գյուղի կանայք, բոլորն էլ, հավասարապես անուս են, գրել կարդալ չգիտեն: Ձեր ասածն ի՞նչ է... մի՞թե ձեր այս կանայք պակաս անզգամ և լեզվանի են: Դուք դեռ չգիտեք, որ ամեն չարաբարոյությունն աղբյուրը տգիտությունն է, և կանանց տգիտությունն ավելի վնասակար է մի ընտանեկան գերդաստանի համար, քան թե այդ մարդու: Լսեցե՛ք, թե ինչ է ասում Սողոմոն իմաստունը. «Իմաստուն կանայք շինում են տները, իսկ անզգամները իրենց ձեռքով քանդում»

(Առակ. ԺԴ 1): Դուք այնպես եք կարծում, թե տուն շինել, շենացնել, պահել կարող են միայն տղամարդիկ, կանայք շենացնելու գործում ոչ մի դեր չեն խաղում: Բայց պետք է գիտենաք, որ տան շենությունն ու լիությունը կանանց ձեռքին է: Դուք դաշտի վաստակը բերում-լցնում եք տանը, բայց եթե կինը տգետ ու հիմար լինի, չգիտենա տուն կառավարել, չգիտենա, թե ինչպես է պետք տան կարիքները հոգալ, չափով ու խնայողաբար տնտեսել, այն ժամանակ կտեսնեք, որ տարվա պարենը կես տարվա մեջ կսպառվի, ո՛չ ամբարում ալյուր կմնա և ո՛չ մառանում յուղ, պանիր և նպարեղեն, որովհետև տնտեսելու համար խելք, իմաստություն է պետք է: Իսկ երբ տանտիրիկինն անխելք է, տան շենությունը կսկսի ներսից քանդվել:

Թողնե՛ք տան նյութական կողմը և հացի խնայողությունը: Մի տան կամ ընտանեկան գերդաստանի շեն ու հաստատ լինելու համար ավելի շատ բարոյական ամրություն է պետք, եթե այդ ամրությունը չպահպանի տունը, շուտով կփլվի նյութական շենքը: Ի՞նչն է, որ տան բարոյական շենքը կառուցում է հիմքից սկսելով: Գիտե՞ք, ասեմ ձեզ՝ մայրական կրթությունն ու խնամքն է: Իսկ ի՞նչպես կարող է մի մայր կրթել իր մատաղածին մանուկներին, երբ ինքն անկիրթ և տգետ է:

Սրա համար է, որ չարաբարո են լինում մեր մանուկները, որովհետև մայրերն անմիտ են, այնքան, որ իրենց ծնած զավակներին անգամ չեն կարող սնել: Այդ պատճառով է, որ մահանում են նորածինները: Զարմանալի է, շատերը կարծում են, թե գյուղական ժողովուրդն ավելի շատ է երեխա ունենում և բազմանում: Այս կարծիքը շատ սխալ է. մենք տեսնում ենք, որ ծնվածների կեսն անգամ չի մնում, խեղճ երեխաներն իրենց մայրերի անկրթության գոհն են դառնում: Մենք իրավունք չունենք մեղադրելու այդ մայրերին: Դուք կարծում եք, թե երեխա ծնելն ու պահելը դյուրի՞նք բան է: Երեխաները մեր դաշտերի ինքնաբույս խոտերը չեն, որ ինքնուրույն, առանց խնամքի աճեն և զորանան: Միմիայն կրթված մոր խնամքն է, որ կարող է պահել և սնել զավակներին:

Այնպես մի կարծեք և ասեք, թե կաթն ու հացը բավական են երեխաների սննդի համար: Մենք տեսնում ենք, որ թռչունները, անասունները այդքանն են միայն հոգում, երբ ձագերի թևերն աճում են, թռչում են, իրենք իրենց կարիքները հոգում: Նմանապես հորթուկները, երբ կաթից կտրվում են, սկսում են դաշտ գնալ, արածել և իրենց ճարը տեսնել:

Է՛, սիրելի՛ գյուղացիներ, ուրեմն չգիտե՞ք, որ դուք բանական մարդ եք, ձեր կյանքը

թռչունների և անասունների կյանքի հետ նմանութուն չունի: Տեր Աստված Ադամին անեծք տալով ասաց. «Բո հացը ճակատիդ քրտինքով ուտես» (Հմմտ. Ծննդ. Գ 19),- այսինքն՝ տաժանելի աշխատանքով ճարես հացդ: Փոխարենը թռչունների և անասունների համար ոչ մի բան չասաց, որովհետև երկնավոր Հայրը կերակրում է դրանց, ինչպես վկայում է Հիսուս: Մենք եթե միայն հացով ապրենք, այն ժամանակ անասուն կդառնանք: Սրա համար Հիսուս ասաց. «Մարդ միայն հացով չի ապրում, այլ Աստուծու խոսքով»:

Դուք ի՞նչ եք ասում. «Աստուծու խոսքը, երկնային արքայութունը միայն տղամարդկա՞նց համար են, կանայք բաժին չունե՞ն, զրկվա՞ծ են: Աստվածաշունչ Գիրքը, օրենքը, պատվիրանները, Ավետարանը միայն տղամարդկա՞նց համար տվեց Աստված»: Ո՛չ, այդպես չէ, Տեր Աստված Ադամին ու Եվային հավասարապես տվեց իր պատվիրանները: Նաև նրանց սերնդին է հավասար կերպով ավանդել իր աստվածային պատվերները Մովսեսի և Հիսուսի ձեռքով:

Ուրեմն կին-արմատն էլ պետք է գիտենա ու հասկանա այդ աստվածային պատվիրանները, որ բովանդակվել են Հին ու Նոր կտակարաններում: Բայց ի՞նչպես կարող է կարգալ ու հաս-

կանալ Աստծու խոսքը, եթե փոքր հասակից սկսած չսովորի դպրոցում, որ հետո մեծանալով կրթված մայր լինի և կարողանա կրթել իր ծնած մատաղ զավակներն: Դուք չգիտեք, որ այդ փոքրիկները միայն իրենց ծնող մոր կրթութեանն ու խնամքին են հանձնված, հայրերը գործ չունեն, մանավանդ գյուղացի հայրերը ամբողջով թյամբ զբաղված են լինում իրենց մշակական աշխատանքով: Ո՞վ է, որ երեխային առաջին անգամ երեսը խաչակնքել է սովորեցնում. քրիստոնյա մայրը: Ո՞վ է, որ հետաքրքրասեր մանկան ամեն մի հարցումին քաղցր ու մայրենի գորովով պատասխան է տալիս անձանձիր. մայրը: Ո՞վ է, որ երբ մանուկը, աչերը դեպի երկինք դարձնելով, տեսնում է կապույտ երկնի երեսի լուսավոր կետերը, հարցնում է, թե՛ ի՞նչ են: Մայրն է, որ պատասխանում է, թե. «Արևը, լուսինը, աստղերն են, Աստված ստեղծել է մեզ համար, որ ցերեկն ու գիշերը լույս տան»: Իսկ երբ մանուկն իր շրջապատի բաներն է տեսնում ու հարցնում, այդ բոլոր հարցերի պատասխան տվողն ո՞վ է. դարձյալ մայրը: Այո՛, մանուկն իր լեզուն մորից է սովորում. Աստծուն և Աստծու խոսքերն էլ մորից է իմանում: Մարդիկ այնպես են կարծում, թե այդ բաները միայն վարժապետից կամ վարդապետից պետք է սովորեն

մանուկները: Այդպես չէ, լսեցե՛ք, բացատրեմ: Մեր նորածին երեխաներին տանում են եկեղեցի, քահանան մկրտում է ավազանի մեջ, կնքահայրն անլեզու երեխայի կողմից թարգման է լինում. հավատք, հույս, սեր խնդրելով՝ քրիստոնեական դավանությունն տալիս: Բայց ո՞վ է, որ երեխային մկրտում է մայրենի տան ավազանի մեջ, այդ մկրտող բնական քահանան նույն ինքը ծնող մայրն է, որ երբ երեխայի լեզուն ու միտքը բացվում են, սկսում է սովորեցնել քրիստոնեություն համառոտ՝ պարզ ու բնական դասերը, երեխայի մատաղ սրտի մեջ ցանում է սուրբ կրոնի սերմիկները, որ հետզհետե բողբոջում են մանկան աճելուն գուգընթաց:

Հիմա տեսա՞ք, որ տան, ընտանեկան դպրոցի առաջին բնատուր և մեծ ուսուցիչն ու կրթողը ծնող մայրն է: Չենք սխալվի, եթե ասենք, որ քրիստոնեական ուսման և նախակրթության մեջ առաջին վարժապետը, վարդապետը, աստվածաբանը, դաստիարակը մայրն է, և մանավանդ բարեպաշտ մայրը, որ միայն լեզվով չի ուսուցանում, այլև իր մայրական բարի օրինակով է կրթում զավակներին: Մեր գյուղացի եկեղեցասեր մայրերը, տեսնո՞ւմ եք, իրենց երեխաներին գրկելով գնում են եկեղեցի, Աստվածածնի և Խաչի պատկերների առաջ մոմ վառում,

ծոռնը դնում, աղոթքում: Երեխան իր մոր այս օրինակները տեսնելով՝ տպավորվում է, կնիքի պես իր մանկական մաքուր սրտին դրոշմվում է: Իսկ երբ կամաց-կամաց մեծանում է, սկսում է հարցնել. «Մայրի՛կ, ո՞վ է Աստվածածինը, ո՞վ է Քրիստոս, ինչո՞ւ խաչվեց Քրիստոս, ի՞նչպես հարուժյուն առավ և համբարձվեց երկինք»:
Ո՛հ, այստեղ անուս և տգետ մայրը չի կարող պատմել Քրիստոսի ծնունդն ու մյուս պատմությունները:

Այժմ հասկացա՞ք, գյուղացի՛ եղբայրներ, որ մայրերն են միակ և առաջին վարժապետն ու կրթիչը իրենց զավակների: Այս էլ բավական է, վարդապետի չափ երկար քարոզ ու խրատ կարդացի ձեզ: Պահեցե՛ք իմ այս վերջին կտակը, հոգ տարե՛ք այսուհետ ձեր զավակների համար, տղաներին ու աղջիկներին հավասարապես կրթեցե՛ք: Ինչպես ասել եմ Թոռնիկիս դասերում, մեր գյուղական դպրոցները մեծ ծախս չեն պահանջում. եթե յուրաքանչյուր տուն կալի ժամանակ մեկական կոտ ցորեն տա, դպրոցի բոլոր ծախսերը կհոգան: Գիտեմ, դուք շատ ցավեր ու տուրքեր ունեք հոգալու, բայց դպրոցի տուրքն այնպիսի մի կարևոր և օգտակար տուրք է, որ ձեր այդ շատ ցավերին դարման կլինի: Դուք այս խոսքերը հիմա չեք հաս-

կանա, բայց կհասկանաք այն օրը, երբ տեսնեք կրթության արդյունքը, կհիշեք ինձ և ողորմի կտաք Պապիկի հոգուն:

Սիրելի՛ գյուղացիներ, կարծեմ այսքանը բավական է, իմ խրատն ու կտակը պահեցե՛ք և ձեր զավակներին ավանդեցեք: Դեռ շատ բան կար ձեզ ասելու, բայց շունչս սպառվեց, այլևս չեմ կարող շարունակել: Մնաք բարյավ, խաղաղությամբ: Աղոթեցեք ինձ համար, որ բարի հրեշտակը քաղցրությամբ առնի հոգիս: Արժանի չեմ երկնային արքայության լուսեղեն դարպասին, ինձ համար շատ է, եթե դռան սպասավոր ու դռնապան լինեմ: Դուք երկրից աղոթեցեք, ես էլ երկնային արքայության դռան առաջ ծնկի իջած, ամբողջ հոգով կաղոթեմ, որ բարերար Աստված ողորմություն անի համայն աշխարհին և մեր խեղճ հայ ազգին. ամեն:

Է՛, սիրելի՛ Թոռնիկ, ժամանակը հասել է, որ հոգիս ավանդեմ, հրեշտակն սպասում է: Դեռ մի վերջին կտակ ունեմ ձեզ, որ պետք է ամենայն հավատարմությամբ և ճշտությամբ կատարեք և ժառանգեք Պապիկի օրհնությունը:

Ես մեռնում եմ, Թոռնի՛կ, ինձ տարեք-թաղեցեք մեր արտում, որ գերեզմանոցին մոտ է: Գերեզմանս փորել տուր արտի այն կողմում, ուր բարդի, ուռենի ծառեր կան: Դու գիտես, որ

Հաճախ Պապիկն աշխատանքից հոգնած, գնում էր, այդ ծառերի տակ նստում, Հանգստանում: Երբեմն էլ գլուխը ծառի բնին դրած անուշ քուն էր մտնում: Այժմ էլ գերեզմանի մեջ պիտի ննջեմ, մինչև Գաբրիելն իր փողը հնչեցնի:

Այդ իմ գերեզմանի արտը երբ վարես, ցորեն ցանիր: Պատվիրում եմ քեզ, որ այդ արտի մաքուր ցորենից բավականաչափ աղաս, ալյուր անես, հանձնես գյուղի քահանային, որ նշխար պատրաստի, Պապիկի հոգու հանգստություն համար պատարագ մատուցի մեռելոցի հինգ տաղավար օրերին: Նմանապես այգեկուլի ժամանակ, լավ ու հասուն խաղողները քո ձեռքով գատիր ու առանձնացրու, ամբողջ տարվա բաժակցուն պատրաստելով՝ քահանային հանձնիր, թող եկեղեցում պահի:

Իմ հոգեճաշն ամենայն առատությունքով պատրաստիր, ձեր հարսանիքին սև, ծուռ վարող եզը մորթեցինք: Նորից նայի՛ր. մեր գուլթանի տավարներից ծուռ վարող եզներ կա՞ն, որ լծընկերոջ հետ հավասար չեն քաշում և միշտ խոփն ակոսից հանում են. եթե կան՝ մորթիր, Պապիկի համար մատաղ արա, ամբողջ գյուղի աղքատներին լիությունք կերակրիր: Դու այժմ շուտ մարդ ուղարկիր Վարագա վանք, թող կանչեն Դանիել վարդապետին, որ գյուղի զարգացման

նվիրյալն է: Թող գա, ինձ թաղի և ասի «Հոգևոցն» (Կանոն թաղման ննջեցելոց աշխարհականաց): Մի գոմեշի նորահաս ձագ հոգեբաժին տուր Վարագա վանքին, որովհետև այդ վանքի շնորհիվ ենք մենք կարգալ սովորել:

Թոռնի՛կ, գերեզմանիս վրա մի խաչքար կկանգնեցնես և այսպես կգրես հիշատակիս. «Այս է տապան Արջակեցի Պապիկի, որ հող ու մած սիրեց, իր Թոռնիկին հողագործության դասեր տվեց, իր կտակն ավանդեց ու մեռավ: Ով Հանդիպի, թող ասի՝ Աստված ողորմի Պապիկի հոգուն»:

Հոգիս ավանդելու ժամը հասնում է, Թոռնի՛կ: Կանչիր մայրիկիդ, կանչիր Շուշանին և իր զավակներին: Եկե՛ք, միասին Պապիկի ձեռքը համբուրեցե՛ք, ստացեք իմ վերջի օրհնությունը և դուրս գնացեք, ինձ առանձին թողեք, որ մի պահ հանգիստ մնամ, ավանդեմ հոգիս:

Իմ պահապան բարի հրեշտակը ոստիկանի պես գլխավերևումս կանգնել է: Տեսնո՞ւմ ես, ամբողջ մարմինս մահվան քրտինքի մեջ լողում է: Այն քրտինքը, որ ես թափում էի դաշտում... ո՛հ, սա վերջին քրտինքս է, որ մահվան համար եմ թափում: Այլևս պետք չէ ինձ աշխարհիս հացը, միայն թե երկնային արքայություն հացին արժանի լինեմ:

Բարի՛ հրեշտակ, շատ շնորհապարտ եմ քեզ, խանձարուրիցս մինչև մահվանս մահիճը ինձ պահպանեցիր: Շատ անգամ քեզ վշտացրի, բայց շատ անգամ էլ ուրախացրի: Երբ մեղանջում էի, երեսդ դարձրած տրտմում էիր, երբ զղջացած ապաշխարում էի, ցնծում էիր: Ամբողջ կյանքիս ընթացքում չգիտեմ որքան լաց եղար, որքան ուրախացար: Օրհնյալ է Աստված. այս վերջին պահիս խիստ պայծառ ես թվում: Հոգիս հույսով է լցվում, կարծում եմ, որ հավատով պիտի ավանդեմ հոգիս: Միայն խնդրում եմ, որ ասես ինձ, մահվան հրեշտակ. հոգիս առնելով՝ ո՞ւր պիտի տանես:

«Դու Գրոց աշակերտ ես, Պապի՛կ, միթե չգիտե՞ս, որ հավատացյալների հոգիները նախ պետք է Քրիստոս դատավորի առաջ կանգնեն: Միայն քննող դատավորն է որոշում մարդկանց հոգիների վիճակն ու տեղը: Դրա համար մի՛ մտածիր, Քրիստոսի Հոր տունը շատ ընդարձակ է և բազում առանձին օթևաններ ունի»:

Ուրեմն աղաչում եմ, բարի՛ հրեշտակ, ինձ համար բարեխոս եղիր Քրիստոսի առաջ, ես տուն, օթևան չեմ ուզում: Ես դաշտի հողագործ մարդ եմ, աշխատանքի սովոր: Երկնային արքայության դաշտից մի փոքրիկ արտիկ եմ ուզում, վարուցան անեմ: Գիտեմ, արքայության արտերը շատ

պարարտ ու բերրի են աշխարհիս արտերից, ուր տատասկ, փուշ և որոմն խառն են աճում:

«Խեղճ Պապի՛կ, խելքդ հողին ու աշխատանքին ես տվել, չգիտես՝ ինչ ես խոսում: Ինձ թվում է, որ Հիսուսի Ավետարանի խոսքերը մոռացել ես, կամ ձերացել-զառամել ես: Դու չգիտե՞ս, որ արքայության մեջ աշխատանք այլևս չկա աղամորդու համար: Օրհնյալ լինի Քրիստոս, որ ձեր Աղամ պապի վրայից վերացրեց այն անեծքը, թե՛ «Քրտամբք երեսաց քո կերիցես զհաց քո» (Հմմտ. Ծննդ. Գ 19): Պետք է գիտենաս, Պապի՛կ, որ արքայության մեջ աշխատանք, քրտինք, ցավ, տառապանք՝ ոչ մեկը չկա: Արքայությունը միայն Աստծու փառքի վայելքն է, մարմնավոր մարդիկ մեզ պես հրեշտակ են դառնում: Ո՛չ հաց է պետք, ո՛չ ջուր, ո՛չ հանդերձանք: Մարդ ու հրեշտակ Աստծու փառքով են հագնում և լույսով ողողվում: Բայց այս ասեմ քեզ, Պապի՛կ, ամեն ծնված մարդ, ինչ որ ցանել է աշխարհիս վրա, այն պիտի հնձի. այսինքն ինչ որ արել է, իր գործերի չափով պիտի ընդունի: Բարիք գործածների համար Քրիստոսի արքայությունն է պարգևը, իսկ չարագործների համար՝ դժոխքը»:

Այդ գիտեմ, բարի՛ հրեշտակ, և դեռ այս ծանր, մահաժամ վայրկյանիս սովորել եմ ուզում քեզնից. եթե յուրաքանչյուր մարդ, ինչ

որ ցանել է այս աշխարհում, դա պիտի հնձի այն աշխարհում, ուրեմն երկնային արքայության մեջ իմ համար գործ կա: Այստեղ ցանածս այնտեղ բուսնած կլինի և հասած այժմ: Գերանդիս հետս առնեմ, որ ցանածներս քաղեմ:

Դու ասում ես՝ Արքայության մեջ ուտել-խմել չկա: Այդ դեպքում ի՞նչ է այդ բարեկից սեղանը, որ պատրաստում է Քրիստոս իր սիրելիների համար և ինքն էլ գոտի կապելով ծառայում է սեղանին: Ա՛հ, Պապիկը ցանկանում է, որ աշխատի, այդ երկնածին սեղանին հաց պատրաստի: Մի՞թե առանց հացի սեղան է լինում, կամ առանց այգի տնկելու գինի: Ես հացի մշակ եմ, Մասիսի Նոյ նահապետն էլ թող այգի տնկի, գինի պատրաստի:

«Շատ ես պարզամիտ, Պապի՛կ, ինչե՞ր ես խոսում: Հիսուս աշխարհ եկավ, ամեն բան Ավետարանով ձեզ պատմեց, երբ ձեզ նման մարդ եղավ և ինքը մարդկանց տեսավ, փորձեց ու վկայեց, թե՛ «Այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լույսի որդիները» (Ղուկ. ԺԶ 8): Բայց ես զարմանում եմ, Պապի՛կ, երբ դու մահվան հրեշտակի հետ կատակով ես ուզում խոսել: Չգիտե՞ս, որ հրեշտակները կատակ չեն սիրում: Զաքարիան թերահավատության մի կատակ արեց, իսկույն պատժվեց: Ասում

ես՝ «Գերանդիս հետս վերցնեմ»,- կարծելով, թե մենք՝ հրեշտակներս, հնձող գերանդի չունենք: Չե՞ս կարդացել Հայտնության Գիրքը և մարգարեների տեսիլքներում երևացած գերանդիների մասին: Մենք մի գիշերվա մեջ Երուսաղեմը պաշարող Սենեքերիմի զորքից հարյուր ութսուն հազար հոգի հնձեցինք: Ավելի եմ զարմանում այն բանից, որ ցանկանում ես արքայության մեջ քեզ մի արտիկ տան, և դու արքայության սեղանին հաց պատրաստես:

Է՛հ, Պապի՛կ, դու չես կարող ըմբռնել այժմ երկնային խնջույքը, որի սեղանն անմահական է, հացն անմահական, գինին անմահական: Դու ո՞վ ես՝ մահկանացու ապիկար մարդ, որ մեծամտությամբ ուզում ես այն սեղանին հաց պատրաստել, որ միայն Հիսուս իր Նաչով և Արյունով պատրաստեց: Այլևս բան մի հավելիր, Պապի՛կ, տարածամ է, տուր հոգիդ, հավատա ու հանգիստ եղիր:

Աստված գիտե, թե իր հավատարիմ ծառաներին ինչպես պետք է վարձատրի: Գիտեմ, Պապի՛կ, վարձքդ մեծ է երկնքում, որ ընկերասիրության պարտքը կատարել ես, ոչ մեկին զրկանք չես պատճառել, ճակատիդ քրտինքով ես հացդ կերել մինչև այսօր և այժմ բարի մահով պիտի ննջես»:

Պապիկը պինդ բռնել էր իր հոգին, դեռ խոսել էր ուզում, բայց երբ տեսավ, որ հրեշտակը չի համբերում, ձեռքերը խաչեց սրտի վրա, փակեց իր նվաղած աչքերը և վերջին բարբառը մրմնջաց: Ասաց. «Ահա հոգիս առ, բարի՛ հրեշտակ»: Այնքան զվարթ ու դյուրությամբ ավանդեց Պապիկն իր հոգին, կարծես մի խնձոր էր ծոցից հանում: Ութսուներկու տարի կյանքի ծառից կախվելով ամբողջովին կարմրել և հասունցել էր:

Ծառից խնձորի ընկնելու պահին հրեշտակը հասավ վերևից, վերցրեց և խոյացավ:

Այսպես մեռավ Պապիկը, ավանդեց իր հոգին և հոգու հետ ավարտեց նաև իր «Պապիկ և Թոռնիկ»ը:

Աստված ողորմի Պապիկ նահապետի հոգուն. ամեն:

Վ Ե Ր Ձ

ԲԱՌԱՅԱՆԿ

ազպանսարում-երիտասարդների (ազապ) նախահարսանեկան հավաք

ալաճակեռնոյ (ալաճա կոնոյ)-ալաճա պար՝ շուրջպարի տեսակ, խուռններամ պար, երբ տղա-աղջիկ, իրար ձեռք բռնած, երգում ու պարում են

ական բանալ-գողության համար անցք բանալ, պատը ծակել

ամրոց-փթիրից շարված և թաց գոմաղբով ձեփված կոնաձև շինվածք, որի մեջ վառելիք էին լցնում անթրոց-աթարոց, թոնրի մեջ աթարը կամ կրակը խառնելու երկար ձող

ապա-մազահյուս, պինդ գործվածքից բաճկոն ապրշում-մետաքս

առապար-քարոտ կամ դժվար տեղ

առաքամ-գուլթանի փայտե մաս

առիք-առաստաղ

բաժակցու-հաղորդության գինի, բաժակացու

բալ-մոլախոտ

բախշիշ-պարգև, ընծա, նվեր, վարձատրություն
բասմա-անասունների աղբը ձմեռը հաստ շերտով տա-
փակ փռած, որ ոտքի տակ ճզմվելով ամրանում է, և
կտրատելով (աթար) կիրառում են իբրև վառելան-
յութ
բերաբեր-տե՛ս պերատեղ
բորակ-հանքային նյութ (nitrum)
գզիր-գյուղական պաշտոնյա, տանուտերին ստորադրյալ
և նրա կարգադրությունները կատարող
գրամաթ-վիճակ, բախտ, ճակատագիր, հաջողու-
թյուն
գոփի կապիլ-գործի պատրաստվել (համտ. թևքերը
քշտել)
դիր-ցորեն սերմանելու մի առանձին ձև, որ առատ
և ընտիր ցորեն է տալիս և արտը քիչ է հոգ-
նում
դնթեկ-հավանաբար նստելու համար նախատեսված
բարձ
ժամիկ-պանրանման նյութ, որ ստացվում է՝ թանը եփե-
լուց և քամելուց, և որը աղելով ու հետը անուշահամ
բանջարներ խառնելով՝ պահում են կճուճների մեջ և
պանրի տեղ գործածում
ժողովք անկ-խնդրելով գումար հավաքել
լակ-լափ
լիփր-ծանրություն չափի միավոր, հավասար է տաս-
ներկու ունկի

խաղախորդ դապաղ (դարաղ)-արհեստավոր, որ աղա-
ղով (Ջրում լուծվող նյութ) մորթը մշակելով՝ կաշի
է ստանում
խաչերկաթ-երկու շերտերից խաչաձև շինված բաց-
վող ու փակվող երկաթ, որ վառվող թոնրին են
դնում և վրան շարում կերակրի պուտուկները
խոզակ-բոժոժ
խոզան-1. հնձած արտի տակը մնացած հասկերի ցո-
ղունով արտ, 2. անմշակ մնացած արտ
խումհար-խումար, հարբեցություն հաջորդ թմրու-
թյունը. զարթխում
ծրծում-լայնաբերան, կժի ձև ունեցող միկանթանի
փոքրիկ խնոցի, որը ոչ թե կախում էին ցցերից,
այլ ուղղակի դնում էին հատակին ու հարում
կաթնավար-վաղ գարնանային վար, երբ վարում են
նոր ծլած, ասես կաթ տվող խոտով ծածկված
գետինը
կամկամ-կաժ, թեղ, կծիկ, բոժոժից ստացված մետաք-
սը
կակուղ-փափուկ
կամնասայլ (կամ)-երկրագործական գործիք՝ 1.5 մ երկայ-
նություն, 0.5 մ լայնությամբ տախտակ, տակը,
երկայնքին սուր-սուր գայլախազներ կամ երկաթյա
չեղբեր հագած, որին եղներ լծելով շրջեցնում են կա-
լում և որանը մանրում
կափանակ-այծենակաճ

կրթոց-աման, որի մեջ կաթը կթոււմ են
կլկլ-գըլգըլ, քիլիլ (ոլուազգի բույս)
կլոճ-անթթխմոր հաց, բաղարջ
կոշկոո-կոշտ, պինդ կտոր, բեկոր
կոտորիկ-անթև կարճ զգեստ, բրդե կաճ
կոտրիկ- փոքր կոտ, կոտինդ, գավաթ
կորո, կոտթ-կոշտացած, խոպան հող
կորի-ակոս, առու, մարգ
կուռիկ-կավե հասարակ, փոքրիկ, խոր աման, երբեմն
ջնարակած
կուր (թոնրի)-թոնրի կողից կրակի մեջ ընկած, կիսով
չափ այրված հաց
կոնթ-գուղձ, հողակոշտ
կովան-հենք
կրիր-մեծ գլխաքանակով ոչխարի հոտ
կրուր-ոչխարի խուզ
հալալ-արդար, անխարդախ, սուրբ
համադամ-համեղ կերակուր (դելիկատես)
համնր (սնմնր)-գրաստի կոնակի չափով կարած կո-
պիտ թամբ, որ դնում ու կապում են գրաստի
կոնակին և վրան բեռը բառնում
հարամ-անարդար, խարդախ
հնձանոց-ատամնավոր թիածև գործիք
հունր (շերամի)-չերամի ձու, որից չերամի որդեր են
դուրս գալիս
ճիռ-մնացորդ

ճլլեկ-մարգագետնային բույս
ճոսքաղ առնել-ճիռ` մնացորդ չթողնել
մաթրաթ-խեցեղեն խոր և մեծ կերակրաման
մախաղ-փոքր տոպրակ, մեծ մասամբ բարակ կածուց,
որի մեջ դնում են ուտելիքի պաշար և կապում
մեջքներին
մածան-սայլի հատակը (տախտակամած)
ման-գուլթանի կամ արորի վրա հաստատված կոթը,
որից բռնելով` մաճկալն ուղղություն է տալիս
խոփին
մանիսա-գծավոր, հասարակ կտոր
մանկեռ-փոցիս
մաջրակա (մաջրկա)-դափ, բաթաթ, փայտից, բրդից
և կտորից պատրաստված գործիք, որով լավաշը
կպցնում են թոնրի կողերին
մեզար-քառակուսի կտավե կտոր, որով կանայք հաց
էին տանում դաշտի աշխատավորներին: Մեզարով
էին բանջարը տուն հասցնում. սերմնացանները
մեզար էին կապում, հատիկը մեջը լցնում: Տարեց-
ները նույնիսկ գոգնոցը մեզար էին անվանում
մրջոպ-մգլած, բորբոսնած
նախրահաց (նախրահախ)-այն հացը, որ տալիս են
գյուղի նախրապանին իբրև վարձ
նադարա-թմբուկ, դհոլ
նադարաշի-թմբկահար, դհոլչի

նաշ-եկեղեցական պատգարակ, որի մեջ զնելով ննջեցյա-
լին տանում էին եկեղեցի և եկեղեցուց՝ գերեզմանոց
նիգ-փականք
շեղջ-դեզ
որան-քաղած հունձ, որ պետք է կալսվի
որոմ-գարինների ցեղին պատկանող բույս թմրեցու-
ցիչ (գիժ հաց), թունավոր, սև հատիկներով
չախու-ծայովի դանակ
չնկուտ-լարային նվագարան, չոնգուր
չուխա-բրդե կամ բամբակե կտորի տեսակ, հա-
գուստ
չվան-ճոպան, պարան
չքոփի-չնչին
պահեզ-բանջարանոց
պայազապ-ազնվատոհմ
պերաբեղ (պեր, բեր)-գյուղից հեռու գտնվող անտաշ
քարերով պարսպված մակաղատեղի, ուր կատար-
վում է ոչխարի կիթը
պփրփրի (պփրփուր)-տե՛ս փթիբ
ջարջառ-կալսելու գործիք. երկու պտտվող ձողերի վրա
շարված ուրագանման սարքեր, որոնց հետևում
նստելու հատուկ աթոռակ կար
ջրադարձ-ջրի պտույտ, տեղ, ուր պետք է ջուրը փո-
խի շարժման ուղղութիւնը
ջրկալ-ջրվոր
սակառ-կողով

սանդ-քարե կամ մետաղից պատրաստված անոթ
սարակ-օրավարձով աշխատող
սնուաբավար-ոչ գոմշեղեն՝ եզ, կով, հորթ և այլն
սնդուկ-պետական վարկատու կառույց, դրամատուն
սողնակ-փայտի ձող, որ դռան հետևից հորիզոնա-
կան դիրքով դնում են՝ ծայրերը մտցնելով հա-
տուկ արված փոսերի մեջ
սրակ-դրամ (վա-ստակ)
տանփրկին (տանփրկին)-տան ղեկավար կին: Այդպես
էին կոչվում նաև վանքերի տնտեսութիւններում
աշխատող կանայք, որ մեծամասամբ այրի և աղ-
քատացած էին լինում
փայն-մանր ու չոր անասնաղբ, որ փռում են անա-
սունների տակ
փնթակ-ալյուրատուն, այստեղ՝ շտեմարան
փթիբ-վառելու նպատակով աղյուսածև չորացված
անասնաղբը
փր-բազմափորձ վարպետ, վարպետաց վարպետ,
վարպետավագ
փսիաթ-բուսական հյուսվածք, որ փռում են հատա-
կին իբրև կապերտ
քաղցու-նոր ճմլած խաղողի հյութ, մաճառ
քառչա-եղանածև վեցմատնյա գործիք՝ հարդը քա-
մուն տալու համար
քրուր (քրուկ)-կենդանու մարմինը քերելու գոր-
ծիք, քերիչ

քիւա-հողի մակերեսի չափման միավոր, որի վրա
 ցանվում է 1 քիւա (16 լիտր) ցորեն
 օղա-սենյակ: Գոմի մեջ մի բաժանմունք՝ կառուց-
 ված հատակից բարձր, ուր ձմռան երկար գիշեր-
 ներին գյուղացիները հավաքվում էին ժամանցի.
 գոմին կից ծառաների ննջասենյակ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի ՆԻՇԱՏԱԿ ԳԵՐԱԶՆԻՎ	
Պ. ՊԱՏՐԻԿ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ	7
ՆԱՅ ՇԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ	13
ՊԱՊԻԿ ԹՈՌՆԻԿԻՆ	21
Ա. ԵՐԿԻՐ	31
Բ. ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ, ԳՅՈՒՂ ՈՒ ՔԱՂԱՔ	37
Գ. ՆՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՐ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ	45
Դ. ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ	51
Ե. ՄԵՐ ՆՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ	57
Զ. ՎԱՐՈՒՅԱՆ ԵՎ ՄՇԱԿԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	69
Է. ՄԵՐՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՅԱՆՔՍ	81
Ը. ԶՈՒՐ ԵՎ ԱՐՏԵՐԻ ՈՒ ԴԱՇՏԵՐԻ ՈՌՈԳՈՒՄ	91
Թ. ԱՐՏԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՆԱՎԱՍԱՐ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ	101
Ժ. ՄԱՅՐ ՆՈՂԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ	109
ԺԱ. ՆՈՒՆԶ	117
ԺԲ. ԿԱԼ ԵՎ ԿԱԼԱՏԵՂ	123

ԺԳ. ՇՏԵՄԱՐԱՆ	131
ԺԴ. ՉՄԵՌ ԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔ.....	139
ԺԵ. ՈՉԽԱՐԸ ԵՎ ԻՐ ԱՄԵՆԱՇԱՏ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ	149
ԺԶ. ԳԹԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ	
ՆԿԱՏՄԱՄՔ.....	163
ԺԷ. ԾԱՌԱՍՏՈՒՆԿԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	181
ԺԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ	191
ԺԹ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ ԵՎ ՔԱՆԱՆԱ	201
Ի. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ	
ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ.....	209
ԻԱ. ԹՈՌԱՆ ՆԱՐՍԱՆԻՔԸ.....	225
ԻԲ. ՊԱՊԻԿԸ ՊՍԱԿԱԳՐՈՒՄ Է ԴԱՇՏՈՒՄ	243
ԻԳ. ՄԵՌԵԼՈՅ ԴԱՇՏ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ	
ՆԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ	251
ԻԴ. ՊԱՊԻԿԻ ԿՏԱԿԸ ԵՎ ՄԱՆԸ	283
ԲԱՌԱՅԱՆԿ	325

ՆՈՉԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ը

ԽՐԻՄՅԱՆ ՆԱՅՐԻԿ

ՊԱՊԻԿ ԵՎ ԹՈՌՆԻԿ

*Նրասարսակչության փնտրելն՝ Եզնիկ Արք. Պեղրոսյան
Թարգմանությունը՝ Ա. Մաղոյանի
Սրբագրիչ՝ Յու. Նովհաննիսյան
Էջադրու՞ր՝ Արարակ Տիրանյանի*

Սուրբ Էջմիածին – 2009

Չափսը՝ 70x100 1/32,
թուղթը՝ 80 գ., տեքստը՝ 2 գույն,
կազմը՝ 4 գույն, կոշտ, ծավալը՝ 336 էջ,
տպաքանակը՝ 1000:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարան